

ՄԱՐԴԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. Մ Ա Ա. Գ Ի Ռ

№ 10 1890

ՀՈԿՑԵՄԲԵՐ

1890 № 10

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Երիտ

1 ՎԱՐԴԱՆԵՍՈՆՑ, ԴՐԻԳՈՐ	1335	Աղքատների խնամատարութիւնը II.
2 ՄԱՆՈՒԵԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ	1356	***'
3 " "	1357	Սուսան և Պօէտը (բանաստեղծ.):
4 " "	1358	Մանրաւք (բանաստեղծութիւն):
5 ՄԱՐԻՍԵԱՆ, Մ	1359	Հեղինէ (վէպ. շարունակ.):
6 ԱՐԺԻՒԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ.	1394	Էլ մի խնդրիր... (բանաստեղծութ.):
7 " "	1395	Վասարակ (բանաստեղծութիւն):
8 " "	1396	Երկու զիւեր (բանաստեղծութիւն):
9 ՓՈՓՈԶԵԱՆՑ, Վ.	1397	Խախ-Սարա (պատկեր, վերջ):
10 ԱՐԺԻՒԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ.	1422	Որբեր (բանաստեղծութիւն):
11 " "	1423	Նենդաւորին (բանաստեղծութիւն):
12 ԿՈԼՈՉՅԱ, ԱԳՐԻԱՆՅՈ	1424	Բայաները:
13 ՍԱՎԱԹԵԼԵԱՆ, ՅՈՎՀԱՆՆԵԼՅՈ	1440	Համայնակ. հոգասափր. Երկանի նաճ.
14 ԲՈՐԵԼԵԱՆ, Ա.	1450	Հասանքներ բնազիսութիւնն միջ:
15 ԵԱ, Ք.	1459	Գրախօս. «Արտքա»: Опис. Кав. выс.
16 ԼՈՒՄԲԵՐ.	1471	Ամուսակ Քրոնիկ:
17 ԽՄԲ.	1476	Խմբազդաթիւն կողմից:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Ա. Գ. Ա-ՕՏԻՆԵԱՆՑԻ ՏՊԱՐԱԿ

Տիպոգրիա Մ. Դ. Ռոտունձա, և Գոլ. պրոսп. ճ. № 41.

1890



ՄՈՒՐԾ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 10 1890

ՀՈԿՏԵՄԲԵՐ

1890 № 10

ԵՐԿՐՈՒ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՎԵԱՆՑԻ
1890

Дозволено цензурою, Тифлисъ, 15 Сентября 1890 г.

Типографія М. Д. Ротиніанца, на Голов. просп. соб. д. № 41.

ԱՂՔԱՏՆԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ¹⁾

Գ ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ

II

Խեցէս որ իւրաքանչիւր հասարակութեան սեպուհ պարտաւորութիւնն է իւր շըջանի մէջ գտնւող աղքատներին խնամելու, նոյնպէս մամուլի սուրբ պարտաւորութիւնն է աղքատների խնամստարութեան խնդրով զբազւելու և հասարակութեան այս անխուսափելի ցաւի դէմ միջոցներ առաջարկելու։ Հասարակութիւնը անկարող է սասնասիրտ մնալ իւր թշւառ մերձաւորների ապահովութեան խնդրի վերաբերմամբ, որովհետեւ նա ինքն է այն աղբիւրը, որից զանազան պատճառների շնորհիւ բզիսում են տնտեսապէս թշւառներ։ Մամուլն էլ միւս կողմից անկարող է սասնասիրտ նայել այդ հասարակական երեսցթի վերաց, որովհետեւ նա՛ միայն կոչւած է հասարակութեան ուշադրութիւնը միշտ արթուն պահելու այս տեսակ երեսցթի մասին, որ կարելի է անկասկած համարել հասարակութեան ամենազգայուն ցաւերից մինը։ Այսուեղ մենք պէտք է խոստովանենք, որ մեր հայկական հրապարակախօսութիւնը դեռ ևս իրան չի նսիրել այդ իննդրի ուսումնասիրութեանը և համարեա թէ ոչինչ նիւթ չէ տւել այդ մասին իւր ընթերցող գասակարգին։ Փորձենք ուրեմն, ըստ մեր կարողութեան, ուսումնասիրել այն միջոցները, որ հասարակութիւնները եւրոպայում և Առուսիայում ձեռք են առել աղքատներին խնամելու։ Ծանօթանալով այսպէս ուրիշ եր-

¹⁾ Տես «Մուրճ» № 5.

կիրներում աղքատներին խնամելու համար գործ գրւած միջոցների հետ, մնք գուցէ կարողանանք զիւրութեամբ որոշել խնամատարութեան այն ձևերը, որ ընդունակ են երկրիս աղքատների պահանջներին լրացումն տալու:

Մեր առաջին յօդւածում աղքատների խնամատարութեան զարգացման պատմութիւնը տալով՝ աշխատեցինք լրասաբանել նաև աղքատների զանազան տեսակները։ Աղքատների խնամատարութեան հաստատութիւններն էլ պէտք է որոշւեն և սահմանւեն աղքատների տեսակների համեմատ։ Միայն այս ճանապարհով կարելի է զանազան տեսակ աղքատներին խնամելու գործի մէջ ցանկացած պատահներին համնել և ապա խոյս տալ խնամատարութեան մէջ երևան եկող այն շփոթութիւնից, որ այս գժւար գործի մէջ մուտք է գործում, թէև խնամատար հաստատութիւնները շատ են ջանում այլ բանի առաջն առնելու։ Զէ որ զառամեալ ծեր աղքատը պահանջում է ուրիշ տեսակ խնամք քան այն աղքատը, որ աշխատանքի ընդունակ է, բայց զանազան տնտեսական և հասարակական հանգամանքների զօրութեամբ ընկել է աղքատ զրութեան մէջ։ կամ աշխատանքի ընդունակ, սակայն մի ծանր հիւանդութիւնով հարւածւած աղքատը պահանջում է դարձեալ մի ուրիշ տեսակ խնամք, որ նպատակայարմար չէր լինիլ այնպիսի աղքատի համար, որ արբեցողութիւնից և նման մոլութիւնից աղքատացել է։ Վերջապէս որբ և ապօրինի երեխաները այլ կերպ են խնամեում քան հիւանդ և ծնողներից անխնամ թողած աղքատ երեխաները։ Հենց աղքատների այս տարբերութիւնը պահանջում է, որ խնամատարութեան հաստատութիւնները անպայման կերպով իրարուց տարբերւեն, այլ տեսակ չի կարելի սպասել, որ սոցա գործունէութիւնները հեշտ և պտղաբեր լինել կարողանան։

Սկսենք ֆրանսիացից, ուր, հարկ է լիշել, մասնաւոր բարեգործութիւնը աղքատներին խնամելու վերաբերմամբ իւր հաւասարը չունի ոչ մի տեղ ամբողջ Եւրոպացում։ Թէև այս երկրում հասարակական խնամատարութիւնները հեշտ և պտղաբեր լինել կա-

պակասաւոր կազմակերպութեան, համեմատաբար եւրոպական ուրիշ երկիրների հետ, գեռ ևս այնքան հռչակ և ժողովրդականութիւն չի ստացել, բայց և այնպէս նա իւր կարողութեան չափ գործում է: Ֆրանսիական հասարակական խնամատարութեան հաստատութիւնները կոչւում են bureaux de bienfaisance, որոնց կենտրոնն է զիստարապէս Պարիզը: Սոցանից իւրաքանչիւրի վարչութիւնը բաղկացած է մի քանի անդամներից—առնւազն 5 հոգուց, -որոնց պաշտօնավարութիւնը առհասարակ ձրի է: Անդամներից մեկին յանձնուած է վարելու հաստատութեան ֆինանսական և տնտեսական բաժինը, որի բարեկարգ գրութեան համար նա ինքն է պատասխանատու: Հաստատութեան զիստարապէս անդամները ունին օգնականներ, որ միան սեպհական ցանկութեամբ իրանց նւիրում են խնամատարութեան գործին և կազմուում են մասամբ աշխարհականներից և կանանցից: Գործելու հարկաւոր նիւթական միջոցները խնամատար հաստատութիւնների համար գոյանում են զանազան աղբիւրներից: Սոցանից առաջին տեղն են բռնում կամաւոր նւէրները, մանաւանդ կտակները: Մասնաւոր մարդկանց մանակցութիւնը կազմում է մի այնպիսի մեծ նպաստ խնամատար հաստատութիւնների նիւթական միջոցների մէջ, որ նա զառել է մի սովորական երևոյթ: Մասնաւոր մարդկանց նւէրներից և կտակներից ոչ պակաս տեղ են բռնած այն գումարները, որ հաւաքւում են ներկայացումներից թարառններում և այլ զւարճութեան տեղերում: Մի յարտնի չափով օժանդակում են խնամատարութեան զանձարաններին նաև մասնաւոր բարեգործական ընկերութիւնները: Սոքա բոլորը իսկապէս արտասովոր մուտքեր են, իսկ սովորական և կանոնաւոր մուտքեր ստանում են խնամատարութեան հաստատութիւնները կանոնաւոր վճարներից այն ծախսերի համար, որ խնամատարութեան հաստատութիւնները անում են իրանց հիւանդանոցներում ուրիշ տեղերի կամ դաւառների հաշւով աղքատ հիւանդներին խնամելու և բժշկելու համար: Սոքա են ահա այն բոլոր միջոցները, որ ձեռք են բերում ֆրանսիական խնամատար հաստատութիւնները:

Մեզ համար հետաքրքրական է հիմա այն եղանակը, որով ինսամուռ են աղքատներին այս հաստատութիւնների մէջ: Օգնու-

թեան կարօտ չքաւորները դիմում են խնամատար հաստատութեան առհասարակ մի կամ երկու օր առաջ գրաւոր կերպով։ Սորա համար աղքատը գնում է խնամատարութեան տունը և մատեանի մէջ ստորագրում է իւր անուն—ազգանունը և հասցէն։ Այսուհետեւ հիմնարկութեան ծառալողները, հաւաքելով բոլոր ստորագրութիւնները հասցէներով հանդերձ՝ ման ևն գալիս տունէ տուն և խուզարկում են իւրաքանչիւր աղքատի և սորա լնտանիքի դրութիւնը։ Սյապէս հաւաքելով բոլոր հարկաւոր տեղեկութիւնները հաստատութեան դիմած աղքատների նիւթական դրութեան մասին՝ լսաւ այնմ նրանց օգնութիւն են հասցնում, որ կատարւում է լնդհանրապէս դրամով։ Իաց այսպիսի դրամական օգնութիւնը շատ չափաւոր է լինում, որովհետեւ օգնութեան այս ձեւը չի կազմում ֆրանսիական bureaux de bienfaisance հաստատութիւնների գործունեութեան զլիսաւոր մասը։ Սոցա պաշտօնն է սուաւելապէս հիւանդ աղքատներին խնամելու և այս պատճառով ֆրանսիական հաստատութիւնները կրում են աւելի հիւանդ անոցների բնաւորութիւնը։ Նկատենք այսուեղ, որ աղքատների դրութիւնը իրանց լնտանիքներում խուզարկելով այն առաւելութիւնն ունի, որ նրանով կարելի է լինում մօտիկ ծանօթանալլ սոցա կարօտութիւնների և պահանջների հետ։ Մօտիկ ծանօթ լինելով աղքատների նիւթական չքաւորութեան հետ, շատ հաւանական է, որ սխալները օգնութեան գործի մէջ շատ աւելի սակաւ կարող են պատահել, այնպէս որ հասցնելիք օգնութիւնը լսաւ կարելոյն արդար կերպով կը կատարւի։

Աւելի նպատակայարմար է, երբ որ օգնութիւնը բնութիւնով (իրեղններով և մթերքներով) է հասցնում, որովհետեւ այդ ձևով (իրեղններով և մթերքներով) է հասցնում, որովհետեւ այդ ձևով աղքատների յայտնի կարօտութեանը ուղղակի լրացումն է արւում, մինչդեռ տւած փողը յաճախ վատնւում է այնպիսի մոլութիւնների համար, որոնցից նոյն իսկ աղքատները զերծ չեն։ Աւելացնեք սորա վերայ և այն հանգամանքը, որ կան չքաւոր լնտանիքներ, որոնք չեն դիմում օգնութեան՝ լաւ ճանաչելով և հաստատուն պահելով իրանց սեպհական արժանաւորութեան զգացմունքը։ Սոքա են, որոնց պէտք է վառ կերպով կարեկցել, որովհետեւ սոքա են, որոնք իրանց բարձր են պահում նոյն իսկ չքաւորութեան մէջ։ Այս բանի նկատմամբ ֆրանսիական հաստակական խնամատար հիմնար-

կութիւնները առաջադիմութիւն չեն արած, ինչպէս օրինակ գերմանական հաստատութիւնները, որոնց մէջ, ի միջի ալլոց, այս տեսակ ավագանի աղքատ ընտանիքներին օգնելը բարականին տարածւած է: Խնչպէս արդէն նկատեցինք, ֆրանսիական խնամատար հաստատութիւնները խնամք են տանում ամենից շատ այն տեսակ աղքատների վերայ, որ հիւանդ են: Հէնց այսպիսի բնաւորութիւն կրող խնամատարութիւնը կարող է միայն զլիսաւորապէս ժամանակաւոր լինել, այսպէս՝ քանի որ աղքատը հիւանդ է, նա խնամնում է և առողջանալուն պէս՝ դրւու է թողնում հիւանդանոցից: Եւ այն վերև յիշած նիւթական միջոցները, որ ստանում են ֆրանսիական խնամատար հիմնարկութիւնները զանազան աղբիւրներից, գործ են դրւում աղքատների համար յատուկ հիւանդանոցներ պահելու, իսկ նոյն միջոցներից աւելորդ մնացածը միայն յատկացնում են ուրիշ տեսակ ոչ հիւանդ աղքատների խնամքին:

Հասարակային խնամատար հիւանդանոցները ֆրանսիայում իրանց բնաւորութիւնով միմիանցից զանազանում են: Սոցանից մանը ծառայում են ընդհանուր աղքատ հիւանդներին բժշկելու և խնամելու: Ոմանք բժշկում են միայն յայտնի ցաւով հիւանդացած աղքատներին, ոմանք էլ յատկացրած են լոկ, մանաւանդ խոզախտային (սկրօֆուլեօգ) երեխաններին բժշկելու համար: Սոցա հետ կից զանում են նմանապէս այնպիսի տներ, որոնք միայն ժամանակաւորապէս հօգանաւորում են ամեն տեսակ աղքատներին, սակայն միայն յայտնի գէալք երում: Վերջապէս գոյութիւն ունին մի քանի այսպէս անուաննած առանձնութեան տներ, ուր յատկապէս զետեղում են զառամեալներին:

Ֆրանսիական հասարակային խնամատարութեան հաստատութիւնները համայնական կամ ընկերական կազմ չեն ինչու այնպիսիները, որոնք օգնում են նոյնպէս ամեն տեսակ աղքատներին, սակայն միայն յայտնի գէալք երում: Վերջապէս գոյութիւն ունին մի քանի այսպէս անուաննած առանձնութեան տներ, ուր յատկապէս զետեղում են, բաղդին թողնելով սոցա

յետագաց վիճակը։ Սա մի խոշոր պակասութիւն է, որ շատ է խանդաբարում յիշեալ հաստատութիւններին նպատակներին համանելուն։ Խականացած այն են, որ, աղքատներին խնամելով, սոցա կեանքի ճանապարհը ուղղեն։ Արդ, կարելի՞ է իրաւամբ սպասել այս ցանկալի հետեւանքին, երբոր ինսամատարութեան հաստութիւնները չեն օժտում չքաւորներին այն յատկութիւններով, որ ընդունակ դարձնեն մարդկանց փախուստ տալու վատ և անյարգելի կետնք վարելուց։

Մինչև այժմ՝ մեր ուշադրութիւնը նւիրւած էր Փրանսիական հասարակացին խնամատար այն հաստատութիւններին, որոնց գործն է օգնել և խնամել սոսկ այնպիսի աղքատներին, որոնք երեւան են գալիս արդիւնաբերութեան կենտրոններում թէ աշխատանքի պահասութիւնից և թէ մասամբ բարոյականութեան անկումից, որ ըստ մեծի մասին բանւոր դասակարգի մէջ ողելից ըմբելիքների չափազանց գործածութեան հետեւանք է։ Իացի չունեորներից, որ այնքան չունին իրանց առօրեայ ամենափոքր անդամ կենսական պիտոցքները լրացնելու և որ կարեկցութեան արժանի են, բացի բուն աղքատներից, որ ոչինչ չունին և շատ յաճախ ժիղկաբակէս և բարոյակէս անգօր են իրանց կեանքը ապահովելու և հասարակութեան կողմէց առաւել ևս արժանի են լորջ հոգատարութեան, բացի այս տեսակ չքաւորներից՝ գոյութիւն ունին և այնպիսիները, որոնք թէև ոչինչ չունին և անկասկած ընդհանուր առմամբ աղքատների շարքին են պատկանում, բայց կարողանում են մուրացկանութիւնը արհետո շինել և հաց ճարելոց աւելի բան ձեռք բերել։ Առքա մուրացկաններն են, որոնք յանդզնաբար քաշեքաշ դալով առեն տեղ և ամեն երկրում հասարակութիւնների համար մի շատ վհատեցուցիչ երևոյթ են կազմում։ Զուր չէ, որ նոյն խակ լուսաւորեալ երկիրներում մուրացկաններին տալիս են յանցաւորի բնաւորութիւնը։ Եւ արդարի չի կարելի մերժել այս մականունը, քանի որ դոքա խրոխտաբար իրանց մուրալու սովորութիւնը պահպանում են՝ չը նայած հասարակութեան կողմէց ձեռք առած միջոցներին՝ այդ վարակիչ մարդկային սովորութեան գէմ մաքաւելու։ Ֆրանսիայում մասնաւորապէս

ինչպէս նաև ուրիշ երկիրներում մեր 19 դարւայ սկզբից մինչ այժմ առողջանաբար հիմնում են ամեն գաւառում մուրացկանների համար յատուկ հաստատութիւններ (dépôts de mendians), ուր նոցա զետեղելով խնամում են և, ըստ ժողովրդական կարծիքի, պատժում։ Սակայն այս պատիժը հասկացւում է այն մտքով, որ բանտարկւած մուրացկաններին ջանում են ստիպմամբ ընտելացնել մի որ և իցէ աշխատանքի՝ նոցա սլիտանացի մարդիկ դարձնելու նպատակով։

Ահաւասիկ ձեզ այն բոլոր գործունէութիւնը, որով Փրանսիական հասարակացին խնամատար հաստատութիւնները օգնութիւն են հասցնում բազմաթիւ աղքատներին։ Մենք չենք վստահանւում պընդել, թէ յիշած հաստատութիւնները այդ տեսակ գործունէութիւնով լիովին բաւարարութիւն են տալիս աղքատների պահանջներին, որ անընդհան աւելանում են, քանի որ ազգաբնակութիւնը հետզհետէ անում է, իսկ աշխատանքը նոյն չափով չի աւելանում։

Մեր ժամանակները պահանջում են, որ այս տեսակ մարդկացին գործերի մէջ հաւաքական ոյժերի գործադրութեանը առաւելութիւն արւի։ Այս անխուսափելի պահանջը լրացնում են Գերմանիացի աղքատների խնամատարութեան հաստատութիւնները իրանց համայնական կազմակերպութիւնով, որ եւրոպացում օրինակելի է դարձած, մինչդեռ Ֆրանսիացում համայնական խնամատար հաստատութիւնները գրեթէ գոյութիւն չունին։ Կազմակերպութեան յիշեալ պակասութիւնից, որին ենթակաց են ֆրանսիական խնամատար հաստատութիւնները, բղիտում է այն հետեւանքը, որ շատ աղքատ ընոտանիքներ խնամ ելուց աջքաթող են լինում։ Խնամատարութիւնից անտես և անմաս մնացած չքաւոր ընտանիքները նոքա են, որոնք լոկ իրանց անգնահատելի բարոյական արժանաւորութեան շնորհիւ հասարակական օգնութեան չեն հայցում մինչ չքաւորութեան վերջին ծայրը։ Եւ այս կարգի ընտանիքների ծայրացեղ չքաւորութիւնը ունենում է երբեմն սոսկալի հետեւանք։ Ասածս պնդելու համար առաջ բերենք մի հաստարութիւնիկ, որ նորերումն պատահել է Պարիզում։ Աւթ հոգուց բաղկացած մի ընտանիք Պարիզում նորերումն, սոսկաւած ծայրացեղ չքաւորութիւնից, կնքում է իւր մահկանացուն ինքնասապանութիւնով։ Թէև նման դէպքեր սակաւ են պատահում, բայց և այնպէս նա իւր վրդովեցուցիչ բնաւորութիւնով տւեց Պարիզի

մամուլին ջերմ խորհրդածութիւնների առիթ։ Նոյն մամուլը յարձակ տում էր ամենայն իրաւամբ հասարակային խնամատարութեան վերայ, երևան հանելով սորա կազմակերպութեան թերութիւնները։

Ֆրանսիական խնամատար հաստատութիւնների գործունեութեան արդիւնքը թւերով ասպացուցելու համար շատանանք այժմ միայն Պարիզի օրինակով։ Պարիզի հասարակային խնամատար հաստատութիւնները մասնել են 1881 թւին $36\frac{1}{2}$ միլիոն ֆրանկից աւելի, խնամելով 354.599 աղքատ մարդ, որոնցից 213.900 մարդ սուկ օժանդակութիւն են ստացել իրանց ընտանիքներում և 150.699 մարդ խնամել են հաստատութիւնների մէջ։ Ծախսած գումարը բաժանելով խնամած աղքատների թւի վերայ, մենք կը տեսնենք, որ իւրաքանչիւր խնամեող աղքատ մարդ նստում է տարեկան 103 ֆրանկ, իսկ ամսական 9 $\frac{1}{2}$ ֆրանկ և հարկէ եթէ աղքատը ամբողջ տարի շարունակ խնամեի և ամիսը միայն 9 $\frac{1}{2}$ ֆրանկ ստանայ, այլ բաժինը մէծ չի երևալ մեր աչքում։ Բայց որովհետեւ ոչ բոլոր աղքատները ամբողջ տարի շարունակ են խնամեում, ուստի վերը առաջ բերած թւի մէջ՝ ամեն մի աղքատին ընկնող բաժինը իսկապէս շատ աւելի է քան ամսական 9 $\frac{1}{2}$ ֆրանկ։

Այսքանս անում են հասարակային խնամատարութիւնը և բարեգործութիւնը աղքատութիւնը թեթևացնելու համար։ Բայց ինչ վերաբերում է մասնաւոր բարեգործութեանը, որ ֆրանսիայում ընդհանրապէս և սորա չնաշխարհիկ մայրաքաղաքում մասնաւորապէս մէծ ծաւալ է ստացել, պէտք է խոստովանել, որ սա էլ մէծ եռանդով աշխատում է իւր օրինակելի և պատկառելի հաստատութիւններով, որոնց նմանը հազիւ թէ մի ուրիշ տեղ հանդիպէք։ Որքան մէծ է այս երկրում մասնաւոր բարեգործութիւնը, գորապացոցը, ՚ի միջի ալլոց, մենք տեսնում ենք. նորանում, որ Պարիզում հրատարակող „Figaro“ լրագիրը տասը տարում հաւաքել էր բարեգործական նպատակներով $3\frac{1}{2}$ միլիոն ֆրանկից աւելի։ Թողնենք համանման ուրիշ օրինակներ և տեսնենք թէ որչափ են մասնակցում աղքատների խնամատարութեան գործին մասնաւոր հաստատութիւնները։

Առաջնակարդ տեղը ֆրանսիական մասնաւոր բարեգործութեան մէջ բռնում են նախ այն հաստատութիւնները, ուր ընդունուում են

անինամ թողած երեխաները: Ազքատ և անխնամ մնացած երեխանց համար յատկացրած մասնաւոր հաստատութիւնների թիւը 1885 թւին հասած էր Պարիզում 126: Նոյն թւեականին սոցամէջ 10.180 երեխանց տարրական ուսում և կրթութիւն էին տալիս և միաժամանակ սովորացնում էին նոցա օգտաւէտ արհեստներ: Ցիշեալ 126 մասնաւոր երեխայոց հաստատութիւններից 31 հատը պատկանում էին սուրբ Քոյքերի ընկերութիւններին (Sœurs de Saint Vincent de Paul), որոնք ուրիշներից նրանով են զանազանում, որ սոցամէջ հոգ են տանում միեւնոյն սիրով և անձնւիրութեամբ թէ ֆրանսիական երեխանց վերայ և թէ օտար ազգերին և դաւանութիւններին պատկանող երեխանց վերայ: Պէտք է, ի դէպս, շեշտենք, որ այս մարդասուէր գործերի սկզբնաւորութեան հիմք գնողները ըստ մեծի մասին առանձին անհատներ են եղած, որոնց մէջ ամենահռչակածն է Ալբերտ Ռուսել (Albert Roussel) կոչւած բարերար մարդը, որի անունով և կոչւում է իւր հաստատած ամենանշանաւոր մանկական հաստատութիւնը:

Ֆրանսիական մասնաւոր բարեգործական ընկերութիւններից ականաւոր են և նոքա, որոնք պաշտօն ունին հիւանդ կանանց խնամելու: Այս ընկերութիւնների անդամները լոկ կանացք են, որ ընդունւում են ամեն տեսակ զասակարգերից:

Վերջապէս ցիշելու արժանի են այսպէս կոչւած հասարակական ննջարաններ (dortoirs publiques, հոչլեյնայ դոմա) որ գոյութիւն ունին Ֆրանսիայի բոլոր մեծ քաղաքներում և, պէտք է խոսովանած, ժողովրդականութիւն են վայելում: Հասարակային ննջարաններում ընդունւում են թէ տղամարդիկ և թէ կանացք, որոնք զուրկ լինելով բոլոր միջոցներից՝ գիշերելու տեղ անգամ չեն գտնում: Այսաեղ տալիս են նրանց, բացի քնելու տեղից, նաև կերակուր և նմանապէս լանում են նոցա լւացքը և մաքրում շորերը: Մի քանի օր այսպէս պահելուց յետոյ, զոցա, և թէ կարելի է, զուրս են թողնում, որ իրանց համար զործ ճարեն:

Գալով Գերմանիային, որպէս զի ընթերցողին ձանձրոցթ չը պատճառենք, մենք կ'աշխատենք համառօտ լինել:

Գերմանական հասարակային խնամատար հիմնարկութիւնները

աւելի կատարելագործւած են քան վրանսիականը։ Գերմանական խնամատար հիմնարկութիւնների կազմակերպութեան առաւելութիւնը նրանումն է կայանում, որ նոքա գործում են աւելի լաւ որոշած ծրագիրներով, այնպէս որ իւրաքանչիւր հասարակացին խնամատար հաստատութիւն ունի իւր յատուկ բնաւորութիւնը և պաշտօնը կան հիմնարկութիւններ, որոնք խնամում են միայն աշխատանքի ընդունակ աղքատներին և կան այնպիսիները, որոնց նպատակն է հոգ տանել աշխատանքի անընդունակ աղքատների վերաց։ Խամանաւանդ յատուկ խնամք է տանում ծեր և չքաւոր զառամեալների վերաց։ Նոյնպէս գոյութիւն ունին աղքատ կանանց համար յատուկ հաստատութիւններ։ Բայց ամենից շատ կատարելագործւած են Գերմանիայում այն հասարակացին հաստատութիւնները, որոնք յատկացրած են աղքատ որբ և անխնամ թողած երեխաներին խնամելու։ Աշխատանքի բոլորվին անընդունակներին կամ չքաւոր ծեր զառամեալներին գերմանական հասարակացին խնամատարութիւնը նշանակում է մշտական թոշակ, որով նոքա ապրում են մինչ իրանց կեանքի վերջը։ Խոկ աշխատանքի ընդունակ, բայց գործ չը ճարելուց կամ այլ և այլ պատճառներից չքաւորութեան մէջ ընկածները խնամւում են մինչև որ սոքա գործ ճարեն։ Աերջիններիս խնամատար հաստատութեան մէջ եղած ժամանակ անգործ չեն թողնում, այլ պահանջում են նոյանից, որ նոքա մի որ է գործով զբաղւեն, ինչպէս օրինակ կօշկակարութիւնով, խոհարարութիւնով, հացթխութիւնով և նման գործերով, որոնք ի հարկէ մի յայտնի չափով, մանաւանդ աշխատելու անսովորութիւնից ընկածներին կրկին ընտելացնում են աշխատանքի և այսպէս սոյց մէջ սէր են արծարծում դէպի գործելու ցանկութիւնը։ Հասակաւոր աղքատ կանանց գերմանական հաստատութիւնները, խնամելու ժամանակ, որքան էլ վերջինը տեէր, տալիս են նոյնպէս զանազան գործեր, ինչպէս կերակուր պատրաստելը, շորեր և իրեղէններ մաքրելը, ճերմակեղէն կարելը, նորոգելը և լւանալը և ուրիշ՝ կանանց ձեռքերի ընդունակութեանը մատչելի բաներ, օրինակ յարդեայ առարիսներ գործելը, փետուրեղէն փետել և ջոկելը և այլն։

Նշանաւոր են այս երկրում, ինչպէս յիշեցինք, որբանոյները և

Ճնողներից անխնամ թողած աղքատ երեխաների խնամատարութեան հաստատութիւնները, ուր նրանց հիմնաւորապէս տարրական ուսում են տալիս, կրթում են և արհեստներ սովորեցնում: Այսուամենայնիւ երբոր երեխաները իրանց ուսումը աւարտում են և պիտանի են դառնում դորձնական կեանքի համար, սոցա ուղարկում են արհեստանոցները՝ բանելու և փող վաստակելու: Բայց բնակւելու տեղը տալիս են նորաբողբոջ պատանի արհեստաւորներին՝ դարձեալ խնամատար հաստատութեան մէջ, յատուկ բնակարաններում, միայն մի յայտնի ժամանակով, մինչև որ իրանք ընդունակ գտնւեն միանդամայն ինքնուրոցն կեանք վարելու:

Բայց աղքատներին խնամելու հաստատութիւններից՝ գերմանական հասարակացին խնամատարութիւնը ունի նաև հիւանդանոցներ, ուր զանազան մասնաբաժիններում բժշկում են հիւանդ աղքատ կանայք, տղամարդիկ և երեխաներ:

Գերմանական հասարակացին խնամատարութիւնը ունի, բայց իշխած հաստատութիւններից, նաև հիւանդանոցներ զանազան բաժիններում ուղարկում են յատկապէս հիւանդ կանանց, տղամարդկանց և երեխաներին:

Խնամատարութեան պէտքերի համար հարկաւոր գումարները հաւաքում են Գերմանիայում գլխաւորապէս համայնքներից՝ հարկերի ձեռքի: Բայց մի յայտնի դրամական նպաստ գալիս է մասամբ մասնաւոր կոտակներից և նւիրաստութիւններից և մասամբ էլ նոյն իսկ խնամատարութեան հաստատութիւնների ներքին եկամուտներից: Եկամուտները գոյանում են մի կողմից ուրիշ տեղերի հաշով հիւանդներին բժշկելուց, միւս կողմից այն առարկաները ծախելուց, որ շինուում են աղքատների ձեռքերով խնամատար հաստատութիւնների մէջ: Հասարակացին խնամատարութեան գործին ծառայող գումարի միջին թիւը հաշտում են հետևեալ կերպով: Գերմանիայում միջին թիւը ամեն մի քառակուսի մղոնի վերաց ընկնում է 10 աղքատ, իսկ 10.000 քառակուսի մղոն կազմող գերմանական հողի վերաց ըստ այնու կ'ընկնի 100.000 աղքատ: Եթէ ամեն մի աղքատի համար օրեկան մի գերմանական մարկ (40 կոպ.) մսխւի, այդ կ'անէ տարեկան 36 միլիոն մարկ:

Խնչուկս ընթերցողը տեսնում է, Գերմանիացի հասարակային խնամատարութիւնը իւր բազմակողմանիութիւնով աւելի քեզմնաւորէ քան ֆրանսիականը։ Գերմանական հասարակային խնամատարութիւնը գերազանցում է ֆրանսիականին և ուրիշներին ոչ միայն իւր բազմակողմանի գործունէութիւնով, այլ և նրանով, որ նորա կազմակերպութիւնը հիմնւած է համայնականութեան սկզբունքի վերաց, այսինքն այն սկզբունքի վերաց, որով կարելի է լինում միահամուռ ուժերով չքաւորութեան առաջն աւնել։ Հաւաքական ուժերի գործադրութիւնը նրանում է երեւոմ, որ համայնքները խմբւելով կազմում են իրանցից վարչական միութիւններ, որոնց հսկողութեան ներքոյ գոնեում են նոյն միացած համայնքներում գոյութիւն ունեցող խնամատար հասատատութիւնները։ Այս համայնական—վարչական միութիւնների նպատակն է խնամատարութեան գործը հեշտացնել, որպէս զի նա յաջողութեամբ կատարի բոլոր այն դէպքէրում, ուր համայնքները, առ անձին—առանձին վերցրած, անձեռնհաս են լինում աղքատների անընդհատ աւելացող պահանջներին բաւականաչափ լրացումն տալու։

Սակայն գերմանական հասարակային խնամատարութիւնը չի բաւականանում վերև ցիշած միջոցներով։ Նա, տողորւած լինելով բարձր ձգոտումներով՝ ջանում է յետ չը մնալ այն հոսանքից, որ արդարեւ, հանդէս է գալիս ժամանակակից տնտեսական պայմանների գորութեամբ։ Յայունի է, որ արդիւնաբերութեան կենտրոններում մեքենաների գործադրութիւնը անընդհատ զարգանում է և ձեռքերի գործածութեան տեղը բռնելով՝ սաստիկ նւազեցնում է այդ բնական զէնքով բանող դասակարգի աշխատանքը։ Արդիւնաբերութիւնը մեքենաների միջնորդութեամբ շատ աւելի արժան է նըստում։ Եւ սա մի անխուսափելի պահանջ է ժամանակակից տնտեսական կեանքի, քանի որ, մրցման ասպարիզում, մրցողների շատութեան պատճառով, ապրուստ հաջթաթելլը դժւարանում է և պահանջում է մեծ աշխատանք, որ բաւականաչափ չի վարձատրուու։ Տնտեսական պայմանների այդ ուժի գէմն առնելու համար 80-ական թւականներին Գերմանիայում 127 բարեգործական ընկերութիւններ միացան։ Այդ բարեգործական ընկերութիւնների անդամները կայացնում են ամեն տարի մի համաժողով (կոնգրես), որի նպատակ

է խորհրդակցել զանազան նորանոր միջոցների մասին, որ կարող են աղքատների խնամատարութիւնը ըստ պահանջին ընդարձակելու: Ցիշնք համաժողովների արած գործերից երկուսը, որոնք անկառի այնքան անգին և մեծ են, որ անուշադիր թողնել անկարող ենք: Համաժողովներից մինի վճռով սահմանւեց հրատարակել մի պարբերական վիճակագրութիւն (Armenenstatistik) աղքատների խնամատարութեան մասին: Եւ տեսէք թէ ինչ գեղեցիկ պաշտօն է կատարում այդ վիճակագրական հրատարակութիւնը: Սա տալիս է լուրջ տեղեկութիւններ՝ թէ խնամող աղքատ ընտանիքներում եղած շունչերի քանակութեան և սոցա հասակների մասին, թէ աղքատ դասակարգերի գրադմունքների, տրւելիք օգնութեան ձևերի, որքանութեան և տեղութեան մասին և վերջապէս աղքատների բնակութիւնների մասին: Այսպիսի վիճակագրութիւն անհրաժեշտ է, որովհետեւ սորա տւած տեղեկութիւնները շատ կարեոր խնդիրներ են պարզում և այնուհետեւ տեղիք են տալիս խնամատարութեան գործի մէջ նորոգումներ:

Մի երկրորդ գործ, որ նմանապէս համաժողովների տոկուն աշխատանքի արդիւնք է, արդարեւ արժանի է ընդօրինակման ուրիշ երկիրների կողմից: Այս գործը այն է, որ հիւսիսային և հարաւային Գերմանիայում աղքատներից կազմում են այսպէս կոչւած երկրագործական և անտառաբանական բնակավայրեր (Land-und forstwirthschaftliche Armencolonien), ուր աղքատներին, բացի խնամելուց, սովորեցնում են երկրագործական և անտառաբանական գիտելիքներ: Այս գիտելիքները աւելի հեշտ են իւրացնում քան այն արհեստները, որոնք սովորողներից պահանջում են թէ մեծ համբերութիւն և թէ հաստատ կամք: Ցիշեալ աղքատային կոլոնիաների այս առաւելութեան վերայ աւելանում է և այն, որ նոքա բարոյապէս մաքրող և ֆիզիքապէս կազդուրիչ և ամրացնող միջոցներ են:

Նմանօրինակ խնամատարութեան խնդիրներ են, որ վճռում են Գերմանիայի խնամատարութեան համաժողովները և թէն այդ բոլոր միջոցները չեն կարող խոստանալ աղքատների թիւը նւազեցնել, բայց նոքա անտարակոյս չեղօքացնում են տիրող ցաւը և ապա

Հասարակութեան լետին չքաւորութեան մէջ դեգերող դասին մարդավայել կեանք են ապահովում:

Անզլիայի վերաբերմամբ մեզ թւում է, որ աւելնորդ է այս երկրի հասարակացին խնամառարութեան զանազան հաստառութիւնների մասին մանրազննաբար խօսելու: Նոքա մէծ մասամբ նման ւում են գերմանական հաստառութիւններին: Միայն թէ խնամատարութեան գործը Անզլիայում չի գտնւում քաղաքական-վարչական համայնքների հսկողութեան և կառավարութեան ներքոյ: Հասարակացին խնամատարութեան գործը Անզլիայում յանձնած է եկեղեցական-ծխական համայնքներին, որոնք, օրէնքի համաձն հաւաքում են իրանց մէջ գտնւող աղքատների համար հարկեր, որ միանալով ուրիշ տեսակ եկամուտների հետ՝ կազմում են մի խոշոր գումար 80.-ական թւականների վերջերում աղքատաց հարկերը կազմում էին 7.688.650 ֆունտ ստերլինգ¹⁾, որով խնամէ ել են 1.081.926 աղքատներ: Այս, իւր խոշորութիւնով աչքի ընկնող, աղքատաց հարկը տարեցտարի աւելանալով՝ սկսել էր չափազանց ծանրաբեռնել եկեղեցական համայնքներին, որոնք, բացի գորանից, նաև պետական շատ ուրիշ հարկեր ունին վճարելու: Միւս կողմից աղքատութիւնը սկսել էր կորցնել իւր խոհեմ բնաւորութիւնը և սորա տեղը ստանալ այն պահանջող, հպարտ և յանդուգն կերպարանքը, որ մինչեանգամ սպառնալիքներով է գործում և ապա դատերին տեղիք տալիս: Որպէս զի աղքատութիւնը ացդպիսի հետևանքներ չունենաց, անզլիական օրէնսդրութիւնը 80.-ական թւականներին ստիպեց հասարակացին խնամատարութեանը մոցնել իւր հիմնարկութիւնների մէջ արդիւնք տւող աշխատանք: Օրէնսդրութեան այս կարգադրութեան համեմատ՝ աղքատները աշխատում են և սոցաշխատանքից գոյացած դրամական արդիւնքները մասնակցում են խնամատարութեան համար անւող ծախսերի մէջ: Սորանով, ի հարի, մի յայտնի չափով նւազում են եկեղեցական-ծխական համայնքների վերայ դրած աղքատաց հարկերը:

¹⁾ Մի Փունտ ստերլինգ հաւասար է 25 ֆրանկի կամ ոռոսաց գորով 6 ր. 30 կոպ. ոսկի կամ 8 բուբլի թղթադրամ աչժմեակ կուրսով:

Առուսիայում գլխաւորապէս ծխական բարեգործական ընկերութիւններն են, որ ստանձնել են հասարակացին խնամատարութեան դործը: Սոքա սկզբունքով խնամում են աղքատներին միայն սոցաբնակարաններում: Ի հարկէ աղքատներին սեփական բնակարաններում խնամելը անկասկած գովասանքի արժանի մի դործ է, քանի որ աղքատներից շատերը խոյս են տալիս իրանց չքաւորութիւնը հրապարակ հանելուց: Առուսիացի ծխական խնամատարութիւնը օգնում և խնամում է միայն այս ձևով: Պարզ է, որ այսպիսի սահմանափակ գործունէութիւնից չի կարելի սպասել աղքատների զրութեան բարեգումը այն չափով, որ հասարակութիւնները ազատ և հանգիստ լինէին աղքատների տգեղ և անպատշաճ պահանջներից: Մասսմբ խնամատարութեան այս թերութիւնների պատճառով, մասմբ էլ այն պատճառով որ Առուսիայում արհասարակ խնամատար հաստատութիւններ շատ սակաւ են, մենք հանդիպում ենք քաղաքներում և զիւղերում՝ բազմաթիւ թափառող աղքատներին իրանց ամենավատ սովորութիւններով: Յիշած թերութիւններից բացառութիւն են կազմում Պետք բուրգի ծխական խնամատար հաստատութիւնները, որ աւելի կատարելագործւած և բազմակողմանի են քան գաւառականները իրանց հոռի կազմակերպութիւնով: Առուսաց մայրաքաղաքում ծխական-բարեգործական ընկերութիւնները ունին յատուկ հաստատութիւններ թէ աղքատ որբ երեխանների և թէ հիւանդ կանանց և ծեր զառակեալների համար: Աւելի աշքի է լնկնում աղքատ երեխանների վերայ տարած խնամքը, որ տալիս է սրանց, ի միջի այլոց, նաև կատարեալ կրթութիւն: Բայց և ռուս մայրաքաղաքի խնամատար հաստատութիւնները զերծ չեն ամենախոշոր թերութիւնից, որ, հարկաւ, շատ զգալի պիտի լինի: Այստեղ աղքատ մարդկանց ձրի բնակարաններ են տալիս, իսկ կերակուր և աղքատների ամենակարևոր այլ պահանջները անտես են արած: Երեակացեցէք այն հետևանքները, որ կարող են առաջ գալ այսպիսի անհոգութիւնից, մանաւանդ երբոր ժամանակաւորապէս աղքատացածների անմիջոց զրութիւնը սպասածին հակառակ աւելի է տեսում:

Բալտեան նահանգներում ականաւոր գեր է կատարում Պիդաքաղաքը, որի խնամատար հաստատութիւնը Գերմանիայում գտնող-

ների կատարելատիսն է: Ծիգայի հասարակավին խնամատարութիւնը, որ գտնւում է նոյն քաղաքի բարեգործական ընկերութեան ձեռքում, ունի մի քանի օրինակելի և ուշադրութեան արժանի կողմեր: Սոցանից կարեւորագոյնն են այն բաժինները, որոնք ծառայում են աղքատ երկսեւ երեխանց հոգատարութեանը: Իգական սեռի բաժնում սովորեցնում են երեխանց կար ու ձեւ և մանրամասնաբար տնային տնտեսութիւն: Մի փոքր աւելի հասակաւորներին սովորեցնում են, նաև հացթխութիւն, խոհարարութիւն և լացարարութիւն: Արական սեռի երեխանց սովորեցնում են զանազան արհեստներ և գործնական գիւղատնտեսութիւն: Վերջինիս մէջ առաջին տեղը բունած են պարտիզապանութիւնը և ծաղկագործութիւնը: Ծիգայի խնամատար հաստատութիւնը այս նպատակի համար վերցրած ունի կապալով հողեր, ուր մանաւանդ ծաղկագործութեան վերայ մեծ ուշադրութիւն է դարձրած, որովհետեւ երեխանները, ի բնէ ծաղկասէր լինելով, շատ լաւ են սովորում պարտիզապանութեան այս գեղեցիկ ճիւղը: Իրեւ ապացոյց կարող է ծառայել այն փաստը, որ 1882 թւին ծախւած են արական սեռի երեխանց ձեռքերով արդիւնաբերած ծաղիկներ և սերմեր 2.240 բուբլու, յաջորդ 1883 թւին ծախւած էր 2.909 բուբլու ծաղիկներ: Բոլոր այս գումարները մասնակցում են այդ երեխանց կրթութեան համար անելիք ծախսերի մէջ: Զը մոռանանք և այն, որ 16 տարեկան հասակին հասնելուն պէս՝ երեխանց պահ են տալիս արհեստաւորներին և գիւղատնտեսներին:

Վերջապէս յիշելու արժանի է Ծիգայի խնամատար հաստատութեան աղքատ, բայց աշխատանքի ընդունակ կանանց բաժինը: Սոցա համար գնում են նիւթեր և վերցնում են զանազան ձեռագործերի պատերներ, որ կատարում են ճշտութեամբ երարեխղութեամբ: 1884 թւին այդ բաժինը ունեցած է իւր սեպհական կապիտալը և զբաղեցրել է 134 ընդունակ կանանց շատ արդիւնաւէտ գործերով, որոնց արդիւնքները վաճառելուց՝ հիմնարկութեան վարչութիւնը ստացել էր մի պատկառելի գումար՝ մոտ 15.000 բուբլի և սորանից տւել էր նոյն բանող կանանց 6.000 բուբլու վարձ: Ծիգայի խնամատարութեան ընկերութիւնը պահպանում է թէ պատւաւոր անդամների նւիրատուութիւններով և թէ իսկական անդամների անդամնակցական բաժիններով: Բայցի գորանից

ամեն տարի խկական անգամների ձեռքով անւում է հանդանակութիւն թաղ առ թաղ վաճառականների մօտ, որոնց սոսորագրութիւններով գումարում է տարեկան մօտ 15.000 ըուբլի:

Մենք կարծում ենք, որ, այս բոլորը կարդալուց յետով, հայ ընթերցողը պէտք է իրաւ համզւի թէ որքան առաստ են ուրիշ ազգերը իրանց մէջ գտնւող աղքատների խնամատար հաստատութիւններով։ Մենք իրաւունք չունինք պահանջելու, որ այս հաստարական գործի մէջ հայերը համեմատեին եւրոպական ազգերի հետ նայց մենք իրաւունք ունինք պնդելու, որ հայերը նմանագետ կուած են այս տեսակ հաստարակական սուրբ պաշտօն կատարելու։ Երգե՞ք հայերը անում են այժմն մի որ և իցէ բան աղքատների խնամատարութեան նկատմամբ։ Յաւելով պիտի պնդենք, որ հայերը զեր շատ և շատ քիչ են նւիրւած այդ մարդասէր գործին։ Այս երեսովը աւելի քան վհատեցուցիչ է, որովհետեւ հայերիս համար այս տեսակ գործերը իրանց ուժերից և ընդունակութիւններից վեր չեն։ Հայերը նոյն իսկ իրանց պատմութեան էջերում ունին փառաւոր տողեր, որոնք ապացոյց են այն իրողութեան, որ մի ժամանակ աղքատների խնամատարութիւնը փայլուն զեր է կատարած։ Հայոց պատմութեան տեղեակը երբէք չի կարող ուրանալ, որ Արշակունեաց գարագլխում։ Տրդառի յաջորդների ժագաւորութեան ժամանակ, մահաւանդ մեր եկեղեցու հայրենասէր հայրապետ Ներսէս մեծի օրերով, զոյութիւն են ունեցել շատ պատկառելի աղքատանոցներ և անկիւլանցներ։ Նոյնպէս 10-դարում Բագրատուննեանց իշխանութեան ժամանակը հայերը ունեցել են բազմաթիւ պանծալի հասարակային հաստատութիւններ, որոնց միջ մի սոււար մասը կազմել են բարեգործական հիմնարկութիւնները, որբանոցները, աղքատանոցները և անկիւլանցները իրանց մեծամեծ եկամուտներով։ Այս բարերար գործունէութեան մէջ մեր սիրագործ նախնիքներից շատ յետ ենք նացել։ Մեր եկեղեցական-ծխական ուսումնարանները այս բոսէիս արևելեան մանր աղղերի շարքում կանգուն և կենդանի պատկեր են ներկայացնում մեր աղղային ընդունակութիւնների։ Մի՛թէ իրաւունք չունինք սպասելու, որ մենք հայերս աղքատների խնամատարու-

թեան գործի մէջ էլ սեպհական ոյժերով գովասանքի և պարծանքի արժանանանք։ Զէ որ այս գործը մեր ազգային բարեմանութիւնների մի անքակտելի մասն է եղած։ Եւ ինչ է մեզ խոշնդու հանգիսանում թէ մեր անցեալի անողին ցիշատակով և թէ օտարների ցոյց տւած օրինակներով տոգորւած՝ այսպիսի վսեմ հասարակական գործին ամենայն եռանդու ձեռնամուխ լինելու։ Անդրկովկասեան հայելս ունինք բարեգործական ընկերութիւններ։ Նոյնպէս մեր հայրենակից տաճկա-հայերը զուրկ չեն նման հիմնարկութիւններից։ Սակայն սոքա բոլորն էլ շատ և շատ քիչ են հոգ տանում իրանց շրջաններում գանւող ազգատների վերաց։ Եթէ այս անդրութիւնը միջոցների սակաւութիւնից է բղխում, այդ պակասութիւնը, կարծում ենք, հեշտ է լրացնել, երբոր բարեգործական ընկերութիւնները իրանց գործունելութեան ծրագիրների մէջ այդ պահանջն առաջնակարգ տեղ տւած կը լինեն։

Ու ոք չի կարող պնդել, որ մեր մէջ չը կան այնքան աղքատներ, որոնց զրութիւնը աղաղակող օգնութեան և հոգատարութեան կարօտ լինէին։ Միայն իրողութիւնների անզիտութիւնը և կոյրութիւնը կարող են այգպիսի սխալ կարծիքին տեղիք տալ։ Արդարեւ մեր մէջ չը կայ այն գործարանական արդիւնաբերութիւնը, որ իւր մեծ չափերով կազմակերպութեան շնորհիւ սաեղծելով բանւոր դասակարգ՝ երեան բերէր նաև շատ աղքատներ։ Եթէ մենք դեռ չենք հասել տնտեսական կեանքի այս ձևին, դա չի նշանակում, որ մենք զուրկ ենք տնտեսական կեանքի ուրիշ ձևերից։ Իրողութիւնը սա է, որ մենք անմասն չենք ժողովրդական տնտեսութեան այն ասալարէզներին, որոնք ամեն ժողովրդի գոյութեան անհրաժեշտ պայմաններն են։ Դոքա են երկրագործութիւնը, արհեստաները և առեւտուրը, որ կազմում են հայերիս տնտեսական կեանքի զլիաւոր յատկանիշը։ Որտեղ տնտեսական գործունելութեան այս ասալարէզները քաղաքացիական իրաւունք են վայելում, այնուեղ պարբերապէս երեւացող երկրագործական և առեւտրական տագնապները անխուսափելի են։ Յայտնի է, որ նմանօրինակ տագնապներից բղխող երևոյթների շարքում աղքատներն էլ մի որոշ տեղն են բռնում։ Արդ եթէ այս կամ այն հասարակական սբառներից երեան եկող աղքատները զիմում՝ են նաև մեզանում հասարակութեանը, մի՞թէ նոյն հասարակութեան պարտաւորութիւնը չէ

քաւորութեան մէջ ընկած իւր անդամներին մի յացո՞նի չափով կեանքը՝ ասպահովել:

Ներկայում Անդրկովկասեան հայերը ունին մի երկու տեղ աղքատաց խնամատար հաստատութիւններ, որոնք շատ սակաւ ծառայութիւն են մատուցանում իրանց չնչին միջոցներով և խղճակի կազմակերպութիւնով:

Հէնց 1872 թւին, երբ որ Բագու քաղաքում սկսեց գործարանական կեանքը և քաշեց իւր կողմը բանսոր դասակարգին, որի մէջ Պարսկաստանից գաղթած հայերը մեծ թւով մասնակցած են, հենց այդ թւականից Բագուում հիմնւում է մասնաւոր հայ մարդկանց ձեռներեցութեամբ այսպէս կոչւած «Բագւայ աղքատների» խնամատար հոգաբարձութիւնը: Բագւայ աղքատաց խնամատար հոգաբարձութիւնը օգնում է աղքատներին միայն փողով և մասամբ էլ բնակարաններով: Փողով արած խնամքը շատ չնչին է, իսկ բնակարաններով տւած օգնութիւնը անբաւականացուցիչ է՝ չունենալով այս նպատակի համար ընդարձակ հիմնարկութիւն: Սկսած իւր հիմնելու օրից մինչ 1889 թիւը, այսինքն 16 տարւայ ժամանակամիջոցում, Բագուի խնամատար հաստատութիւնը ունեցել է 24.543 բուրլու եկամուտ, որ հաւաքւել է թէ մասնաւոր մարդկանց նւիրասւութիւններով և թէ հանգանակութիւնով, որ անում է զլխաւորապէս տօն օրերին: Այս գումարից 14.274 բուրլի մսխել են աղքատանոցի շինութեան համար, իսկ մնացածը 10.124 բուրլի բաժանել են աղքատ ընտանիքներին: Փողով օժանդակութիւնը տւած է 2.159 աղքատ ընտանիքներին, այսինքն ամեն մի ընտանիքը ստացել է տարեկան մօտ 4 բուրլի 6 կոպէկ: Եթէ հաշւենք, որ միջին թւով ամեն մի ընտանիքի վերայ ընկնում է 3 հոգի, յիշեալ դրամական օգնութիւնը արւած կը լինի 6.477 հոգուն, այնպէս որ իւրաքանչիւր աղքատ հոգի սուցած կը լինի $1\frac{1}{2}$ բուրլու չափ օգնութիւն, որ, արդարեւ, շատ ողորմելի նպաստ է, որպէս զի մի աղքատ մարդ մուրացկանութեան ը դիմի:

Մի այլ աղքատաց խնամատար հոգաբարձութիւն գանւում է Ալէքսանդրոսովով քաղաքում, որ հիմնւած է Մատթէոս Կաթողիկոսի ոմորէնութեամբ 1854 թւին, այսինքն այն պատերազմի ժամանակը, երբոր բազմաթիւ չքաւոր հայ ընտանիքներ գաղթել են Ալէքսան-

դրույզով և այլ տեղերի Ալէքսանդրօսովի խնամատար հոգաբարձութիւնը կազմում է իւր նպատակի համար միջոցներ նախ կամաւոր նւէրներից, որ ամեն շաբաթ օրեր հաւաքում են քաղաքի խանութներից, յետոյ հանդիսաւոր օրերին եկեղեցիներում բացում են հանգանակութիւն յօդուա աղքատների: Բացի սրանից Ալէքսանդրօսովի խնամատար հոգաբարձութիւնը ունի անշարժ կայք, որ մի յայտնի մուտք է տալիս: Այս բոլոր աղքիւրներից ստացւում են 2.000 րուբլուց աւելի մուտք տարեկան, իսկ ծախք լինում է մօսաւորապէս այդքան: Մի աղքատ լնտանիք ստանում է ամսեկան մերձաւորապէս երկու րուբլի: Արդե՞օք անւում է մի որ և իցէ բան ուրիշ բազմամարդ հայաբնակ տեղերում աղքատների համար: Մենք դիտենք, որ շատ հայաբնակ տեղերում գոյութիւն ունին եկեղեցական աղքատաց գանձարաններ, որոնք տօն օրերին զլիաւորապէս եկեղեցու մէջ փող են հաւաքում և, քահանաների տւած տեղեկութիւնների հիման վերաց, աղքատներին բաժանում:

Բայց թէ այս կերպով մենք կատարած լինենք այն հասարակացին սկաշտոնը, որ ժամանակակից հասարական կեանքի պահանջները մեզ վերաց բարձում են, մենք այդ բնաւ չենք կարող խոսուավանել: Մեր մի քանի խղճուկ խնամատար հոգաբարձական հաստատութիւնները և աղքատաց գանձարանները օգնում են աղքատներին ողորմութեան սկզբունքի հիման վերաց, որ մեր դարս պահանջների տեսակէտից դառապարտելի է: Ողորմութեան գաղափարի հիման վերաց աղքատներին խնամք անելով, մենք անկարող ենք հասարակութեան այս ցաւի դէմ մաքառել, որովհետև դրանով մենք չենք նպաստում մի հասարակական խնդրի լուծման, այլ խնամարում ենք նորա բարելաւ լնթացքին: Ընկնելով միջնադարեան գաղափարի գիրկը, մենք սաստկացնում ենք այս ամեն տեղ աղաղակող ցաւը, որ իւր կորսուաբեր հետեւանքներով յուսահատիւ երեսիթ է դառնում և նեղում է հրապարակական ազատութիւնը: Պէտք է թօթափենք մեզնից հին աշխարհացեցողութիւնը աղքատների խնամատարութեան գործի մասին և ներշնչւենք լնդ միշտ այն մոքով, որ խնամատարութեան գործը, ինչպէս նաև ուրիշ հասարակութեան գործերը, աշխարհական է, հասարակական է: Պէտք է հայ հասարակութիւնները իրանց սեփական նախաձեռնութիւնով

ձեռնարկեն այնպիսի խնամատար հաստատութիւններ, որոնք կարղանան աղքատներին կրթել և պիտանացի մարդիկ դարձնել: Սոքա հասարակութեան անդամներ են և ունին իրաւունք մարդագայիլ գոյութեան ինչպէս և հասարակութեան աւելի բաղդաւոր դասակարգերը: Հասարակութեան բարեկարգութեան շահերը պահանջում են, որ մենք աղքատների հասարակական գրութիւնը այնքան բարելաւենք, որ նոքա ևս իրանց ընդունակութիւններով և ոյժերով մասնակցեն մարդկացին յառաջադիմութեան գործերի մէջ, և ոչ թէ ապարդիւն արարածներ մնան, որ միայն յետադիմութեան և անշարժութեան տիրապետող պայմաններում կարող են գոյութիւն ունենալ և որոնցից, վեասից, բացի ուրիշ բան չի կարելի սպասել:

Մենք յիշեցինք Բագուի հայ խնամատար հաստատութեան չնչին գործերը: Մարդ ապշում է տեսնելով, որ այդպիսի չնչին գործեր կատարեւում են այն հայ հասարակութեան շրջանի մէջ, որ այժմս ներկայանում է Անդրկովկասեան արդիւնաբերութեան զրեթէ առաջին գործիչ: Միւնոյն առաջնակարգ զերը կարող էր նա կատարել խնամատարութեան գործի մէջ, եթէ նա հիմնէր աղքատաց բազմակողմանի խնամատար հաստատութիւններ և կամ իւր ունեցածը կատարելագործէր ժամանակակից հասարակական պահանջների համեմատ: Միւնոյն ջանքերի գործադրութիւնը մենք պահանջում ենք բոլոր այն հայաբնակ գաւառներից, ուր ոչ խելք, ոչ ոգի և ոչ նիւթական միջոցներ են պահասում այսպիսի խնամատար գործեր գլուխ բերելու համար: Գործեցէք այս շաւզով և դուք կ'արժանանաք պատուի և փառքի, որովհետեւ դուք կատարած կը լինէք հասարակական այն պաշտօններից մինը, որով փրկում էք բազմաթիւ մարդկանց՝ անկումից և կատարեալ կորուսուից, որոնք հասարակութեան մարմնի վերաց անբուժելի վերքեր են թողնում: Ահա ձեզ մի լայն ասպարէզ, ուր դուք կարող էք գործել, հետևելով ազատորէն և լրջօրէն նոյն իսկ մեր նկարագրած եւրոպական օրինակներին:

* * *

ԼԵԽՈՆ ՄԱՆՈՒՔԻ ԵԱԿԱՑԻ

Ո՞վ գիտէ արդեօք, գուցէ հէնց այսօր
Մահըս փորում է ինձ համար շիրիմ,
Ուր պիտի թաղեն սըգաւոր գէմքով
Սառած իմ մարմին:

Իսկ ես դեռ այնքան կ'ուզէի ասլրել.
Բայց ասլրել, ինչպէս անպըտուղ մի ծառ,
Ոչ, ոչ, առաւել անարժան մի կեանք
Զը կայ ինձ համար:

Բայց այս կըրծքի տակ եռում են անթիւ
Իղձեր և լոյսեր, անթիւ խորհուրդներ.
Նոքա արգելւած՝ տանջում են հոգիս
Երկար՝ տարիներ:

Կ'ուզէի բանալ ես նոցա կապանք
Եւ իմ իղձ, իմ լոյս, իմ վիշտ, տառտպանք—
Բոլորը մարդկանց առաջը դընել
Եւ ապա մեռնել:

ՄՈՒՍԱՆ ԵՒ ՊՕԵՏԸ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԵԼԵԱՆՑԻ

Մուսան ասաց. «Քո այդ հըպարտ և կամակոր այդ հոգով
Վաստակելու ես միմիայն դու ոխակալ թշշնամանք.
Եւ դու ինքը քո պըսակը քակտելու ես քո ձեռքով,
Եւ քո կեանքը լինելու է միայն անվերջ տուալտանք»:

Պօէտն ասաց. «Հի, ես ինքըս իմ ոսոխիս առաջին
Պոոմէթևսի հըպարտութեամբ իմ տանջանքը կը ծաղրեմ.
Ո՛վ իմ մո՛ւսա, թշշնամանքը սոսկալի չէ բընաւին,
Մըտերիմ եմ իմ կոչմանը,—ես իմ խաչը կը տանեմ»:

Մոսկվա. 1890 թ., յունիսի 15:

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԵԼԵԱՆՑԻ

Այսօր էգուց գցելով՝
Թարմ հասակլղդ վատնեցիր.
Հազար իղձեր, հազար յոյսեր
Դու անօգուտ թողեցիր:

Զարթիր, ընկե'ր, հերիք քընես.
Թըմըռութիւնըդ թօթափիր.
Տե՛ս-քո առջև լայն ասպարէզ.
Հոգի, սիրտ ա՛ռ, սըլացիր:

ՀԵՂԻՆԵ

Ա. Է. Պ.

Տ-ԻՆ Մ. ՄԱՐԻՍԵԱՆԻ

(Շաբունակութիւն¹⁾)

XV

— Կը յոգնես, Հեղինէ, տուր ես ջրեմ ծաղիկները, ասաց Ամի-
րանովը մտնելով պարտէզը, և, գրկելով կնոջ իրանը, տուաւ ձեռ-
քիցը ցնցուզը:

— Թող, քիչ է մնացել, դու կը փչացնես ծաղիկներս:

Այդ օրը Ամիրանովը սովորականից շուտ էր վերկացել, տենդային
անհամբերութեամբ հագնւել էր ու խմել առաւօտեան սուրճը, կար-
ծես իւր համար մի առանձին բան սպասելիս լինէր այդ օրը:

— Քեզ լաւ պահիր, հոգիս. այժմ քո կեանքը ինձ համար
կրկնապատիկ թանկ է:

Հեղինէն զարմացած և գորովանքով յառեց աչքերը մարդու վե-
րայ: Վաղուց է որ նա նորան այնպիսի լաւ և ուրախ արամադրու-
թեան մէջ չէր տեսել, ինչպէս այդ առաւօտ:

— Կուրախանա՞ս որ երեխայ ունենաս, Միշէլ:

— Ի հարկէ. ծերութեան միակ մխիթարութիւնը երեխաներն
են. երեխատէրը գոնէ զիտէ թէ ինչի համար է աշխատաւմ և թէ
իւր անունը իւր հետ չի կորչիլ:

1) Տե՛ս «Մուրառ»-ի № 6, 7 9.

Հեղինէի աչքերը փայլեցին ուրախութիւնից, նորա սրտում յոյս ծագեց, որ երեխայի ծնւելուց յետոյ նոյն կեանքը բոլորվին կը փոխի, որ հայրական սրբազն պարտականութեան զգացմունքը բոլորվին կը կերպարանափոխի մարդուն Հեղինէն այնտէս երջանիկ էր զգում իրան երեւակացելով կատարելիք փոփոխութիւնը, կարծես այդ բոլորը արդէն կատարւած իրականութիւն լինէր, և բոլոր ջահէլ մայրերին յատուկ հրճւանքով խօսում էր երեխայի սպազացի մասին:

Ամիրանովը ուշադրութեամբ ու սիրով լսում էր:
—Սակայն, հոգիս, ծառայութեան գնալու ժամանակն է:
—Նատ ուշ ես գալիս տուն, Միշէլ, չի՞ լինի մի քիչ շուտ գատ
—Կ'աշխատեմ, ասաց Ամիրանովը, կանգ առնելով պարտէզի կրան մօտ և օգային համբոյր տալով կնոջը:

Ասե՞մ Հեղինէին թէ չէ... չէ', աւելի լաւ է սպասեմ մինչև որ պաշտօնապէս յայտնեն. կանանց բերնում չիր չի թրջւիլ, ամբողջ քաղաքը կ'իմանայ. համ էլ անսպասելի կերպով որ իմանայ՝ աւելի կ'ուրախանայ, մտածում էր նա կանգնած տան դրան մօտ:

Անցաւ մի քանի օր. Հեղինէն մենակ նստած էր. յանկարծ զանգը քաշեցին և մի քանի րոպէ չանցած ներս վազեց Ելիզաւետա Բոգդանովինա Միհրանովան ու սկսեց շնորհաւորել նորա մարդու բարձր պաշտօն ստանալը: Հեղինէն ինչ-որ յիշեց և ախրեց. նա ուզում էր մի հարց առաջարկել Միհրանովային, բայց իրան զսպեց ու ոչինչ չը հարցրեց:

—Ուրախութեանս չափ չը կայ. դուք գիտէք որ ես ձեզ իմ զաւակներից չեմ ջոկում. ոչ ոք այնքան չի աշխատել, որ Միհրանի Պետրովիչը այդ պաշտօնը ստանայ, որքան ես. ասենք նա այնտէս մարդ է, որ նորա համար արժէ աշխատել: Ուր է, տանը չէ՞:

—Չէ, դեռ ծառայութիւնից տուն չի եկել:
—Ախտոս, ես նրան ունէի ասելու. բայց ոչինչ, ձեզ էլ կարող եմ ասել:

Կարծես այսօր քէ՛վ չունէք... հա՛, իմացայ, այդ ձեր սպազայ ժառանգն է ձեզ անհանգստացնում; հա՛, հա՛, հա՛: Ի հարկի կ'երթաք այսօրւայ ձիարշաւին նացելու. ախտոս որ ես չեմ կարող գնալ: Երեւակացել անգամ չէք կարող թէ որքան ժամանակ է խլում

ինձնից բարեգործական ընկերութիւնը. ես անպատճառ կ'ասեմ կոմսուհուն, որ ձեզ խնդրի մեր մասնաժողովի անդամ՝ դառնաք, համաձայն էք: Ազգակս էլի, Միկոյան Պետրովիլը տանը չէ:

Նթէ Հեղինէն չ'իմանար, որ Միհրանովան սովորութիւն ունի մի անդամից հազար հարց առաջարկել մարդու, հարցեր, որոնցից շատը պէտք է անողատախան մնային, կը շփոթւէր չ'իմանալով որին պատասխանի, բայց նա արդէն ճանաչում էր Ելիզաւետա Բոգդանովնային:

—Չեմ իմանում, ում հետ ուղարկեմ աղջիկներիս. Խեղճերի սիրաը շատ է ուզում գնալ, իսկ ես չեմ կարող զրկել նոցա զւարճութիւնից:

Տեսնելով որ Հեղինէն չի ֆահմում ասի թէ ինքը կը տանի, նա ուղղակի յայտնեց իւր միտքը. որովհետև ես միայն ձեզ վերայ եմ բոլորովին վստահ, ձեզ հետ միայն կը թողնեմ, հետներդ տարէք:

—Նատ շնորհակալ եմ, որ ինձ վերայ վստահ էք, բայց ես ձիարշաւին չեմ գնալու:

Հեղինէի տոնը դիսաւ Ելիզաւետա Բոգդանովնայի սրտին. նա ասուը-սառը մնաս բարեւ ասաց ու գնաց:

Այ թէ ինչու է մարդս այս քանի օրը ուրախ, իսկ ես ցիմարաբար կարծում էի թէ շուտով հայր դաւնալու յոյն է նորան այդքան ուրախութիւն պատճառում, մտածեց Հեղինէն մենակ մնալով: Զըլինի Կատեան այդ պաշտօնի համար էր այն օրը ակնարկում, Միքայէլը գայ տեսնենք, բանը կը պարզէի, տարակուսում էր Հեղինէն և ինչ-որ մի անախորժ զբացմունք արորում էր նորա սիրութ: Ե՛՛, ես վազուց եմ նկատել, որ մենք միմեանց չենք համակրում... և յշեց Հեղինէն թէ ո՞րքան ապարդին կերպով աշխատել է դրաւել մարդու համակրութիւնը:

Նա աշխատում է միայն, որ ես նիւթական կողմից պակասութիւն չը զգամ, լիութեան մեջ լինեմ, ել չի մտածում թէ աշխարհումն, բայցի զորանից, ուրիշ պահանջներ ել կան: Աւրախութիւնից մի իմանում ինչ անի երբ որ գովում են իմ երեսահարքս և բոլորովին գոհ է լինում ինձանից, երբ որ ժամանակին այցելութեան եմ զնում այն աները, որոնց հետ նա ուզում է գնալ-գալ ունենալ, բայց սկի չի հարցնում, թէ արդեօք նրանց հետ ծանօթութիւն ունենալը ինձ հանելի է թէ չէ:

—Կարող ես ինձ շնորհաւորել, Նեղինէ ջան, հանեց նորան մտախոհութիւնից Ամիրանովի ձայնը, վերջապէս կարգին պաշտօն սուացաց: Այ ացմ, հոգիս, համ օթեակի աբոնեմենտ կարող ենք վերցնել, համ յօր ֆիքսակել:

Այդ ժամանակ կողքի սենեակից կանացի հագուստի խշխոց լու եց: —Ամիրանովի քոյքերն էին, որոնք շատ անգամ յետի դւնիցն էին տուն մոնում, որ աննկատելի կերպով յայտնելով կարողանան իմանալ թէ ինչ է կատարւում նեքսեռում: Լսելով մարդ ու ինոց խօսակցութիւնը, նոքա սկսեցին փշփչալ ու վճռեցին մնալ կողքի սենեակում, որ ականջ դնեն ու իմանան թէ ինչի մասին են նոքա խօսում: Թամարին սկզբում վաստ թւաց քրոջ առաջարկութիւնը, ուզեց մտնել միւս սենեակը, որ իմանան իրանց գալը, բայց մի ուրիշ զգացմունք յաղթեց այդ սկզբում ծագած և միշտ ազնիւ զգացմունքին և նա նստեց Եփեմիացի կողքին:

Մի քանի ժամանակից սկած Ամիրանովը սկսել էր շատ սիրով վարւել Թամարի հետ, այդ շատ ուրախացնում էր Թամարին և զրդում աշխատելու աւելի էլ դուր գալու նորան Քրոջը չէր սիրում Թամարը, բայց ստիպւած էր խոստովանել, որ նա շատ լաւ կարողանում է դուր գալ Միլիայիլ Պետրովիչին և դորա համար շատ անգամ անզգալի կերպով լնկնում էր Եփեմիացի ազդեցութեան տակ:

Եփեմիան ու Թամարը դրան յետեւ նստած լսում էին: —Ինչ եղաւ քեզ, Նեղինէ, այնպէս եղար, կարծես մի բանից վախեցար: Քսանիննը տարեկան հասակում այդպիսի պաշտօն ու չորս հազար սոնիկ ստանալ հազարից մէկին չի յաջողում, իսկ դու յօնքերդ կիսում ես:

—Դու ինձ այն ասա, հօ՛ նոր ստացած պաշտօնդ ն-ձէի պաշտօնը չի՞:

—Նա, լսելօքս, լաւ գտար, իսկ ես կարծում էի թէ քեզ ամենեին չեն հետաքրքրում իմ շահերն, կատակով ասաց Ամիրանովը:

Նա նկատում էր որ գնալով կնոջ քէֆը վատանում է ու սկսեց սրտացաւութեամբ հարցնել, թէ հօ՛ էլի յաւը չի բանում, որ վերջին ժամանակը շուտ—շուտ էր անհանդստացնում նորան:

—Զէ, Միշէլ, շատ լաւ եմ զգում ինձ: Աիրաս ուրիշ բան է

ցաւայնում։ Մինչև այժմ ես ապրում էի երևակայութեամբ ու ուշադրութիւն չի դարձնում իրականութեան վերայ, ես քո արածները այնպէս չեի տեսնում ինչպէս որ իսկապէս են, այլ աւելի լաւ էի բացարում; իսկ այժմ շատ բան է պարզում։

Այժմ հասկանում եմ թէ ինչու մի քանի ժամանակից ի վեր ամեն կերպ աշխատում ես հեռու պահել քեզ և չը խառնել որոշեալ ինդիրների ու գործերի մէջ։

—Տուտուց բաներ ես ասում, հոգիս, Աստուած վկայ, չեմ հասկանում թէ ինչ ես ուզում ասել։

—Միթէ խիզճդ քեզ չի տանջում, որ ծեր ու ահագին ընտանիքի տէր մարդու ձեռքից խլել ես պաշտօնը։

Ամիրանովլ մի քիչ շփոթւեց. նորա սրտում յանկարծ կասկած ծագեց, թէ մի գուցէ կինը իմացել է իւր ն-ձէի դէմ լարած թակարդները ու ինտրիգաները, բայց նա այնքան վստահ էր իւր ճարպիութեան ու խորամանկութեան վերայ, որ կասկածը նորան բոլորովին անհիմն թւաց և նա իւր համոզիչ առնով ասաց։

—Հաւասացիր, Նեղինէ, որ իմ բոլոր ջանքերիս ու աշխատանքներիս նպատակը քո և մեր երեխայի ապագայի ապահովացնեն է, իսկ այդ նպատակին համնելու համար ընտրւած միջոցները պիտքան աղնիւ և խելացի են, որ ոչ մի առողջ դաստղութեան տէր մարդ պարսաւելի չի կարող համարել։

—Զուր ես, Միշէլ, արդարանում նորանով, որ իմ ապագայի համար ես ացդ անում։ Վայ այն բախտին, որ ուրիշների թշուառութեամբ է ձեռք բերւում, ուրիշների բերնից խլւած հացը իմ բգովլ կուլ չի գնալ։ Հաւասացած կաց, Միշէլ, որ անարդարութեան վելայ հիմնւած բախտը անիծւած է. ուրիշներին զրկողը վաղ թէ ուշ կը պատժեի և վերջապէս էլ ինչի՞ համար է ապրում մարդ՝ կարգին և ազնիւ մարդկանց յարգանքից ու համակրութիւնից զրկելուց յետոյ, իսկ ուրիշի տունը քանդելով, բախտաւորւողը չի կարող վացելել ազնիւ մարդկանց յարգանքը։

Նեղինէն արտասանեց այդ խօսքերը խրոխտաբար գլուխը բարձրացրած, բայց ճակատով, այնպէս, ինչպէս կարող է խօսել միայն զարդացած, բոլորովին կազմակերպւած բնաւորութեան ու հայեացքների մէր մարդ։ Ամիրանովլ մինչև այդ ժամանակ երբէք տեսած չը կար

կնոջը այդպիսի տրամադրութեան մէջ և լսած չը կար նորանից ացդպիսի վճռափական խօսքեր: Կնոջ, նորա կարծիքով, տուտուց նկատողութիւնները վաղուց նորան զգեցրել էին, քիչ էր մնում աշքերը խփէր սերանը բաց անէր ու հայոցանքների տոպրակը թափ տար, բայց իրան զապեց և բռնազբօսելով խւր զգացմունքները քնքշութեամբ նատացրեց կնոջը բազմոցի վերաց ու մի ձեռքով գրկելով նորա իրանը զգացւած սրաով ասաց:

—Մի վրդովկիլ, դու այնպիսի դրութեան մէջ ես, որ այդ կարող է քեզ վնասել: Սիրտս դաղլում է, հոգիս, տեսնելով, որ դու ացդպէս հեշտ հաւատ ես ընծացում ամեն մի ցիմար խօսքի: Ով գիտի ինչե՞ր են ասել քեզ իմ մասին, մանաւանդ իդէալական անարատ Սահառունին:

—Երգւում եմ, որ նա երբէք ակնարկով անգամ տեղիք չի տելի ինձ՝ քո վերաց վաստ կարծիք տանելու. ընդհակառակը, նա ամեն անգամ, երբ առիթ է լինում խօսելու քո մասին, քեզ պաշտպանում է, տաքացած պատասխանեց Հեղինէն:

—Յետոյ այդ բանի մասին երկար ու բարակ կը խօսենք, իսկ հիմայ պատւիրիր շուտով սուփրան գցեն:

Հեղինէն վեր կացաւ տեղիցը ու դանդաղ քայլերով, կարծես մի բանի վերաց միտք անելով, դուրս եկաւ պատշգամբը. դրսեի հովլ տւեց երեսին և մի քիչ զովացրեց նորա բորբոքւած ծակատը: Կարծես նորա աչքերը մինչեւ այժմ ոչինչ չէին տեսնում և այժմ յանկարծ բացւեցին, մարդու վարմունքներից շատերը, որ առաջ նորա համար անհասկանալի էին, այժմ պարզեցին նորա համար: Նա զգաց, որ բարոյական աշխարհում կնոջ նչին զեր չի վիճակւած, նա զգաց որ ինքը կարող է և պարտական է օդնել մարդուն, ազտել նորան, որ նա, իւր համոզմունքի հաստատութեան և իւր համբերութեան չնորհիւ, կարող է մարդու կեանքին ուրիշ, աւելի աղնիւ ուղղութիւն տալ:

Հենց որ Հեղինէն ոտը առանձնասենեակի շէմքից դուրս դրեց, Ամիրանովը զգաց որ մենակ է և ազատութիւն տւեց իւր զգացմունքներին, նորա դէմքը ծամածուեց չար քմծիծաղով և նա բաւական բարձր ձայնով արտասանեց նորա ցետեից.

—Ի՞նչ ցիմար սանտիմ ենտալութիւն է. մենք հօ ուրիշ

ների արտասուքը սրբելու համար չենք ծնւել. մեր գլխի ճարը հազիւ ենք տեսնում: Բայց տես ի՞նչ լիզու է ունեցել, ով կարող էր կարծել, կ'ասէիր անմեղ դառը լինէր: Ձէ, այսուհետեւ վճռւած է, պէտք է սամնձը քաշել, թէ չէ՝ շափը բոլորովին կը մոռանայ: Այդ էլ մեր պարոն երիտասարդների տռած օգուտն է, նոցա ազգեցութիւնն է, տռնս ջրի ճանապարհ են շինել, գալիս են նստում ու իրանց տռւտուց փիլիսոփայութիւններով կնոջս գլխահան անում: չէ, դրան պէտք է վերջ տար: Ել ազատութիւն չեմ տայ կնոջս... նոր ծանօթներ, նոր շրջան, ամեն բան պէտք է փոխել, կինս պէտք է օգնի ինձ իմ յարաբերութիւնների ու ծանօթութիւնների մէջ:

—Նորհաւորում ենք, եղբայր, վախվելով ասացին քոյրերը ներս մտնելով:

«Նոցա հետ խօսելիս Ամիրանովը հասկացրեց որ յոյս չ'ունենան թէ այսուհետև իրանից ապրուսոի համար աւելի փող կը սուանան:

—Դուք հօ գիտէք, որ իմ նոր զիրքս աւելի մեծ ծախսեր կը պահանջի...

—Ի հարկէ, ո՞վ չը գիտէ որ այդպէս է, ասաց Եփեմիան:

Թամարը սորկական շողոքորթութեամբ գլխով արեց ի նշան համաձանութեան:

—Ո՞րսեղից եկաք, Թամար, որ ես ձեզ չը նկատեցի:

—Դոները լոլորովին բաց էին. Հեղինէին ասա մի քիչ լաւ նայի տանը, թէ չէ ունեցած չ'ունեցածներդ կը մոնեն կը տանեն, շորս կողմը աչք ածելով կամաց արտասանեց օրիորդը:

—Ճիշդ է, այդ լաւ չէ, պէտք է զգոյշ կենալ: Մոռացայ ասեմ, Թամար, որ շուտով կը ստանաս ձեռի ծախսելու փողդ. լաւ կանէիր շրեր կարել տայիր քեզ համար:

—Ես գիտէի որ գու անչափ բարի ես, Միքայէլ:

—Այժմ իմ գլխաւոր հոգսս պէտք է լինի քեզ մարդու տալ: Թամարը աչքերը գցեց զետին:

—Ես առաջ էլ միշտ յիշում էի այդ պարտականութիւնս, բայց մեր ժամանակիներում առանց փողի դժւար է պսակ զլուխ բերել: Թող աջմմ լաւ փեսացու գտնւի, չեմ խնայի, բաժինք կը տամ:

—Մհ, ո՛րքան սէր, որքան բարութիւն կայ սրտումդ, միաձայն բացականչեցին քոյրերը:

—Միքայէլ, չը բարկանաս, քեզ մի խորհուրդ պէտք է տամ, մի քանի րոպէ լոռութիւնից յետոյ խորհրդաւոր եղանակով սկսեց այրին, մի քիչ լաւ մտիկ արա կնոջդ, հիմիկւան ջահէլներին հօ ճանաշում ես, կինդ էլ մի քիչ թեթև է: Հիմիկւայ նոր գաղափարներն էլ հօ հասարակութեան համար թոյն են, թոյն:

—Դուք նորանից մեծ էք, խրատեցէք թէ ինչպէս պէտք է իրան պահի, միայն մի քիչ զգոյշ վարւէք, մի քիչ տկար է, պատասխանեց Ամիրանովը ու դուրս եկաւ սենեակից:

—Իմ կարծիքով, Թամար, Միքայէլը այդպիսի կնոջով երկար չի մնայ այդ պաշտօնում:

—Հա, Եփեմիա, զարմացած մնացի լսելով թէ ինչպէս էր գոռում Միքայէլի վերայ: Ի՞նչ գոռոզն է եղել:

—Մարդու ծիծաղ է գալիս, որ մատածում է, թէ ինչի վերա է հպարտումում ու քրքրում: բերածը եօթ հազար է եղել, լեզուն միլիոն բերողի լիզուից երկար է:

—Միտդ է, Եփեմիա, ի՞նչ հարուստ աղջիկներ էին ուզում տալ Միքայէլին:

—Ինչպէս միտս չը լինի: Ըստ... հրէս գալիս է: Յանկարծ կը լսի ու Միքայէլին կը համոզի, որ կտրի մեր թօշակը. տւածն է հօ՛ առանց այն էլ մի բան չէ:

Այրին դիմաւորեց Նեղինէին, աչքալուսենք ասաց և հազար ու մի բարեմաղթութիւն թափեց զլիին, որ տոպրակներով պատրաստոնէր ու ամենքին բաժանում էր առատաձեռն:

—Որքան բախտաւոր էք, Նեղինէ, ջահէլ-ջահէլ այդքան առաջ գնացիք, քաղցրութեամբ ասաց նրան փոքրիկ տալլ:

—Իմ կարծիքով այդ մի մեծ բախտաւորութիւն չէ, Թամար:

—Էլ ինչ էք ուզում, չը կարողանալով համբերել վրայ պրծաւ այրին: Դուք այնպիսի մարդու էք գնացել, որ ձեր պսակին հազարաւոր կանայք կը նախանձեն:

Նեղինէն անհամբեր շարժմունք արեց ու արհամարհական հայեացք գցեց տալի վերայ:

—Ինչո՞ւ էք բարկանում, հոգիս, ես, կարծեմ, ոչինչ մի վասբան չ'ասացի, հանդարտութեամբ պատասխանեց այրին:

—Բաւական է խօսենք զորա մասին. աւելի լաւ է գնանք ճաշկու, Միքայէլը ի՞նչքան ժամանակ է մեզ սպասում է:

Երեքն էլ գնացին սեղանառուն:

Ճաշից յետոյ շատ չ'անցած եկաւ Սահառունին և սկսեց կնոջ կողմից խնդրել Հեղինէին որ իրանց հետ գնայ ձիարշաւին նայելու: Հեղինէն ասաց, որ իւր կարծիքով անյարմար կը լինի այժմ գնալ, քանի որ մի քիչ առաջ մերժել էր Միհրանովացի խնդիրքը, ասելով որ ձիարշաւին չի գնալու և այդ պատճառով չի կարող տանել նորա աշխիներին:

—Ի՞նչ հիանալի կին է, ո՞րքան սիրում է մեր Միքայէլին, իսկ դու, Հեղինէ, սիրու ես արել մերժել նորա ացղպիսի Հնչին խլնդիրքը:

Հարսը ուշադրութիւն չը դարձրեց տալի նկատղութեան վերայ և շարունակեց իւր խօսակցութիւնը Սահառունու հետո նորա ներկայութիւնը շատ լաւ ներգործում էր Հեղինէի վերայ. նա հետզհետէ աւելի և աւելի հանդսատանում էր: Հեղինէն շատ խնդրեց նորան որ մայ, բայց նա շտապում էր, որովհետև կնոջը խոստացել էր հետը գնալ ձիարշաւի:

Կատարինէն արդէն մօտ կէս ժամ էր ինչ սպասում էր նորան դարունքւայ շքեղ հագուստով: Ձիարշաւից վերադառնալուց յետոյ, նա ուրախուրախ ընկաւ մարդու վզովը և ցիշեցրեց նորան, որ խոստացել էր տանը երեկոյթներ սարքել:

—Նատ լաւ, ի դէպ՝ վաղը չէ միւս օր քո ծնունդն է, ասաց Սահառունին:

—Զեմ իմանում, կանչեմ թէ չէ Միհրանովենց... դու չես սիրում նոցա, շողոմքոր ձայնով ասաց Կատարինէն:

—Ինչու չը պէտք է հրաւիրես, քանի որ նոքա զլխովդ պատյան գալիս և դու օր չի անցնիլ համարեա որ նոցա տունը չը գնաս:

—Նատ օրիորդներ են լինելու, իսկ պարող տղամարդիկ չկան... չեմ իմանում ինչ անեմ... Նատ անյարմար կը լինի: Գէորդ, հոգիս, թոյլ չե՞ս տալ Տրունիցկուն հրաւիրեմի:

Սահառունին զարմացած լուռ նայում էր կնոջ վերայ: Կատարինէն շւարած կանգնած էր: Թէև նա զիտէր, որ չի կարելի մար-

դուն այզպիսի խնդիրքով զիմել, բայց այնքան սաստիկ ցանկանում էր ուրիշներին շլացնել իւր երեկոյթով, որ սիրտ արեց ու ասաց:

— Հաւատացիր, որ ես իմ զւարձութեանս համար չեմ աշխատում... նա մեզում ամենալաւ ալարող և առհասարակ... ճարպիկ կաւալեր է համարւում... այնպէս որ... երեկոյթը առանց նորան ամենքին ձանձրալի կը թւի, գժւարութեամբ կարողացաւ արտասանել Հեղինէն զլուխը քաշ զցած:

Խնոջ խնդիրքը կատարելլը շատ ծանր և վիրաւորական էր Սահառունու համար, բայց նա աւելի լաւ համարեց զիջել: Նա վախենում էր, կնոջ խնդիրքը մերժելով, աւելի բորբոքի նորա սերը:

— Եթէ այդքան ուղղում ես որ նա գայ, ես արգելք չեմ լինի, կիսաբերան պատասխանեց Սահառունին ու երեսը շուռ ու եց նորանից: Զը նայելով որ նա աշխատում էր ծածկել իւր մէջ կատարւող ներքին կոխւը, ձայնը մի քիչ գողաց: Կինը այնքան ուրախացամարդու թողլաւութիւնը սուանալով, որ այդ չը նկատեց և շնորհակալութեան զգացմունքով բռնեց նորա ձեռքը:

— Կարելի՞ է, հա՞: Դէորդ ջան, ո՞րքան բարի ես: Պարոններ չ'ունէինք, բայց նա տասը պարողի տեղ կը բռնի, իրան կորցնելով ասաց Կատարինէն ու նստեց հրաւիրատոմներ գրելու:

XVI

Կատարինէի ծննդի օրն էր: Ամեն պատրաստութիւններ տեսմակել էին երեկոյթի համար: Ժամի 8-ին Կատարինէն պատշերեց բոլոր սենեակների ճրագները կացնել և զուքւած--զարդարւած ու ինքնագոհ ժպիտն երեսին սկսեց ման գալ սենեակից սենեակ ու պատշերներ տալ: Հիւրերին ընդունելու համար բոլոր կարգադրութիւնները անելուց յետոյ, նա նստեց տախտի վերայ հանգստանալու նորա երեւակայութեան մէջ արդէն պատկերանում էր երեկոյթը նորա սիրտը հիմիկւանից փառ աւորւում էր երեւակայելով թէ որքան կ'ուրախանան ընկերուհիները պատահելով նորա տանը Տրունիցկուն:

Կատարինէի հիւրասենեակը արեւելեան ճաշակով էր սարքւած: Ասիական նախշերով պատառաներն ու վարագոյրները շատ համապատասխան էին սենեակի չորս կողմը դրւած ցած թախտաձև բազմոց ներին. գեղարւեսուական անկարգութեամբ ցիրուցան զցած հազար

ու մէկ վառ դոյներով բարձերը կարծես մարդու հրաւիրում էին հանգիստ առնելու. պատերը զարդարւած էին ասիական զէնքերով. դարակներում շարւած էին ոսկէ ու արծաթէ իրեղէներ: Բոլորը միասին շատ ներդաշնակ տպաւորութիւն էին գործում մարդու վերաց. աւելի ևս սաստկանում էր տպաւորութիւնը առաստաղից կախած լապտերի վարդագոյն ճառապայմաների լուսով:

—Միայն քե՛զ չի դուր գալիս, Գէորգ, իմ հիւրասենեակը, դուխող մի բան է մտել, թէ մարդու տրամադրում է հեշտասիրութեան ու ծուլութեան, ասաց Կատարինէն, ուրախ-ուրախ դիմաւորելով առաջին հիւրերին՝ օրիորդ Միհրանովաներին ու Աննա Գուրգէհեանին:

—Գիտէք ով կը լինի այսօր մեզ մօտ, խորհրդաւոր կերպով ասաց նրանց տանտիկինը:

—Ո՞վ կը լինի, ասա, Կատեա ջան, մի որ և է cavalier gallant, չէ՞ անհամբերութեամբ սպասելով պատասխանի միաբերան հարցրեցին նորան օրիորդները:

—Չը լինի՞ Տրունիցկին է, ուրախ-ուրախ հարցրեց Նաղեան և նորա կարմիր երեսը աւելի ևս կարմրատակեց:

Կատարինէն, հովհարով խփեց նորա քժին ու վագեց դիմաւորելու նոր հիւրերին:

Օրիորդները սկսեցին տաք-տաք խօսել ու վիճել Տրունիցկու մասին:

—Ե՞նչ անսպասելի նորութիւն էր, ո՛րքան ուրախ կ'անցնի երեկովթը, իսկ ես կարծում էի, թէ մարդ, բացի Թօմակներից ու Պետրոսվլերից, Կատարինէի մօտ ոչ ոքի չի պատահիլ, ուրախ-ուրախ ձեռները իրար խփեց կարմրաթշիկ գեղեցկուհին:

—Ե՞նչպէս ուրախացան բոլորը, կարծես մի երևելի բան իմացան, արհամարհանքով նկատեց Սօվիա Միհրանովան ու վեր քաշեց ուսիրը:

—Ճիշտ որ, Սօվիա, ուրիշները կը կարծեն, թէ մեզ յայտնեցին որ Յիւրիլս ենք գնալու, հա՛, հա՛ հա՛: Միթէ՞ այժմ կարելի է բացի Յիւրիլսից ուրիշ բանով հետաքրքրւել, ձեռ առաւ քրոջը նաղեա Միհրանովան և, թեն անցնելով Գուրգէհեանի թևը, քաշեց տարաւ նորան: Հանգերձասենեակը:

— Գիտե՞ս, Սովիա, Պետերբուրգում թոյլ են տալրւ կանանց լսել բարձրագոյն ուսումնարաններում, հաղորդեց նրան օրիորդներից մէկը:

— Ես առանց ձեզ վազուց դիտէի այդ: Զարմանալի է, ուստի թէ որքան ուշ են հասնում ձեզ այդպիսի տեղեկութիւնները:

Այդ ասելով Սովիան կարեկցաբար նայեց օրիորդներին: Նա սրտանց ցաւում էր նոցա: Օրիորդները հոհուացին ու փախան:

— Այս, եթէ իմանայի որ նա կը լինի... ինչ անպիտան չոր եմ հագել, սկի չի սազում ինձ, ասաց նադեա Միհրանովան կուելով հանդերձարանում պատէ հայելու (տրիւմօ) առաջ:

— Էնդհակառակը դու՝ ինչպէս միշտ՝ ամենից լաւ ես հագնած և շատ սիրուն ես այսօր:

— Ճի՞շտ: Ո՛յ, դո՛ւ այդ ի՞նչ շոր ես հագել, Աննա, կուզե՞ս գնանք տուն, շորերդ փոխիր:

— Զէ մի ինչ, ծիծաղեց Գուրգէնեանը: Կարծում ես ամենքն էլ քեզ նման հետաքրքրում են Տրունիցկով:

— Գիտես, մի քանի ժամանակ է նա ամեն օր լինում է մեր տանը, էլ ասել չի լինի թէ որքան ուրախ է անցնում ժամանակը նորա հետ:

— Երկարացում եմ, արհամարհանքով ժպտաց Գուրգէնեանը:

— Խօսքը մեր մէջ մնայ, նա սառել է դէպի կատեան, իսկ նա խեղճը սկի չի էլ նկատում այդ:

— Խեղճը, հըմ... դու շատ մեծ նշանակութիւն ես տալիս այդ փքւած ու դատարկ ֆրանախին:

— Ի՞նչ, քո կարծիքով Սահառունին ու Թօմանը նորանից լա են, չէ՞ գրգուած կորեց նորա խօսքը նաղեան: Ո՛յ, իսկը փքւած նոքա են: Ես անկեղծ ցաւում եմ խեղճ կատեացին, մարդը նորա ճկոյթին էլ չ'արժէ:

Հանդերձարանը եկան ուրիշ կանաչք և խօսակցութիւնը փոխեցին: Ժամի տասին Սահառունիների ճաշակով զարդարւած մեծ դահն լիճում սկսեցին դաշնամուր ածել ու պարել: Տանտէրն ու տանտի կինը անհանգիստ էին. նոցա աչքը դրան վերայ էր. ինչպէս երկում էր՝ երկուսն էլ հետաքրքիր հիւրերի էին սպասում:

Երեխ նա մարդու պատճառով է ուշանում, մտածեց Սահառունին:

Խնչպէս երևում է, ներկայացումը վերջանալուց յետոյ կը գայ, հանգստացրեց ինքն իրան Կառարինէն ու նշանով կանչեց իւր մօտ Ասունուն:

—Մինչև Տրունիցկու գալլ, Ալեքսանդր Վասիլի՛չ, դուք պէտք է կառավարէք պարերը:

—Ի հարկէ դուք պէտք է կառարէք այդ պարտականութիւնը, հօ Թօմանեւին չենք ինդրելու որ կառավարի, ծաղրելով նկատեց նադեան:

Ամենքը աչքները դարձրին Թօմանեւի վերայ: Նա թէև այդ հկատեց, բայց, ինչպէս երևում էր, առանձին նշանակութիւն չը տւեց դրան և չը փոխեց իւր սովորական դիրքը: Զեռները գրպանը դրած ու գլուխը յետ գցած, նա մնաց այդ կիսաթեք ընկած դրութեան մէջ. երբեմն միայն նա բարձրանում նատում էր ծխազլանակը կը պցնելու համար:

—Ափսո՞ս, այդքան սիրուն ու ջահէլ է և այդպէս անհոգ ու անուշադիր է դէպի իւր արտաքինը. այդ նրան անհամակրելի տեսք է տալիս, արհամարհանքով ասաց նադեա Միհրանովան Աննա Գուրգէնեանի, հետ նորա մօտով անցնելիս:

Թօմանեւը լսեց այդ և նորա անվրդով դէմքի վերայ մի բոլէ երևեց բարեհոգի քմծիծաղ, որով առհասարակ մեծերը պատասխանում են երեխաների թոթովանքին:

—Նա այնքան լաւ յատկութիւններ ունի, որ այդ պակասութիւնը բոլորովին աչքի չի ընկնում; չարացած պատասխանեց Աննա Գուրգէնեանը, երբ որ նոքա մոտան միւս սենեակը:

—Դէ, Ասունի, սկսեցէք ձեր գործը, հրաման արձակեց այդ ժամանակ տանտիկինը և ոտք խփեց գետնին. յետոյ մօտեցաւ Թօմանեւին և, յանդիմանօրէն նայելով նորա վերայ ոտից մինչև գլուխ, բացականչեց.

—Էլի գգգգւա՛ծ:

Թօմանեւը մի քիչ բարձրացաւ, նստեց տեղումը:

—Դէ, շուտ արէք, վեր կացէք, պէտք է այս կաղրիլը պարէք:

—Յետոյ, Եկատերինա Խւանովսա, այժմ ինձ հանգիստ թողէք, այնպէս թալխանձելով ասաց Թօմանեւը, որ տանտիկինը թողեց նորան ու անցաւ միւսներին:

Կազրիլի ժամանակ եկան Ամիրանով ու կինը և միքանի բոսէ գրաւեցին բոլորի ուշադրութիւնը:

—Ի՞նչ սիրունացել էք, Ելենա Պաւլովնա, նկատեց մի հասակաւոր կին՝ մի բոսէ աչքը խաղաթզմից բարձրացնելով:

—Ինչու չի սիրունանալ, իւր համար թագուհու պէս ապրում է, ոչ մի բանի ձեռք էլ չի տալիս, հազիւ լսելի ձայնով արտասանեց Թամարը, որ անկիւնում նստած ինքն իրան կտրատում էր, որովհետև համարեա ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում նորա վերաց:

Նրանից մի քիչ հեռու նստած էր Եփեմիան և քչփչում էր երկու հասակաւոր կանանց հետ:

—Այս էլ Միխայիլ Պետրովիչը, ասաց նոցանից մէկը վեր կենալով տեղիցը:

Ինչու այսքան ուշ եկաք:

—Գործ ունեի, անհոգ կերպով պատասխանեց Ամիրանովը, ուշադրութեամբ աչք ածելով չորս կողմը թղթախաղի ընկեր գտնելու համար:

—Խեղաց եղբայրս առաւօտանից մինչև երեկոյ դադար չոնի, իսկ կնոջ սկի հոգն էլ չի. պէտք է իմ հանգուցեալ ամուսնիս նման մարդու պատահած լիներ, որ կակուղ մոմ դարձնէր:

—Դուք՝ կարծեմ՝ առաջ ձեր եղբոր մօտ էիք ապրում, Եփեմիա Պետրովնա:

—Հա, բայց հարսս վարպետութեամբ մեզ տանից քշեց, չարացած ասաց այրին: Կ'ուզէի մի Միխայիլ Պետրովիչը՝ շատ չէ՞ մի անգամ մտնէր խոհանոցը տեսնէր, թէ ինչ Սոզոմ-Գոմոր է այնտեղ. բոլոր հարեւանների ծառաները այնպէս են մտնում-դուրս գալիս, ուտում-թափում; կարծես իրանց տունը լինի: Մէկ-մէկ որ յետէ դռնիցը մտնում եմ եղբօրս տունը ու այդ բոլորը տեսնում, սիրուայրում խորովում է:

Եփեմիային էլ հէսց այդ էր պէտք. նոր մարդ էր ճանկել, որ ուրախութեամբ լսում էր իւր ասածը. աչքերը խփեց, բերանը բաց արեց ու սկսեց բամբասանքների տոպրակը թափ տալ: Մօտի նստող կանայք ուշադրութեամբ ականջ էին գնում, պաշար էին հաւաքում; որ միւս օրը իրանց ծանօթներին պատմեն:

—Այս էլ ձեզ Ելենա Պաւլովնան, ասաց նոցանից մէկը, նկատելով Հեղինէին, որ մօտեցաւ նրանց:

Եփեմիան մի ակնթարթում սըսկեց ու քաղցր արտայայտութիւն տւեց դէմքին: Հեղինէն սառը-սառը բարեւեց տալին ու կողքին նայած կանանց. նոցա աչքերին նայելով, նա տեսնում էր թէ ինչպէս են վերաբերում իրան:

Այդ ժամանակ ածեցին կադրիլի րետուրնէլը. շուտով պէտք է սկաւէր պարը, մի քանի երիտասարդներ մօտեցան Հեղինէին և տարան դահլիճը:

— Բարեւ, Դաւիթ Աբրամիչ, ողջունեց Հեղինէն, անցնելով Թօմանեփի մօտով:

Կատարինէն մօտեցաւ Հեղինէին:

— Անտանելի մարդ է, Հեղինէ, ասաց Կատարինէն անհամբերութեամբ ձեռները իրար խփելով. երեւակացեցէք, ամբողջ երկուժամ է՝ մի տեղ մեխուած նասոած է:

Ուրեմն պէտք է զուտով տեղիցը վերկացնել, ժապաց Հեղինէն: Խօֆիա Միհրանովան կաւալեր չ'ունի, գնացէք խնդրէք որ գայ պարի, դէ՛, շուտ արէք:

— Մեղք եկէք ինձ, տի՛ին Հեղինէ, ականջներս կը սոսնի, այնքան կը խօսի: Աւելի լաւ է ինձ համար թղթախաղի ընկեր դանէք:

— Լա՛ւ, ինքը փաշացի նման նասի, իսկ մենք ման գանք նորահամար ընկեր գանենք, ո՞նց չէ, սպասեցէք, ծիծաղեցին Կատեան ու Հեղինէն:

— Մա՛րշ, եկէք իմ յետելից, հրամայեց Կատարինէն:

Թօմանեփի դէմքի վերայ բարեհոգի ժայիտ երեւաց, նա սիգարի քննթուկը զցեց գետին ու անսիրա կերպով հետեւ ամկիններին: Հեղինէն տարաւ նորան Գուրգէնեանի մօտ:

— Այ ձեզ պարընկեր, ասաց նա Թօմանեփին, խորհրդաւոր կերպով ժապտալով:

Թօմանեփի երեսը ուրախութիւնից փայլեց:

— Միթէ՞ դուք պարել զիտէք, զարմանալով և միւնոյն ժամանակը ուրախանալով հարցըց օրիորդը:

— Որքան համբերութեան պաշար ունէք, Աննա Արտեմիեւնա, այժմ գործ զրէք, դուք պէտք է ինձ սովորեցնէք, իսկ ես ձեզ առաջուց ասում եմ որ աչքաբաց աշակերտներիցը չեմ:

—Մի վախենաք, ես խստապահանջ չեմ, աշխուժով պատասխանեց Գուրգէնեանը և գնաց իւր համար աթոռ բերելու:

Զե՞ս ամաչում, Դաւիթ, օրիորդի համար մի աթոռ էլ չը կարողացար գտնել, ձեռ առաւ նորան Ասունին:

—Այս, ճիշտ որ, սկի միտքս չէր, որ ես պէտք է նորա համար աթոռ գտնէի, կոտրելով ասաց Թոմանեւը:

Մինչդեռ նա տարակուսւած չէր իմանում ինչ անի, Ասունին վազ տւեց Գուրգէնեանի մօտ, ձեռիցն առաւ աթոռը ու զրեց Թոմանեւի կողքը:

—Կուզէք մարջ կը բռնեմ, որ պարող բոլոր զոյգերը Տրունից կու մասին են խօսում, ասաց Աննան, նատելով նորա մօտ: Մարդ իմանաց, թէ ինչու է նա այզպէս կախարդիչ կերպով ազդում մեր տիկիններից ու օրիորդներից շատերի վերաց:

—Պատճառն այն է, Աննա Արտեմիեւնա, որ մեր հասարակութեան մէջ կոկւած, տաշւած ու ճարպիկ կաւալերներ հազւագիւտ են:

Բոլորը խօսում ու պարում էին:

Չը նայելով որ տանտիկինը ըստ երեսյթին ուրախ էր, ասում խօսում էր, բայց ուշադրութեամբ դիտողը կը նկատէր, որ նա կարծես մի բանի էր սպասում և սաստիկ ուշադրութեամբ ականջ էր զնում փողոցով անցնող կառքերի գուգուցին: Նա սպասում էր Տրունիցիուն և, քանի գնում էր, նորա անհամբերութիւնը աւելի ու աւելի սաստիկանում էր: Օրիորդներն էլ շուտ-շուտ հարցնում էին, թէ ինչ եղաւ Տրունիցին, ինչու է ուշանում: Բայց ահա կարծես մի կառք կանգ առաւ տան մօտ. Կատարինէն բաց պատուհանից դուրս նայեց և ուրախութիւնից փայլող դէմքով ինչ-որ քչփալով ասաց կողքի կանանց:

Հիւրասենեակում ու դահլիճում հիւրերի մէջ քչփոց բարձրացաւ, ինչպէս լինում է առհասարակ, երբ որ սպասում են շատ նշանաւոր կամ մի որևէ է պատճառով հետաքրքրաշարժ հիւրի: Տրունիցին, մօտաւ ուռած-փքւած, աչքերը կուչ ածելով նայելով մէկ աջ մէկ ձախ, կարծես ասելիս լինէր՝ տեսէք որքան մեծահոդի եմ ես, որ ձեզ արժանացնում եմ իմ տեսութեանը:

—Օ՛հ, m-lle Nadine, յանկարծ կանգ առաւ նա, դո՞ւք էլ

այստեղ էք, չեմ կարող ասել, թէ որքան ուրախ եմ, որ ձեզ այստեղ տեսնում եմ:

Տրունիցկու գալուց յետոյ Կատարինէն ուրախութիւնից ոտների վերայ պար էր գալիս. բոլորն էլ աւելի աշխոյժ ստացան. պարերը տաքացան. օրիորդները սրտատրով սպասում էին թէ նոցանից ում կը գերադասի Տրունիցկին, տիկինները աչքերը ոլոր-պտոյս տալով կարծես խնդրելիս լինէին որ իրանց հաճոյախօսութիւններ ասի:

Խսկ նա, առանց մի նկատելի պատճառի, ոմանց բախտաւորացնում էր իւր ուշադրութիւնով, միւսներին անուշադիր էր թողնում արհամարհական անտարբերութիւնով:

—Երանի՛ քեզ, նադեա, ինչ շատ է քեզ հետ պարում, քիչացին նորա ականջին մի քանի օրիորդներ: Նադեան հպարտհպարտ գլուխը բարձրացրեց և ժպտալով ինչ-որ ասաց Տրունիցկու ականջին: Նա պատասխանեց պինդ սեղմելով նադեայի ձեռքը և այնուհետեւ համարեա ամեննեին չէր հեռանում նորանից:

Կատարինէն դադւած սրտով գուրս եկաւ դահլիճից անխնայ կերպով կրծոտելով հիմանալի քանդականկար հովհարը: Դրան մօռ նա պատահեց Վտունուն, որ հեգնօրէն ասաց նրան:

—Հը՛, այժմ բախտաւո՞ր էք զգում ձեզ:

—Ի՞նչ է. ինչպիսի հակառակորդ է, որ ուզենաց հօ ձեզ գրպանը կը դնի:

—Ի հարկէ, մեր ի՞նչ բանն է առաջնակարգ աստղի հետ մրցել:

--Mesdames & messieurs, կարգադրում էր նադեա Միհրանովան, հաւաքւեցէք մի տեղ, Ակողի Անդրէիչը մի նոր խաղ է գտել:

Բոլորը կիտւեցին Տրունիցկու գլխին: Նա մի կենտրոն էր կազմում, որի շուրջը ամենքը ծիծաղում, կատակ էին անում ու աշխատում էին նորա աչքը մանել:

Միայն Կատարինէի քէֆը կարծես լաւ չէր:

—Պէտք է ասած, այստեղ շատ ուրախ է, ես չէի կարծում որ այսպիսի հասարակութիւն կը լինի ձեր մօռ, յանկարծ նորա ականջին հասաւ ծանօթ ձայնը և նորա աչքերը կանդ առան Տրունիցկու վերայ: Նա չէր կարող չը նկատել Կատարինէի վրդովմունքը և իսկոյն աշխատեց միսիթարել նորան:

—Ma belle Catherine, partont—et toujours vous êtes la perle de la société!

Կատարինէի դէմքը մի ակնժարթում փայլեց ուրախութիւնից և, մի բոպէ չ'անցած, նա արդէն յաղթական ժպիսով նացում էր իւր շուրջը:

Ազդ ժամանակ նրանց մօտեցաւ Սահառունին և նկատեց կնոջը, որ նրան վնաս է այդքան շատ պարել:

—Լաւ, Գէորգ, էլ չեմ պարիլ:

Մէկ—երկու քայլ հազիւ էր փոխել Սահառունին, Տրունից կին հեղնական ժպիսով նայեց Կատարինէի վերաց:

—Հը՞, չը լինի Օթելլօյի նախանձը շարժւել է:

—Զէ՞, նա քիչ ու միչ բանից տեղեկութիւն ունի, բայց զարմանալի է բաւական հանգիստ պահեց իրան իմանալուց յետոյ:

Տրունիցկու սրտովը չեկաւ այդ նորութիւնը: Նոցա մէջ լռութիւն տիրեց, երևում էր, որ նա ինչ որ մտքումը վճռում էր:

—Զէ՞, էլ չի կարելի շարունակել, պէտք է Կատարինէի հետ հաշիւներիս վերջ տալ, հազիւ լսելի ձայնով ասաց նա ինքն իրան ու արագ վեր ժուշելով տեղիցը մօտեցաւ նազեա Միհրանովացին:

Կատարինէի նախանձը շարժւեց. մի բոպէ ամեն բան և ամենքին մոռանալով նա սկսեց մեքենայաբար այս ու այն հիւրին մօտենալ, խօսել: Ո՛րքան ճիդ և ուժգնութիւն պէտք է գործ դնէր նա իւր վերաց՝ տանտիկնոց զերը կատարելու և սիրտը տակն ու վերայ անող զդացմունքները զսպելու համար:

Անգիտակցաբար կանչելով իւր մօտ Ասունուն, նա նորա հետ գնաց առանձնասահնեակը, որտեղ, մի փոքրիկ սեղանի մօտ նստած, խօսում ու վիճում էին երեք օրիորդ:

—Ինչո՞ւ, mesdames, ամբողջ երեկոն մի կողմ քաշւած, չք ու զում մասնակցել պարերին:

—Դուք մոռանում էք, Եկատերինա Խւանովնա, որ պարերը հասարակ մահկանացուների համար են, իսկ նոքա, որոնք զբաղւած են վսեմ զաղափարներով...

—Որ դուք անընդունակ էք հասկանալու, բարկացած կտրեց նորա խօսքը Սօվիսա Միհրանովան: Ճիշտ, միթէ՞ անկիւնից-անկիւն պտոյտ գալուց լաւ պարասլմունք չի կարելի գտնել:

—Զարմանալի է թէ ինչ բաւականութիւն են զգում յետ ու առաջ գնալուց և զլիապատառ վազ տալուց, վերայ բերեցին միւս երկուսը:

—Ի հարկէ ոչինչ: Հաւասացէք, mesdames, որ ես շատ համակում եմ՝ ձեր ցանկութեանը, որ ուզում էք մեր պարագմունքներին աւելի լուրջ ուղղութիւն տալ:

—Լոեցէք, Ասունի, աւելի յաւ կ'անէք օրիորդներին լնթրիքի հրաւիրէք, անհամբերութեամբ նկատեց Կատարինէն ու քայլերն ուղղեց դէսլի սեղանատուն:

—Թոյլ տւէք, mesdames, ձեղ կաւալերութիւն անել, առաջարկեց սիրալիր կերպով Ասունին: Ի՞նչ գեղեցիկ էք այսօր, ում չի յայնի, որ սպարզութիւնը կնոջ ամենալաւ զարդարանքն է:

—Ալեքսանդր Վասիլիչ, դուք, ինչպէս երկում է, երբէք չէք ուղղւիլ, ծիծաղելով միաբերան բացականչեցին օրիորդները և Ասունու հետ գնացին սեղանատուն ու նստեցին մի սեղանի մօտ:

—Նոր լուր լսե՞լ էք, mesdames, բոլորիս ծանօթ Մարիա Բոդրանովնան մարդու մօտից մի գնդապետի հետ փախել է, հաղորդեց իւր սեղանակիցներին Ասունին:

—Մի՛թէ, աչքերը չւելով բացականչեցին երկու պառաւ:

—Ինչո՞ւ չէիք մինչև այժմ այդ լուրը մեզ ասում, Ալեքսանդր Վասիլիչ, երկի դուք ուրիշ նոր բաներ էլ իմանալիս կը լինէք, տոպահներիդ բերանը բաց արէք, ասաց տանտիկինը հիւրերին, խնդրելով տեղ բանել սեղանի մօտ:

—Ո՞յ կինարմատներ, ձեզ հաց ու ջուր չը տան, նոր լուրեր միան հաղորդեն, ասաց Ամիրանովը նստելով սեղանի մօտ:

Այդ նկատողութիւնը առանց պատասխանի մնաց, որովհետև կմնանց ուշքը գրաւել էր Ասունին, որ նոր լուրեր ու ասէկօսէն եր էր որ հաղորդում էր շրջապատողներին:

—Աչա ձեզ, Եկատերինա Իւանովնա, մի նոր լուր pour la bonne bouche, Ալլե Սաշինկան այս առաւոտ բացասել է իւր փեացուին: Դէ, հիմա դուք խօսելու, դատողութիւն տալու բաւական նիւթ ունէք, խնդրեմ ինձ հանդիսա թողնէք, ես դեռ ոչինչ չեմ կերել:

Այդ երկու հետաքրքրական լուրերը բերնից բերան անցնելով

գրաւեցին բոլորի ուշադրութիւնը, մանաւ անդ պառաւների, որոնք ամբողջ երեկոն թղթախաղով զբաղւելուց յետոյ՝ մեծ ցանկութիւն ունեին լեզուները մի քիչ բանացնել:

Իսկ Տրունիցին, նստած մի փոքրիկ սեղանի մօտ, ասում խօսում էր. բերանը կարծես ծաղրածութեան ու երկդիմի սրախօսութիւնների անսպառ աղբիւր լինէր. շրջապատողները մի բերան ծիծաղում էին

—Զեր կենացը, Աղողի Անդրէիչ, ուրախութիւնից ա'լ վարդի նման կարմրատակած զիմեց նրան նագեա Միհրանովան և բաժակը կոցրեց բաժակին:

Նորա օրինակին հետևեցին միւս օրիորդներն էլ:

—Մեր զեղեցիկ տանտիկնոց կենացը, առաջարկեց Տրունիցին ոսքի կանգնելով:

Թնդաց բարձր «ուռուա՛»:

Ուրախ երեկոյթից ու լնթրիքից յետոյ հիւրերը ժամի երեքին ցրւեցին իրանց աները լաւ տրամադրութեան մէջ, ամենքն էլ հեռանալով այն համոզմունքով, որ Կատարինէից աւելի սիրալիր և քաղցր տանտիկին չկայ ամբողջ քաղաքում:

XVII

Կատարինէի սիրտը երեկոյթից յետոյ շատ տիսուր էր: Օր օրի վերայ նա աւելի և աւելի էր համոզւում, որ Տրունիցին սառել է դէսի ինքը, և որքան աւելի հաստատում էր նորա մէջ այդ համոզմունքը, այնքան աւելի բորբոքւում էր նորա սէրը դէսի Տրունիցին: Նա զեռ յոյսը բոլորովին չէր կորել, կարծում էր որ վաղ թէ ուշ նա մեղաց կը գայ, բայց ահա արդէն անցել էր մի ամիս, իսկ նա զղջալու նշան ամեն՛ին յոյց չէր տալիս: Եթէ որ Տրունիցին մոռանար նորան ու հեռանար Թոսից, Կատարինէն գուցէ շատ էլ դարդ չանէր, բայց նորա համար անտանելի էր տեսնել, որ Տրունիցին հետաքրքրում է ուրիշ կնոջով, անուշաղիր է թողնում իրան, ուրիշին գերադասում է և այդ բոլոր ծանօթների աչքի առաջ:

Մօռենում էին երկհոգիսութեան վերջին ամիսները: Կատարինէն յուսահատութիւնից գժւում էր նկատելով որ երեսի գոյնը կորցնում է իւր թարմութիւնը, աչքերը փոս են լնինում և կախ լնիած

այտերի փոսերը էլ առաջւայ պէս մարդու խելքամաղ չեն անում, իսկ իրանը, չը նայելով շոր կարողների գործ դրած հազար ու մէկ խորամանկութիւններին, կորցնում է իւր նազուկութիւնը ու գեղցկութիւնը:

Տրունիցկին ծածուկ ծիծաղում էր Կատարինէի վերայ և յաճախ ասում էր ընկերներին.

— Իմ թառամած գեղեցկուհուս համար արդէն ժամանակն եկել է պաշտօնաթող լինելու ու տեղը մի ուրիշին զիջելու:

Մի անգամ, պատահելով Կատարինէին իւր հօրեղբօր աղջկայ մօտ, նա մի սուր նկատողութիւն արեց նորա ոչ շատ գեղեցիկ տեսքի մասին: Կատարինէի սրտին այդ սաստիկ զիսպաւ: Նա չը կարողացաւ իրան պահել, դուրս եկաւ պատշգամբը և սկսեց բարձրաձայն հեկեկել: Սաստիկ զայրացած վերադարձաւ տուն Կատարինէն:

— Եւ ո՞ւմ հետ փոխել ինձ, մի ցիսար տիկինի հետ, որ նադիա Միհրանովնա է անուանւում, զայրացած մտածում էր նա և այդ բոպէից նա սկսեց առել նաղիացն: Հա, ես արհամարհում եմ նորան, էլ ես ոտք չեմ դնի նոցա շեմքը, նենգաւո՞ր ընսանիք: Բայց եթէ նա իսկապէս ինձնից սառած լինի՞: Որքան գեշացել ու պառաւել եմ, յուսահատութեամբ արտասանեց նա նայելով հայելուն: Ինչ թշւառ արարած ենք մենք, կանաչքս, մի պատահական բան բաւական է մեզ անբախտացնելու համար: Կարծես կնճիռներ էլ լինեն երեսիս, համարեա զարհուրելով բացականչեց Կատարինէն նորից նայելով հայելուն:

Դեռ երկար ժամանակ այդպէս կանգնած հայելու առաջ՝ Կատարինէն դարդ էր անում մտածելով իւր կորցրած գեղեցկութեան վերայ:

Սահաւունին նկատում էր կնոջ զրութիւնը և հասկանում էր բոլոր, բայց հարկաւոր չէր համարում ցոյց տալ կնոջը թէ ինքը նկատում է: Նա գիտէր որ իւր միջամտութեամբ աւելի կը բորբոքի նորա սէրը և ասում էր ինքն իրան, — Տրունիցկուն մոռանալ տալու ամենալաւ միջոցն այն է, որ թողնեմ կինս ինքն իրան ճանաչի նորան ու տեսնի թէ ինչ պտուղ է նա, կարծեմ նա արդէն սկսել է ձանձրանալ կնոջից:

Կատարինէի վրդովմունքը օրէցօր աւելի ու աւելի սաստկանում էր: Նա ընկել էր սաստիկ մտատանջութեան մէջ. նորա սրտում.

ծագած կասկածը թէ Տրունիցկին սառել է դէպի ինքը, հետզհետէ աւելի ու աւելի զօրանում՝ ու հաստատում էր, վերջապէս նորա համբերութիւնը հատաւ, վճռեց բացատրութիւն պահանջել Տրունիցկուց և ուղարկեց նրան մի յուսահատական նամակ։ Տրունիցկին պատասխանեց նորան, թէ միւս օրը երեկոցեան ժամի վեցին իրանք կարող են տեսնել ու խօսել ամարացին կրուժ ժողովարանում։

Կատարինէի մէջ կատարւած փոփոխութիւնը նկատելի էր նորա բոլոր մօտ ծանօթներին, մանաւանդ սրատես Ասունու համար։ Նա վաղուց էր նկատել Կատարինէի ու Տրունիցկու մտերմութիւնը, բայց սկզբում կարծում էր թէ այդ կանացի կոկետութիւնն է մէկի կողմից և անմեղ կատակ միւսի կողմից։ Սակայն շատ չանցած Ասունին տեսաւ, որ նոցա յարաբերութիւնը շատ լուրջ բնաւորութիւն է ստանում, այդ ի հարկէ նորան շատ անհանգստացրեց իրեւ Ասհառունու անկեղծ և մոերիմ բարեկամի։ Նա աշխատում էր մի հնարք գտնել այդ յարաբերութիւնների առաջն առնելու և մարդու կնոջ մէջ առաջւայ համերաշխութիւնը վերականգնելու։ Հեշտ բան չէր այդ անելը. խնդիրը շատ դժւար ու փափուկ խնդիր էր, պէտք էր շատ զգոյշ լինել։ Ասունին ոչ ոքի ոչինչ չէր առում ու ինքն իրան մտածում էր թէ ինչ անի իւր բարեկամին օդնելու համար վերջապէս մի օր մի պատահական դէպք սովիակեց նորան բացարձակ խօսել Տրունիցկու հետ։

Մի օր, Պետրոսեանցի հետ այգում երկար ման դալուց յետոց Ասունին առաջարկեց նրան մտնել Եւրոպա հիւրանոցը։ Ճանապարհին պատահեցին Թոմասին։

— Գնանք, բարեկամ, քէփ անենք, այսօր ուսմիկս սույցել եմ։

— Դու էլի առաջւանն ես, Ալեքսանդր, գրամանումդ որ մի քանի կոպէկ եկաւ, չես հանգստանայ մինչեւ որ զլիսին քար չը քցես սորան նորան հիւրասիրելով։

— Ինչ անեմ, Դաւիթ, ամեն մարդ մի պակասութիւն կ'ունենայ, կամթի հետ ծծածը հոգու. հետ գուրս կը դայ։

Պետրոսեանցը չէր ուզում գնալ, բայց ընկերները զօռով քայլուեցին տարան։ Վերջին ժամանակները նա շատ վատ տրամադրութեան մէջ էր։ Զգւելով թեմական դպրոցում տիրող ինսորիգներից, յոգնելով ամենօրեայ կոիւներից, որ նա պէտք է վարեր եթէ չէր

ուղում քաջալերել դպրոցում կատարուող անարդարութիւնները, նա սիմվոլ թողնել ուսուցչական պաշտօնը, հեռանալ դպրոցից և ահա մօտ մի ամփա էր, որ նա պարտապ էր: Ապարդիւն կերպով աշխատելով մի որ և է համապատասխան գործ գտնելու, նա հազիւ էր կարողանում իւր զլուխը պահել, բաւականանալով հացոյ ամենառարածւած լրագրին աշխատակցելու համար ստացած չնչին վարձատրութիւնով:

Խօսելով նոքա հասան հիւրանոցին:

— Տրունիցկին ու ընկերները հօ չե՞ն այդ քէֆ անողները, նկատեց Ասունին, նատելով սեղանատան կողքի սենեակում:

— Աղոլֆ, խմում ենք քո պաշտօնաթող գեղեցկուհու կենացը, լսեց Ասունին և սրեց ականջները:

— Ե՛հ, պարոններ, եթէ տեսնէք թէ ինչ նամակ է գրել ինձ la belle Catherine-ը, ծիծաղից կը թուլանացիք: Խեղճիկը յուսահատութիւնից քիչ է մնում իրան սպանի:

— Ես այսօր նորա լողով մարդուն տեսայ, նկատեց Տրունիցկու ընկերներից մէկը խուզու ձայնով:

— Դու, Աղոլֆ, ժամի վեցին տեսակցութիւն ես նշանակել, թոյլ կը տա՞ս մեզ թփերի յետել կանգնենք ձեր տեսակցութեան ժամանակ, հռհռալով աւելցրեց մի ուրիշը:

— Ուրախութեամբ, անուշաղիր կերպով պատասխանեց կիսահարեած Տրունիցկին:

— Լսէք, պարոններ, չը լինի թէ այդ լրբերը տիկին Սահառունու մասին են խօսում, չը կարողանալով էլ համբերել զայրացած բացականչեց Պետրոսեանցը:

Ասունին ու Թոմակը, որոնք նորանից պակաս չեն զայրացած, դիմով դրական նշան արեցին:

— Ինչ էլ լինի, չպէտք է թողնենք, որ նոքա այդ մարսն, մաղձուռութեամբ բացականչեց Պետրոսեանցը ու պինդ խփեց բուռնցքով սեղանին:

Մինչդեռ Ասունին ու Պետրոսեանցը կատաղած մօտեցան դրանը ու պատուիրեցին ծառային որ դուրս կանչի Տրունիցկուն մի շատ կարեն և շտապ գործի համար, Թոմակը մնաց անշարժ նստած, աչքերը յառած Կառկազ լրագրի վերջին համարի վերայ և մոտա-

ծում էր թէ ինչպէս անեն այդ դէպքում, որ Կատարինէն չը խայտառակիր:

—Ի հարկէ Կատարինէի ու Տրունիցկու յարաբերութիւնները նորանից ծածուկ մնալ չէին կարող, բայց նա ոչ մի ակնարիով անդամ ոչ ոքի չէր յաջտնում իւր դիտածը և առհասարակ աշխատում էր իրան հեռու պահել այդպիսի դէպքերում:

—Ասա տեսնենք, Տիգրան, ընդհատեց նա լռութիւնը, ինչ եւ ուզում անել:

—Այն, ինչ որ կանի ամեն մի մարդ, որի երակներում արիւն է հոսում և ոչ թէ ջուր:

Այդ խօսքերը արտասամնելիս Պետրոսեանցի աչքերից կրակ էր թափւում:

—Գիտէի որ այդ կը լինի դիտաւորութիւնդ. ուզում ես մենամարտութեան հրաւիրել, բայց չէ որ այդպիսով աւելի կը վնասեն նորան, ում որ ուզում ես պաշտպանել: Մեր մէջ տիկնոջը ամենամօտ մարդը Ալեքսանդրն է, նրան կը սազի պաշտպան հանդիսանալ տիկնոջը, թող նա խօսի այդ լրբի հետ:

—Ճիշդ է ասում, ես պէտք է խօսեմ նորա հետ: Տիգրան, մեր խաթեր քեզ զսպիր, մի խօսիլ նորա հետ: Թէւ շատ դժւար է սառնասիրու մնալ, բայց ինչ արած, դու ինքդ պէտք է հասկանաս որ այժմ այդ անհրաժեշտ է:

—Պէտք է, պէտք է, մտահոգութեամբ հաստատեց Թոմաներց թէ չէ խայտառակ բան դուրս կը գայ:

Այդ ժամանակ շեմքի վերայ երեաց Տրունիցկին:

—Ի՞նչ էք կամենում:

—Ուզում եմ ձեզ հետ առանձին խօսել:

—Օհօօ, այդ շատ հետաքրքրական բան պէտք է լինի, եւ պատրաստ եմ, սկսէք, պատասխանեց Տրունիցկին շորորւելով կանգնած տեղում:

—Ինչպէս տեսնում եմ, դուք այնպիսի դրութեան մէջ էք, որ պէտք է մեր խօսակցութիւնը յետաձգենք աւելի յարմար ժամանակւան, խիստ կերպով նկատեց Ասունին: Երեկոյեան կը գամ ձեզ մօտ:

Այդ բուգէին միան կարծես Տրունիցկին հասկացաւ, թէ ինչու համար էին իրան դուրս կանչում, և մի քիչ շփոթւեց:

— Իսկ այժմ ես խորհուրդ կը տացի ձեզ և ձեր սքանչելի սեղանակիցներին լուել, թէ չէ բաներդ վաս կը լինի, ասաց Պետրոսեանցը առամները կրծտացնելով՝ Տրունիցին արհամարհանքով նայեց նորա թռւխ դէմքին ու փոթկացրեց:

— Դուք ո՞վ էք:

— Այ կ'իմանաք թէ ով եմ, զգւանքով պատասխանեց Պետրոսեանցը և բռունցքները հուպ տալով մօտեցաւ նրան:

Թոմաեւը վրդովւած նայեց Ասունուն ու ինչոր փսփսաց ականչին: Վախենալով խայտառակութիւնից ու չուզենալով վնասել Սահառունուն, նոքա աշխատեցին մի կերպ հանգատացնել Պետրոսեանցին ու երեքով միասին դուրս եկան հիւրանոցից:

— Զարմանում եմ, թէ ինչն էր ստիպում Եկատերինա Խւանվային ծանօթանալ այդ հետ, այ քեզ լիրբ արարած, արտասանեց Պետրոսեանցը առամները իրար սղմած:

Պատասխան չը սոտանալով, նա սկսեց քիթի տակին փնթվնթալ:

Ասունին անհամբերութեամբ սպասում էր երեկոյին: Նա մի քանի անգամ գնաց Տրունիցու մօտ, բայց ոչ մի անգամ տանը չը դառ նորան: Վերջապէս նա վճռեց նստել նորա տանը և սպասել մինչև գայ:

Կէս գիշերւայ մօտ էր, որ Տրունիցին տուն եկաւ:

— Այդ դո՞ւք էք, պարոն Ասունի: Բոլորովին մոռացել էի, որ ժամադիր էիք եղել, համեցէք:

— Ես իրեւ մօտ բարեկամ ձեզ լաւ յայտնի անձնաւորութեան պահանջում եմ՝ բացառիկ ինձ թէ ինչո՞ւ էք դուք ամեն չանք դրծ դնում վրդովելու նոցա լնտանեկան խաղաղութիւնը:

— Յհօ՛, դուք հօ լաւ քարոզիչ կը լինէք, իսկ ես կարծում էի թէ դուք էլ մեզ նման անհոգ քէֆի մարդ էք, բարձրաձայն ծիծաղելով ասաց Տրունիցին:

Ասունին նայեց նորան արհամարհական հայեացքով և աւելի սպասնալից ձանով շարունակեց:

— Թոյլ տւէք հարցնել՝ ի՞նչ իրաւունքով դուք համարձակում էք ծաղրի առարկաց դարձնել այն անձնաւորութեան անունը և խրախուսել ձեր անփարոյական լնկերներին նոյնը անելու:

— Հա՛, հա՛, հա՛, այ քեզ բան ննչի՞ցն էք եղրակացնում,

այդ ձեզ թւել է միայն։ Ես մեղաւոր չեմ հօ որ կանացք աշունք-
ւայ ճանճերի պէս կողում են ինձանից։ Համեցէք կարդացէք, բե-
րեզ-վու են ինդրում ինձանից, պէտք է խոստովանւեմ, որ սովո-
րութիւն չունիմ գեղեցիկ սեռի ինդիրքները բացասելու։

Տրունիցին նենդաւոր ժամանով մօտեցրեց Ասունու աչքերին
Կատարինէից ստացած նամակը։ Նա զայրացած խլեց նորա ձեռքից
նամակը ու կտոր-կտոր արեց։ Տրունիցին շփոթւեց։ Մի քանի բոսէ
անցած նա բարկացած յարձակւեց Ասունու վերաբ։

—Ինչպէս էք համարձակւում այդպէս ինքնազլուխ, առանց
հարցնելու պատուել իմ նամակիր։ Դիտէ՞ք թէ ում հետ գործ ունիք։

—Աչ մի ժամանակ այնպէս լաւ չեմ իմացել թէ ում հետ
գործ ունիմ, ինչպէս այս բոսէին։ Նեղութիւն մի կրէք ինձ բացառ-
ութիւն թէ ով էք դուք, ձեր զգւելի վարմունքը ակնյացանի ցոյց է
տալիս ձեր ով լինելը։

—Չայներդ կորէք, ես անսպատիժ չեմ թողնի ձեր հանդուզն
վարմունքը։ Ի՞նչ իրաւունք ունէիք նամակը պատռելու։

—Այն իրաւունքը, ինչ իրաւունք որ ունի ամեն մի ազնիւ-
մարդ, որ տեսնում է թէ ինչ... էհ, գուք այդ չէք կարող հաս-
կանալ, սաստիկ զայրացած բայցականչեց Ասունին և պինդ սեղմեց
ձեռքումը ողատռած նամակի կոորտանքը։ Ձեր վարմունքը զգւելի
է իմացած կացէք, որ հեշտ չէք պրծնիլ, եթէ երբ և իցէ զար-
ձեալ իսուքով կամ գործով կաչէք ձեզ յացտնի անձնաւորութեան
պատռին։ Այժմ պատիւ ունիմ՝ ձեզ հրաժարական ողջոյնս տալու։

Ասունին այդ խօսքերը արտասանեց սպառնալից եղանակով ու
դուրս եկաւ սենեակից։

Զը նայելով որ ուշ էր, նա գնաց Թոմաեւի մօտ։

Տրունիցին, որ սովորել էր ամեն բանում յաջողութիւն ունե-
նալ ու գժւարութիւնների չը պատահել, մի քիչ վախեցաւ Ասու-
նու վճռական տոնից ու սպառնալիքներից։

—Գործը վատ ուղղութիւն է ստանում։ Յանկարծ այդ յիմարն
ու իւր սւ, երկարաքիթ լնկերը չը բռնեն ու քոթակեն ինձ։ Ի՞նչ
ասեմ իմ խելքիս։ Ես պէտք է առաջուց իմանացի, որ առետրական
մարդկանց հետ ացլափսի գործ բռնելը մարդու օգուտ չի բերի։
Նրանք ի՞նչ կարող են հասկանալ մեր ուրախ, քէփով կեանքի գե-

զեցկութիւնը, նրանց ասա ամբողջ օրը նստեն ու կոպէկ-կոպէկ փող աշխատեն, նոքա ի՞նչ գիտեն մարդավարի ապրելու եղանակը, մտածում էր ինքն իրան Տրունիցկին, յետ ու առաջ քայլելով իւր սենեակում, որ լիքն էր կանանց ձեռագործներով:

Տրունիցկին երկար ման էր գալիս սենեակում մտահոգութեան մէջ, վերջապէս կանդ առնելով մտածեց.—մի շաբաթ առաջ ես արձակուրդ խնդրեցի ու տւեցին, լաւ պատրւակ է գլուխս առնելու ու աշտողից փախչելու. չը բռնեմ հենց վաղը դնամ ու գլուխս ազատեմ ամենքից: Բայց, մոռացել էի, չէ որ ես վաղը տեսակցութեան պէտք է գնամ. շատ հետաքրքրական է այժմ, կեանքիս վերջալոյսի ժամանակ, տեսնել յուսահատ սէր: Զէ՛, իսկ եթէ այդ բոլորը սատանայութիւն լինի ու ինձ համար թակարդ լարած լինեն. աւելի լաւ չի՞ լինի փասա-փուսա հաւաքեմ ու ինձ զցեմ Պետերբուրգ:

—էյ, բանը-մանը գարսիր ու կապիր, վաղը ճանապարհ պէտք է լնկնեմ: Հօ ինձ հարցնող չի եղել:

—Ինչ-որ խանութից մի գործակատար էր եկել հաշիւ էր բերել փող էր ուզում, նորանից յետոց գերձակն էլ եկաւ, շատ էին գուգոռում:

—Լոիր. քեզ դորա մասին հարցնող չը կայ: Միհրանովենց տանիձ ոչ ոք չի՞ եկել:

—Ինչպէս չէ. ա'յ նամակ էին բերել:

Տրունիցկին ուրախացաւ, առաւ ծառալի ձեռքից ծրարը ու վագ-վաղ բաց արեց: Ծրարի մէջ ներփակւած էր բանկից 300 ր. ստանալու առմասկ:

Ապրի Ելիզաւետա Բոգդանովնան, նեղ տեղն ընկած ժամանակս շատ է օգնում ինձ: Այնքան պարտք ունիմ, որ չեմ իմանում թէ ում պարտքը տամ: Ոչինչ, ոչ ոքի մուրհակ չեմ աւել, թող իրանց համար սպասեն, իսկ այս փողերը ինձ ճանապարհին պէտք կը գան, վճռեց Տրունիցկին ու հանգիստ քնեց:

Միւս օրը ժամի վեցին Տրունիցկին սլանում էր դէպի հիւսիս Ալադիկաւկազի ճանապարհով, իսկ Կատարինէն նստած կրուժոկի այգում անհամբեր սպասում էր նորան, մտայոց աչք ածելով չորս կողմը և հաշւելով բուլէները: Այդպէս խեղճը սպասեց մօտ մի ժամ, բայց Տրունիցկին չէր գալիս: Յուսահատած խեղճը ուզում էր վեր-

կենալ ձայն տալ իւր կառապանին ու վերադառնալ տուն, բայց
թուլութիւնից չը կարողացաւ տեղիցը վեր կենալ: Նորա աչքերը
լցւեցին արտասու քով. նա երկու ձեռքով բռնեց կրակի պէս այրող
ճակատը ու զլուխը զբեց սեղանին: Նորա բախտիցը այգում գեռ ոչ
ոք չը կար: Քառորդ ժամի շափ նա այդ դրութեան մէջ մնաց. յան
կարծ մէկը ձեռքը դրեց նորա ուսին:

—Կատեա ջան, ինչ է եղել քեզ, գնանք տուն, այսոեղ քեզ
համար շատ ցուրտ է:

Կատարինէն զլուխը բարձրացրեց և նորա արտասու քից կար-
մլրած աչքերը հանդիպեցին իւր ընկերուհու հայեացքին:

—Գո՞ւ ես, Հեղինէ: Ով, Ասոււած իմ, իթէ իմանալիր թէ
ինչ է եղել ինձ... Զէ՛, պէտք չէ. դու պատահաբար եկար այստեղ,
չէ՞, ասա, դու լինես քո Ասոււածը, մի ծածկիր, բացականչեց
Կատարինէն բռնելով նորա ձեռ քը և կասկածով նայելով նորան:

—Հանգստացիր, հոգիս, զուր կասկածներով քեզ մի տանջիր:
Ասունին առաջարկեց կառքով զբօնել. վճռեցինք այսոեղ զալ:

—Կը նշանակի Ալեքսանդր Վասիլիչն էլ այսոե՞ղ է:

—Ինչո՞ւ ես վախենում: Նա այս րոպէին կը դայ, հենց նոր
մոաւ ճաշարան գարեջուր խմելու:

Այդ ժամանակ նոցա մօսով անցան երկու տղամարդիկ: Կատա-
րինէն ճանաչեց նոցա,—Տրունիցիու ընկերներն էին. մի տիսուր նա-
խազգացումն սկսեց տանջել նորան, նորան թւում էր թէ մի ան-
բախտութիւն պէտք է պատահի: Կատարինէի սրտում խսոյն կաս-
կած ծագեց, որ դոքա պատահաբար չեն եկել այդտեղ. այդ կաս-
կածը աւելի ևս հաստատեց նորա սրտում, երբ որ նա նկանց
նոցա իւր վերայ յառած խորամանկ ու ծաղրական հայեացքները:
նոցա խորհրդաւոր քչփոցն ու երկդիմի ժպիսները:

Միթէ Ալորիը ծիծաղատեղ է շինել ինձ, միթէ ընկերներին
ուղարկել է որ տեսնեն, թէ ինչպէս եմ ես ստորացել, ու ուրախա-
նան, մտածում էր Կատարինէն ու սիրով այրուում փոթոթուում էր:

Հեղինէն հասկանում էր թէ ինչ է կատարուում ընկերուհու
սրտում: Նա ուղում էր Ասունուց լսածը պատմել Կատարինէին, որ
նա զգւանք գդայ գէպի Տրունիցին, բայց սիրա չէր անում ասի,
գիտէր, որ Կատարինէին այդ շատ ցաւ կը պատճառի:

իսկ Տրունիցկու ընկերները միևնոյն ծառուղիով յետ ու առաջ զրօննելով շարունակում էին իրանցը, աւելի ևս լիրը հայեացքներ դցելով Կատարինէի վերայ: Այժմ նա բոլորովին համոզւեց, որ իւր կասկածը ճիշտ է և աւելի ասստիկ զգաց, թէ ինչ աստիճան ստորացել է ինքը. որ ձեռքին ճար լինէր տեղն ու տեղը գետին կը մննէր ամօթիցը: Այդպէս դժոխային մնաստանջութեան մէջ նա մնաց մի քանի րոպէ: վերջապէս նա ոյժերը հաւաքեց, վերկացաւ տեղիցը, պինդ սեղմեց Հեղինէի ձեռքը և համարեա բանի քաշ տվեց նորան տարաւ այդու հեռաւոր մի անկիւնը: Հեղինէի սիրտը կորառում էր նորա դրութիւնը տեսնելիս, ուզում էր թեթևացնել նորա տանջանքները, բայց չէր իմանում ինչպէս անի, ինչպէս սկսի:

Վերջապէս Կատարինէն չը կարողացաւ էլ իրան պահել. սիրտը բաց արեց Հեղինէի առաջ: Նա զգում էր որ ինքը կարօտ է օգնութեան և այդ բոսկէին Հեղինէի վերայ նայում էր իրու պահապան հրեշտակի վերայ:

— Ա, ինձ, վա՞յ իմ գլխիս, յուզմունքից դողդողացող ձայնով արտասանեց նա, խայտառակւեցի, ամբողջ քաղաքի ծիծաղատեղ դարձաց: Ամեն բան կը տացի, ոչինչ չէի խնացի, որ նամակս նորանից յետ առնէի ու նորա երեսին ասէի թէ նա զգւելի խաբեբայ է:

— Յո ցանկութիւնը արդէն կատարւել է, Կատեա, նամակդ պատռել են:

— Ո՞վ է պատռել:

— Հանգիստ եղիր, հոգիս, մեր բարի Ալեքսանդր Վասիլիին է պատռել:

— Ո՞ինչ չեմ հասկանում: Ասա ինձ, Աստծու սիրուն, դուք ո՞րտեղից էք ամեն բան իմացել և ինչո՞ւ էք ժողովւել այստեղ: Մի տանջիր ինձ, շուտ արա, ասա, թէ չէ կը գժւեմ: Զը լինի՞ Դէորդն էլ բան է իմացել, հարցնում էր Կատարինէն սպասնած, հազիւ շունչ քաշելով:

Հեղինէն կատարեց նորա խնդիրքը, աշխատելով միացն ծածկել նորանից իրականութեան ամենացաւալի մասը:

— Կատեա, ես այսօր երկու անդամ գնացել եմ ճեր տուն, ուզում էի քեզ ասեմ որ նա Թուից գնացել է, բայց չը կարողացաց քեզ տանը գտնել:

Կատարինէն վերջին խօսքերը չը լսեց. նա երկու ձեռքով երեսը բռնած դասը արտասունք էր թափում: Վերջապէս նա ազատութիւն տւեց իւր խոցւած սրտին, իւր ոտնատակ տւած ինքնասիրութեանը: Հեղինէն ոչինչ չէր ասում, իմանալով որ արտասուքը սիրտը կը հովացնի: Երբ որ Կատարինէն մի քիչ հանգստացաւ, Հեղինէն առաջարիեց տուն գնալ: Հէնց որ նոքա վերկացան տեղներիցը, նրանց մօտեցաւ Ասունին: Կատարինէն սկզբում ամաշեց, բայց յետոյ շնորհակալութեան զգացմունքով սեղմեց նորա ձեռքը: Հեղինէն ու Կատարինէն առաջ ընկան Ասունին քաղաքավարութիւնից չէր մօտենում նրանց ու յետ էր ընկնում, ցանկանալով իւր կայութիւնը անզգալի գարձնել Կատարինէի համար: Տիկիններին կառք նստացնելով, Ասունին ինքը տեղաւորւեց կառապանի կողքին, որ նոքա կարողանան ազատ խօսել:

—Ախ, Հեղինէ ջան, ինչ երեսով պէտք է տուն գնամ, ասաց Կատարինէն ճանապարհին և արտասունքը առուի պէս թափեց աշքերից: Տէր Աստուած, ինչ կը լինի իմ օրը, ինչ պէտք է անեմ այժմ:

—Մի յուսահատուիլ, հոգիս. մի բան որ էլ դու նորան չես սիրում, մսիթարում էր ընկերուհուն Հեղինէն, բնքշաբար բռնելով նորա երկու ձեռքը:

Թէև Կատարինէն լուռ էր, չէր խօսում, բայց Հեղինէն զիտերթէ ինչեր էին անցնում նորա մտքովը: Նա աշխատում էր հանգըտացնել Կատարինէին, բայց նա կարծէս չէր լսում նորան, աչքը ներքեւ զցած շարունակում էր լուռթիւնը:

Քանի մօտենում էին տանը, Կատարինէի վրդովմունքը աւելի ու աւելի սաստկանում էր. երեմն երբեմն նա ցնցւում էր նստած տեղը: Տանը նորա գոզը աւելի սաստկացաւ և նա ուժասպառ ընկաւ անկողնի վերաց: Հեղինէն տաք փաթաթեց նորան ու նստեց նորա մահճակալի պոնկին:

Ասունին զնաց Սահառունու առանձնասենեակը, աշխատելով առժամանակ նորա ուշադրութիւնը հեռացնել կնոջից:

—Կարծեմ Կատեան ու տիկին Հեղինէն եկել են, Ալեքսանդր:

—Հա, եկան, բայց պէտք է առայժմ նոցա հանգիատ թողնել, երեի այժմ նոքա շորերը փոխելիս կը լինեն. ճանապարհին անձրեւ կարգին թրջեց նոցա: Շնորհաւորում եմ, վերջապէս դու է

լնիար մասնաժողովի մէջ, աւելցրեց նա նայելով սեղանի վրայի թղթերին:

—Անպէս ես ասում, Ալեքսանդր, կարծես ուրախ չես որ այդպէս է եղել:

—Ճիշտ որ ուրախ չեմ. սիրտս վկացում է, որ դու այդ գործի պատճառով կը մնասւես: Եթէ չեմ սխալում, հարցը նրանում է, թէ ում է պատկանում այն հողը, որ գտնուում է կոմսի գործարանի կողքին և որտեղ կոմսը պատահաբար հանք է դտել: Այդ հարցը ինքն ըստ ինքեան շատ պարզ է, բայց այնպէս են խճճել, որ անհնար է ճշմարտութիւնը լուսաբանել առանց կոմսի պատւին ու շահերին. իսկ կոմսը մեզնում այնպիսի դիրք ու ազդեցութիւն ունեցող անձնաւորութիւն է, որ չի կարելի անպատիժ նորա խաթրին դիպչել:

—Բայց մենք կը դիպչենք, որովհետև այլապէս անհնար է գործին արդարացի վճիռ տալ: Այս այս թղթերը քրքրելով ես համոզւեցի, որ ոչ միայն հողերը ասպօրինի կերպով է իւրացըել կոմսը, այլ գործարանն էլ խարեբացութեամբ է խլել անփորձ մարդկանց ձեռքից: Թէև ես հէնց առաջին նիստում նկատեցի, որ մասնաժողովի անդամների մեծամասը, չուզենալով գրգուել կոմսին իւր դէմ, նորա կողմն է պահում, բայց յոյս ունիմ, որ վերջ ի վերջոց կը կարողանամ նոցանից մի քանիսին համոզել, որ անաշաւ կերպով վերաբերւեն գործին:

Ասունին կասկածանքով գլուխը թափ տեց և ուզում էր ինչոր աւարիել, բայց Սահառունին խօսքը բերնումը թողեց, —գորա մասին յետոյ կը խօսենք, իսկ այժմ՝ գնանք աիկինների մօտ, տեսնենք ինչ նոր բան կը պատմեն մեզ տիկինները:

Ասունին զգուշութեամբ վերցրեց զիսարկը ու աննկատելի կերպով դուրս եկաւ սենեակից: Սահառունին նկատեց որ Կատարինէն շատ սպրոնած է ու տիսուր:

—Ի՞նչդ է, Կատեա, կարծես քէֆ շունիս: Ինչ տեսակ մարդ ես, քեզ ասացի որ վատ եղանակ է, տանից մի դուրս գալ, չը լսեցիր խորհուրդիս:

—Ոչինչ, Գէորգ... մի քիչ ցուրտ դիպաւ... արտասանեց Կատարինէն սաստիկ շփոթւած, դլուխը բարձից մի քիչ բարձրացնելով:

Հեղինէն տեսնելով որ անյարմար է մնալ, վերկացաւ որ գնայ:
— Ո՞ւր, տիկին Հեղինէ, աղաչելով արտասանեց Սահառունին:
— Խա՛ը, չեմ կարող մնալ, ասաց նա մի քիչ յուզւած և,
համբուրելով կատարինէին, գնաց:

Հեղինէն շատ տխուր վերադարձաւ տուն. սկի չէր կարողանում
մոռանալ ընկերուհու անտանելի դրութիւնը:

— Քո բացակայութեան ժամանակ Ելիզաւետա Բօգդանովնան
եկել էր քեզ խնդրելու որ մասնակցես սիրողների ներկայացմանը,
ասաց նորան մարդը:

— Ինչ է կպել ինձ ու ձեռ չի քաշում, հազար անգամ ասել
եմ նորան որ թատրոն ներկայացնել չեմ կարող:

Ամիրանովը յօնքերը կիտեց:

— Նա արդէն հաւատացրել է կոմսուհուն, որ դու մասնակցում
ես: Խնքդ ասա, Հեղինէ, լա՞ւ է ամօթով թողնել Ելիզաւետա Բօգ-
դանովնային, քանի որ դու նորանից բացի լաւութիւնից ոչինչ չես
տեսել:

— Ինձ ինչ թէ ամօթով կը մնայ. ինձ այն է զարմացնում, որ
Միհրանօվան առանց ինձ հարցնելու իրան ու գլխու իմ տեղակ
խօսք է տալիս:

— Արի, Հեղինէ ջան, մի թարսւիր, իմ խաթեր մասնակցիր
Մի մոռանալ, որ ներկայացումը բարեգործական նպատակով է:

— Մի բանում որ Միհրանօվայի մատը խառը լինի իմ կար-
ծիքով էլ այսաեղ խական բարեգործութիւն չի կարող լինել:

Մի քիչ յետոց մարդը նորից խօսք գցեց ներկայացման մասին:

— Ձեռք քաշիր ինձնից, Միշէլ: Պէտք է հասկանաս, որ ես չեմ
կարող մասնակցել. առաջինը այն պատճառով, որ այժմ ես պէտք է
հանգիստ մնամ, երկրորդ էլ որ ես բեմական ձիրք չունեմ: Լաւ
կանէիր, եթէ ուրիշներին խնդրէիր:

— Լոիր, Ասաւուած սիրես, երբ պէտք է հասկանաս վերջապէս
որ ոչ ոք խորհուրդներին կարու չէ, բարկացած գոռաց Ամիրա-
նովը ու հեռացաւ նորանից: Ո՞րտեղ էիր այսօր, խստութեամբ
հարցրեց նա կնոջը մի քիչ յետոց:

— Սահառունիների մօտ:

— Հըմ... Սահառունիների մօտ... Հըմ:

— Ինչպէս տեսնում եմ քո կարծիքով նրանց մոտ գնալն էլ յանցանք պէտք է համարել:

— Եւ ի հարկէ նրանց մօտ պատահեցիր զանազան Թօմաւների ու Պետրոսօմների հետ նրանք են քեզ իմ դէմ լարում:

— Եթէ չեմ ուզում մասնակցել, կը նշանակի քո դէմ լարւած եմ, ժպտաց Հեղինէն:

— Զարմանալի է, քեզ որ թողնեն բացի Սահառունիներից ոչոքի հետ ծանօթութիւն չես անիլ

— Իսկ ինձ աւելի զարմանալի է թւում, որ դու պահանջում ես շահասիրական նկատումներով ծանօթութիւն անել:

— Քեզ խորհուրդ կը տայի, որ ինձ հետ խօսելիս այդ տօնը թողնէիր, թէ չէ...

Ամիրանովը սպառնալից կերպով նայեց կնոջը և դուռը շըմիացնելով տանից գուրս եկաւ:

— Զէ՛, այսպէս չի լինի, պէտք է այնպիսի քիթ ու պոռնկով այդ պարոններին ընդունել, որ ոսները կտրեն մեր տանից, մոածում էր Ամիրանովը ճանապարհին:

Հեղինէի գնալուց յետոյ Սահառունին մենակ մնաց կնոջ հետ:

Այսօր բոլորն էլ մի տեսակ են, մտածում էր նա, մի բան պատահած կը լինի, ինձնից ծածկում են:

— Կատեա ջան, հօ բան չի պատահել քեզ սանամօրդ մօտ: Երեսիդ գոյն չի մնացել, հարց ու փորձ էր անում մարդը սաստիկ անհանդիս սրտով:

Կատարինէն երկար ժամանակ ոչինչ չէր պատասխանում, վերջապէս սիրով պնդացրեց ու լացակրինած սկսեց խօսել, — Ա'խ, Գէորգ, ես սանամօրս մօտ չէի գնացել... Այս ի՞նչ անբախտութիւն էր որ պատահեց ինձ... ինձ էլ ոչինչ մի հարցնիլ... չեմ կարողանում պատասխանել... երբ որ կարողանամ ամեն բան քեզ կ'ասեմ... Այժմ ինձ մենակ թող, սաստիկ յողնած եմ, ուզում եմ հանգստանալ, աղաչելով աւելցրեց կատարինէն երեսը բարձով ծածկելով:

Միւս օրը Սահառունին մի քանի անգամ փորձ արեց կնոջ հետ պարզ խօսելու, բայց միշտ թողնում էր այդ դիտաւորութիւնը պախենալով որ այդ կը վրդովեցնի կնոջ սիրով:

— Գէորգ, ո'քան մեղաւոր եմ քո առաջ, յանկարծ դուրս

թուաւ Կատարինէի քերնից երեկոյեան։ Որքան ծանր է ինձ համար յաշանել քեզ ճշմարտութիւնը, սկսեց լալ նա և երկու ձեռքով ծածկեց դէմքը։

Սահառունին հասկանում էր, որ կնոջ վրդովմունքի պատճառը Տրունիցին է և թէև այդ սաստիկ ցաւ էր պատճառում նորան, բայց տեսնելով կնոջ տանջանքն ու զղջումը նա աշխատում էր ցոյց տալ թէ հանգիստ է։ Նա սաստիկ խղճում էր կնոջը։

— Հոգիս, բաւական է քեզ տանջես, միսիթարում էր Կատարինէին Սահառունին, դրիկելով նորան։ Ես ամեն բան կը ներեմ քեզ, միայն դու սիրող հանգիստ պահիր։ Ձէ քեզ վնաս է վրդովել այժմ։

Այդ խօսքերը մի քիչ սիրո տւեցին Կատարինէին։ Նա յառեց աչքերը մարդու վերայ կարծես ուզում էր թափանցել նորա հոգու խորքը, բայց էլի առանց մի խօսք ասելու ձեռով արեց որ սենեակից դուրս գայ։

Տիւս առաւօտ Կատարինէն աւելի հանգիստ էր երեւում և երբ որ մարդը հարցրեց թէ ինչպէս է առողջութիւնը նա սաստիկ քնքշութեամբ ընկատ նորա գիրկը։

— Աստուած իմ, ի՞նչ անբախտ մարդ եմ ես, դու այնքան անսրատ ես, Գէորգ, որ էլ ինձ սիրել չես կարող։

— Հանգստացիր հոգիս, ես քեզ առաջւաց պէս սիրում եմ և պէտք է սիրեմ։

Սահառունին այնքան յուզւած էր որ էլ ոչինչ ասել չը կարողացաւ։

— Գէորգ, հոգիս, ներիր, հաւատացիր որ դու ոչ մի ժամանակ այնքան սիրելի չես եղել ինձ համար որքան այժմ, բայցականէց Կատարինէն լացակրինած ու պատմեց մարդուն ամեն բան։

— Խօսք տուր, Գէորգ, որ այդ բոլորը մոռացութեան կը տաս և ես քեզ համար առաջւան կինը կը լինեմ։

Սահառունու համար շատ դժւար էր հանգիստ սրտով լսել այդ բոլորը։ Բայց իմանալով թէ որքան կարօտութիւն ունի Կատարինէն այդ դժւար բոպէներում միսիթարութեան ու գգւանքի, բոնեց նորա ձեռքը և յուզմունքը զսպելով ասաց։

— Հանգստացիր, հոգիս, շատ բան ես քաշել այս քանի օրը տայ Աստուած որ այդ քեզ չը վնասի։

Մենակ մնալով Կատարինէն ամբողջ երկհոգիսութեան ընթացքում առաջին անդամ սկսեց ուրախ սրտով մտածել ապագայ երեխայի մասին. նորա միակ յօցը այդ երեխայի վերաց էր, որ իբրև անխղելի կապ պէտք է կատէր նորան իւր մարդու հետ:

Այդ գէպքից յետոյ Սահառունին սկսեց նկատել, որ կինը կարծես սկսում է իրան առաջւայ պէս սիրել. բայց այդ նորա սրտին միայն կակիծ և ցաւ էր սկասմառում: Նա Կատարինէն սիրում էր, բայց հայրական սիրով, որ պէտք է իւր սիրելի և թոյլ զաւակին պահպանի ամեն չարիքից ու փորձութիւնից. ուրիշ սէր նա չէր կարոշ զգալ գէպի Կատարինէն:

—Զէ՛, ես փոխադարձաբար սիրել նորան չեմ կարող, :ը՞նայելով որ շատ կուզէի սիրել, մտածում էր նա գառնութեամբ և նորա միտքը նորա կամքի հակառակ սկսեց զբաղւել Հեղինէով. ինչոր մի ոյժ, մի զօրութիւն ձգտում, քաշում էր նորան գէպի այդ կինը: Արքան աւելի մօտենում էր նորան Սահառունին, այնքան նոր-նոր թագնւած գանձեր էր գտնում նորա խելքում և սրտում, այնքան աւելի էր համոզում, որ Հեղինէն կատարեալ մարմնացումն է կողման իդէալի, որ ինքը առեղծել էլ իւր երեւակացութեան մէջ:

(ԱՅ շարունակուի)

ԷԼ ՄԻ ԽՆԴՐԻՐ...

Ա.Ք.ՔՍԱՆԴՐ ԱՐԾԻԻԵԱՆԻ

Էլ մի խնդրիր, մանուկ սիրուն,
Տանջւած սրտից քեզ նւէր՝
Ո'չ երգ այլող, երգ վառվռուն,
Ո'չ սիրոյ մեղմ նւազներ:

Զուր են քո ջերմ, քո խանդալից
Այդ նոր ժըպիտն ու գգւանք
Դու չես ցրւել իմ հէդ սրտից
Նենդւած սիրոյ տառապանք...

Այն աւ օրից, երբ փշը եցիր
Դու յոլսերըս ծաղկավառ...
Սէրն ու երգըս անտրքեցիր—
Սիրտըս մեռաւ քեզ համար...

Այն օրից իմ մատաղ կրծքում
Շիջաւ չքնաղ քո պատկեր.
Այժմ վառւած՝ իմ երգերում
Ես գգւում եմ մի այլ սէր՝

Սէր գէպի հոգս ու կարեքի
Բաղդահալած զաւակներ...

Այդ սէրն է ինձ այժմ, ով կոյս,
Ոգևորում, կեանք տալիս...
Նա է բուռըն խանդը հոգոյս,
Այլուող նիթը երգերիս...

ՎԱՍՏԱԿ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐՄԻՒՏԱՆԻ

Հոգ չէ, տանջւիր, չարքաշ մշակ, քրտինք թափիր դու անվերջ,
Թող քրտինքովդ մայր-երկիր կշտանալ.

Զուր չի անցնիլ քո տանջանքը. այնտեղ երկրի կրծքի մէջ
Քո քրտինքը նոր ոլժ, նոր կեանք կ'ստանալ:

Տանջւիր, եղբայր, տանջւիր սիրով, քո տանջանքում քրտնալից
Կայ սուրբ վաստակ. երկնքիցն է նա օրհնւած.

Թափիր քրտինք, երկրի մշակ, մայր-երկիրը իւր կրծքից
Քեզ լիաձեռն կը պարգևե արդար հաց:

ԵՐԿՈՒ ԳԻԾԵՐ

ԱԼ Է ՔՍԱՆԴՐ ԱՐԺԻԻՆԱՆԻ

Ոյն գիշերը կախարդէչ էր
Նւիրական իմ հոգուն.
Երգում էի ես բուռըն սէր,
Օրհնում սիրոյ վառ գարուն;
Այն գիշերը գարնանալին
Ինձ նոր կեանք էր ներշնչում,
Ինձ ժպտում էր պայծառ լուսին
Աստեղարդ երկնքում.
Եւ նազելիս քաղցը սիրով
Յառած վերաս իւր աչեր,
Շշնջում էր քնքոյշ ձայնով
«Սիրում եմ քեզ, իմ ընկեր»...

Տաղտկալի է այս գիշերը,
Ցուրտ է պատել իմ սրտին.
Ինձ չեն ժպտում էլ աստերը,
Էլ չի շողում վառ լուսին.
Այս գիշերը աշնանալին,
Որպէս խորին տառասլանք,
Պաշարել է իմ խեղճ հոգին.
Զկան էլ սէր, էլ գգւանք...
Եւ ես մենակ թափառում եմ
Անկեանք, գեղնած պարոիզում.
Ես վշտանում, տառապում եմ.
Սիրոյս կորուստն եմ ողբում...

ԽԱԹ-ՍԱԲԱ

(ՀԱՅ ԲՈՇԱՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ)

Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑԻ

(Նարունակութիւն և վեցը¹⁾)

Լ.

ՀԱՅ ԲՈՇԱՆԵՐ

Թիւրքա-Հայաստանի ժողովրդեան մի մասը, շուրջ 50.000 ժողովուրդ կազմում են գնչունները, որոնք կոչում են չինդէնէ, մթրլբ և կամ բոշա անուններով. շատ անդամ միայն «մաղադրձներ»: Այդ ժողովուրդը ցրւած է ամեն կողմ, սկսած Կ. Պօլսոյ Մջակալքից մինչև Էղիոնէ և Մակեդոնիա, մինչև Ամասիա, Մարզուան, Եւգոլիա, Կարին, Թորթում և այլ գաւառները: Մեծամասնութիւնը նոցանից տեղ են բռնել Ամասիայի Վէղիր-Քէօփրից մինչև Քասթամունիի գիւղերը, կենտրոն ունենալով Բօյբադ աւանը. այդտեղ միայն նոքա 7000 են և բոլորն էլ լուսաւորչական քրիստոնեաներ են—հայ բոշաներ: Փոքրամասնութեամբ հայ բոշաները բռնել են Երզրումի բոշա-մահալիք թաղը և Թորթումի դաշտերը:

Հայ բոշաները նման չեն Վանի, Կ. Պօլսի և Էղիոնէի շրջակայքում վրանաբնակ և թափառական մահմեդական մթրլբներին,

¹⁾ Տե՛ս «ԱՄՈՒՋԱ» № 9, սեպտ. 1890 թ.:

որոնք նշանաւոր են իրանց կեղտոտութեամբ և գողութեամբ և որոնք արհեստներով կազմում են մի քանի որոշ ցեղեր:

Այդ մահմեդական գնչուներից շատ սակաւները ունին խաչն և հող, զբաղւում են նոքա իրանց միջավացրում գոնուող ամենալետին արհեստներով, շինում են խողանակ, մաղ և իրանց շինածները ուսերնին առած պատում են գիւղեր և քաղաքներ:

Հենց դոցանից է, որ բոլոր գնչուները առ հասարակ ճանաչւում են իբր թափառական մուրացիկ մի ժողովուրդ և դորա համար է, որ չը կարողանալով այդ գանազան ցեղերը միմեանցից որոշել, բոլորին էլ անխստիր կոչում են մաղագործ, մթրը, չինգէնէ կամ բոշա...

Բացց մթրը գանազանւում է բոշայից: Բոշան քրիստոնեաց է, իսկ մթրը անխստիր կերպով դաւանում է իւր միջիվացի կրօնը, որ մեծ մասամբ մահմեդականութիւնն է լինում:

Մաղագործները առ հասարակ մթրը բներ են, որոնք ամառը լեռների վերաց վրաններում, իսկ ձմեռը գետնափոր խրճիթներում են բնակւում, գործում են մաղ, խողանակ, աւել, փսիաթ և շատ անգամ էլ տեղ տեղ մազեղէն տոպրակներ, կարպետներ և այլն... Իրանց այդ բերքերով նոքա կազմում են առանձին ցեղ:

Մահմեդական գնչուների երկրորդ տեսակն են մուրացկան գընչուները, որոնք բոբիկ ոռներով, կորտած հագուստով և, մի մի տոպրակ կողքից քաշ արած, անդադար քաղաքից քաղաք են գնում, մուրում են, ֆալ են բաց անում, գուշակութիւններ անում, բալլագցում և զանազան այլ և այլ միջոցներով ապրուստ են ճարում:

Երրորդ տեսակն է, երգող և պարող մթրը բներ:

Ոչ մի ազգ կամ ցեղ Տաճկաստանում այնչափ անբարոյական չել, որքան գնչուների այդ տեսակը, որը հնարում է ամենալկահի երգեր, իւրաքանչիւր 40 փարայ տւողին է յանձնում իւր կինը և աղջիկը իւր որդուն կամ եղբօրը փոքրութիւնից սովորեցնում է պարել հազցնում է կնոջ հագուստ և իւրաքանչիւր էֆենդիի կրքերին է յանձնում մի քանի կոպէկի համար... պէտք է տեսնել թէ ինչպէս հայրը մի թմբուկ ձեռքին, իւր որդուն առջևն առած, նորա մազերը երկար թողած, ուն քերը ներկած՝ գնում է պարելու տաճիկների մօտ... պէտք է տեսնել թէ ինչպէս կանայք, խումբ առ խումբ, հազած

սեթևեթ հագուստներ ման են գալիս Կ. Պոլսոյ փողոցներում, կանգնում են դւների առջև, սկսում են պարել և երգել... պէտք է տեսնել թէ ինչպէս երիտասարդները քաղաքից դուրս բանակած գնչուների վրան-ներն են լեցւում և, ամուսնոյն մի քանի կոպէկ վճարելով, ամենայն հեշտութեամբ կարողանում են զւարճանալ... դա մի այնպիսի սո-վորական բան է, որ դիտողութիւն անողի վերաց կը ծիծաղեն...

Սուլթանի, փաշաների, բէգերի և այն բախկասները, թիւյսիւզները և այն այդ ցեղից են... երգողներն էլ այդ ցե-ղից են, լկոի երգերի հեղինակներն ևս այդ ցեղից են...

Մահմեդական գնչուների ցեղերն են կազմում նաև որտորդ մթրլբները, որոնք աղւէսի մորթեր են բերում քաղաք և վաճա-ռում... այդ ցեղերից են նաև երբեմն աւազակներ, որոնք ճանա-պարհների վերաց անցորդների են կողոպտում, եթէ ոյժ ունեն և լրում են ոտներ ու մի կար հաց ուզում, եթէ թոյլ են...:

Հայերը, թիւրքերը և բոլոր միւս ազգերը սաստիկ ատում են այդ ցեղերին, իրանց մանուկներին վախեցնում են բոշացի անունով, հայհոյանքի տեղ են ընդունում մթրլբ և բոշա բառերը. ճշացո-ղին, որկրամոլին, ագահին և գողին «մթրլբ» ածականով են նա-խատում... Այդ ցեղը լիովին արհամարհւած մի ցեղ է, լինի՛ նա հաց, լինի թիւրք, պարիաների պէս զրկւած են ամեն իրաւունքնե-րից, սակայն վճարում են հարկ թէ ունեցածների և թէ չունե-ցածների համար և կան բազմաթիւ հարկերի կապալառուներ, որոնք գերազա են համարում գնչուների այդ խեղճ, սորուկ ցեղերի հետ դորձ ունենալը...

Հայ բոշաները բոլորովին տարբերուում են վերոյիշեալ բոլոր ցեղերից թէ կրօնքով, թէ սովորութիւններով: Հայ բոշաների կրօնը քրիստոնէութիւն է. շատ ջերմեռանդ են և ամուխսիւ լինելու ան-դամ գնում են, միացն թէ հայերի հետ շատ քիչ յարաբերութիւն ունին, իսկ խնամութիւն ոչ, սոքա էլ հայերի պարիաներն են, սոցա միջից եկեղեցական չեն անում և նոյն իսկ միմեանց եկեղեցի գժւա-րութեամբ են մօնում: Հայ բոշաների մեծ մասը Ամասիացի շրջա-կաքումն է, այնուեղ նոքա ունին հող, տուն և տաւար. այնուեղ, որին և Երզրումի մէջ՝ նոքա հաստատքնակ են, իսկ Թորթումի մէջ կան ցեղեր, որոնք հող չունին և անդադար թափառում են

այս այն կողմ, սակայն մուրացկանութիւն չեն անում. Նոքա զբաղ-
ւում են խաշնարածութեամբ և ձմեռը իրանց երաժշտական գոր-
ծիքներով քաղաք և գիւղերն են իջնում հարսանիքներում նա-
գելու, ուր և երգում են իրանց երգերը, որոնք երբեմն շատ ծի-
ծաղաշարժ, երբեմն լու րջ-խորամիտ և երբեմն մեղծ և տխուր են...

Նոքա սիրում են իրանց գեղեցիկ հեքիաթների մէջ գովել
իրանց ազդի առասպելական կամ իրական գիւցազներին, արևելեան
բանաստեղծութեամբ պատմում են Լոմ-Հասանի, Աբգիւլ-աղայի,
Խաթ-Սաբայի և այլ հերոսների կեանքը... խօսում են մի առանձին
լեզուով, որը փոքր ինչ նմանութիւն ունի հացերէնին, իսկ երգու-
մում բնակւողները, արդէն լիովին մոռացած իրանց լեզուն, մի
առանձին շեշտով հացերէն են խօսում և սակաւ առ սակաւ սկսել
են հացերի հետ խնամութիւն իսկ անել. վերացւել է սկսում այն
խորթութիւնը, որը տիրում էր դոցա և հացերի մէջ... այժմ հայ
բոշաներից քիչերն են մնացել, որոնք հողի տէր չեն և որոնք ստիպ-
ւած առ այժմ թափառում են ամբողջ Թիւրքա-Հայաստանում...

Թ.

Օ Դ Ի Շ Ո Ւ

Հենց ացդպիսի հող չ'ունեցող հայ բոշաների մի ցեղ էր Խաթ-
Սաբայի խումբը, որը վրաններ էր խփել Զիւխնի զիւզի վերայ:

Խաթ-Սաբայի վրանից մկան, որը իւր կողը տւել էր կիրճի
մօտիկ մի բլրակի, վրանները փուլում էին մինչև գահաւանողը և
և այնուղից ևս մինչև կրճի բերանը, ուր գտնվում էր Մնօցից Վար-
դիկի մազեղէն կաորներից կազմւած մեծ վրանը:

Դա մի եղեգնեայ միջորմով բաժանւած մեծ տեղ էր մէջ
տեղում՝ վրանին վեղարի ձև էր տալիս մի հաստ սիւն, իսկ փոքրիկ
սիւները իրը յենարան էին ծառախում և սև շորի միւս ծայրերին ամ-
րացած էին մի փոքրիկ առուակի մէջ, որը փորւած էր վրանի շուրջը
նոցա մէջ էր հանգչում եղեգնեաց այլ ցանկը:

Վրանում այդ միջոցին կային միայն կարասներ, մի քտնի հին
կարպեսներ, մի ճոճ կապած սիւնից սիւն՝ որի մէջ աղարկած աղա-
ղակում էր մի թխաղոցն մանուկ, կատուն ցատկում էր միշնորմի

զրայով, իսկ մի կին կանգնած սիւնի մօտ նայում էր դէպի Խաթ-Սաբայի վրանը, ուր իջել քնում էր Հասան Դալայի բէզը:

Հազիւ թէ հարկահանը և գրագիրը փուել, առւակի եղերքը քնում էին, որ վրանի միջնորմի ետևից զուրս եկաւ մի աղջիկ և մօտենալով կնոջ՝ հարցրեց.

—Քնեցի՞ն բոլորը:

—Քնեցին, պատասխանեց կինը:

—Իսկ մերո՞նք... ասաց նա և նայեց բոշաներին, որոնք հեռացել ժողովւել էին մի վրանի մօտ և ցած ձայնով վիճում էին:

—Այ, ասաց կինը աղջկան-այժմ քնեցին, կը զարթնեն և ինչ որ ունինք-չունինք կը հաւաքեն, այն ժամանակ նոր թող գաց մայրդ և ուզածին չափ գոռդուայ...

—Մա՞յս ինչ անի, ծիծաղեց աղջիկը—նա գիտէ՞ր, որ Հասան Նալայի բէզը մեզ մօտ է գալու...

—Է՞՞ս, Օդի՛շու, գիտնար էլ՝ ոչինչ չէր կարող անել...

Կինը Վարտիկի կինն էր, նիհար և հասակաւոր. ժամանակին գեղեցիկ էր եղել, բայց այժմ նա նմանում էր մի թառամած ծաղկի. տիտուր-մելամաղձու հայեացք, թողլ շարժւածք, քնէած աչքեր և խոր լնկած թշեր. իսկ Օդիշուն, դա Խաթ-Սաբայի թոռն էր, մի սիրուն հմայիշ աղջիկ պարթև հասակով, աշխոյժ մեծ աչքերով և թուխ դէմքով. բերանը փոքր ինչ մեծ էր, բայց չէր տգեղացնում դէմքը. վերին շրթունքի վերաց կարծես սկսել էր լնշացք բուսնել, որովհետեւ աղեղնաձեւ մի աղւամազ ծածկել էր քթի տակը. փոքր ինչ ծուռ քիթ և փոքրիկ, բերանի առջեկի ատամները քիչ դուրս ցցւած, և այլ պատճառով, երբ նա ժպտում էր, այնչափ քաղցր, այնչափ զրաւիչ արտայացութիւն ունէր այդ ժպիալը, որ ոչ ոք չէր կարող անտարբերութեամբ գիտել... լոմերը մինչեւ իսկ դիտել էին Օդիշուի այդ ժպիալը. դա զրաւել էր նոցա բանաստեղծին և նա, երբ լոմերին գէստէնը¹⁾ երգում էր, չէր մոռանում վերջումը երդելու սոյն տողերը.

Նորա ժպտի մէջ—երբոր ժպտում է—

Փայլում է բարին. կարծես մի լոսկ

¹⁾ Գովաստական երդ:

Զար ոչինչ չը կայ աշխարհիս վերաց,

Եւ երկինք մի պարզ նորա մէջ կը ցոլայ...

Վերջապէս Օդիշուն իւր ամբողջութեամբ մի այնպիսի վայրենի գրաւիչ, զօրեղ գեղեցկութիւն էր կազմում, որ չունէր իւր մէջ ոչինչ մեղի, թոյլ, հարեւմական նշան և որից շատ քիչ սակածն կարելի է գտնել միմիայն լեռնաբնակ քիւրդերի և հայ բոշաների մէջ: Այդ գեղեցկութիւնը պատկառանք իսկ ազդում է, մարդ կարծում է թէ անհնար է ունենալ նորան, բայց երբ մի անգամ ունեցար, անհնար է զիազել նորան...

Օդիշուն այդպէս աղջիկ էր. նրանից վախենում էին բոշաները, որովհետեւ նա քաջ էր. քաջ ցուպ խաղացնող և գոտեմարտ, նորա մեծ թուխ մասներով քնքոյց ձեռքերի սպառակները տապալեցնել էլ կարող էին...

— Լսի՛ր, ասաց Օդիշուն Վարտիկի կնոջ—մեծ մայրս եթէ այս տեղ լինէր, այդ ցանցաւ լուսերը այդպէս չէին ժողովւիլ միայն խօսելու համար. նա կը հաւաքէր նոցա, կը տար նոցա ձեռքը մի մի ցուպ, կը կոտորէր այդ քնած զինւորներին և Հասան Ղալայի բէդին այդ գահաւանդից ցած կ'ուղարկէր դէպի դաշտը... իմ մեծ մօրից վախենում են բոլորը, որովհետեւ նա քաջ է...

— Տե՛ս, տե՛ս, ասաց Վարտիկի կինը—Հասանը և մարդս գալիս են...

— Եւ ի՛նչ խեղճ՝ դէմքով, աւելացրեց Օդիշուն, կարծես լաց են լինում... է՛, Հասա՞ն, Հասա՞ն, կարծես Խաթ-Սաբայի, Լոմ Հասանի որդին չես...

Վրանը մտան երկու բոշաներ:

— Հէնց այդ է, գոչում էր Հասանը Վարդիկին, կարծում ես թէ մեր ունեցածները առնելով գո՞հ կը լինին... կը տեսնես, կը գան վրանդ էլ կը քանդուսեն, մէջքիդ մի լաւ հարւած էլ կը տան, կինդ էլ... հըմ... հրեց նա Վարդիկի կնօջ և Օդիշուին նայելով—չ՛, հրացանս պիտի լեցնեմ... ես Օդիշուին սաղ սաղ չեմ տայ նոցա ձեռքը...

— Ո՞վ, գոշեց Օդիշուն-ե՞ս... անհոգ կա՛ց, գուք ձեր մասին մտածէք, Լոմ-Հասանի թոռը, լինի նա աղջիկ՝ կարսդ է իրան պաշտպանել...

— Լա՛ւ, լա՛ւ, ասաց Հասանը—այստեղ էլ բոշաներ չեն, տես նո՞ւմ ես այն հրացանները, բոլորն էլ լիքն են...

—Գիտեմ, ժպտաց Օդիշուն-բայց հեշտ չէ նոցա Օդիշուին սաղ սաղ ձեռք գցել...

—Եէզը անպատճառ մի օյին կը հանի թէ որ քեզ տեսնէ, ասաց մուայլ դէմքով Վարտիկը և նատեց գետնի վերաց, սիւնի մօտ. Հասանը ևս տեղաւորւեց նորա կողքին:

—Նըմ, ասաց Հասանը—մերոնք բոլորն էլ յուսահատուել են... և այսպիսի միջոցին էլ մայրս թողել երգում է գնացել:

—Մայրս ի՞նչ անի, դոչեց Օդիշուն—նա խօ չը զիտէր որքէզը պիտի գայ... դէ՛, դո՛ւ էլ Լոմ-Հասանի որդին ես... վեր կա՛ց, բուրդին հաւաքիր և կոտորեցէք այդ բարբարուներին, չէ՞ որ դոքա զարթնելու են և երբ զարթնեն՝ անելու են ինչ որ մտածեն... խօ լաւ բան չե՞ն մտածիլ...

—Ասում ես, ասաց Հասանը—մենք խօ բացի փայտից ոչինչ չունինք, իսկ նոցա... տեսնառմ ե՞ս...

—Տեսնում եմ... եթէ չէք կարող ուրեմն փախէք քանի նոքա քնած են... էն որ ձեր բոլոր ունեցածները առնելու են... գոնէ փախնենք, որ ձեր կանանց շանպատւեն...

—Նըմ, արաւ Վարդիկը-վատ միտք չէ այդ... կիրճի մէջ մտնենք ու անցնենք դաշտը... քնած են:

—Եհ, ինչե՛ր ես ասում... բոլորն էլ ձիաւոր են, կրնկնին ետևներից ու վայ այն ժամանակ...

Այդ միջոցին զինւորներից մէկը արթնցաւ, յետոյ միւսը և 5 բովէից յետոյ բոլորն էլ կուացած առուակի վերաց լւացւել սկսեցին, յետոյ սկսեցին ծխել և կամաց կամաց մտնել վրանները:

Քիչ յետոյ հարկահանը և գրագիրն էլ զարթնեցին, մոտան բէզի մօտ, բէզը վեր թռաւ, յօրանցեց, յետոյ դասոնալով հարկահանին՝ ասաց:

—Վերջացրի՞ք...

—Դեռ չենք էլ սկսել:

—Դէհ, շուտ արէք, շուտով կը մթնանայ...

Եւ ահա բոլորը ոտքի ելան և խառնւեցան միմիանց. զինւորները, բէզի և հարկահանի հրամանով, վրանները մտան ու սկսեցին քանդրուտել և տակն ու վրայ անել ամեն ինչ, մի քանի զինւորներ էլ լիովին մերկացնում էին մի վրանի առջև խմբւած տղամարդկանց,

այլք կանանց հագուստների մէջ էին սպրոեցնում իրանց կեղսոս ձեռները և գարշելի ժպիտով ժպտում էին նոցա արձակած ճիշերի վերայ... հարկահանը հրամաններ էր արձակում, մանուկ բոշաները ճշալ սկսեցին, կանալք փախչում էին այս-այն կողմ և Խաթ-Սաբայի վրանի մօտ կանգնած բէզը, դիտելով այդ բոլորը՝ փորը բռնած ծիծաղում էր:

Հարկահանը հրամայեց դատարկել վրանները, նորա ոտքերի մօտ սկսեցին զլորւել զանազան մեծութեամբ կաթսաներ, կարսետներ, բարձեր, նորա ձեռքն էին բերում լեցնում կանանց կամ աղջիկների վզից պոկած կեղծ ոսկիները. ապակեայ մանեակներ, զլսի թաշիներ և կօշիկներ...

Այդ բոլորից հարկահանը մտադիր էր կազմել գրագրի հաշւած 2.600 զուրուշ հարկը:

Ծեծ, աղմուկ, լաց, ճիչ պատել էր Զիւինի դիւզը...

Ամեն ինչ լուց, որովհետեւ լսւեց մի կատաղի ձայն և նորան յետեւեց մի սուր ճիչ...

Քիչ յետոց տեսնեց Օդիշուն, որը հերարձակ իւր ցուպով զլորում էր իրան մօտեցող զիւորներին, ջախջախում էր թեսեր, զլուխներ և հետզհետէ ընկրկում էր դէպի կիրճը... մի զինուոր արդին բռնել էր նորա ցուպը, միւսները ունում և հայհոյում էին և Օդիշուն այնպէս ճշում էր, որ բէզը զարմացած գուեցի

— Աղջի՞կ է այդ...

Խլեցին Օդիշու ձեռքից ցուպը, յետոց բռնեցին նորան և երբ նա ճշում էր.

— Լոի՛ր, ասաց մօտեցող հարկահանը — քեզ բէզին պիտի տանենք...

Օդիշուն լուց, թոթափեց իրան, աղատւեց զինուորների ձեռքից, մի բռունցքի հարւածով զլորեց հարկահանին և մօտաւ կիրճը...

Զինուորները խմբովին հետեւեցին նորան և մինչդեռ բէզին իմաց էին տալիս, որ այդ աղջիկը մի հրաշալի զեղեցկութիւն ունի և բէզը հրամայում էր միւս զինուորներին ևս վագել աղջկայ ետելից, Օդիշուն եղնիկի արագութեամբ վագեց դէպի խորը, մազլցեց մի ժայռի վերայ և երբ էտ էր նայում, ապշած կանդ առաւ, որով հետեւ մի երիտասարդ մարդ յանկարծ գուրս թռաւ ժայռի ետելից,

դաշոնի մի հարւածով փռեց առաջին զինւորին, երկրորդ եկողի պուխը ջախջախեց հրացանի կոթով և գոռաց միւսներին՝

—Ետ կորէ՛ք, թէ չէ բոլորիդ էլ կը փռեմ... բէզը սկսեց անհամբեր լինել, յանկարծ լսեցան հրացանի ձայներ, յետոյ աղաղակներ և կիրճը մտնող զինւորներ խուճապով ջիւինի դիւզը լեցւեցան...

Եւ երբ բէզը ինքը մտնում էր կիրճը, զարմանօք տեսաւ թէ ինչպէս մի ձիաւոր, գաւակն առած Օդիշուին՝ սրարշաւ իջնում էր դաշոր...

Արդէն ուշ էր, այլ ևս նորա ետևից հասնել անկարելի էր: Կիրճում փռւած էին չորս դիակներ, որոնք եկան միացան Օդիշուի ջախջախած երկու մեռած և երկու վիրաւորւած զինւորների հետ...

Փ.

ԿԱՆՑԻ ԱԼԵՔ

Օդիշուն ժայռի գլխին կանգնած տեսաւ երիտասարդին և երբ զինւորները ընկրկում էին, նա մի ուրախ շարժում դործեց, ցած սահեց ժայռից և վազելով դէպի երիտասարդը՝

—Ալէ՛ք... ասաց—դո՞ւ այստեղ...

—Այո՛, ժպտաց սիրազին երիտասարդը—բայց ամենից առաջ ձի նստիր, եթէ չես կամենում դոյց ձեռքը ընկնել...

Յետոյց, առանց սպասելու պատասխանի, թռաւ ձիու վերայ, առաւ գաւակին Օդիշուին և, մարակելով ձիուն, սրարշաւ դէպի դաշտն սկսեց իջնել:

Օդիշուն պինդ գրկեց Ալէքի մէջքը, երեսը նորա ուսոին դրեց և ասաց.

—Քշի՛ր, Ալէ՛ք... երկրորդ անգամն է որ լոմերին լաւութիւն ես անում...

—Խօ չե՞ս յոգնել, հարցրեց Ալէքը:

—Ո՛չ, միայն ծնկներս սկսեցին ցաւել:

—Այդ նրանից է, որ թամբ չը կայ ձիու վերայ... այնչափ շուպով եկայ, որ թամբը չը կարողացաց դրացիից վերցնել...

—Ինչո՞ւ էր ացգչափ շտապում...

—Նատ պարզ է... քաղաքում մօրդ տեսայ, տեղդ իմացայ, մի

ամբողջ ամիս էր, որ Թորթում էլ տեղ չը թողեցի ման եկաց. մէկը ասում էր դէպի Խնուս էք գնացել, մէկն էլ թէ Հասան Ղալապի մէջն էք...

— Մօրս տեսա՞ր ուրեմն...

— Տեսաց, Գրիգոր աղայի մօտ էր գնում. իսկ դու պատմիր ինձ թէ Հասան զալայի բէզը ի՞նչ գործ ունէր ձեզ հետ...

— Հարկ էիր պահանջում և 2.600 դուրուշ հարկ...

— Նը՞մ... հա՞րկ էր պահանջում, ի հարկէ կը պահանջի, էլ Զանզաղում մարդ չեն թողել, որ չը ծեծէին ու չը բանտարկէին, հիմա էլ ձերոնց կը բռնեն բոլորին ու Զանզաղ կը տանեն, մանաւանդ որ սպանութիւն էլ եղաւ, կը կարծեն թէ անողը բոշ էր:

— Ախ, գոչեց Օդիշուն—այդ ի՞նչ վատ բան եղաւ... ի զուր սպանեցիր.

— Թողնէի որ քեզ բէզի հարե՞մը տանէին, ո՛չ, եթէ դու չկարողանայիր փախչել, լսո՞ւմ ես, Օդիշու, եթէ չը կարողանայիր, ես արդէն հրացանը լարել էի, քեզ պիտի սպանէի...

— Ալէ՞ք... գոչեց աղջիկը:

— Այո՛, շարունակեց Ալէքը—ինձ համար աւելի լաւ էր քո դիակը տեսնել, քան լսել, որ բէզի հարեմի մէջ գտնւող հայ կանանց մէջ դու էլ կաս... ա՛խ, չը գիտես, Օդիշու, թէ այդ Հասան բէզը որչա՞փ անգութ, որչա՞փ գազան մարդ է... այժմ էլ տեսնո՞ւմ ես, սադ բոշաներին փչացրեց...

— Եւ դեռ մէկն էլ չ'եղաւ որ նորան փչացնէր:

— Ե՛հ, այդպիսի մի սպանութիւն քիչ օգուտ է տալիս... փաշան բացի այն, որ վրէժը խեղճ ժողովրդից կը հանի, այլ և մի ուրիշ աւելի բարբարոսին կը զնի սորա տեղը, որը կը գայ և հազար ու մէկ պատճառներով ժողովրդի շորերն անգամ վրաներիցը կը հանի...

Տիրեց փոքր ինչ լսութիւն, մութը սկսում էր պատել և մի թանձր մշուշ գալիս ծածկում էր բլրակների կատարները:

— Զե՞ս մըսում, հարցրեց նորէն Ալէքը:

— Ո՛չ, ես սովորել եմ զիմանալ:

— Գիտեմ որ քաջ և զիմացկուն աղջիկ ես, բայց գուցէ այս գիշեր ուշ հասնենք գիւղը:

— Հոգ չէ, իսկ դու չե՞ս մըսում:

—Ե՞ս, ծիծաղեց Ալէքը—ցուրալ ինձ հետ գործ չունի, ես ամառ ձմեռ մէկ այս հագուստն եմ հազնում... չե՞ս լիշում ինչպէս երբ Թորթումում էիք և ես նոր էի տեսել քեզ, գալիս ձեր վրաններից հեւու բաց օդում դիշերում էի...

—Յիշում եմ, որ ես էլ կարսետ էի բերում տակըդ փոելու համար...

—Քարի աղջիկ ես, Օդիշու, և ես քեզ դորա համար էլ սիրում եմ... լիշում ես, թէ ինչպէս մի անգամ մայրդ քիչ մնաց փայտովը զլուխս ջարդէր:

—Յիշում եմ, որ յետոյ, երբ հօրեղբօրս քաղաքի դռնապան զինւորների ձեռքից ազատեցիր, մայրս ճակատդ համբուրեց.

—Հա՛, այժմ մօրդ հետ բարեկամ ենք... էլ այնուհետև չէր խրտնում, երբ ձեր վրաններում երևում էին

—Կարծեմ զիտէ իսկ մեր գաղտնիքը:

—Գի՞տէ, գոչեց Ալէքը—ի՞նքը ասաց:

—Զէ՛, բայց միշտ երբ անունդ տալիս է, երեսիս է նայում և ծիծաղում է:

—Իսկ դո՞ւ:

—Ե՞ս, զիտես որ կարմրել չը զիտեմ... այժմ ո՞ւր ենք գնում մենք:

—Այսուեղ մի ծանօթ զիւղ կայ. բարեկամ ունիմ այնուղ:

—Գիտե՞ս, Ալէ՛ք, խօսեց աղջիկը—լաւ չէր լինիլ, որ ինձ երգում—մեծ հօրեղբօրս տունը տանէիր:

—Իսկ մեր տունը—Կան չե՞ս գալ:

—Ձեր տո՞ւն, ծիծաղեց աղջիկը—զեռ ժամանակը չէ, երբ մեծ մայրս մեզ կ'օրհնի և քո մայրդ էլ խորթ չի նացիլ բոշաների վերայ՝ այն ժամանակի:

—Այսինքն երբ մեզ պատկե՞ն...

Օդիշուն դէմքը ամուր սեղմեց Ալէքի մէջքի վերայ. սա դարձաւ, նոցա դէմքերը միմեանց մօտեցան և առաջին անգամն էր, որ բնութեան այդ զաւակները ազատօրէն կարողացան համբուրել միմեանց... Ալէքը իսկեց նորան իւր գաւակի վրայից, երեխայի նման առաւ իւր ձեռքերի վերայ, դէմքը իշեցրեց դէպի նորա կուրծքը և Օդիշուի երկար մազերը եկան ծածկելու նոցա միացած շրթունքները...

Կէս ժամից յետոյ Ալէքը իջաւ ձիուց, զիւղի մի խրճիթի մօտ կանգ առաւ, ծեծեց դուռը և ներս մտաւ:

իւր ծանօթք քիրւէի տունն էր այդ, ուր նորան ընդունեցին Ալէքը Օդիշուին յանձնեց տանտիկնոջ, կերաւ հացը, առաւ հրացանը և ձի հեծաւ.

— Երզրում պիտի երթալ, ասաց նա - պիտի երթալ ծնողներիս հանգստացնել:

— Մեծ մօրս էլ կը տեսնե՞ս, հարցրեց Օդիշուն:

— Անպատճառ, նորա հետ գործ ունիմ... պիտի մի անգամ վերջ տալ այս խայտառակութիւններին...

Եւ համբուրելով Օդիշուին՝ աւ ելացրեց:

— Անհոգ կաց...

Եւ մորակելով ձին անյետացաւ մժութեան մէջ:

Կանցի Ալէքը պղնձագործ էր և երզրումից կէս ժամ դէպի հիւսիս գտնւող կան գիւղացի: Նա գեղեցիկ չէր, սակայն առողջազմ, առնական դէմքով և յայտնի երզրումցի արհետառոր:

Նորան բոլորը ճանաչում էին...

ՓԱ.

Ա Ա Հ Լ Ա Խ.

Այսպէս ուրիմն, բոշաների խումբը հազիւ թէ իշխանում էր Զիւինի գիւղում; որ հեղհետէ ոչնչանում էր. մի քանի օրւայ մէջ նա կորցրեց իւր նախիրը, երկու տղամարդ, բանդարկւեցին շատերը Խաթ-Սարան երզրում զնաց և բէկի հարկահանի հետ բացի բոշներին բոլորովին մերկացնելուց, բունեցին նոցանից շատերին, ծեծեցին միւսներին և աւարով իջան դէպի Զանզալ, մինչդեռ միայն Օդիշուն այդ բոլորից կարողացաւ ազատւել:

Զանզաղում բէզը կատաղած հրամայեց իւր մօտ կանչել գիւղի խամփաներին և երբ նոքա եկել վրանից հեռու չոգել և դողդողալով սպասում էին, բէզը աչքերը ոլորեց և գոռաց՝

— Երդւում եմ որ գեռ գիշերւաց լուսինը չը տեսած, բոլորիդ սաստիկ կը պատժեմ, եթէ չը բերէք ինձ այն մարդուն, որը իմ զինւորներիս նահատակեց և ձեռքիցս տարաւ իմ անձիս հարեմին զարդ լինող մի աղջիկ... սպանողը ձեզնից էր, որ էլ խայտառակութիւն ու լրբութիւն չը մնաց արիք, գնացէք, ձեզ երկու ժամ

ժամանակ եմ տալիս, որ անիրաւ մարդասպանին ինձ բերէք ձեռքերը ու ոտները կապած... իսկ առ այժմ շուտով զօրքերիս կերակոր տւէք և բանդարկւածներին էլ հրաման նմ տալիս որ ուտելու բան տաք, հացդէ՛, կորէք...

Եւ գոհ իւր խօսքերից, շփեց մորուքը, դարձաւ իւր կողքին նստած հարկահանին ու ժպտուղվ հարցըրեց:

—Էլ բան մնա՞ց ատելու...

—Ձերդ մեծութիւնը խօսեց բոլորը—ասաց հարկահանը—միայն թէ մոռացաւ ասելու, որ պէտք է մեր ձիերին էլ գարի տան...

—Լսեցի՞ք, գեաւուրներ...

Խամփաները ոտքի ելան, խորը զլուխ տւին և հեռացան դէպի ձիւինի լեռները բարձրացող լայն ճանապարհի մօտ:

Զանզաղ գիւղը շինւած է Բասէնի ուղղակի այն ծայրին, որտեղից ճանապարհը սկսում է բարձրանալ դէպի ջիւինը. մի փոքրիկ զետակ գալիս կտրում է գիւղի առջել և անցնում խառնում է Հասան Ղալայի գեաւակին:

Գիւղի խրճիթները ճանապարհի մօտից միմեանց կպած սփռուում են լորան կուրծքի վերաց և այդ խրճիթներից ամենասիրունը, մեր պատմութեան ժամանակ, քէհեայի խրճիթն էր: Քէհեանքը մի քառասնամեաց գեր մարդ էր, ունէր 100-ի մօտ տաւար և գիւղի խամփաներից մէկն էր. Զանզաղը այդ ժամանակ ունէր չորս խամփաներ, որոնց գիւղացիք չէին սիրում, որովհետեւ նոքա էլ Հասան Ղալայի բէղերից պակաս անգութներ չէին:

Բայց երբ խամփաներին, 'ի թիւս որոց և քէհեային, բէզը կանչեց և մի քանիսները լսեցին բէզի սպառնալից խօսքերը, գիւղացիք լեցւեցան քէհեայի տունը և սպասում էին տեսնելու թէ խամփաները ինչ պիտի անեն:

Քէհեան գիւղացւոց հրամայեց շատ չը խռնելու իւր խրճիթի մէջ, տեղ ցոյց տւաւ ընկերակիցներին, լցրեց չիբուխը և պահ մի բոլորն էլ ծխել սկսեցին:

—Ե՛՛, խաչը քէհի՛ա, ասաց վերջապէս խամփաներից մէկը—մեր էջէլը¹⁾ եկել է, ժամանակ շատ չ'ունինք, կանչենք Տէր եղիշէին, խոստովանւենք և հաղորդւենք...

¹⁾ Օրհաս:

— ՚Ի հարկէ, վերայ տւաւ երկրորդը — մեզ կը խորովեն, որովհեաւ ո՞վ գիտէ, ինչ տեսակ մի շափղը¹⁾ սպանել է այդ անօրէնի զինւորներին... ել չի մտածում՝ թէ զանզաղիք ի՞նչ դորձունէին Զիւինի դիւզի վերայ... այսպէս է... Կարօն կը սպանի, Վարդանը կը տուժի...

— Աղանե՞ր, խօսեց քէհեան բերնից մի թանձը ծուխ արձակելով — մեզ մէկ ձար է մնում, կամ թողնել փախչել և կամ մեղնից մէկին զոհ տալ՝ միւսներին ազատելու համար։ Տղէ՛ք, դարձու նա զիւղացւոց, եկէ՛ք, Աստուածը մի՛ ուրացէք, եթէ ձեր մէջն է բէզի զինւորներին սպանողը, բռնէք բերէք մեզ, անմեղ ձեր իշխանների արիւնը մի մտնէք...

— Ինչե՞ր ես խօսում, քէհեա՛, դոչեց մի զիւղացի, — դու լաւ գիտես որ մեղնից չէ եղել սպանողը, չը լինի՞ ուղում ես որ մեղնից մէկին զոհ տանք ձեր կաշիի համար։

— Ճիշտ է ասում՝ Դարօն, ասաց մի ծերունի խամփիա, — մենք լաւ գիտենք որ սպանողը Զանզաղից չէ. մենք էլ ծեր մարդիկ ենք, ի՞նչ օրէնքով մի ջահիլ գայ մեզ համար զոհւի... վեր կացէք, տէրտէրին կանչէք խոսովանւենք, հալրէժ Աստուած մեր մեղքերի համար այսպիսի մահով է մեզ մեռյնում... ճակատագի՞ր... աղանե՞ր, ճակատագիր... մեր ճակատի վերայ գրւած է եղել, որ խորոված ենք լինելու... ո՞վ կարող է ճակատի գրածը ջնջել։

— Ամենքն էլ քեզ նման խոված չեն... մոմուաց քէհեան յուսահատ, բայց որքան որ կամաց խօսեց, ծերունի խամփիան կարողացաւ լսել։

— Իրաւունք ունի՛ս, ասաց նա — դու դեռ ջահել ես, փա՛ռք Աստուծոյ, քէօհանն ձիեր շատ ունիս, վեր կա՛ց, մէկի վերայ նստիր ու փախիր, թող մենք զոհւենք, մենք արդէն ծերացել ենք։

— Ա՛ֆ կընես, դոչեց մի ուրիշ խամփիա — ես սկի էլ չեմ ուղում խորովւել... ես էլ կը փախչեմ։

— Փախի՛ր, ասաց քէհեան — փախիր և կնիկդ ու աղջիկներդ թող խորովւեն քո փոխարէն...

Խամփիան գլուխը ծւեց և չը սկատասխանեց։

¹⁾ Սրիկակ, անառակ.

—Հը՛, ծիծաղեց քէհեան—ինչու չես փախչում, վե՛ր կաց,
իմ ձիերիս մէկն էլ քեզ փէշքէշ, իմ հրացանս էլ առ ու գնա՛...
եթէ կարող ես, եթէ սիրտդ տանում. է որ կնոջդ խորովեն, աղջիկ-
ներիդ էլ բէզը կամ զինւորները պղծեն, համեցէք... ոռուսի հողը
շատ հեռու չէ, մինչև առաւաօտ այնտեղ կը հասնես և կ'աղասւիս...
է՛ս, որ փախչել կարողանացինք, առաջինը ես կը լինէի...

—Զէ՛, խօսեց չորրորդ խամփան—ձեզնից ոչ ոք էլ չի կարող
փախնել... ելէք դնանք խոստովանելու...

Յանկարծ խրճիթի գուռու ուժգնութեամբ բացւեց և այն-
տեղից ներս մտաւ մի երիտասարդ:

Նա երկարահասակ, լիքը գեղեցիկ դէմքով, երկար մօրուքով,
սրածայր մեծ ընացքով մէկն էր, սուրը գօտիից, մի երկար սուր ուսե-
րից, հրացանը ձեռքին, բէւօլւէրը կողքին, զլսին ֆէս, ոտքերին
երկար կօշիկ և աջ ձեռքում արծաթեալ կոթով մի մօրակ, որով
նա յուզմամբ ծեծում էր երկար կօշիկի պարանցը:

Նա մտաւ, դէմքը կնճռած բոլորին նայեց, մօտեցաւ քէհեացին
և խրոխտ ձայնով գոչեց՝

—Բարե՛, Խաչօ քէհեա՛...

Քէհեան ասլշած նրան նայեց. բոլորն էլ զարմացած մնացել
էին, որովհետեւ մի քանի տարի էր, որ չէին տեսել նոքա այդպէս
զինւած մէկին:

—Վա՛հ, գոչեց քէհեան—դու հա՞յ ես, ո՞վ ես որ չեմ կարո-
ղանում ճանաչել.

—Հը՛, Գէորգին մոռացե՞լ ես, որ քեզ Համիդ աղացի ծեծից
ազատեց Հաւամիների գիւղի մէջ:

—Վա՛յ բարե՛, Գէորդ աղա՛, աչքներիս վերաց, զլիներիս վե-
րաց եկար... համեցէք, համեցէք:

—Լա՛ւ, գոչեց Գէորգը—ես կը նստեմ, բայց այս տղաներից
մէկին ասա, որ ձիուս տանեն ախոռը և առջեւը գարի լցնեն...

Գիւղացիներից մէկը դուրս թուաւ խրճիթից:

—Ե՛, ասաց Գէորգը նստելով և Մարտինի հրացանը ծնկների
մէջ առնելով—այս ի՞նչ էք անում այստեղ, երեւի պատրաստում
էք խոստովանելու... հայ էք ի հարկէ, հենց որ բարկացան ձեզ վե-
րաց, իսկոյն զլուխներդ քաշում ու եկեղեցին էք վաղում... տօ՛, դեռ-

ուր է ձեր խոստովանւելու ժամը, ի՞նչ է, իո չէք փթել—100 տարեկան դարձել... այդ բէզը իւր քսան զինւորներով կարողացա՞ւ սաղ գիւղին վախեցնել... ամօթ, ամօթ, արժանի չէք ո՛չ մի բանի, ոչ մի գթութեան...

Եւ նա բորբոքւած վեր թռաւ, հանեց բէւօլւէրը, ոոր քաշեց և գոռաց կատաղութեամբ:

—Ձեզ բէզը պիտի խորովի, ուրեմն աւելի լաւ չէ՞ր, որ մի քրիստոնէի ձեռքով սատկէք...

—Գէորգ աղա՛, գոչեցին վախեցած խամփաները վեր թռչելով. քեզի դուրբա՛ն, մեղքի մէջ մի մոնիլ, ընտանիքների որբ մի թողնիլ, ինայի՛ր...

Գէորգը ետ քաշեց բէւօլւէրը, մի քրքիջ արձակեց և ասաց ծիծաղելով:

—Տօ՛, ախմախնե՛ր, ինչո՞ւ եմ մեղքի մէջ մոնելու, միևնոն չէ՛, ահա՛, ես խղճացի, բայց բէ՞զն էլ քրիստոնեալ է, նա էլ կը խղճա՞յ...

—Ե՛հ, Ե՛հ, ասաց ծերունի խամփան—ջահիլ-ջահիլ խօսում ես, չը գիտե՞ս որ բէզը կերթայ ու հարիւր զինւոր կը բերէ մեզ ջարդ ու փշուր կանի...

—Չա՛յնդ... խո.ֆած մո՛ւկ, ինչո՞ւ չես փախչում մի ծակ մանո՛ւմ, կորի՛ր, զնա սատկիր քեզ համար, թող որ ուրիշները ապրին... մինչեւ որ բէզը Հասան Կալայ կարողանայ երթալ, ես նորա կորած գլխով պիտի փշրեմ քո ցանցաւ զլուխտ... դէ՛հ, դարձաւ նա զիւղացիներին —մի' լսէք այս խո.ֆածին, որ էգուց էլօր մեռնելու է, դուք ջահիլ էք դեռ, դեռ ևս շատ տարիներ ունիք ապրելու, բայց եթէ մտադիր էք այսպէս ապրելու, սատկէք բոլորդ էլ ա՛յ, էսօր ձեզ կը խորովին, էգուց ձեզ կը կտրտեն, ձեր կնիկները կը տանեն...

Եւ բացւեց նորէն խրճիթի դուռը. այս անդամ ներս մտնողն էր մի պարթեւ կին ցուպը ուսին դրած:

Խաթ-Սաբան էր, փոշոտ, կեղտոտ, միակ աչքը արիւնով լեցւած: Նա յառաջացաւ, ցուպը ցած առաւ, իւր հետը մտնող գամփուին աքացիով վռնդեց ոտերի մօտից, նստաւ պատի մօտ և երբ Գէորգը գոչում էր.

— Այո՛, ձեզ բոլորիդ էլ կը սպանեն, կը խորովեն...

Խաթ-Սաբան վեր թռաւ տեղից, բարձրացրեց ցուպը և խըռապոտ ձայնով գոռաց.

— Նահլաւ սիսորովի¹⁾ նահլա՛ւ, նահլա՛ւ...

Եւ իւր միակ աչքը կատաղութեամբ բեւեռեց Գէորգի վերայ...

ԺԲ.

Բ Է Գ Ի Հ Ա Շ Ի Ի Ն Ե Ր Ը

— Ռւրեմն բոլորը 675 հոգի^o են:

— Այո՛, դրանից 100 մանր են, սկսած 1 տարեկանից մինչեւ 16 տարեկանն... 675 վերայ զեռ չեն հաշւած ծերունիները...

— Իսկ նրանք որքան են:

Հարկահանը թերթեց տետրակը, մասով սկսեց հաշւել և ասաց.

— Մի խօսքով զիւղի մէջ աւելի քան 700 անձ կայ...

Այս խօսակցութիւնը պատահում էր զետի եզերքում կանգնեցրած բէզի վրանի մէջ. բէզը թիկն տւել բարձին ծխում էր, գրագիրը թուղթը ծնկան վերայ ծալած, գրիչը ականջի ետև՝ ուշադրութեամբ լսում, իսկ հարկահանը մի մեծ տետրակ ծնկների վերայ՝ հաշւում էր:

Մի ձիթի ճրագ դրւած ճրագկալի վերայ, աղօտ լոյս էր սըփում վրանի մէջ. վրանի զրսումը ցցւած էին եռանկիւնաձև չորս հրացաններ և նորանից ոչ հեռու խոտերի վերայ փոււած երգում էին և խօսում բէզի զինւորները:

— 700 ա՞նձ, խօսեց բէզը — բայց դրանից քանիսնե՞րն են աշխատաւորներ:

— Շուրջ 500 հոգի, եթէ հաշւենք կանացն էլ.

— Ի հարկէ պիտի հաշւել, կանացք մարդկանցից լաւ են աշխատում... լա՛ւ, գրագի՛ր, գարձաւ բէզը նրան — այժմ հաշւիր թէ տարեկան որչափ նիւֆիւս²⁾ է տալիս Զանզաղ զիւղը:

— Զերդ մեծութիւն, մէջ մոտաւ հարկահանը — աւելորդ է հաշւել, այսուեղ ես ունիմ հաշւած, ահա... Զանզաղը տարեկան միայն

¹⁾ Կրա՛կ տանը, կրա՛կ, կրա՛կ...

²⁾ Անձնական տուրք:

բէթէլէթ¹⁾ է տալիս 8000 դուրուշ... իսկ հողի, տաւարների և այլն տուրքերն էլ միասին, կազմում է մի լաւ գումար:

— Որքա՞ն:

— 18000 դուրուշ:

— ԲՇը, լաւ փող է... շուրջ 180 ոսկի...

— Ա Լ Լ Ա Հ իւ չիւն²⁾, ինչո՞ւ ուրանալ, Բասէնը բոլոր միւս գտւառներից լաւ եկամուտ է տալիս, անցեալ տարի մօտ 3—4000 ոսկի ժողովնել եմ... չէ, ես Բասէնից չեմ հեռանալ, բասէնի ժողովուրդը այժմ խեղճացել է, լաւ եկամուտ է տալիս ինձ:

— Ճշմարիտ էք հրամայում, ասաց զրադիրը — Բասէնի կանայքն էլ սիրուն են... ա՛յ, այդ անպիտան բոշայի աղջիկը, հիւրի-վէրի էր...

— Ինչ լաւ պատառ կը լինէր Զերդ Ա. Տութիւնը, դիսեց հարկահանը — ափսոս որ ձեռքիցդ ելաւ:

— Հա՛, ափսո՞ս, ասաց բէդը — բայց հող չէ՛, երեկ այստեղ էլ մի սիրունը տեսայ, բոշայից պահասը չէր, այս ի՞նչ ձայն է...

Նա միջահատեց խոսքը և զլուխը զարձրեց, վրանի ետևից մի խշտաց էր լավում:

— Դիւզի շներիցը կը լինի, ասաց հարկահանը — Հա՛, ես կ համակարծիք իմ ձերդ մեծութեան, վէզիր-վիւզարան³⁾ էլ մեզ նման քէֆիեր չի վայելում... Ե՛հ, ձեզ հաճելի չը թւող կանանցից էլ մեզ բաժին է ընկնում... շնորհակալ ենք և աղօթազ...

— Ե՛հ, այս շունը սկսում է վրանը մտնել, ասաց զրադիրը ետ նայելով — երեխ մսի հոս է առել:

— Հօ՛շո... գոռաց բէդը ետ գատնալով. ձայնը դադարեց:

— Գուրս գնաց երեխ, ասաց զրադիրը — ես էլ համամիտ եմ էֆէնդիին, մենք մեղաւորներս էլ քէֆիեր ենք անում երբեմն...

— Դո՞ւ, ծիծաղեց բէդը — ամենից լաւ քէֆը դու ես անում, միտք է թէ ինչպէս անցեալ ամիսներում Արագոմի մէջ մի աղջկաց ձեռք էիր ձգել, երբ ես անցնում էի թփերի մօսից, աղջիկը դու

¹⁾ Զինւրական տուրք,

²⁾ Բառ առ բառ նշանակում է «Աստծոյ համար», բայց աճ է դա, որ նշանակում է «Ճիշտը ալխար ասել» — նման «Աստուած վկաչ» ոճին:

³⁾ Մեծամիծներ, նախարարներ:

ռում էր, իսկ դու ասում էիր «սուս», ես քեզ ոսկի կը տամն... երևի ոսկիներ շատ ունիս...

—Զեր շնորհիւը... բայց այս շունը նորից ներս է մոտել, հօ՛շտ—օ՛շտ... կորսուի՛ր, անպիտօ՞ն շուն...

—Կարծում է թէ միս է մնացել, օշտ, գոռաց հարկահանը...

—Զեր շնորհիւը, շարունակեց գրագիրը—մենք էլ ունենում ենք այդ գեղին Աստուածից...

—Հա՛, հա՛, հա՛, ծիծաղեց բէդընրա համար այդչափ դեղ-նել ես...

—Իրա՛ւ, իրա՛ւ, գոչեց հարկահանը—խիստ գեղնել է...

—Դու էլ սկսում ես զեղնել, ժպուց գրագիրը—վա՛յ անիծած էլի մտա՛ւ, օ՛շտ, օ՛շտ... գեաւո՛ւր, օշտ...

Յանկարծ մի ձեռք երևեցաւ մթան մէջ, փայլեց մի դաշոյն:

Մի րոպէ և աղմուկը բարձրացաւ, զինորները ոտքի թռան և երբ գրագիրը ու հարկահանը կռացել էին լնկնողի վերայ, լսեցաւ մի խոպոս ձայն, որը գոռում էր մթան մէջ:

—Նահլա՛ւ սիսորովի, նահլա՛ւ, նահլա՛ւ:

Եւ մի խումբ հրացան արձակելով մոտան վրանները, բարձրացաւ աղմուկ, հրացանների ձայնը, սուրերի շկահիւնը, շների ոռնալը, աղմուկ, ոռնոցք, հայհոյանք խառնւեցին միմիանց, ձէթի ճրագների լոյսով միայն երեւում էին մի տատանւող, ելնող իջնող ահազին ցուպ, սուրեր և հրացանի փողեր... երբմն միայն երեւում էր նաև Խաթ-Սաբայի երկար հասակը, իսկ Գէորգի բէվօլվէրի ձայնը լթնդաց-նում էր ձորը:

—Խփէ՛ք, տղե՛րք, գոռում էր նա:

—Ալէ՛ք, Ալէ՛ք, որոտում էր Խաթ-Սաբան—նահլա՛ւ... Եւ նահլաւ սկսեց երևալ, վրանները վառվում էին, մէջ տեղը շփրտ-ւած մի խոտի գէզ սկսեց բոցեր արձակել...

Կրակի լոյսով այս անգամ երևեցան ցուպերով, դանակներով, հրացանով և տապարներով զինւած զիւղացիներ, որոնք երեք խումբերի բաժանւած՝ ամեն կողմից յարձակում էին գործել վրանի վերայ: Մի խումբին առաջնորդում էր կանցի Ալէքը մի ահազին կեռ սուր ձեռքին. Խաթ-Սաբան իւր ցուպով գանդեր ջարդելով և իւր խոպոտ ձայնով «նահլա՛վ» գոռալով վազում էր դէպի վրանը.

— Խփէ՛ք, տղերք...

Թէ ինչպէս էին այդ երեք մարդիկ հանդիպել միմիանց, դաշտ երկար չէ. Խաթ-Սաբան Երզրումնում Գրիգոր աղայի մօտ հանդիպել էր Գէորգին, որը Խաթ-Սաբային ուշադրութեամբ լսելուց յետոց, ասաց:

— Գնա՞նք, մայրիկ, ես պիտի կռւեմ այն ցեղի համար, որ քեզ պէս մի քաջ գլխաւոր ունի:

— Եւ հեծել էր ձին ու Զիւհնի գիւղն էին զնում: Արտօսի մօտ Ալէքը հանդիպեց նոցա, ամեն ինչ պատմեց և երբ մտածում էր թէ ի՞նչ սիրտի անել, Գէորգը մօտեցել էր նրան և յանկարծ հարցրել.

— Դու կանցի Ալէքը չե՞ս...

Եւ նոքա եկել էին, համոզել զիւղացւոց և յարձակում գործել բէզի և զինւորների վերայ...

Երբ լուսացաւ, Զանզաղի գետի եղերքին դեռ ևս մխում էին խոսի գէզը և վրանի սիւները, խակ նոցա մօտ ընկած էին արիւնի լճակների մէջ բէզի, գրազրի, հարկահանի և տասն և երեք զինւորների դիակներ...

Եօթ զինւոր կարողացել էին անցետանալ:

— Տղե՛ք, ասաց Գէորգը տխրութեամբ — լուրը Հասան-Ղալա հասաւ, էգուց Զանզաղը կը պաշարեն...

ԺՓ.

Փ Ի Ր

Սորանից մի քանի տարի առաջ մի հայ ճանապարհորդ, որը շրջում էր Թորթում գաւառում, մի գիշեր հիւրընկալւեցաւ. մի բլրակի զլիսին գտնւող հայ բոշաների վրաններում:

Հայ բոշաները, որովհետեւ ամառ էր, թողել էին իրանց զիւղը և 40-ի չափ վրաններ էին կանգնեցրել ացդտեղ: Ճանապարհորդին կերցրին, յետոյ յայտնեցին, որ իրանց զիւղապետի վրանի մօտ ամեն երեկոյ մի հեքիաթ ասող գեղեցիկ հեքիաթներ է պատմում և հրաւիրեցին նորան, եթէ կուգէր, լսելու պատմողին:

Այստեղ, զիւղապետի վրանի առջև խոտերի վերայ փուած

յջան էին կազմել բոլոր բոշաները, նատեցրել էին մէջ տեղ մի բոշափի և պատրաստում էին լսելու նորան:

Փչում էր մի զով քամի. երկինքը պարզ էր և լուսինը պայծառ լուսաւորում էր, հեռւում տաւարների պահապանը երբեմն երբեմն շացնում էր և պլպացնում իւր չիբուխի կրակը, ցածում խոխոն էր գետակը, իսկ իրանք բոշաները մէջքի վերայ պառկած կամ թիկն տւած ծխում էին... վրանների ներսում փայլում էին աղօտ լոյսեր, երբեմն ճչում էր մի մանուկ, իսկ կանաչք մեղմութեամբ միմեանց վրանն էին մտնում և շները խոտերի մէջ խշրտոց հանում:

Ճանապարհորդին տեղ տվին գիւղապետի մօտ. դա մի հասակաւոր անձ էր թաւ մօրուքով և թուխ դէմքով. պարզեց ճանապարհորդին իւր չիբուխը, յետոյ գարձաւ մէջ տեղը նատած պատմողին և ասաց հայերէն:

—Մելիք, ա' մելիք, գոչեց գիւղապետը—աւելի լաւ կանես որ սրան Փիրի պատմութիւնը պատմես, գիտե՞ս, էֆէնդի, դարձաւ նա ճանապարհորդին-Փիրի հեքիաթը շա'տ լաւ հեքիաթ է, բայց ո՛չ ոք կարող է մեր Մելիքի պէս լաւ պատմել...

—Քէհեա', ասաց մի բոշա—Գրիգորը փող չ'ածի՞ պարզանք:

—Տօ' հա', հա', ասաց քէհեա՞ն—դէ', Գրիգո'ր, վեր առ փողդ, էֆէնդի, Գրիգորը լաւ փող է ածում, մերոնք էլ պար են զալիս... հայդէ', տղե'քը, վեր կացէք...

Եւ սկսեց ածել մի վայրենի եղանակ սուր ելեէջներով, իսկ պարողը պարզեց. թևերը՝ ոռները ծուռը գրած սկսեց թռչկոտել և աւելի վայրենի մի պար պարել, որից յետոյ երեք-չորս հոգի շրջապատեցին նրան և սկսեց խմբական տարօրինակ պարեր. նստածները երգում էին. ի՞նչ երգ... փողը ածում էր մի արագ շափերով և զիլ ձայներով կտոր, հետզհետէ իջեցնում էր մինչև 8 աստիճան ցածր և երբ նորից օգտագու էր թռչում, խումբը ցած ձայնով երգում էր նրա հետ. այդ կտորը նմանում էր արաբական «վա՛յ դիլէմ» երգի կորորին:

Յետոյ յանկարծ մի երիտասարդ նստաւ փող ածողի մօտ, հազար և սկսեց երդել

Միրէվի, միրէվի թա բը ասըր ¹⁾
մի միրէմ ²⁾

Եւ փողը ածեց ու երիտասարդը շարունակեց
ամա՞ն դիլէմ ³⁾

Իսկ խումբը մռնչեց
վա՛յ դիլէմ... ⁴⁾

Արաբական երգն էին երգում, բայց որչա՛փ այլանդակած և ի՞նչ խու-
ժատուժ պար էր, ի՞նչ ցատկուտուքներ, ի՞նչ ոստոստումներ, ի՞նչ քայլեր:
Երբ արաբական երգն էլ վերջացաւ, բոշայի մէկը եկաւ նստելու
ածողի մօտ, հազար. մի բան ասաց ածողին և բարձր ու բարակ
ձայնով երգեց բոշայական մի երգ...

Եւ վերջացրին երգը մի կատաղի ձայնով «Ախ լէվալ», ⁵⁾ լէվա՛լ,
լէվա՛լ» խօսքերով...

Երբ լոեցին, բոլորն էլ տիտոր էին, շատերը «ախ» քաշեցին,
գիւղապետը դէմքը կնճռած լսում էր և ճանապարհորդը բոշաների
հետ դեռ ևս երկար չը կարողացաւ երգի թողած տխուր տպաւորու-
թեան տակից դուրս գալ...

Հինգ բուկէի չափ լուռթեամբ ծխեցին բոլորը, յետոյ գիւղա-
պետը շարժւեցաւ տեղից և դառնալով Մելիքին.

— Մելի՛ք, ասաց — պատմիր «Փիր»-ի պատմութիւնը:
Մելիքը եկաւ մէջ տեղ նատելու, հազար նորից, բոլորին մէջ
մէկնայեց, ժամանեց ճանապարհորդին և նորան ուղղելով խօսքերը սկսեց:
«Այնտեղ Զիւինի սարերի վերայ, պատմեց նա — մի վայրենի վար-
դենիի մէծ թուփ կայ, որը տարին մի անգամ տալիս է սպիտակ
բազմաթիւ անուշահոտ վարդեր, բայց ճիւղերը աւելի թանդարին
և աւելի լաւ վարդերով են զարդարւած...

Իւրաքանչիւր լոմ; իւրաքանչիւր հայ (այժմ սկսել են նաև
իւրաքանչիւր այլազգ) այդ ծառի մօտից անցնելու ժամանակ, պահ

¹⁾ Գնում ես, գնում ես մինչև երեկոյ:

²⁾ Մեռնում եմ:

³⁾ Վա՛յ սիրոս:

⁴⁾ Վայ սիրոս:

⁵⁾ Հայ բոշայի լեզով նշանակում է «Աստուածու»

մի նստում է նորա հովանիի տակ, յետոյ կորում է իւր հազուստից մի կտոր, փաթաթում է նորա ճիւղերին, աղօթում է և յետոյ հեռանում...

Դա Փիրա-ի գերեզմանն է. այստեղ թագւած է մի կին, մի քաջ, մի խելօք կին և իւրաքանչիւր լոմ, երբ հանդիպում է այդ քարակայտներից կազմած գերեզմանին և կամ հեռւից տեսնում է նորա վերայ բուսած այդ վարդենին, չէ կարողանում չը լիշել «Փիրա-ին.. լոմերի քաջ գիւղապետուհուն, հրաշալի լոմ-Հասանի կնոջ՝ իմաստուն Խաթ-Սաբային...

Քաջ էր Խաթ-Սաբան, իմաստուն էր նա, նորա պէս կին գեռ չի ծնել աշխարհի մէջ և բոլորը այլ ևս նրան կոչում են «Փիր»¹⁾:

Հեռու Աչեմեստանից եկաւ լոմ-Հասանը իւր ցեղի հետ, մի կուի մէջ վերջին անգամ կոտորեց 101 քիւրդ և երբ մեռաւ, Խաթ-Սաբան էր, որ ցեղապետ եղաւ լոմերի վերայ, որոնց նա կսուավարում էր իմաստութեամբ. նա քսան անգամ ազատեց իւր ցեղին կորստից, քսան անգամ աշխատեց թափառականութիւնից ազատւել, զիմեց փաշացին, զիմեց սուլթանին, բայց այս երկրի մէջ ոյժից բացի ուրիշ միջոց ի գործ դնել անկարելի է... և Խաթ-Սաբան ոյժ էլ գործ զրեց:

Եւ գնաց նա երդրում, դտաւ երկու հայ, եկաւ Զանզաղ, կոտորեց զինւորներին, կրակ տւաւ նրանց վրանները, սպանեց Հասան-Ղալայի գազան բէզին...

Փաշան զօրք ուղարկեց զիւղի վերայ. զօրքը կրակ տւաւ զիւղը և Խաթ-Սաբան քաշեց իւր ցուպը, կոտորեց 100-ից աւելի զինւոր, զիւղացւոց բոլորին էլ ազատեց, նրանց առաջն ընկաւ տարաւ ռուսի հողը:

Զօրքը լնկաւ նորա ետևից. Խաթ-Սաբան անցաւ Հասանի գիւղից, քարուքանդ արաւ և բարձրացաւ լեռները:

Երբ Զիւինի գլուխն էր հասել, արդէն ճանապարհին. թողել էր իւր խումբից շատերին, սակայն իրան հետևող զօրքը կէս էր եղել:

Եւ զիշերեց խումբը Զիւինի զլիսին, Խաթ-Սաբան այդ զիշեր երազ էր տեսել, որ լոմ-Հասանը կանչում էր իրան: Նա զգաց որ

¹⁾ Առւրբ:

մեռնելու էր, կանչեց աղջկան, բռնեց նորա ձեռքը տւաւ կանցի Ալէքին, օրհնեց և ասաց.

— Հող ունենա՛ք, իմ որդինե՛րս...

Կանչեց լոմերին, խրառեց նրանց և ասաց.

— Հող ունեցէ՛ք, զաւակներս—ձեր փրկութեան և հանգստութեան միջոցը հողն է...

Գիշերը յանկարծ զօրքերը պաշարեցին խումբին. Խաթ-Սաբան վերցրեց ցուսպը և ընկաւ նրանց մէջ, իւր չորս կողմը դիակներ փուեց և երբ զօրքերը յետ էին փախչում և խումբը մտնում էր ոռւսի հողը՝ Խաթ-Սաբան վէրք տոսացաւ կուրծքից...

Կէս գիշերին Խաթ-Սաբան մեռնում էր. կանչեց նորէն բոլոր լոմերին և երբ հաւաքւել էին, նա բարձրացաւ տեղից, բոլորին մէկ մէկ օրհնեց և ասաց կրկին.

— Հող ունեցէք...

Եւ մեռաւ «հող» բառը բերանին...

Լոմերը թաղեցին նրան մի բլրակի ստորոտում. Օղիշուն պոկեց ուրիշ տեղից մի վարդի թփիկ և տնկեց նորա գերեզմանի վերաց, լոմերը իրանց շորերից մի մի կտոր կապեցին նորա ճիւղերին, լացին իրանց հերոսուհու վերաց...

Եւ գնացին...

Անցա՞ն տարիներ, Խաթ-Սաբայի իւրաքանչիւր քաջութիւնը մի մի հեքիաթի նիւթ դարձան, որը ևս ձեզ պիտի պատմեմ միշտ, կը պատմի իմ որդին, կը պատմի իմ թոռը, կը պատմի իւրաքանչիւր լոմ... նորա դէստէնը¹⁾ կ'երգի իւրաքանչիւր շաիր²⁾, իւրաքանչիւր մանուկ, կ'երգի Գրիգորը, կ'երգեն քարերը, իսկ այժմ էլ իւր քաղցր ձայնով կ'երգի Մարկօն, կը լսեն լոմերը և կը պարձենան ու կը պատմեն իրանց աղջիկներին, կը լսեմ և ես, ձեր ծերունի հեքիաթ պատմողը և կը ցնծամ...

Եւ լոեց Մելիքը. Մարկօն, որը մի լաւ ձայն ունէր, մօտեցաւ Գիկորին և նստեց...

Փչում էր զոլ քամին, փայլում էր լուսինը, հովիւր պլազլազ...

¹⁾ Երգի մի տեսակ է, որ գովում է մասնաւոր քաջ անձերի

²⁾ Բանաստեղծ:

նում էր իւր չիբուխի կրակը, հեռուում խոխոջում էր գետակը,
խշխում էին խոտերը...

Մարկն սկսեց, նորա ձայնը հնչում էր որպէս տաւիղ, դողում
էր որպէս լար և խօսքերը արտասանում էր ացնպէ՞ս մեզմ, որ
ասրուռ էր ազդում...

Նա երդում էր:

Զիւինի՛ թուփ, զուրբան վարդիդ

Ո՞վ կը հասնի քո փառքիդ

Թող, որ նախանձեմ արմատիդ...

Փշում էր քամին, փայլում էր լուսինը, խոխոջում էր գետակը,
խշխում էին խոտերը և խումբը զօրեղ ձայնով ու դէմքը Զիւինի
լեռներին դարձրած՝ երդում էր:

Զիւինի թուփ, զուրբան վարդիդ

Դուրբան «Փիր»-ին ծածկող հողիդ...

ՈՐԲԵՐ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐՄԻՒԵՍՆԻ

Մի լար, քոյր իմ... դառն արցունքով,
Եղբօրդ սիրտը մի այրիլ.
Մեր խղճուկ մօր դու լաց-սուգով
Նորից կեանք չես պարգևիլ:

Անգութ մահը նորան անգարձ
Խըլեց մեղնից յաւիտեան,
Եւ մեզ անտէր, մօրից զրկւած,
Մատնեց կեանքի դառնութեան:
Բայց դու մի լար... քոյր իմ անգին,
Յիշիր մեր մօր սուրբ խըրատ,
Որ նա մահւան տխուր ժամին
Մեզ կտակեց իբր տւանդ:
«Սիրէք միմեանց»—նա մեզ ասաց —
«Անվերջ սիրով, իմ որդիք,
«Սիրէք անկեղծ ու անձնուրաց,
Որ միշտ լինէք երջանիկ»:

Մի լար, քոյր իմ... այսուհետեւ
Թող այդ սէրը կեանքի մէջ
Լինի մեզ մայր, թիկունք ու թւ,
Նա մեր ցաւին կտալ վերջ...

ՆԵՆԳԱԻՈՐԻՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐՄԻԻԵԱՆԻ

Քանի քո շուրջ տգիտութեան
Դեռ իշխում է խօլ խաւար.
Եւ սուրբ լոլսը ճշմարտութեան
Հալածւում է չարաչար—
Քո դիմակը դըժոխային
Միշտ կը փայլի, կը շողայ,
Եւ կեղծաւոր քո սև հոգին
Աչքից անտես կը մնայ:

Բայց երբ կը գայ ցանկալի օր
Պայծառ լուսոյ լաղթութեան,
Եւ խաւարը էլ քեզ հզօր
Զի լինիլ զէնք ու պաշտպան,—
Այն ժամանակ, ով նենգամիտ,
Կը մերկանտն մեր աչքին—
Ե՛ւ դիմակը զազիը դէմքիդ,
Ե՛ւ քո խաւար, սև հոգին...

ԲՈՅԱՆԵՐԸ

Ըստ ԱԴՐԻԱՆՕ ԿՈԼՈԶԻՄԻ

I

Բոշաների ծագումը և զարգացումը պատկանում է այն բազմաթիւ էթնոգրաֆիական և սոցիոլոգիական խնդիրներին, որ նորագոյն գիտութիւնը գեռ ևս բաւարար կերպով չի լուծած:

Կարելի է համարձակ ասել, որ բոշա լինելու համար պէտք է բոշա ծնւել, որովհետեւ չի կարելի բոշա զաւնալ: Արեան աղնուութիւնը, որի շնորհիւ նոքա միւս աղղերին ոչ մաքուր կամ հառամ են համարում, այս հանգամանքը, որ նոքա բոլորովին չունին հակումն՝ հետեւողներ գտնել, վստոր այն, որ նոքա, ինչ դրութեան մէջ էլ որ են՝ սարուկ, թէ տէր, անազատ թէ ազատ, լուսաւորւած թէ ոչ լուսաւորւած՝ նոքա միշտ շարունակում են իրանց զուտ անհատական կեանքը, գուցէ գնահատում են լուսաւորութիւնը, բաց առ կողմից ամեններն զուրկ նախանձի զգացմունքից, մեծ մասամբ թափառող և լաճախ անօթութեան դէմ կռւող, և եթէ ոչ իսկապէս բաղդաւոր, գոնէ ազատ և նոյնքան համարձակ և արհամարող կեանքի անպատճեութիւնները, որքան ուրախ բաղդաւորութեան մէջ, — ահա բոշաների ընդհանուր գծադրութիւնը:

Բաց այդ կաստալին հպարտութիւնը չէ միայն, ինչ մեր ուշքն է գրաւում: Դորանից շատ աւելի հետաքրքրում են մեզ կեանքը և պատմական վիճակը այս տարօրինակ և ամենուրեւք թափառող ժողովրդի, որը փոփոխակի երեխն տխուր, երեխն ուրախ է տրամադրում, երեխն վախեցնում է և խղճալ է տալիս, երեխն ծիծաղ լարուցանում:

Ահա ինչով պէտք է մեկնել և այն, որ, նակած գրողի բնաւորութեան, շատ մարդիկ զբաղւել են մարդկացին այդ ցեցով, տալով երեխն ընդարձակ ուսումնասիրութիւններ բոշաների ժողովրդական կեանքի մասին, սկսած նոցա ծագումից մընչ նոցա ներկաւ դրութիւնը, իսկ երեխն սահմանափակել իրանց ուսումնասիրութիւնը կեանքի լոկ մի քանի կող-

մերով, որպէս են նոցա երաժշտութիւնը, երգեցողութիւնը, պարը և այլն:
 Թէ որքան մեծ է զրականութիւնը բոշաների մասին, այդ երեսում է
 արդէն Գրիգո Կորա-Տուրին'ի վկացութիւնից, որը, իւր մի չօղւածում բո-
 շաների մասին, հրատարակւած «Դաս Առուղանդ» (Das Ausland—«Արտա-
 սահման») երկրաբանական և ժողովրդաբանական շաբաթաթերթի այս
 տարւակ 31, 32, 33, 34 և 36 համարներում, վկացում է, թէ բոշաների մա-
 սին ինքնուրուն ուսումնասիրութիւնների թիւը հասնում է 500 հատի,
 իսկ մանրերի հետ միասին մինչ 1000-ին եւ չը նայած դրան, դեռ ազդ
 ազգը կամ ցեղը վիակատար կերպով ուսումնասիրուած չէր մինչ վերջին
 տարին, երբ լուս տեսաւ Ա.դ րի անօ Կողուչիս'ի գիրքը՝ «Բոշաները. Մի
 թափառող ազգի պատմութիւն»¹⁾, որը թէ եղած պակասութիւններից
 շատերը լրացրեց և թէ միւսների վերակ մատնանիշ եղաւ: Այսպիսի մի
 գործ գրելու համար հեղինակը մեծամիծ պատրաստութիւններ ունէր, ան-
 ձամբ ծանօթ լինելով թէ Արևելքի և թէ Արևմուտքի բոշաների հետ և
 ունենալով գրեթէ վիակատար տեղեկութիւն բոշաների մասին գրած թէ
 հին և թէ նոր գրականութեան մատին: Իւր թարմ գրած և գիտնականօրէն
 մտածւած գրքով Կողոչիս չաջողութեամբ մի ինդիր է ուսումնասիրում, որի
 մասին իտալիակի զիտնական գրականութիւնը ունէր Ֆրանչիսկօ Պրիդա-
 րիս'ի գիրքը²⁾ դեռ. ևս կէս դար մեղնից առաջ, որը անկասկած նպաստեց
 նիւթի աւելի խորը և ընդարձակ ուսումնասիրութեան: Հետեւալում մենք
 կը հիմնւենք զիտնարակէս վերոիշեալ Կողոչիս'ի բացատրութիւնների վե-
 րակ, հետեւելով Կորա-Տուրինի չօղւածին և սկսելով բոշաների ծագման խնդրից:

II

Բոշաների ծագումը:

Բոշաների ծագման խնդիրը պատմաբանների և էթնոլոգների լուսա-
 հատ խնդիրներից մէկն է: Հները նոցա ծագման մասին ոչինչ չեն խօսում
 և ոչ էլ նոցա ցրւելու պատճառների մատին: Ներկազիս քննադատութիւնը
 և համեմատական լեզուազիտութեան այնքան արդիւնաւոր հետևանքները
 նմանապէս չ'առաջացրին մի հաստատ պատասխան ազդ մասին: Ազդ պատ-

¹⁾ Adriano Colocci, Gli Zingari, Storia d'un popolo errante. Turin 1880. 8°—430 էրես, մի քարտէզով և բազմաթիւ նկարներով: Գիրքը
 նէրած է Նորին կամ. և թագ. բարձրութիւն արքիոդուքս Յովսէփին, որը
 իւր ուսումնասիրութեան առարկաւ է չիննել Ունդարիակի բոշաներին և սոցա
 մասին թէ արտաքուստ և թէ բոլանդակութիւնով հաւասարապէս շքեղ
 գիրք է հրատարակել:

²⁾ Francesco Predari, Origine e vicende degli Zingari. Միլան,
 1841 թ., 288 էրես, նկարներով:

ճառով էլ ահա երեք դարից ի վեր ամենազանազան և չաճախ ամենաաճ. միտ կարծիքներ են լատոնւել բոշաների ծագման մասին. Ամենից առաջ աչքի են ընկել այն անունները, որ կրում են բոշաները՝ բոմ, սինտի, ցիդան, ջիտանոս, բոհեմիկն, չինդիանէ, բոշա և այլն:

Չը խօսելով նոցա մասին, որոնք բոշաներին միփոլոգիական ծագումն են լատկացնում, լիշենք ապահղ Բատալար'ին¹⁾, որը քառասուն տարիներից ի վեր պնդում է, թէ սկսած բրոնզի դարեշրջանից՝ բոշաները կենալիս են եղել Եւրոպացի հարաւարեկելեան մասում, Փոքր-Ասիայում և հիւսիսային Ավրիկայի մի քանի մասերում, ուր նոքա խառնուում էին միւս ցեղերի հետ. Բայց Բատալար'ի ալս հայեացքը հաւատ չի գտնում նոյն խոկ Ֆրանսիայում:

Աւելի տարածւած են այն հետազոտողների կարծիքները, որոնք պատմական փաստերի մէջ են մնում. Հերոդոտի և Ստրաբօի այն տողերը, որոնք վերաբերում են սիցինացիներին (Sicynnai), հիմք ծառակեցին մի քանիսներին (որպէս նաև Բատալարին), թէ բոշաները ծնունդ են առնում Կովկասեան երկիրներից, փաքր Ասիայից և Թրակիայից, Բայց մեծամասնաբար հետազոտողները կանգ առան փիլոլոգիական և լեզուաբանական համեմատութիւնների վերաէ և գտան որ բոշաները ցիդակից են հնդկական Սինթ ցեղի հետ. Այս կարծիքի պաշտպաններից մանաւանդ պէտք է լիշել անգլիացի ճանապարհորդ կալվիտան Բիւրտոն'ին²⁾. Բայց զիտական տեսակէտից կշխու ունին մանաւանդ Գուէ, Հելանդ, Միկոլիչ և Ասկոլի, որոնք հաստատում են բոշաների լիզուի ազգակցութիւնը նորարիտեան լիզուների հետ:

Այս բոլոր հետազոտութիւնների հիման վերաէ կոլոչին գալիս է այս եղբակացութեան, թէ բոշաները ծագում են Հնդկաստանից և որ ալսուելից նոքա իրանց գաղթը երկու ճանապարհով են կատարել, որնցից մէկը ծովափնեալ է, միւսը՝ ցամաքով. Երբ նոքա անցել են Հնդոս գեաը, որը բոլոր արիական գաղթականութիւնների գլխաւոր երախն է եղել, ծովափնեալ ճանապարհը ուղղւել է գէպի Բիւրտիստանի ծովափը, գէպի Պարսից ծոցը, Արարիալի ամիերը, Կարմիր ծովը, Սիրիակի եղերքը և Արխիպելագոսի կամ Եգեյեան ծովի կղզիները. Աէդ ճիւղին են պատկանում բոշաները Նուբիաի և Եգիպտոսի, Իրդարի, Ելերիի և Մուրի, Քսոս կրետակի Կարմ-բոշաները և Սիրիակի Կուրբատները. Յամաքով գաղթածները պէտք է անցած լինեն Պարսկաստանը, Միջազեաքը և Փոքր-Ասիան և դարձած լինեն դէպի Կասպից ու Սև ծովերը, ուր նոցա մի մասը հան-

¹⁾ Paul Bataillard.—Les Tsiganes de l'âge de bronze. Paris 1876 և նորա բաղմաթիւ ալ գրւածքները.

²⁾ Richard Francis Burton, Sindhi and the Races that inhabit the valley of the Indus. London 1851.

դիպել է ծովով եկածներին, մնացածները ծուած պիտի լինեն ճանապարհը զբախ հիւսիս-արևելք և հասած լինեն Ռուսիակի հիւսիսային պրովինցները և Սիբիրիան։ Մե ծովի մօտ իրար հանդիպելը մեկնում է բոշաների խիտ բնակութիւնը բալկանեան թերակղղում, բումինիակում և Հայաստանում և մեկնում է մինչ մի լավոնի աստիճան Պասպատի՛ի¹⁾ գիտողութիւնը, թէ ինչու Թիւրքիակի նահանգներում երկու տարբեր տիպեր բոշաներ են բնակում։ Նոքա իրարից տարբերում են թէ լեղուով և թէ բարփով և իրար սաստիկ ատելու զգացմունքով։ Գոյանից մէկերը բնակում են քաղաքներում և բոսֆորի և Արքիպելագոսի ափերում և հաստատաբնակ են. միւսները ըմբռնում են Յապարի՛ի վայրենի ցեղերը և բնակում են ներքին նահանգներում և լեռներում։

Մեծ մասը իսպանական Ջրտանոսների (բոշաների) և Ալժիրիակի բոշաները պէտք է պատկանում լինեն այն ճիւղին, որը ծովի ափով գաղթեց, թէ նոցա մի մասը միմիան շատ լետով, 15-րդ դարի առաջին կիսում, դուքս Միհալի՛ աւազակային խմբերի հետ խսպանիա գաղթեց։ Մի վեպական ժամանակագրութիւն կարլոս Վ-ի ժամանակներից, ուրեմն 16. դարու առաջին կիսից, ակնարկում է բոշաների ներոպա գաղթելը երկու ճանապարհով. մէկերը՝ Արարիակի և Եգիպտասոսի եղբներուվ, որով նոքա սարացինների զորքերի հետ խսպանական ափերը իջան, իսկ միւսները՝ ուղեկցեցին տաճիկների մուտքը Ունգարիա և Բոհեմիա։ Բայց այս հաստատ է, որ, տաճիկների չարձակումներից առաջ, բոշաներ կազին Բալկանեան թերակղղում, Վիկտորթիւններ կան, որ բոշաները Յունաստանում դու ևս 14-երորդ դարում կալին. և երեխ նոցն այդ ժամանակ վալախների և Ալբանացինների գաղթականութիւններին հետեւելով՝ հաստատեցին Թեսալիա, Եպիլոս, Նաուպլիա և Կորֆու կղզու վերաց, որպէս նաև Արևիկանագոսի կղզիների և Կիպրոս կղզու վերաց։ Նաև Խատալիա պէտք է բոշաները եկած լինեն 1422 թւականից առաջ, երբ գուքս Անդրաշ՛ի խմբերը Բոլոնիակում երեացին, որովհետեւ նոցա մէջ դեռ 1382 թւականին ծնւց մի երեսելի բոշանկարի՛ Անտոնիո Սոլարի անունով։

III

Բոշաների ծագումը ըստ նոցա անթրոպոլոգիկան-էթնոգրաֆիական նշանների։

Մինչ այժմ զեռ ոչ մի անթրոպոլոգ չի հաւաքել, քննել և դասաւորել այն նիւթերը, որ կան բոշաների ֆիզիքական, անատոմիական և Փիզիոլոգիական առանձնաբարկութիւնների մասին, որ կան անթրոպոլոգիական և էթնոգրաֆիական ընկերութիւնների և ճանապարհորդական հրատարակութիւնների մէջ։ Բայց այն մի քանի անթրոպոլոգիական և էթ-

նօդրաֆիական տեղեկութիւնները, որ կան ալսօր բոշաների մասին, պրո-
ֆեսոր Կորա-Տուրինի ասելով, հաստատում են այն ինչ գտել է համեմա-
տական լեզուաբանութիւնը, այն է, որ բոշաները եկած են Հնդկաստանի
Սինթ (Sindh) երկրից: Բլումենբախի նկարագրութեան համեմատ, բոշա-
ների արտաքինն է՝ կաշւի աւելի կամ պակաս մութը գոյնը, ազռաւի սու-
թեան մազերով և աչքերով, երեսը երկարաւուն է, ճակատը նեղ և փեռ
թռչող, քիթը փոքր ինչ առաջ ընկած և երբէք տափակ, աչքերի կոպերի
մէջ տեղի տարածութիւնը նեղ, ունին սպիտակ ատամներ: Ի. Կոպերնիկի
համեմատեց 83 հնդկական գանգեր 15 բոշակական գանգերի հետ և գտա-
շատ նմանութիւններ և շատ փոքր զանազանութիւններ: Նորա գուրս թե-
րած միջին թւերը բոշաների զանգի մեծութեան համար, 77,40 սանտիմետր է
տղամարդկանց և 80 սանտիմետր կանանց համար: Արել Հովլը աք համե-
մատել է երկու տիպի բոշաներին, մէկը աւելի սուր գծագրութիւններով,
միւսը աւելի կոպիտ բաց աւելի սիրուն գծերով և գտել է, որ ազդ երկու
տիպերն էլ գոյութիւն ունէին երբ նոքա Հնդկաստանից գաղթեցին: Գան-
գարանական հետազոտութիւնների ընդհանուր հետևանքը այս է, որ բո-
շաները գտանում են, դիտութեան մէջ ընդունւած խօսքերով ասած
մեսատիկեֆալիալի և սուբդոլիխոկեֆալիալի սահմանի վիրակ և լիպտոր-
րին-ներ են:

Մարմնի մեծութեան չափումները ցուց են տալիս, որ բոլով նոքա
միջակ են, մարմնի անզամները կանոնաւոր, բաց շատ աչքի է ընկնում
կանանց ստիճաների ոչ սովորական մեծութիւնը: Շատ քիչ են նոցա մէջ
մեծ փորաւորներ, կղաւորներ, կողուր և ազ պակասութիւններ ունեցող-
ներ: Ոչ քամին և ոչ խոնաւութիւնը, կամ ցուրաը, որքան էլ չանկարժակի
կերպով նոցա հանդիպելու լինի, ոչ մի վնաս չի հասցնում նրանց: Թէպէս
և տաքութիւնը զերադասում են, բաց և ամենամեծ ցրանելին նոքա թա-
փառում են բաց գլխով և միան մի պատուած շապիկով, ոչ ուեւմատիզ-
մից և ոչ ազ չարիքից վախենալով:

Նոցա մարմինը, որ ինքն ըստ ինքիան ուժեղ է և կոշտ, պապէս
ասած՝ վակրենի կրթութիւնով աւելի ես պնդանում է: Յաւոնի է թէ ինչ-
պէս մի քանի ամսեկան երեխաներին շալակած տանում հն նոցա մազերը
Երեք տարեկան երեխան արդէն զրկում է ամեն ինամբը և սառչ ու-
ղեկցում է հասակաւորներին: Ամառւակ չոքերին երեխան շարունակ են-
թարկած է արելն, խոկ ձմեռը փակւած է ծխով լրցւած խրճիթի մէջ:
Մարերից մի քանիսը սավորութիւն ունին իրանց փոքրիկներին ճարպ
քսել և լետու կրակի տաքութեան կամ արելն ենթարկել: Արմատացած
սովորութիւն է երես չը լւանալ: Այս բոլորը, ասում է Պրեւարի, ունում

¹⁾ Alex. Paspati, Etudes sur les Tschinghianés ou Bohémiens de l'Empire ottoman. Constantinople 1870.

է, որ բոշաները պահպանին իրանց լասուկ գեղնաւուն կաշվեդունը:

Այս ամենը նմանապէս ցուց են տալիս բոշաների հնդկական ծագումը, բայց դեռ ևս դրական ապացուցներ չեն, թէ նոքա վնտապաներն են ջաս ազգի, որը երեխ թէ նախարիական բնիկներից ծաղած մի ազգէ Հնդկաստանում:

IV

Բոշաների տարածւելլը Եւրոպայում:

Մենք արդին մի քանի խօսք ասացինք բոշաների Եւրոպա տարածւելու մասին և տեսանք, որ 15-երորդ դարից առաջ նոքա արդէն անցել էին Եւրոպա: Նոցա տարածւելը մանաւանդ Միջին-Եւրոպայում կատարելց 1417-1418 թւականին: Կոլոչի, հիմնւած հաստատ տեղիկութիւնների վերակ, զանում է հնտեւալլը: Իրանց տարածւելու ժամանակ Եւրոպայում, նոքա բաժանւած էին խմբերի («լախ») բազկացած 70 մինչ 200 զվիսից ամեն մէկը: Խւրաքանչիւր խումբ ունէր իւր առաջնորդը («ալոլգարի»), իւր զատաւորը («պիլը») և իւր պատաւորները («ջամապարի»), որոնք, նակած իրանց կարեսրութեան, կոչւում էին թագաւոր («պաշո») կամ իշխան («ուտչա»), իսկ Եւրոպայում կոչւում էին զուքու կամ կոմա:

Դիմաւոր խումբը, Մինզել թագաւորի, Միհալի, Անդրաշ և Պանուէլ զուքսերի, իօն կոմսի և Պետրոն ասպետի առաջնորդութեամբ, երեաց Աւնդարիայում և զիմսեց զէպի Օֆին քաղաքը: Մի մասը նոցանից մնաց ալի երկրուամ Գանուրե և Թեր գետերի ափերին: Մնացածները բաժանեցին երկու մասի, մէկը՝ զէպի արեմուտք, միւսը, զէպի հիւսիս ուղենորւելով, անցաւ կարսկատեան լեռները և հասու Բոհեմիա, Սաքսոնիա, Հանովեր և Մեկենքուրդ և Բալթիան ծովը: Անդէս որ 20 տարւաէ ընթացքում նոքա արդէն ցրւեցին Եւրոպակի մի մեծ մասում և մի զարւաէ ընթացքում նոքա մասն նաև Շոտլանդիա, Շամեմարք, Շևելիա, Լեհաստան և ալ տեղեր: Կոլոչի բներում է ալն թւականներ, թէ երբ և որակից առաջն անգամ երեսցին բոշաները Եւրոպակի ալ և ալ քաղաքներում: Իսպանիակի մասին արդէն առեց, որ բոշաները աղտուղ զիս: 14-երորդ դարուց առաջ եկան:

V

Բոշաների հալածանքը և աղտուղը:

Կոլոչիի զբքի երրորդ և չորրորդ գլուխները աչդ խնդրին են ուերաբերում:

Միջին զարերում բոշաները չարգւած էին, համապատասխան ազդէսպաքի ոգուն, որը հրաշըների և կախարդութիւնների հաւատում էր: Շատ

բնական է այդ պատճառով, որ բոշաները գրաւելու ուժ ունեին. Կախարդութեան արհեստի թափառող վաճառականներն էին նոքա այդ ժամանակ, ասում է Կոլոչի, Շնորհիւ իրանց ծանօթութեան բժշկական խոտերի հետ, մի քանի ասոզարաշխական երնովթների հետ, շնորհիւ այն ծանօթութեան, որ նոքա ունէին մետաղների խառնուրդների մասին, չետոյ խաղաթղթերի գործածութեան և Արևելքում սովորած թւերի գիտութեան մասին. լետոյ շնորհիւ գուշակութիւնների և ծանօթութեան հիպատիական երեսովթների հետ, նոքա աւելի ու աւելի ընդունելութիւն գտան և ահի վերա հիմնած պատուի արժանացան:

Բայց երբ նոքա սկսեցին ճանաչւել որպէս խարերաներ, երբ մորացկանը գող դառաւ, թափառականը՝ աւաղակ, զամբիւղ շինողը՝ տուն կրակող, կախարդունին դառաւ մեղքերի թողութիւն տւող, երբ վերջաղիս նոքա սկսեցին իրանց մօտ ընդունել ամեն տեսակ չարագործներ և խարերաներ և այսպիսով ստեղծեցին մի ընդարձակ միութիւն չարագործների, որոնք հրապարակական խաղաղութիւնը խանգարում էին և սեպհականութեան սպառնացող դառան, այն ժամանակ Եւրոպակում, կրօնական և ոցիալական պատճառներով, նոցա դէմ մի ընդհանուր ասենլութիւն բացւեց Ժողովրդական նախապաշարմունքը լարւեց նոցա դէմ, որպէս հրէաների դէմ. Նոքա սկսեցին հալածւել և օրէնքից զուրս մարդիկ ճանաչւել. նոցա կապում էին խարուկների վերակ, նոցանից խոստվանանք լսելու համար կատարւած չարագործութիւնների մասին և աւճն:

Հալածանքների սկիբրը եղաւ Խոպանիալում, 1492 (Նոյն ան տարին, երբ Ամերիկան գտնւեց), զորան չուտով հետեւեցին Խտալիան, Ֆրանսիան, Ֆլանդրիան, Գերմանիան, Թուրքիան և Մոլդավիան, Անգլիան և Շոտլանդիան, մինչդեռ Եւրոպակի այն մասերում, ուր այդքան խոստավիր չին դէպի նրանց, իսկատ օրէնքներով նոցա զատապարտեցին երկիրը թողնելու:

Դորա հակառակ, բոշաները Եւրոպակում մի երկրորդ հարենիք գտան Ռւնդարիալում, ուր նոքա, շնորհիւ Սիդիսմունդ թագաւորի պաշտպանութեան, գեռ 15-րդ դարու սկզբում հաստատեցին: Այդուեղ նոքա պատճառեցին իրանց աղատութիւնը և բարիքներ վակելեցին, և սակաւ դէպքերում միան դրդեցին իրանց դէմ տէրութեան և ժողովրդի խստութիւնները: Մի այլ գթառաստութեան օրինակ սատացաւ Եւրոպան Ռուսիալուց, ուր բաշների դէմ երբէք հալածանքներ չեն եղած, այլ կառավարչութիւնը աշխատած է նոցա անդական բնիկների հետ խառնել և հաստատաբնակ դարձնել: Դրեմիէ ամբողջ Եւրոպան երեք դար չարունակ հալածեց բոշաներին մորակով, երկրից վւնտուրով, կախաղաններով և խարուկներով, որ նոցա ջնջի, բայց իզուր: Եւ երկար ժամանակ տիեզ առ հակեացքը թէ նոքա ոկի մարդիկ չին, այլ վակրենի կինդանիք, որոնց դէմ մինչև անզամ որսորդութիւններ էին սարքում:

Բայց այդ բոլորով չը կարողացան նոցա ջնջել: Հենց որ կատաղու-

թիւնները անցնում էին, մէկ էլ տեսնէք բոշաները, դուրս գալով իրանց իննային ապաստարաններից, պարզ ցերեկ օրով ներկալացան քաղաքի և գիղի փողոցներում, լիրը լուսով և վատահութիւնով իրանց բաղդի վերակ:

Վերջապէս հասկացան, որ հալածանքով բան չի դառնալ, այլ որ մարդասիրութեամբ պէտք է վարւել նոցա հետ: Դորա առաջին օրինակը տեսց Աւստրիակի Մարիամ Թէրեզայի և իշխան Կառութիցի լուսաւոր կառավարութիւնը, որը իւր վերաց առաւ ոչ թէ հալածելը, այլ գործնական հաստատութիւններով նոցա կրթելը: Անգարիշան շարունակեց իւր մեծանոցի վարմունքը դէպի բոշաները, թէս սոքա սկզբում չէին ուղում հպատակներ նոցա համար տւած օրէնքներին, օրինական կեանքը մի տեսակ սորիութիւն համարելով: Բայց և այնպէս նոքա սիսեցին սովորել հաստատարնակութեան, թէ գիւղերում, թէ քաղաքներում, ուր նոքա սեպհական թաղեր ունեցան: Աւելի հակւած դէպի արհեստները, բան դէպի հողագործութիւնը, նոքա շարունակեցին իրանց հին արհեստները՝ կաթսա շինող և ձիերի բժիշկ, երաժիշտ և պարող, արհեստաւոր և երգիչ: Նոր իւրացրին նոքա մի քանի տեղերում ոսկի աւազ մաքրելը, որի համար նոքա առանձնաշնորհումներ ստացան: Մի քանի տեղերում անգամ նոքա սովորիցին հրկրագործութեան: Կանաքը, սովորելով աւելի կանոնաւոր կեանքի, տիպերի աճնապիսի գեղեցիկութեան հասան, որով Անգարիշան աչժմէլ հըսչակւած է: 1782 թւականին, բացի հաստատաբնակներից, հաշւեցին դեռ 46.683 ուրիշ բոշաներ:

Աւստրիա-Անգարիշակի օրինակին հետեւոց Խոպանիա, որ անցեալ դարի վերջերքից սկսեց մտածել նոցա հաստատաբնակ դարձնել: Բոշաները, տեսնելով տէրութեան ծառալողների կողմից սիրալիր վարմունք, ուրախութեամբ բնակութիւն էին հաստատում զիւղերում և ապրում էին օրէնքների համաձան: Ռուսիան, ուր բոշաները երրեք հալածւած չեն եղել, Էնդրիքիանով ձգտել է բոշաներին բարուսապէս բարձրացնելու: 18-երորդ դարի վերջերքից նոքա՝ Վոլինի նահանգում և ամրող հարաւային Ռուսիակում բնակւելով, մնացին ալատ և անկախ և եթէ օրէնտրութիւնը նոցանով զբաղւել է, ալդ եղած է նորա համար, որ նոցա օգտակար հսկակներ զարձնէ:

Մեծ-Բրիտանիական անդլիական մարդասիրութիւնը բոշաների նկատմամբ արթնացաւ միայն ներկաց դարուս սկզբին, բայց նա հիմնած էր մի քանի մարգասուների անձնական գործունէութեան վերաց, որոնք 1827-ին Առաջապատճեւմ մի մարդասիրական ընկերութիւն հիմնեցին բոշաներին վայրենութիւնից կատ սովորացնելու և նոցա բարուսապէս բարձրացնելու համար: Շուտով նա իւր գործունէութիւնը բնդարձակեց և պատական հետնաբներ ունեցաւ:

Բոմինիապում երկար շարունակւեց բոշաների վաս վլճաւկը և անգամ օրէնքներով այդ վիճակը աւելի վատացաւ: Մի քանի անձերի ձբդ-

տումներով միան սկսւեց նոր ուղղագիւն նոցա համար և վալախական կառավարութիւնը միջոցների դիմեց, որպէս Ալեքսանդր Գիկաս, որը 1837-ին 4000 բոշաների ազատութիւն տեց, 1844 և 1855 թւականներին ամբողջ Վալախիական վերացրեց բոշաների ստրկութիւնը, որին հետեւց և Սոլդատա:

Նըսպիսով 1856 թւականին վերջապէս վերջացաւ ամբողջ ներսապատմ բոշաների ճորտութեան կամ ստրկութեան արատը: Արևմտեան նըրապատմ ալդ աղասումը բզիսեց Քրանոսիական մեծ վեցափոխութեան սկզբունքների տարածւելոց: Բայց մինչ այժմ էլ ստորութեան զրութիւնը մի տեսակ լատիացրած է բոշաներին և այժմ էլ նատակական բոշանի անոնքը բառական է համարւում զողի տեղ ընդունւելու համար:

VI

Բարոյական բնաւորութիւնը, ոգեկան ընդունակութիւնը, երաժշտութիւնը, բանաստեղծութիւնը և պարը:

Հանրածանօթ ունդաբացի երաժշտագէտ և կոմպոնիստ Ֆրանց Լիստը նա է, որ ամենավարպետ կերպով նկարագրել է բոշաների բարոսական բնաւորութիւնը և նոցա արևեստագիտական և մոնաւամեղ երաժշտական ունտիւթիւնները: Նորա հեղինակութիւնը այդ նկատմամբ ընդհանրապէս ընդունւած է¹⁾:

Փամանակը և աեզակոն հանգամանքները, որոնք առաջարար մեր աշխարհում անքան դեր են խաղում, բոշաների վերաց կամ ոչինչ կամ շատ քիչ ներգործութիւն են արել: Եւլապալում երևուած օրից մինչ ազար նոքա մեացնել են, ինչ որ էլն և որտեղ էլ նոցա պատահեք, Հիմալայի ստորառում և Ասորիքում, Տերրերիալում, Խաղանիալում թէ զուցէ և Բրազիլիակում, մենք նոցա ամենուրեք նոյնն ենք գտնում, կարծես նոքա իրարից հեռացած չը լինէն՝ ամենուրեք բաժանւած իրանց չրջապատղ աղ գերից, միշտ ձգող, որ իրանց ալս առանձնութիւնը խիստ պահպանէ և զետ քաշւող արախնօս ների և պառզնօս ների հետ շփութոց: Ո՞չախնօս մի խօսք է, որ, Պասոպատի՛ր ասելով, ճնանդ է առել Տրապիզոնից և նշանակում է ոչինչ մալող, կամ մի անշան արմէքի մարդ: Դա մի արհամարտկան խօսք է, որ բոշաները բանեցնում են օտարների համար: Ո՞ւոչն խօսքը ունդաբական է և զործ է առում ունդաբական և իրողական բոշաներից:

¹⁾ Fr. Liszt, Des Bohémiens et de leur musique en Hongrie, Paris 1859. Թարգմանւած է նաև գերմաներէն 1861 և 1881 թւականներին:

ինչ դրութեան մէջ էլ որ լինի նա, բոշան պահպանում է իւր սպիռական և չարատե անզգակութիւնը, երբէք նա չի երևում ապագաէի համար նոր բաշով, միշտ ապրում է օր օրի վերառ անտարձան մտաւոր անշարժութեան մէջ: Կառավարչութիւն, օրէնքններ, սկզբունքներ, պատփի զգացմունք՝ այս բարորից ամենաառարօրէնակ ազգութեան անտառների բաներ են: Պարտականութիւն և սեպհականութիւն առաւած բաները նրանց անձանոթ բաներ են նուզպիս: «Փէտք է» խօսքը նորա չունին, իսկ առնենալը բազը նոքա ունեցում են (terava), բայց զոնէ եւրոպական բոշաներից մոռացւած է: Իւր սեպհական անձնաւորութիւնը, իւր «մա»-ը զպալ և այն էլ ամենաախորը կերպով զպալ, այդ է, առում է կոլոչի, բոշափամինաներին և ամենաորնատուր ձգտումը, կարօտը: Այդ անսահման անկախութեան կարիքը, որը բոշաների բնաւորոշ նշանն է դառել նորա սահանում են այն մի տեսակ մշտնջենական արբեցողաթիւնից, որի մէջ դանուում են նոքա բնութեան հետ միշտ շփելուց: Որովհետեւ նոքա երբէք բնութեան անմիջական ներդործութիւնից չեն հեռանում, բնութիւնից նրանց ներշնչած ոգեսրութիւնը այն աստիճան սովորութիւն է դառնում, որ նորա այլ ևս չեն կարողանում ապրել ասանց այդ չարատե զօրմով զգացողութեան: «Նոքա աշխարհում չեն ճանաչում մի բան, որ հաւասարէք այն հաճուքներին, որ նոքա իրանց մարմնի բոլոր ծակուիներով և զգացողութիւններով ներս են ծծում բնութեան զոգից: Ամբազ երկիրը նոյս համար հայրենիք է. միան թէ իրանք իրանց ալատ զգան՝ ամեն կլիմա նոյս համար չարմար է: «Ուր լաւ, անդ հայրենիք»—ահա թէ ում համար է առած:

Թափառական կեանքը ոչ մի նոմադի համար ախճան անհրաժեշտ կարիք չի դառել որքան բոշաների համար: Դորանից և բնաւորութեան փոփոխութիւնները, անհանդիսատ լուզուածութիւնը:

Զը նախած որ բոշան լուիլեալն ապաշառում է բնութիւնը, բայց Աստուծու, իրը ափեկերը զեկավարող, սուս զազափարը նրան անկալու է: Նորա ոգին երբէք չի կարողացի բարձր իդէալների հասնել: Հանդերձեալ կեանքի գալափարը նրան ծիծաղելի է երևում: Նոքա կրօն չունին: Նաև նոյս երդերի և պատութիւնների մէջ, որոնցից ոմանք շատ չէն են, հաւատի ներք անգամ չը կայ, չը նախած որ նոքա, իրանց անձնական օգարի համար, բայց առանց որ և է համոզմունքի, մի որ և է կրօնի պաշտամունք ընդունում են, մի փաստ, որ նկատած է ամենուրեք, թէ քրիստոնէական և թէ մահմեղական աշխարհում: Աստուծութիւնը նոյս համար այն է, ինչ իրանց օգուտ է և զուրիկան: Այս է նկատում, երբ նոյս դիտում էք, չը նախած որ Աստուծ խօսքը նոքա ունին (Dovel): Բայց այդ խօսքը, ծաղան լինելով սանսկրիտական «Գեւառ»-ից, ընդհանուր է բոլոր հնդկական զեղերին:

Ոբակս կրօն չունին, չունին նոքա նաև ոչ հայրենիք և ոչ իրանց

ազգի պատմութիւն։ Նոքա չունին ոչ մի զրաւոր արձանագրութիւն, աճ-
գամ չունին բերանացի աւանդութիւններ։ Այդ բոլորի տեղ նոքա ունին մի
կիրք, որը նոցանում ամենաուժեղն է՝ մի բարձր հպարտութիւն իրանց
սեպհական խղճութեան վերաւ, որը կրթւած մարդու բոլոր ուժերին ընդ-
դիմադրում է։

Բայց այդ հասարակական ընտանիքից դուրս, այդ ժողովուրդը մի ունի
անորոշ արւեստովիսական զգացմունք, որը արտադարսում է նորա ազգավիճ
երաժշտութեան մէջ։ Այդ է, որ ֆրանց Լիստը անուանեց sentiment bohémeու
(բոշակի զգացմունք) գեղարւեստի մէջ։ Ողու այդ գիծը երեռւմ է իր
մի կարօտ դէպի անապակման աղատառթիւնը միացած ձեւի անկախութեան
հետ, Երաժշտութեան մէջ, որպէս բոշաների բնաւորութեան մէջ, ամեն
բան կարօտ և պահանջն է արտադարսում, Բայց այդ բոշակի պահանջը աշխա-
տաւոր մարդու, կամ մտածողի և հետազօտողի պահանջը չէ, այլ երեխակի
անկարգ պահանջն է։ Բոշան լաւիտենական երեխաւ է։

Բոշաների ոգեկան, մանաւանդ գեղարւեստական ունակութիւնների
մասին վկարութիւն են տալիս այն զարմանալի առաջադիմութիւնները,
որ նորա միջտ անուամ են երաժշտութեան մէջ և այն բազմաթիւ գեղար-
ւեստագէտները և երաժշտագէտները, որ նոցա միջից դուրս են եկել
թող լիշտեն միակն Սուչաւա, Բարբարա, Բարնա Միհալի, Ցիհարի, Սուլոր,
Բաչար, Արքինդի, Կեչկեմետի, Զինկա, լետոն Պանծան՝ մի ջութակ ածող
կին, որը Վիեննապում ամենափակուն լազմանակներ էր տօնում, և ամե-
նից առաջ Բիհարի (1769 մինչ 1827), որը ճանաչւեց որպէս ջութակիստ-
ների թաղաւոր և փակուց որպէս լուսական արւեստի, նոյնպէս և կլասի-
քական երաժշտութեան մէջ, Վերջապէս թող լիշտի ազտեղ երեկել նկա-
րիչ Անտոնիօ Սոլարի, որը երեխ մի վենետիկական բոշա էր (ծնւած
1382-ին), իսկ մտածողների մէջ՝ Զոհն Բունիանս, որ մեծ ձիրքերով գրող
և քարոզիչ էր, ծնւած 1628-ին և վախճանւած 1688 թ. Լոնդոնում ¹⁾։

Բայց բոշան սիրում է իսկապէս միան երաժշտութիւնը, որպէս
Լիստն է տուամ, եւ չը կաէ թերես մի ալ անկիրթ ազգ, որ րիֆմի ան-
քան ճշտութեամբ էլեկտանցով նւազել կարողանար, որպէս այդ լատուկի է
բոշական գործիքաւոր երաժշտութեան, որին այդ իսկ պատճառով
Լիստը լատկացնում է մի իսկապէս ազգավիճ գիւղաղներգութեան հշանա-
կութիւնը, Նոցա գործիքների ախորժ հնչիւնը գեռ ևս գերազանցւած չէ,
ածելու ուժը անհաւատալի է, և այն, ինչ ամենից շատ զարմացնում է,

¹⁾) Միստիքական գրադ և հեղինակը իւր ժամանակ շատ կարողացւած
և անթիւ անզամ նոր տպւած և թարգմանւած զրքի՝ «The pilgrims progress
from this world to that which is to come», London 1678—84, երկու
հատոր։

աղ՝ ունգարացի բոշաների օրքնատրն է, թէ պարի և թէ պատերազմական եղանակներում:

Նոցա երգերը, որ կարծ երգեր են և րիտորնելներ, նուն բարձրութեան վերաչ չեն կանգնած: Եւ որքան էլ մի քանի գրողներ գոված են բոյա երգչուհիներին, բայց նոքա, — լիստի ասելով, չեն համում զործիքաւորներին. Նոքա աւելի դիմիչ են որպէս երեելի տարիաւորներ, քան որպէս լաւ գեղարինստագէտներ: Մասկակի բոշուհիները երգում են միայն որպէս դրդող և նախապատրաստող պարի համար, իսկական երաժշտութիւնը ալդ պատճառով նոցա համար երկրորդական է: Նա վերջանում է մի բաքոսական շրջապարով, որը զզացողական լուզմունքը հասցնում է զադաթինակէտի:

Բանաստեղծութիւնը, բոշաների մօտ, նմանապէս ծառակում է միացն որպէս պարի զաշնակցող: Մանաւանդ իսպանական ջիտանուները (բոշաներ) կուպիտաները և բիտորնելները երգում են միաէն պարի համար: Հիւսիսում բոչան աւելի պատմիչ է: Բոշակական բանաստեղծութեան մէջ, հակառակ տարածւած կարծիքի, շատ անգամ բարուական և սիրավին զզացմունք է լավոննուում: Կոլոչին իւր զրքի մէջ ալդպիսի օրինակներ է բերում:

Կաէ մի տեսակ ժողովրդական բանաստեղծական բանաստեղծութիւն խապանիւում, որ կոչում է poesia flamenca, կամ Cantos flamencos, մանաւանդ Անդալուչիանում: Դա իսկապէս բոշակական չէ, բայց բոշական ոգով ներշնչւած անդալուզական երգեր են, որոնցից պրոֆեսոր Մահալո ի Ալբարնդ Սիւլվանում մի ժողովածու հրատարակեց¹⁾:

Ըստ Վալլանի (Vaillant), Արևելքի բոշաները ունին մի քանի պատկերանիող և սիմբոլական սլարեր, որ նոքա կրօնական տօների առիթով ներկալացնում են, և նա զոյցանից մէկը նկարագրում է, այն է Խաչի պարը, որը տեղի է ունենում ի պատիւ քրիստոնէական Զատկի: Բայց բոլոր բոշակական տօներին, բոլոր «կակաւա»ներում նոցա պարերը ամենեին կրօնական բնաւորութիւն չեն կրում: Նոքա, որպէս ասւեց Մոսկալի պարուհիների մասին, զարթնացնում են իրանց պարով միան զզակարանականը, թէ անցեալում և թէ ներկաւում բոշաների: աղջիկները հոչակած են որպէս պարողներ: Եւ որպէս ազգպիտիներ, նոքա զեռ 17 դարում Ֆրանսիական շատ սիրուած էին: Իսպանիական նոքա սրարում են «Պարանդէօ» և «Որորանգօ», Արևելքում «բոմափիկա» կամ «տարանցա», որը նունն է թէ հընդկական բոշագերների և եղիակատական ալմեների ու զաւազիների պարը:

Լեզուի մասին լետու, բայց բոշաները ցուց էն տավիս ոգու մեծ սրութիւն և ոչ սովորական ճարպիկութիւն, միացած շատ կենդանի երևակակական ուժի հետ: Ունգարական ուսումնաբաններում ընդունւածներից մի

²⁾ Collección de Cantos flamencos, recogidos y anotados per Demofilo. Sevilla 1881.

քանիսը մինչև անգամ ընդունակութիւն ևն ցուց տեղ աւել աւելի բարձր ուսման համար: Բաց ընդհանրապէս առած, հասունութեան նոքա չեն հասնում և միշտ ձգտում են դէպի իրանց նախկին կեանքը, իրանց խրձիթը.

VII

Լ Ե Պ Ո ւ Ն :

Յոշաների լեզուի մասին ամենալանաղան կարծիքներ կավին մինչ անցեալ դարի վերջերքը, չը նակած որ դեռ 1732 թ. ին Միազիկեր բոշակէնը համեմատեց նոր հնդկական բարբառների հետ: Մինչև անգամ մինչ մեր դարսու միջներքը հին կարծիքը իշխող էր, որ իրը թէ նոցա մէջ նմանութիւն չը կաց Երկար ժամանակ ղեռ ինդիր կար, թէ արգեօք բաշները մի որ և է լեզու ունին թէ ոչ, որովհետև շատերը ընդունում էին, որ բաշաները ոչ թէ ինկական լեզու, ալ մի գողակին լեզու ունին, պաշմանական լեզու, նման խալիացի լին գուէ ցերգա, գերմանական ուստի վելչ, ֆրանսիացոց լանգ վերա լեզուներին: Եւ կամ ընդունում էին, թէ նոցա լեզուն մի տեսակ կուտակումն է ուրիշ ազգերից վերցրած բառերի:

Բայց երբ կամաց կամաց զտան ազգակցութիւն բոշակերէնի և հնդկական լեզուի մէջ, որպէս ամենից առաջ Միազիկերը առաւ, և չնորին նրան, որ անգլիացիք (1770-ին) և պորտուցալացիք (1778 ին) մոցրին հնդկական քերականութիւններ, պարզեց, որ բաշակերէնը մի ինկական լեզու է, հիմնած հնդկական բարբառների վերակ: Դրելմանը 1782 թ. ին առաջնը կարգի բերաւ բոշական քերականութեան և բառարանի տարրերը: Մեր գարու առաջին քտան տարիներում նպաստեցին խնդրի առաջանալուն Քիլարդոնի, Գրաբերգի Զեմլյ-ի, Խրւինի և Գուխմաների տաւածքները: 1827-ին Բիշով հրատարակեց մի բոշակերէն-զերմաներէն բառարան: 1832-ին հռչակաւոր Մեցցոֆանտի զտաւ բոշակերէնի առանձին բնաւորութիւնը և կարեսորութիւնը, 1837-ին Յորրով թարգմանեց Պակասի աւետարանը Զիտանուների բարեսառվ, որից երկու տարի առաջ Գրաֆ-Փունդեր Էրֆուրտում հրատարակեց բոշակերէնի մի նախաշաւիդ, ուր նա հաստատեց, որ բոշակերէնը, թէն նա ալ և ալ ազգերից բառեր է փոխվերցրել, բայց իւր քերականական կազմին և առանձին բնաւորութեանը հաւատարիմ է մնացել: Հետեւալ տարիներում հրատարակեց արդէն քանից լիշտած Պրեդարիի գիրքը: Նաև սա պարունակում է մի համառութիւն և մի բառարան բոշակերէնի: Գրան լաջորդեց Պոտտ'ի վերին աստիճանի հետաքրքրական աշխատասիրութիւնը¹), որը ասլացուցեց ազգակցութիւնը բոշակերէնի և զինդի:

¹⁾ Pott, Die Zigeuner in Europa und Asien. Halle 1844 bis 45:

Կոլոչի նկատում է, թէ որպէս շատ արդիւնաւէտ են եղել բոշակերէնի ուսումնասիրութեան համար 1850—1870 թւականները։ Այդ ժամանակա-միջոցում ուսումնասիրեցին՝

Դիերկու և Բողբիմոն—բասկերի բոշակերէնը.

Բորբալ—խոպանական (ջիստնոս) և անգլիական (Դիպուալո) և Ջիբենբուրգի բոշակերէնը.

Վայլան—բումանական բոշակերէնը.

Բօհալինկու—ռուսական բոշակերէնը,

Սմարտ—կրկին անգլիական բոշակերէնը,

Կամպուցմո—Խիմնից—խոպանականը,

Դոբինո—պարսկական բոշակերէնը,

Բուզգի - զերմանական բոշակերէնը.

Նիւբուզ—եզիստական բոշակերէնը.

Մինոն Ժամանակ երեացին սաելի կաստրեալ աշխատութիւններ, որպէս Ասկոլի—Հալլէնում, Միտրովիչ—Պրագում, Լիբիլս և Սուկ-Լալլըման-կալպցիզում և Ֆրիզիլս Միւլեր՝ Վիեննակառում։

1870 թւականից մինչ ավեմ բոշակերէն բառագրականութիւնը ահա-զին յառաջազիմութիւններ է արեւ. Բորբոլ, Սմարտ և Կրոֆտոն աւելի շատ լաւ բառարաններ անգլիական բոշակերէնի (gipsy—dialect). Քինդալէ տաեց մի բառարար բառարան խապանական բոշակերէնի. Պաս-պատի հրատարակեց Կ. Պոլտում իւր ուսւածքները չինդիանէնների մասին, որը մի առանձին արժէք ունի և Միկլովիչ Վիեննակառում հրատարակեց իւր անհամեմառելի աշխատութիւնները. Ազգ միջոցին բոշաներին շարունակ ուսումնասիրեցին Ռուբոլ, Հուանդիարում՝ Գոհէէ, Ռու-մանիալում՝ Կոնստանտինոսկու, Խապանխալում՝ Դիերկու, Սլովակիալում՝ Կալինա, Անգլիակառում՝ Զարլու Լելանդ, Զիբենբուրգում՝ Շվեկեր, Անգլիալ-կասում՝ Պատկանեան, Վերջապէս երեաց ունդարական բոշաների մասին Աւստրիա-Ալենդարական արքիոդուքս Յովանէիլի աշխատութիւնը տնդարա-կան բոշաների մասին և այժմ ահա Կոլոչի աշխատութիւնը, որի մէջ կան լիատակաւ զեռ ուրիշ նիւթեր բոշակերէնի ուսումնասիրութեան մասին։ Մեր կրատակածները—ամենազիւորներն են.

Բոշակական բարբառներից հին լեզուին ամենահաւատառիմ մնացած են Բալկանեան թերակղզունը, Խապակիլնը և Վալիխինը, միւսները շատ աւելի են փոխ առած օտար բառեր, դարձւածներ և ազն, որպէս Խոպա-նիալում, Անգլիակառում։

Ծառ Կոլոչիի Ներոպակառում հետազուած բոշակերէն բարբառները բաժնեւում են 14 զլիսաւոր տիպարների՝ 1) լունական-տաճկակական բոշա-ներ կամ չինդիանէ, 2) ուսւմնական, 3) ունդարական, 4) ուլաւոնիական, 5) զերմանական, 6) լինական—լիտովական, 7) ուսական, 8) Փինական, 9) սկանդինավական, 10) անգլօսաքսոնական կամ չիստուալու (gipsies), 11)

վելական, 12) խոալական, 13) բասկիական, 14) իսպանական բոշաներ կամ Զիտանոս: Բայց ազդ եւրոպականներից, իւր բարբառներով ամենահարուստներից մէկ են է նաև Ասիական բոշաների լեզուն, որը մինչ աժմքից է ուսումնասիրուած: Աֆրիկակի և Ամերիկակի բոշանների բարբառները կամ քիչ կամ բոլորովին չեն ուսումնասիրուած:

Այդ բարբառների կազմւելու մէջ անկասկած է, որ գեր են խաղացնել նաև զաղտնի (զողերի) լեզուները: Բայց չը նախած որ ազգան տարբեր տարրեր խառնւել են ազդ բարբառների մէջ, նոցա կազմը միևնունն է: Իւր աղնւութիւնով, Ասկոլիի ասելով, նա գերազանցում է անդամ պալական լեզուն:

VIII

Բոշանների թւահամարը

Վերջացնում ենք այս չօդւածը, մի կողմ թողնելով Կոլոչի՛ի գրքի այն գլուխները, որ վերաբերում են բոշանների ըարքին, սովորութիւններին, նիստ ու կացին, ապրուստին, զբաղմունքներին, նոցա արւեստներին, ամուսնութեան, թաղման սովորութիւններին և այլն, և մեր ընթերցողների առաջը դնելով Կոլոչիս'ի հետեւեալ վիճակագրական ցուցակը բոշանների թւի մասին, Եւրոպակում, Նախազգուշացնելով սակայն, որ ապա թւերը միայն մօտաւորաաէս պէտք է ճիշտ ընդունել:

Յունաստան	19.000
Թիւրքիա	67.000
Բուլգարիա	50.000
Բունիա-Հերցոգովինա	18.000
Սերբիա	34.000
Մոնտենեգրո	500
Ռումանիա,	250.000
Աւստրիա-Ռւմբարիա՝	
Աւստրիա	16.000
Ռւմբարիա	150.000
Ռուսաց կալսերութիւն՝	
Ռուսիա	58.000
Լեհաստան	15.000
Շլեցիա և Նորւեգիա	1.500
Գանեմարք և Հոլանդիա	6.000
Գերմանիա.	2.000
Իտալիա.	32.000
Ֆրանսիա	2.000

Մեծ-Հրիտանիա	12.000
Խողանիա	40.000
Ֆիզիալ Եւրոպան	15.000
	779.000

Նոյն ազգիւրից մենք իմանում ենք, որ առաջաւոր-Ասիակի նկատմամբ մօտաւորապէս լայտնի են հետևեալ տեղերի համար բոշաների թւի մասին՝

Անդրկովկաս	3.000
Ասիական Յուրքիա	67.000 ¹⁾)
Պարսկաստան (1866-ին),	13.000
Հնդկաստան {	
Սիբիրիա {	20.000 (?)
Աֆրիկա {	
Ամերիկա {	166.000 (?)
Աւստրալիա {	

Դւիդօ-Տուրինի կարծիքով, սակայն, բոշաների թիւը պէտք է 2 միլիոնից շատ պակաս չը լինի:

¹⁾) Սոցա մեծ մասը Փոքր-Ասիակումն են և Տաճկա-Հավաստանում։ Այդ թիւը սակայն է Կոլոչի։

ՅԱՄԱՅՆԱԿԱՆ ՀՈՇԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՆԱՅԱԳՈԽ

Յ. ՍԱԴԱԹ ԷԼ. Ե Ս Ն Ի

(Նարունակութիւն)

ՀԵՄԱՅՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՆԱՅԱԳՈԽԻՄ:

Այժմ մենք անցնում ենք մեր յօդւածի խոկական առարկային՝
որի վերաբերմամբ նախընթաց զլուխները անհրաժեշտ յառաջարա-
նութիւն էին: Մենք առաջ պէտք է աշխատենք համառօտ կիրառ
նկարագրել համայնքի կազմակերպութիւնը Երևանի նահանգում և
ապա անցնել նորանում տիրապետող հողատիրական կարգերին, որով-
հետեւ ուսումնասիրել վերջինս անկախ առաջնից, դա միևնույն է թէ
ուսումնասիրել հետեւանքը անուշաղիր լինելով գէտի պատճառք: Հա-
մայնական հողատիրութիւնը համայնական կազմակերպութեան յառ-
կանիշներից ամենազլիաւորն է և վերջինս ծաղումը է առաջնից: Ի
միջի այլոց դորան ապացոյց կայ և հայկական համայնքում: Մեր
նկարագրել համայնական կազմակերպութեան մենք նմանապէս ան-
հրաժեշտաբար պէտք է ասենք ընդհանուր և պատմական տեղեկու-
թիւնների հիման վերայ, որովհետեւ մեզ հետաքրքրող առարկան,
ինչպէս առաջուց մի քանի անգամ նկատել ենք, ընդհանուր մարդ-
կային հիմնարկութիւնն է, որի վերաբերմամբ այժմ զիտութիւնը
ունի որոշ եղբակացութիւններ, որոնց օգնութեամբ միայն կարելի է
հետազոտել և լուսաբանել նոյն երևոյթը մի դեռ ևս չ'ուսումնասիր-
ւած երկրում: Պատմական տեղեկութիւններ անհրաժեշտ են նորա-

¹⁾ Տե՛ս «Մուրա»-ի № 5 և 7:

համար, որ թէե համայնքը ընդհանուր մարդկացին հիմնարկութիւն է, բայց իւր ձևերով, ընթացքով միշտ գտնուում է տեղական-ազգային գործիչների ազգեցութեան ներքոյ և դորա համար միշտ կրում է ազգացին (հպօնալենով) կերպարանք:

Համայնքը Երեւանի նահանգում, կամ առելի լաւ է ասել հայկական համայնքը իւր կազմակերպութեան դիսաւոր հիմքով նոյնն է, ինչ որ է այդ հիմնարկութիւնը միւս ազգերում, որոնք ունին, կամ յայտնի է որ այն ունեցել են: Այն դիսաւոր սկզբունքը, որի վերայ նա հիմնած է և որից բզիսում են նորա միւս յատկութիւնները, դա իրաւունքների և պարտականութիւնների հաւասարութեան սկզբունքն է: Այդ սկզբունքը համայնական կեանքում կայանում է նրանում, որ նա (համայնքը) աշխատում է իւր անդամներին գոյութեան կաւում հաւասար պայմանների մէջ զնել: Բնութեան այն բարիքները, որոնցից կախւած է մարդու գոյութիւնը և որոնց պիտանիութիւնը կախւած չէ մարդուց, ինչպէս օրինակ հողը, ջուրը, անտառը, արօտը և բոլորը ինչ որ կայ նրանցում, համայնքը աշխատում է հաւասար չափով մատելի անել իւր անդամներին, ինը որոշելով այդ բարիքներից օգտուելու շափը և ձեւը: Այս առարկացի մի կողմն է, տալով իւր անդամներին հաւասար միջոցներ գոյութեան կրում, նա գնում է և նրանց վերայ հաւասար պարտականութիւններ, որոնցից խուսափելու ոչ ոք չի կարող, եթէ չը ցանկանայ անգամ օգտուել համայնական բարիքներից: Այս իրազութեան հաստատ ապացուց կայ հայկական համայնքում, որի մօսին խօսելու ենք յետոյ: Այն պարտականութիւնները, որ համայնքը գնում է իւր անդամների վերայ, նոյնչափ բարդ են, որքան նորա տւած բարիքները և ծագում են կամ համայնքի կարիքներից, ինչպէս օրինակ ջրանցքներ և ջրամբարատակներ կառուցանելը, համայնքի պաշտպանութիւնը և այլն, կամ տէրութեան կարիքներից, ինչպէս օրինակ հարկերը, տէրութեան պաշտպանութեան հետ կապւած պարտականութիւնները և այլն: Եւ ամենախորհրդաւորը այս գէպքում այն է, որ այդ բարդ և հոյակառ հիմնարկութիւնը, որին կարելի է համեմատել տէրութեան հետ միայն, արտագրութիւն չէ մարդկացին խմացական դործուներութեան, այլ ծագել է ժամանակի ընթացքում, օրդանարար համանման ձևերից վորիուսելով, որոնց մէջ ամենանշանաւոր տեղը

բւնում է տոհմային կազմակերպութիւնը, որի յատկանիշն է խաչնարածական կեանքը: Իրաւաբանութեան մէջ այդ վարդապետութիւնը, որը պատմական է անուանում և որը յաղթող հանդիսացաւ միւսների վերաց, իրաւաբանական ոչ մի երեսոյթի մէջ չի կարող այնքան ապացոյցներ դանել իրան ճշմարտութեան համար, որքան համայնքի ծագման և գոյութեան մէջ: Թէ որ աստիճանի համաձայն մարդկային պահանջներին և ոչ ի վեաս անհատական զարգացման իրագործում է համայնքը հաւասարութեան սկզբունքը, դորա ամենալաւ ապացոյցը նորա գոյութիւնն է դարերի ընթացքում: Այդ անփոխարինելի հիմնարկութեան օգտաւետութիւնը ճանաչւած է այն պետութիւններից, որոնցում նա գոյութիւն ունի և նա այժմ դարձել է օրէնդրութեան պաշտպանութեան առարկայինչպէս օրինակ Ռուսաստանում, այդ համայնական կեանքի հայենիքում, որի համայնքը — „Միբ“-ը համայնական կազմակերպութեան ամենանշանաւոր մուենառներից մէկն է ներկայացնում, որին հայկական համայնքը շատ է մօտենում:

Մենք ասացինք, որ ներկայ հայկական համայնքի գլխաւոր յատկանիշը, ինչպէս իւրաքանչիւր համայնքի, իրաւունքների և պարտականութիւնների հաւասարութիւնն է: Բայց այդ սկզբունքը զանազան համայնքներում կամ միւնոյն ազգի համայնքում զանազան ժամանակ հաւասար չափով չէ իրագործվում: այդ սկզբունքի տարածութեան չափով կարելի է որոշել համայնական զարդացման աստիճանակիչարք:

Մարդկային հասարակութիւնների կեանքը սկսում է այդ սկզբունքի գերիշխանութիւնով. այդ ժամանակ բոլոր միջոցները, որոնցից կախւած է մարդու գոյութիւնը, առանց բացառութեան հաւասար չափով է բաժանում համայնքը իւր անդամների մէջ, նոյն չափով բաժանում է և պարտականութիւնները: Այդ ժամանակ մինչեւ անգամ համայնքի սահմանում կատարւած ոճրագործութիւնների համար պատասխանառու է ինքը համայնքը: Համայնական այսպիսի կարգերը ժամանակակից են տոհմական կենցաղին և ծագում են վերջնիցու: Այդ ժամանակ մարդ ապրում է տոհմային համայնքի մէջ, որտեղ մասնաւոր սեւպականութիւնը համարեաց բացակայ է: Մոնղոլական մի քանի ցեղերում ոչ թէ արօտատեղերը

միայն, այլ մինչև անգամ խալինները պատկանում են տոհմին, ցեղին։ Հիւսիսային Ամերիկայի մի քանի ցեղերում, որսեղ որսորդութիւնով և ձինորսութիւնով են ապրում, ոչ թէ միայն որսալու տեղերը, այլ և որսի գործիքներն անգամ պատկանում են համայնքին։ Բայց հաւասարութեան այդ ծայրայեղ տիրապետութիւնը ժամանակի ընթացքում հասարակութիւնների զարգացման պատճառով, հանդիպում է թէպէտ հին, բայց արգէն զօրացած գործիչի (Փակտոր) ան հատակ անութեան, որը, քանդելով համայնքի տոհմային հիմքը, արենակցական խումբերը (համայնքները) դարձնում է զրացիական խումբեր և միւնոյն ժամանակ սկսում է ընդարձակել մասնաւոր սեպհականութեան ասպարեզը։ Հասարակութիւնների զարգացումը չի լինում մի կողմից միայն։ անհատականութիւնը անխուսափելի կերպով յաջորդում է մոտաւոր և անտեսական զարգացման։ արդիւնաբերութիւնը ժամանակի ընթացքում, սկսում է մեծ կախում ունենալ աշխատանքի յատկութիւնից և նորա մի քանի տեսակները պահանջում են, բացի անմիջական աշխատանքից, նաև նախընթաց տարիների աշխատանք, ինչպէս օրինակ այդիները և առհասարակ ծառառունկիրր։

Այդ դառնում է հիմնաքարը մասնաւոր սեպհականութեան, որը հետզհետէ իւր ծաւալլ ընդլացնում է։ Միւնոյն ժամանակ տոհմային կենցաղի կորուսոր անհրաժեշտ է դարձնում ազգային այնպիսի կազմակերպութիւն, ուր հարկաւոր է լինում իշխողների մի ամբողջ գոսակարգ, որոնց գոյութեան համար համայնքները սոխուած են լինում յատկացնել իրանց աշխատանքի և ստացւածքի մի մասը։ Երբ քայլքայլում է տոհմը, այլ ևս իւրաքանչիւր անհամին չի պաշտպանում ամբողջ տոհմը և վրէժ խնդիր լինում նորա վասար կամ կեանքի համար։ Տոհմի այդ հովանաւորութիւնը իրան է յատկացնում մի նոր և զօրաւոր հիմնարկութիւն—տէրութիւնը (րօշդարեւո), որը իւր գոյութիւնը հաստատում է աւելի լայն հիմքի վերաց քան թէ տոհմը կամ ցեղը, միացնելով բոլոր տոհմութիւնը, որոնք լիզուով և ծագումով մի են, այսինքն ամբողջ ազգը, իսմ աւելի լաւ է ասել՝ ազգութեան կազմելու ընդունակ տարրերը։ Տէրութիւնը իւր կոչումը իրագործելու համար—ներքին և արտաքին խաղաղութիւնը պահպանելու համար, կարիք է ունենում մի

դասակարգի, որի գոյութիւնը տոխուած է լինում ապահովել հաստատ միջոցներով։ Տէրութիւնների ծագումը ժամանակակից է, նահավետական արդիւնաբերութեան, երբ ամեն մի արդիւնաբերող բացի իրանից, ուրիշ սպառող չունի, այդ պատճառով արդիւնքների փոխանակումը կամ՝ վաճառականութիւնը համարեայ բացակայ է, հետև աբար և զերջինիս գործիքը՝ փողը, — իբրև։ Եկեղեցնա տնտեսական արժեքների։ Այդ ժամանակ ասլրուանի և հարառութեան միայնակ աղբիւրը ներկայացնում է հողը և նորա արդիւնքները Հասկանութիւնը յակամացնից սկիտի այդ աղբիւրից վարձարի խոր ծառայող զասակարգին նա տալիս է նրանց կամ ուղղակի հող կամ պարտաւորացնում է համայնքներին իրանց արդիւնաբերութեան յացնի տոկոսը յատկացնել այդ դասակարգի ներկայացոցիններին, որոնց միջոցով նա կառավարում է երկիրը։ Այսպիսով ծագումը է կալւածատիրութիւնը, որը ժամանակի լնթացքում ոչ թէ միայն կանում է համայնքների հողացին իրաւոնքները, այլ և նոյն իսկ զիւղացիների աէր է դասում։ Ծագումը է Նորութիւնը։

Այդ վերև նկարագրւած պրոյեսը, որը յայտնի է պատմութեան մէջ Ֆէօղալիզացեայ անունով, որը ազատ զիւղական համայնքները վերջ ՚ի վերջոյ հացնումը է ճորառութեան, ընդհանուր երևողթէ բոլոր հնդկա-եւրոպական ազգերի մէջ, չնչին բացառութիւններով միայն, ինչպէս օրինակ Զւիցերիան։ Այս գէսպքում բացառութիւն ՚ի կազմում իւրցեղակից եւրոպացի ազգերից և հայկական ազգը։ Դրանում համոզւելու համար, բաւական է միայն ուշադրութիւն դարձնել այս առարկացին վերաբերեալ Հայոց պատմութեան մէջ պատահող տերմիններին, ինչպէս օրինակ, իշխան, նախարար, ազատ ռամբի անազատ, — և այն գէրերին որ կատարումէին այդ կոչումները կրողները։ Բացց ֆէօղալիզացեան այն աստիճանակէտում, որը մենք պատահում ենք եւրոպացի ազգերի մէջ, չի ծագում միանգամից, սկզբից մինչև այդ աստիճանը համնելը, նրան հարկաւոր են շատ փարեր։ Սկսւելով համայնքների իրաւունքների գեռ աննշան սահմանափակումից, նա անընդհատ սակաւ առ սական, շատ անդամ հա-

մարեաց անդգալի կերպով գրաւում է համայնքի ամեն նշանաւոր իրաւունքները, վերջապէս նորա բոլոր իրաւունքները և զօրանում է այն աստիճանի, որ զուգընթացաբար հակումներ է ցոյց տալիս և շատ անգամ յաջողում՝ է իրան յատկացնել և պետական իրաւունքներ և բաժանում է ազգը շատ թոյլ կապով կապւած քաղաքական համարեաց անկախ մասերի: Խսկապէս կալւածատիրութիւնը վերջին յատկութիւնը ունենալով միայն կրում է ֆէօդալիզմ անունը: Բաց ֆէօդալիզացիան այս կամ այն ազգի մէջ անբնդհառ սահուն ճանապարհով չի լնթանում և միշտ չի յաջողում նրան իւր զարդացման վերջնակէտին հասնել, ինչպէս օրինակ Գերմանիայում էր: Նա շատ անգամ պատահում է զօրեղ խոչնդուների, որոնք լնդհատում են նորա զարգացումը և երբեմն մինչև անգամ ոչնչացնում նորան: Ֆէօդալիզմը, թուլացնելով ազգը, քաղաքական անջառուած մասերի բաժանելով, նորան անընդունակ է զարձնում պաշտպանելուն, երբ նա ստիպւած է լինում լնդհարում ունենալ դեռ նահապետական ազգերի հետ, որոնք հեշտութեամբ, թէև կարճ ժամանակով լսերում են մէկի առաջնորդութեան ներքոյ, ինչպէս օրինակ եւրոպացի վերաց արշաւող բարբարոսները մէջ զաղթականութիւնից սկսած՝ հոնները, ալանները, ունդարները և թիւրքօ-թաթարները,— կամ այն տեսակ ազգերի հետ, որոնց պետերին յաջողւել է յաղթել ֆէօդալներին: Երկու դէպքումն էլ յաղթող ազգը, եթէ թշնամին ընդունում է նորա գոյութիւնը, իւր բոլոր կազմակերպութիւնով յարմարեցւում է յաղթողին: Եթէ վերջինս բարբարոս է, ֆէօդալիզմը ոչնչացնում է, տեղի տալով իւր մանկական նախնական աստիճաններին: այս դէպքում միևնո՞ն երկրում ոկտում է կրկնութիւն միևնո՞ն հիմնարկութեան: — իսկ եթէ յաղթողը կուլտուրական ազգէ, ֆէօդալիզմը ենթարկում է այն աստիճանի կրծառման, որ աստիճանի ենթարկել է նորան յաղթողը իւր երկրում: Առաջին տեսակի հիմնանքը մէնք տեսնում ենք, ինչպէս ասացինք, եւրոպացիների կամ առհասարակ կուլտուրական ազգերի լնդհարումների ժամանակ բարբարոսների հետ, իսկ երկրորդ տեսակինը՝ եւրոպացիների իրար մէջ: Ուրեմն այսպէս, ֆէօդալիզմը իւր կորսուեան արմատները կրում է իւր մէջ. թուլացնելով ազգը, զանազան քաղաքական մասերի բաժանելով, զարձնելով նորան հեշտ զո՞հ աշխարհակաների, զոհ է

գնում և ինքը։ Այս դրութեանը և այս դերում մենք գտնում ենք հայկական ֆէօդալիզմը իւր օրհասի ժամանակի Թէ որ աստիճանի իրաւագուրիութեան էին հասել հայկական համայնքները ֆէօդալիզմի միջոցով, հայ ազգի պատմութեան այժմեան դրութեամբ դժւար է վճռողաբար որոշել։ Բայց միևնոյն պատմութիւնից պարզ կարելի է տեսնել, որ ֆէօդալիզմը իւր միւս կողմից—ժողովրդի կամ նորա ներկայացուցչի՝ թագաւորի պետական իրաւունքների յափշտակելում (ուզուրպացիա) հասել էր իւր զարդացման ծայրացեղ աստիճանին, որը ազգի գոյութեան համար չէր կարող անվտանգ մնալ։ Երբ մահւան ողին շնչում էր Հայաստանի վերայ, երբ նորա ճակատագիրը մօտեցել էր, հայ ժողովուրդը նմանւում էր մի ողբերգական հերոսի, որի ձեռները և ոտները կաշկանդւած էին։ Այդ կաշկանդով հայկական ֆէօդալիզմն էր։

Չը նայելով, որ վտանգը վերաբերում էր ժողովրդի ոչ թէ միայն քաղաքական իրաւունքներին, այլ նոյն իսկ գոյութեանը, հետևաբար և ֆէօդալներին, վերջիններս այնու ամենայնիւ անընդունակ գտնւեցան գէթ իրանց պաշտպանութեան համար մէանալու, և միասին պատերազմի դաշտ տանելու այնպիսի մի պատերազմող և ընդունակ ժողովուրդ, որպիսին հայկականն էր։ Եւ այնպիսի խառնիճաղանձ և վայրենի հրոսակներ, որպիսին ներկայացնում էին թիւրքօթաթարները, որոնք, ինչպէս ասում է Կիւրակոս, անատուններին անգամ չէին խնայում, չը պատահեցին միացած հայ ժողովրդին, այլ գործ ունեցան նորա անջատւած մասերի հետ, որոնք առանձին առանձին իրանց նախարարների առաջնորդութեամբ ուզում էին պաշտպանել։ Ազդակալ հայկական ֆէօդալիզմը—ազնւականութիւնը կորսուեան հասցրեց հայ ժողովուրդը. բայց այս անգամւայ հարւածը աւելի փունդաւոր էր իրան ֆէօդալիզմի համար, նա վերջացաւ վախճանով, թաղւելով իւր հայրենիքի վլատակների տակ, որի կորսուեան զլիսաւոր պատճառներից մէկը ինքն էր, եթէ ոչ ամենազլիսաւորը։ Հայ ազնւականութիւնը ի հարկէ կը շտագէր զլուխ խոնարհեցնել նոր տիրոջ առաջ, ինչպէս նախնիների, եթէ նրան մնային նորա արտօնութիւնները, բայց այս թշնամին բոլորվին արտասովոր թշնամի էր։ Նա տիրած երկիրը գերազատւմ էր անապատ և արօտատեղի դարձնել։ Նա չէր ընդունում հայ տարրի գոյութիւնը, հե-

ուաբար և հայ ազնւականութեան, ուր մնաց թէ վերջինիս արտօնութիւնները։ Այսպիսի աղետալի կերպով վերջացաւ հայ ազնւականութիւնը, համարեա ամբողջովին սրի ճարակ գնալով։ Կոտորածից զերծ մնացածները կամ պիտի ուրսնային իրանց կրօնը և ազգութիւնը և իրանց հացրենիքի թշնամիների շարքը անցնէին կամ թէ ռամփիկ դասակարգի հետ հաւասարւէին։ Եւ այսօր մէկը չը կայ բազմաթիւ հայ ազնւականներից, որոնց մէջ կացին այնքան նշանաւոր տներ, ինչպէս Ամատունիների, Բագրատունիների, Մամիկոննեանների և այլն։

Հայ ազնւականութեան գոյութիւնը կազմում էին այն արտօնութիւնները, որոնք գոյացել էին զարերի ընթացքում։ Հայ համայնքների հողացին, վարչական և անձնական իրաւունքների սահմանափակումից։ Հայ ազնւականութեան վերջանալուց յետոց այդ արտօնութիւնները ի՞նչ եղան, վերադառնեցան համայնքներին, թէ՞ թիւքօ-թաթարները համանման դասակարգով փոխարինեցին հայ ազնւականութիւնը։ Խոկապէս ոչ այս, ոչ այն պատահեց։ Լինելով կուլուրական ամենաստոր աստիճանների վերաց, նոքա ապրում էին յեղերով, որոնց պետերը (ցեղապետները) իրանց պահանջների թւով և յատկութիւնով չէին զանազանում ամբոխից, միայն աւելի շատ խաշներ ունենալով։ Անընդհատ սկառերազմները, որոնց համար միայն կարծես նոքա ապրելիս լինէին, տալիս էին նրանց աւելի աւար, քան թէ այդ հարկաւոր էր նոցա ոչ բարդ սպահանջների համար։ Հողագործութեան արդիւնքների մէջ նոքա մէծ կարիք չունէին և այդ չնչին կարիքը նոքա հեշտութեամբ մատակարարում էին կամ բռնի կերպով հպատակ իրաւազուրկ ժողովրդից, կամ թէ իրանց արդիւնաբերութեան հետ փոխարինում։ Բացի անմիջական պատումից հողագործական արդիւնքները ուրիշ արժէք չ'ունէին, որովհետեւ մէծ քաղաքները համարեաց բոլորը աւերւեցան, ինչպէս օրինակ Անին, Մանազկերտը և այլն, որոնց աւերակներն են միայն մնացել, իբրև վկաներ մեր աղգի մրրկալից անցեալի։ Խոկ արտաքին արտահանութիւն նոյնպէս չէր տեղի ունենալ, որովհետեւ բոլոր շրջակայ երկինները նոյն վիճակին էին ենթարկել, ինչ որ Հայաստանը Իրանը, Միջագետը, Փաքր-Ասիան նոյն դրութեան մէջն էին, ինչ որ մեր երկիրը։ Աւրեմն հասկանալի է, որ հողը թիւքօ-թաթարների աշքում, եթէ

մի որևէ իցէ նշանակութիւն ունէր, այն էլ միայն իբր արօստասեղի, իսկ վերջինիցս ունէին այնքան, որքան կամենում էին, կարող էին ընդարձակել, կոտորելով բնակիչներին։ Հետեւաբար նոքա կալւածափրութեան հաստատելու առ այժմ կարիք չունէին։ Չ'ունենալով համանման տարր, նոքա, ոչնչացնելով հացկական ազնւականութիւնը, նորան չը փոխարինեցին։ Ուրեմն վերադարձա՞ն հացկական համայնքներին նրանցից գրաւած իրաւունքները, Պատասխանը այս գէպքումն էլ բացասական է և պատճառը պարզ է։ Համայնքների ոչ թէ միայն իրաւունքները, որոնք դարձել էին հացկական ազնւականութեան արտօնութիւնը, նրանց չը վերադարձեցան. այլ նոցա բոլոր մնացած իրաւունքները դադարեցին գոյութիւն ունենալուց։ Համայնքների ոչ թէ միայն հողացին իրաւունքները, այլ բոլոր ստացւածները, նոյն իսկ նորա անդամների կեանքը, ընտանիքը, դարձան նոր տիրապետողների կամակացութեան առարկայ։ Այդ իրաւունքները գոյութիւն ունէին մինչև այն ժամանակ, երբ թշնամին կարիք չունէր դիսլէել նրանց։ Կարճ այսպէս կարելի է որոշել իրերի գրութիւնը հայատանում թիւրքօ-թաթարների արշաւանքներից յետոյ։ — հայկական տարրի բոլոր ստացւածները, իրաւունքները, նոյն իսկ անհատների կեանքը մնում էր նրան այն շափով, որքան այդ պէտք չէր տիրապետողներին։ Այդ հարստահարութիւնը նորա վերաբերմամբ կատարում էր ամբողջ տիրապետող տարրը զլսաւոր ամիրացից, իսունից սկսած մինչև փոքրերը և մինչև տիրապետող տարրի բոլոր անդամները։ Համոզւելու համար, որ իրերի գրութիւնը այսպէս էր հայատանում թիւրքօ-թաթարների արշաւանքներից յետոյ, բաւական է կարգալ այդ անցքերին ժամանակակից պատմազիրներին, որոնք ողբացին իրանց հացրենիքի կորուսոք։ Այս տեսակ գրութեան հետքեր այժմ լիովին կարելի է գտնել Տաճկաստանում։ Մինչև մեր օրերը այդ երկրի քուրոյ խաշնարած ցեղերը, որոնք միշտ յաղթողի կողմը անցնելով, մասնակից են նորա աւարին, ձմեռաւայ պատրաստութիւն չէին տեսնում թէ իրանց և թէ խաշինների համար։ Այլ ձմեռը գալուս նոքա զնում էին հայ դիւղերը և տեղաւորւմ հայերի աներում, ապրում վերջիններիս հաշով իրանց խաշիններով մինչև գարունը, ապա նորից զնում թափառելու լեռները, նորից սկսելով իրանց սիրած գործը՝ աւազակութիւնը։ Բայց ինչպէս առաջուց նիշ-

տել էինք, անարխիան Հայաստանում ժամանակի ընթացքում ենթարկվեց փոփոխութեան դէպի լաւը, երբ այդ հակաքաղաքակըրթական տարրը երկու պետութիւնների լուծւեց՝ Օսմանեան և Պարսկական։ Պարսկական այստեղ ի հարկէ լոկ անուն միայն պէտք է հասկանալ. այս պետութիւնը սկզբում նոյնպէս զուտ թիւրքա-թաթարական էր, ինչպէս Օսմանեանը նաց վերջ ի վերջոյ պարսկական հանձարը և կուլտուրան յաղթեց և այժմ իշխող տարրը պարսկականն է։ Այդ պետութիւնների ծագումից յետոյ, որոնք շարունակ մեծ պատերազմների մէջ էին, հետևաբար մեծ կարիք պիտի ունենային հողագործական արզիւնքների իրանց զօրքերի և՝ վարչութիւնների համար, հողագործ դասակարգը, թէպէտ շատ դանդաղ կերպով, այդ պետութիւնների հոգատարութեան առարկայ դարձաւ։ Ըսդհանուր անդուսպ հարստահարութիւնը փոխարինւեց աւելի տանելի դրութեան—ծանր հարկերի, որոնց մատակարարելուց յետոյ հողագործին հազիւ մնում էր այնքան, որ նորա գոյութիւնը հնարաւոր լինէր։ Այդ ժամանակւանից համայնքների կազմակերպութեան մէջ նոր փոփոխութիւններ մոռան, որոնք կազմում են հիմքը և անցեալը ներկայ համայնական կազմակերպութեան։

(Կը շարունակւի)

ՀՈՍԱՆՔՆԵՐ ԱՅԺՄԵԱՅ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԻԼՈՍՈՓԱՅՈՒ-
ԹԵԱՆ ՄԵԶ

Ա. ԲԱՐԵԼԵԱՆԻ

Ես կարծում եմ, թէ «Մուրճ» ամսաղբի մանաւանդ ամենահարցասկը մասին գոհունակութիւն պատճառած կը լինեմ, մի ամփոփ չողածով ներկայացնելով նորա առջև այն բոլոր ողղութիւնները, որոնք աչքմ զութիւն ունին դիտութեան մէջ՝ բնական երևողթների բացարութեան համար, օդումըլով վերեխի վերնազիրը կրող պր. Կեօնիդի մի չողածից, որ հաստարակւեց նորերում գերմաներէն լեզուով։ Այս ասելով ես մանաւանդ ի նկատի ուժիմ աճ բոլորովին բացառիկ հետաքրքրութիւնը, որով թէ պատճենեկալիան և թէ մանաւանդ երիասարդական հասարակութիւնը կրում է դէպի բնագիտական ֆիլոսոփակութեան սփառեմները։ Նկարագրութեան կարօտ չէ, թէ ինչ ազահութեամբ, ներեցէք ասելու, ինձ կատաղի ոգեսրութեամբ, կարդացւել են ամեն մէկը իւր ժամանակ և կամ բոլորն էլ մլաժամանակ Օդիւստ Կոնտի, Բիւխների Մայիշօտի, Դարւինի, Հեկելի, Կարլ Ֆողտի, Հարտմանի և շատ ուրիշների գրւածները։ Ամեն մի նոր գիրք, որ իւր հետ թերել է մի որ և է նոր բացարութիւն բնական երևողթների սկզբնապատճառի մասին, — նոյն այդ գիրքը կամ նորա հեղինակի աշխարհականցողութիւնը առհասարակ տեղ է բռնել թէ եւրոպական, թէ ուսւական և թէ դորա հետ նաև հայկական մանաւանդ համալսարանական երիտասարդութեան կեանքի ընթացքի մէջ։ Ինպիտական ֆիլոսոփակութեան հետ միասին՝ հասուցանող մատաղ սերդի ուշքն ու միտքը գրաւող գիտութիւններից պէտք է, ի հարիէ, վշտ քաղաքա-տնտեսական և սոցիալական գիտութիւնները, որոնք այնքան և այնքան սիրած առարկաներ են թէ մասնագիտութեան և թէ ընթերցանութեան և ուսումնասիրութեան նւյրաւածների համար, և ոչ միայն համալսարանական շրջաններում, այլ և նոյն լակ գաւառական երիտասարդութեան և առհասարակ ինտելիգենցիայի շրջաններում, ուր այդ չափէ

տակութեան համեմատ չը կան համապատասխան միջոցներ հեղինակների գաղափարներին մօս և անօթանալու համար:

Համարձակ կարելի է ամել, որ, քաղաքակրթւած աղքերի իրար չաղրդող սերունդները, անցեալ և մանաւանդ ներկայ զարում, գաճւել են բնագիտական ֆիլոսոփակութեան և սոցիալական գիտութիւնների մէջ տիրապետող հոսանքների հզոր աղղեցութեան ներքոյ և որ այդ երկու գիտութիւնները որոշել են ամեն մի սերունդի աշխարհանկացողութիւնը, դորանտ նաև նոցա՝ մէկ կողմից ոգու ուղղութիւնը, միւս կողմից՝ հասարակական գործունէութեան բնաւորութիւնը:

Եւ այն, ինչ ես ասում եմ ալստեղ, այդ իւր վերաց տեսել է և փորձել մեզնից ամեն մէկը, որ անց է կացել մեր աշխմուս զպրոցներով սկսած միջնակարգից մինչ բարձրագունը: Եւ որ բնագիտական ֆիլոսոփակութեան և սոցիալական գիտութիւնների մէջ երեսան եկած և շարունակ չափունող հոսանքները մեծ տեղ պէտք է բռնեն մեր նորարողբոջ երիտասարդութեան կաղմւելու և նորագոյն գրականութեան զարգանալու, դորա հետ նաև հայկական ալմմ գողութիւն ունեցող խմբերի և կուսակցութիւնների տեղական պատմութեան և գործունէութեան մէջ,—այդ մի կէտ է, որ կարող էր խոց տալ մեր «երիտասարդութիւնը» առաջին անգամ ուսումնաաիրող Բաֆֆիից, բաց որին անցուշտ իւր տեղը կը տալ մեր գրականութեան և հասարակութեան ապագայ պատմաբանը:

Անցնենք, սակած, բուն ինդրին: Բնագիտական ֆիլոսոփակութեան մասին մանաւանդ վատ գաղափար ունէին ճիշդ հետազոտողները, նոքա, որոնք Փիլոսոփակութիւնից ոչինչ չէին ուղում լալ, այդ խօսքի հետ կապելով վիշտութիւն Փիլոսոփական շրջաններում արդէն վաղուց մոռացած գերմանական խոհելիզմի ջանքերի մասին, որոնցով ուզում էին բնութեան բոլոր երեսութները զուտ գաղափարական, ալսպէս կոչւած՝ գիալեքտիքական ճանապարհով բացատրել. Ֆիլոսոփակութիւն խօսքի հետ կապելով մի աղղափիսի գաղափար, փաստերի վերաց հիմնւող բնագէտները իւր ժամանակին պատերազմ մղեցին այդ անունի դէմ: Կարլ Ֆողտ, Բիւլնէր և ուրիշներ, որոնք մանաւանդ լատունի են իրանց այդ բանակուով, կարելի է առել զուր կերպով աղղքան վրդապւեցին, որովհետեւ այժմ բնագէտների մեծապոն մատը հաշուել է այդ խօսքի հետ: Անզիացիք ասում են ուսուրական մատին: Մինչդեռ գերմանացիք մանաւանդ էին ուղղակի՝ գիտութիւն բնութեան մատին: Մինչդեռ գերմանացիք մանաւանդ առաջ ջոկում էին դուռ փորձնականը և ճիշդը՝ լոկ գաղափարականից և սպեկուլատիւց: Այժմ այդ խտրութիւնը այլ ես առաջւազ նման չի անոււմ, որովհետեւ մի՞ խօսքիս խիստ իմաստով՝ զուտ փորձնական (էմպիրիկական) գիտութիւն չը կալ և չի կարող լինել: Ով փորձնական (էմպիրիկական) հետազոտութեան

մեթոդների հետ քիչ ու շատ ծանօթ է, նա գիտէ, որ ալղակիսի հետազոտութիւն չի կատարում և չի կարող կատարել առանց մի քանի աքսիօմական հնմարդութիւնների, իսկ աքսիօմական են կոչում այն հնմաղութիւնները (հիպոտէզ), որոնք չեն բղասում փորձից, այլ ստիպւած ընդունում ենք իրը ճիշդ, թէև ապացուցել անկարելի է: Բնական գիտութիւնների մէջ, որպէս Հելմհոլցը անքան հիանալի կերպով ցուց է տւել, ամեն մի փորձի (էքսպերիմէնտ) զլսաւոր հիմունքը կազմում է այս աքսիօմը թէ երևողմների շատ անդամ առ երևոյթ անկանոն ընթացքի մասնաւորութիւնները իրարից կախումն ունեն: Այդ ան է, որ կոչում է պատճառի սկզբունքը և կամ, որպէս բոլոր եւրոպական լեզուներում կոչում է՝ կառուղալպրինցիպ (causa=պատճառ): Արդ, բնական գիտութիւնը, ունենալով իրը հիմունք մի ալղակիսի աքսիօմ, չի կարող այդ խնդրավ չը դրադւել. իսկ ալղակիսի զբաղմունք տանում է դէպի Փիլոսոփակութեան նանապարհը:

Միմիան երբ մի աշխարհահաճեցողութիւն, Փիլոսոփակութիւն՝ հակառակ բաններ է պնդում, քան ինչ փորձնական հետազոտութիւնը ցուց է տալիս, ուրեմն երբ նա հաշվի չի առնում փորձով հաստատուած ճշմարտութիւնը,—այն ժամանակ միան բնական դիտութիւն և բնագիտական Փիլոսոփակութիւն իրար հակառակ գաղափարներ կը լինեն. Խօսելով բնագիտական Փիլոսոփակութեան հոսանքների մասին, մենք ուղղում ենք իսուել ան ուղղութիւնների մասին, որոնք չալտնւել են երևողմների սկզբնապատճանների բացատրութեան նկատմամբ: Եւ որ այդ մասին ոչ մէկ՝ այլ զանազան ուղղութիւններ կան, այդ ամենալաւ ապացուց է, որ նոյն իսկ փաստերը անքան պարզ չեն, որ ամենքը միատեսակ ըմբռնեն և որ ան, ինչ մենք փաստ ենք անուանում, նորա ինչ լինելը մասամբ կախւած է մտածելու եղանակից:

Որպէս իշխող և ամենանշանաւոր բնագիտականներից մինչ ակժմ պաշտպանած բնագիտական փիլոսոփական հայեացք կարելի է վիշել՝ մեքենացական առումաէին թեօրիան: Այդ թեօրիանի զլսաւոր իմաստը ինչպէս չալտնի է, այն է, որ նա ընդունում է թէ բնութեան մէջ ինչ որ կատարում է, ոչ այլ ինչ է, եթէ ոչ շարժողութեան պրոցեսներ, այսինքն բոլոր առերևոյթ չատկութեան փոփոխութիւնները միան երևում են աղջկէս, բայց որ խոկապէս չատկութիւնները չեն փոխում, այլ էլեմենտների դասաւուրութիւնն է փոխում, էլեմենտներ, որոնք իրանք անփոփոխ են մնում:

Որպէս անփոփոխ և երևոյթների զանազանակերպ խաղերը արտադրող էլեմենտներ՝ նկատում են առումները, որոնց զլսաւոր չատկութիւնը ան է, որ նորա ներկազացնում են մի որոշ մասսա և ընդունակութիւն ուրիշ իրանց նման աստմերին շարժողութիւն հաղորդել: «Քնութիւն ճանաչելը», ասում է Բերլինի պրոֆեսոր Փիլիոլոգ Դիւ Բուա-Ռէմօն (Diu

Bois-Reymond), «Նշանակում է մարմնական աշխարհի փոփոխութիւնները բացատրել ատոմիների շարժումներով, որոնք նոցա՝ ժամանակից անկախ ուժերով արտադրում են, որ նոյն է թէ բնութեան երևովները ատոմների մեխանիկավի վերածել¹⁾».

Արդ, եթէ բոլոր այն բնական երևովները, որոնք որ և է Փիղիքական կողմ ունին (և այդ ունին բոլորը), բզիսում են ատոմների դասառութեան փոփոխութիւններից, ուրեմն պէտք է որ կարելի լինէր փորձութերի մի սխտէմ ստեղծել, որով բոլոր բնական եղելութիւնների ընթացքը առաջնուց կարելի կը լինի հաշել. Բայց այդ մի իդէալ է, որին բնութեան մեխանիքական թեօրիան ոչ միայն չի հասել և, մաթեմատիքական հիմունքներով երազակին է, այլ դեռ խնդիր է, թէ որքան այդ ատոմական (կամ մեխանիքական) թեօրիան ճիշտ է, որովհետև նորա դէմ կան էալտեան ամենալուրջ կասկածներ, որոնցից կարևորագոյնները մենք կը չոչափենք աչստեղ.

Թէև բնական գիտութեան զանազան մասերի համար այս ենթադրութիւնը, թէ մարմինները ատոմներից են բաղկացած՝ շատ օգտակար ծառալութիւններ է արած, բայց մինչև այժմ անկարելի է եղած ատոմի զազափարը վերջնական կերպով որոշել, եթէ միաւն ատոմ ասելով հասկանանք ամենասկզբնական մասնիկը կամ իսկական վերջին անբաժանելի իրը. Ֆիզիքոսի համար ամենավերջին էլեմենտները մոլէկուլները ատոմների բաժանել, որով ըիմիկոսը կարողանում է բացատրել քիմիական երևովները. Բայց այժմ երեսթներ կան, որոնց բացատրութեան համար ատոմակին բաժանմունքը բաւարարութիւն չի առաջիս, որովհետև լայտնի փաստերը ջեր մութեան վերաբերեալ ենթալգիբել են տալիս, որ քիմիական ատոմները պէտք է ընդունել որպէս աւելի ևս փոքրիկ մասնիկների գրուպպաներ. Զերմութիւնը այժմ բացատրւեմ է մեխանիքական թեօրիայով, որը ընդունում է գազերի սկզբնամասնիկները իրը առաձգական, ուրեմն նա ընդունում է այդ մասնիկները իրը ընդարձակւած, մինչդեռ քիզիքազի միւս բաժիններում նկատւած են մարմինների էլեմենտները որպէս տարածւելու կամ ընդարձակւելու անընդունակ կէտեր կամ որպէս ուժի կենտրոններ. Նոյնպէս ցայժմ հաստատ չէ, թէ այդ էլեմենտները իրար խփելով են իրար վերաց ազդում, թէ զուցէ հեռաւորութեան վերաց էլ իրար քաշում են կամ իրար վետ մզում. Մէկերին այդ հերզործութիւնը հեռաւորութեան վերաց անհասկանալի է, որովհետև նա չի կարողանում ընդունել որ մի մարմին, չեղած ուղից, կարող է ներգործել, մինչդեռ միւսները լայտնում են, թէ իրար

¹⁾ Naturerkennen ist Zurückführen der Veränderungen in der Körperwelt auf Bewegungen von Atomen, die durch deren von der Zeit unabhängige Kräfte bewirkt werden, oder Auflösung der Naturvorgänge in Mechanik der Atome.

հետ շփւելը ամեննեին գոյութիւն չ'ունի, քանի որ միւննո՞ն կէտում չեն կարող երկու մասնիկներ լինել. Կարծ ասած, ատոմի դաղափարը դեռ ևս միանդամայն անորոշ է և տառանուզ:

Ցիշատակենք սակաչն և ալս, որ նորերումս փորձ են անում մեխանիքական աշխարհագեցողութեան սկզբունքը պահպանել, իսկ «նիւթի ատոմիստական կաղմը» դէն զցել. Հելմհոլցի հետազոտութեան հիման վերաց շարժումների մասին միատեսակ իրար ճնշելու անընդունակ հեղուկների մէջ՝ թումս ոնց միտք լցացաւ՝ մարմնավիճ աշխարհի սուբստրատը իբր մի՝ որոշ լատկութիւններով օժտած շարունակուող մեղիսան նկատել, որի մէջ այն, ինչ ատոմ են անուանում, միայն շարժողութեան ձևեր են: Բայց դորա դէմ արդէն այն կարելի է ասել, որ մի միատեսակ և անստահման մեղիսումի մէջ շարժողութեան դաղափարը կորցնում է ամեն մի նշանակութիւն, քանի որ մի շարժողութիւն կարելի է երեսակաչն միայն, երբ նիւթական կէտեր կամ ուղղակի ասած՝ նիւթ կա:

Աւելի ևս կասկածներ է լարուցանում մեխանիքական թեօրիան, երբ լաջորդական կերպով մեխանիքական սկզբունքները ուղղում ենք օրգանական աշխարհի վերաց անցկացնել: Եթէ բնութեան բոլոր երևովները ատոմների մեխանիքակի վերաց են հիմնած, պէտք է որ գորանից բացառութիւն չը կազմէ նաև օրգանական կեանքը՝ ալսինքն այն, ինչ ապրում է բուսական և կենդանական կեանքը: Եւ իրօք, Փիլիպուգիալի ամենանշանաւոր ներկալացուցիչները, սկսած Գրանսիացի Կլօդ Բերնարից (Claude Bernard), իրանց պաշտօնն են համարել, նաև կեանքի երևոչթները իրանց ամբողջ ծաւալով Փիլիպական—քիմիական պրոցեսների, ուրիմն միջամէս ատոմների մեխանիքակի վերաց հիմնել: Բայց գորանով արդէն նաև հոգեկան կեանքը անխուսափելի կերպով կը կապակցուի մեխանիքական օրէնքներով կատարուող բնական երևոչթների հետ և ուրիմն բոլոր մեր գործողութիւնները պէտք է երեսան իբր որոշած Փիլիքական պատճառներով, այնպէս որ ներքին շարժառիթները այդ Փիլիքական պատճառների կշտին ոչինչ նշանակութիւն չեն կարող ունենալ:

Այդ բանի նկատմամբ ամենից առաջ նշանաւոր է օրէնքը էներգիան պահ պահնելու մասին, Դործողութիւնը ենթադրում է էներգիա (որոշ ովֆ): Իսկ որտեղից է ծագում էներգիան: Պատասխան՝ էներգիան ամբարւած է ջզերի (մուսկուլ) մէջ, և ուղեղից տւած զրդումով նա նոյն ձեռի աշխատուում է կամ լուծւում է բոլորովին այնպէս, ինչպէս շողեմներն զրդումէնութեան մէջ է զցում իւր կառավարչից: Բայց այդ զրդումը նշանակում է կրկին մի, թէկուզ որքան էլ լինի փոքր, աշխատանք, ջանք, ովֆ, Փիլիքական՝ էներգիակի սպառումն, որ չի կարող կատարել առանց Փիլիքական պատճառի: Կարծ ասած, աներեսակաչների է, որ ուղեղի որ և է կէտում «կամք» ասած բանը իբր Փիլիքական՝ պատճառ զործու-

նեռթեան մէջ դնէ մարմնալին մեքենան, թէ չէ պէտք էր ընդունել, որ հոգեկան էներգիան ոչնչից ստեղծւեց, Բոլոր փորձերը, ¹⁾ որ արւած են այդ եղբայրացութեան ձնշումից աղատւելու համար, ապարդին են անցել: Պէտք է նկատած, որ էներգիա այստեղ նոխանշան է շարժողութեան հետ. պարզ է ուրեմն, որ շարժողութեան ոչ մեծութիւնը և ոչ ողջութիւնը չեն կարող փոխակել այլ բան Փիզիքական պատճառներով:

Այսպիսի աշխարհակացողութեան մօռ չի կարող ի հարկէ խօսք լինել կամք ի աղատութեան մասին, քանի որ մեխանիքական համացքի համեմատ՝ ողեկան էնեանքը մի միանգամայն անգործոն երևոթ է և արտափայտումն է Փիզիքական կեանքի: Աթէ բոլորը, ինչ կատարում է, մի արդիւնք է նիւթական էլեմենտների (տարրերի) փոխադարձ լարաբերութիւնների, ուրեմն իրերի ընթացքը ոչնչով չի փոխւիլ, եթէ այն ինչ անուանում ենք զգացողութիւն, մտածողութիւն և կամք՝ բոլորովին աշխարհից անլաւացած երևակակենք և այս պէտք է բնութեան մէջ մի ակելողութիւն երևար, որ նա հոգեբանական դրութիւնները կապել է ուղղով մէջ Փիզիոլոգիական պրոցեսների հետ: Պարզ է, որ մեխանիքական թեօրիան անպէս, ինչպէս մենք վերը բացատրեցինք, բաւարար կերպով չի պատասխանում այդ հարցերին: Նա դժւարութիւններ է չարուցանում ողեկան կեանքը պարզաբանելու նկատմամբ:

Ահա, այդ դժւարութիւններն են, որ աշխատում էր բառնալ ախպէս կոչւած «մոռ իստական» ուղղաթիւնը, բայց անկաջող կերպով: Նուարէ, չեկէլ և ուրիշները քարողեցին, թէ զդալու ընդունակութիւնը պէտք է ընդունել իրը ատոմիների սկզբանական չառկութիւններից մէկը, այսինքն, որ մարմնալին աշխարհի էլեմենտները երբէք և ոչ մի տեղ չեն «մեռած նիւթ», այլ առանց բացառութեան նոքա կենդանի են, այսինքն թէ նոցա պատաքին, մեխանիքական փոխադարձ ներգործութիւնների հետ կապւած են ներքին հոգեկան դրութիւններ, որոնցից զարգանում է հոգեկան կեանք, երբ ատոմները որոշ դասաւորութեամբ են իրար հետ կապւած (օրինակ, անպիսի դասաւորութեամբ, ինչպիսին կատ կենդանիների ուղեղի մէջ):

Նման համեացք մենք գտնում ենք նաև Ֆելիներ'ի և Յօլներ'ի մօռ: Բայց այդ մարդկանցից և ոչ մէկը չը կարողացաւ ցուց տալ, թէ ինչպէս իրարից բաժան ատոմների մէջ խաղացող հոգեկան դրութիւնները կարող են միանալ՝ մի ընդհանուր հոգեկան կեանք արտադրելու համար:

Պարզ է, որ քանի որ ասոմիստական կամ մեխանիքական թեօրիան դեռ ևս չի կարողանում մեզ բացատրել բոլոր բնական երևութեանը, նա ուրեմն դեռ ևս կրում է Փիլոսոփայական-հնիթաղրական կամ սպիկուլա-

¹⁾ Յիշատակենք միայն նուարէի (Noiré) փորձերը նորա «Doppelnatur der Causalität» դրամագում և Բիւսինէի (Boussinesq) փորձերը (ուես Compte rendu de l'Académie des sciences morales 1878 թ.), որի գաղափարութիւնները չափազանց սըամիտ են:

տիւ բնաւորութիւն։ Զը նայած դորան, սակայն, գիտութիւնը ալդ թեօրեան պինդ պահում է։ Հարցը սա է, թէ ինչ է դորա պատճառը, ինչ տրամաբանական հիմունքներ ալդ թեօրեան ստուդեցին և ինչու գիտնականները մեծ հաւատով են վերաբերում դէպի նա։

Ալդ նորանից է, որ նա՝ փորձից քաղած փաստերի բացատրութեան համար մեծ բաւարարութիւն է տալիս։ Ալդ թեօրիազով է միայն հասկանալի դառնում, թէ ինչու զանազան նիւթեր իրար հետ քիմիապէս միանում են միմիայն որոշ ծանրութեան կամ քաշի չարաբերութիւններով (օրինակ, ջրի մէջ՝ մի քաշ ջրածնի հետ միանում են միայն երկու քաշ թթւածին և ապն)։ Ալդ կարելի է ըմբռնել միայն, երբ ընդունենք որ նորա ատոմները զոչո՞ղոց կամ առհասարակ որոշ քանակութեամբ են երեան գալիս։ Ալդ թեօրիաչով է, որ մենք կարողանում ենք ըմբռնել լուսի ճառագայթի շնորհմը չափումի դէպքերում և ալին։ Առհասարակ մենք կարողանում ենք բնութեան մի երևութ միայն այնքանով հասկանալ, որ քան մենք կարաղանում ենք ալդ երևովթը վերածել մաթեմատիքական—մեխանիքական չարաբերութիւնների։ Իսկ դորա համար անհրաժեշտ է, որ չատկութիւն ասած բանը ընդունենք իբր քանակութիւնների չարաբերութիւններ, այսինքն պէտք է ընդունենք, որ մի երեսով, մի իր փոխւեց, որովհետեւ նորա ատոմների չարաբերութիւնները փոխւեցին, օրինակ, նոքա իրարից հեռացան, կամ աւելի մօտեցան կամ ատոմների դասաւորութիւնը փոխւեց և ալին։

Ահա ինչու գիտնական մտածողութիւնը մնդ ստիպում է երեսովթները ըմբռնել և բացատրել մնխանիքական կերպով։ Բայց, ինչպէս տեսնում է ընթերցողը, մեծ դժւարութիւնների ենք հանդիպում ալդ ճանապարհի վերաբ Ահա, հենց ալդ դժւարութիւններն են և ալդ անկարելիութիւնը երեսովթների սկզբնապատճառները պարզ ըմբռնել, ալս հարցին տեղիք տւեց, թէ արդիօք որքան հեռու կարող ենք զնալ ալդ ճանապարհով և առհասարակ որքան արդարաց ալդ է մեր պահան ջը՝ փաստերը ըմբռնելի եւ անա քանի գնաց այնքան աւելի ձայներ լոււցին, որոնք սկզբունքով հերքում էին ալդ տեսնենցիան, որը նոքա չափարարեցին որպէս անիրազործելի։ Առաջին անդամ ալդ մտքով իւր ձայնը բարձրացրեց Փրանսիացի ֆիլոսոփաա Օգիւստ Կոնտ (Auguste Comte) դեռ քառանական թւականներին, հիմնադիրը այն շկոլակի, որ նորա որոշմամբ կոչւում է դրական (պոզիտիվ)։ Նորա հետառողները կոչւում են պոդիակ վիտաններ, իսկ նորա ուղղութիւնը կամ դպրոցը կոչւում է պոդիտիւիզ։

Դաս պետիտիվմի, բոլորը, ինչ կարող է անել դիտութիւնը այն է, որ նա մասնաւոր երեսովթները պէտք է հիմնէ ընդհանուր օրէնքների վերաբ, ալս վերջիններն ել զուցէ ևս առաւել ընդհանուր օրէնքների վերաբ և ալին, բայց որ ամենաբարձր, ամենաընդհանուր օրէնքները գիտութեան կողմից անհրաժեշտ կերպով պէտք է մնան չը բացատրւած և

ըմբռնած: Նիւտոնը մեր պլանետագին սխմաէմի բոլոր երեսկթները բացատրեց մի ընդհանուր օրէնքով, որ է մարմինների ձգողութեան (գրաւի-առաջիագի) զօրութիւնը: Նա մաթեմատիքապէս գուրս բերեց, թէ ինչ կերպով մարմինները իրար ձգուում են, Բայց թէ ինչու ալդ օրէնքը աշղպէս է՝ կրան պատասխանել անկարելի է: Յետո՞ւ եթէ մեխանիքական գործողութեան օրէնքը մենք մանաւանդ ըմբռնելի ենք գտնում, և այդ պատճառով բոլոր երեսկթները դորա վերաէ ենք ուղղում հիմնել,—այդ միաւն թւում է մեղ աշղպէս, որովհետեւ, օրինակ, շփումով շարժողութիւն հաղորդելը մի նոնքան անհասկանալի փաստ է, որպէս մի որ և է ուրիշ Փիզիքական երևութ, և միան ամեն օր այդ ասելով ու սովորելով՝ մենք կարծում ենք թէ այդ մեղ համար աւելի հասկանալի է: Բայց ի դորանից բնական երեսկթների մեխանիքապէս բացատրելը ենթադրել է տալիս մի անշոշափելի սուբստրատ (ասոմներ, եթեր և այլն), որով Փիզիկոսը ընկնում է մետաֆիզիկոսի կամալական կոնսորտուկցիաների մէջ: Այդ պատճառով էլ զիտութիւնը պէտք է թողնէ աս հարցը՝ երեսկթների արտադրող պատճառների մասին, և պէտք է բաւականանաց՝ որոշելով անմիջապէս նկատող կանոնաւրութիւնները (օրէնքի համաձան ընթացքը):

Այդ է պողիտիսիստների միտքը: Նոյն այդ միտքը չալտել են նաև զանազան գերմանացի բնագէտներ, բայց ոչ այդքան սուր կերպարանքով: Ալապէս, Կիրխանօֆ'ը (Kirchhoff¹⁾) ուսուցանում է, թէ թեօրիական գիտութեան պաշտօնն է միմիալն մանրամասնաբար նկարագրել բնական երեսկթները և որ Փիզիքան չի ճանաչում ուժեր՝ իբր արտադրող պատճառներ: Նոյն կերպ չալտնում է և Մախ (Mach)²⁾, որը ասում է՝ «Այս մի բանը ուղղում ենք մենք հաստատ պահել, որ բնութիւնը հետազոտելու բոլոր խնդիրը նորանումն է, որ երեսկթների իրարից կախումն ունենալը ճանաչենք: Ինչ որ այդ երեսկթների լիուն մենք մեղ ներկալացնում ենք, միմիալն մեր խելքի մէջ դոկութիւն ունի և ուշտքական է միան իբր մի միջոց փորմուլները լիշողութեան մէջ պահելու...»: Նոյն կերպ խօսում է և Հարնակ (Harnack)³⁾, որը հերքում է թէ կարելի լինի լատկութիւնների փոփոխութիւնները քանակութիւնների փոփոխութիւններով բացատրել:

Կանու և նորա հետեւողները ի հարկէ աւելի հեռու են գնում, քանի որ նոքա հերքում են գիտութեան իրաւունքը՝ բազմատեսակ երեսկթները մի հիմնական երեսութիւն, այն է՝ շարժողութեան վերածել: Եթէ այդ համացքները այն նշանակութիւնը ունին, թէ հետազոտողները չը պէտք է իրանց գերի համարեն մեխանիքական թեօրիայի—անկասկած պողիտիստները իրաւունք ունին: Բայց ոչոք չի խանդարում մեխանիքական հակաց-

¹⁾ «Դասագիրք. մաթեմատիքական Փիզիքայի», առաջաբան:

²⁾ «Die Geschichte und die Wurzel des Satzes von der Erhaltung der Arbeit».

³⁾ Բնական գիտութիւն և բնագիտական Փիզիոգիայութիւն: (գասախօսութիւն):

քի կուսակիցներին նորանոր ապացուցներ բերել իրանց հակնացքի օգտին, միան թէ մինչև որ զեռ բաւականաչափ ապացուցներ չկան աղդ թեօրիան վերջնական համարելու համար՝ կասկածը իրաւոնք ունի արտակալումը:

Բայց պողիսիւստների պահանջը, որ ձեռք վերցնենք «ըմբռնելու», «հասկանալու» ձգտումից,—աղդ չամենացն զէսպ անտեղի է, Ֆիզիքական երևոլթները բաւականաչափ բացատրում են և ըմբռնուում մեխանիքական թեօրիանու: Իսկ կենդանական աշխարհում, բիօլոգիական երևոլթների նկատմամբ՝ մենք զեռ չենք կարող ընդունել, թէ այսուղ Փիզիքականից դուրս ուժեր կան զործող, քանի որ օրգանիզմների մէջ (բուսի թէ կենդանու) մենք գտնում ենք նոյն նիւթերը, որպէս և ոչ օրգանական աշխարհում (այն, ինչ անուանում ենք մեռած բնութիւն՝ հող, ջուր, քար, մետաղ և այլն): Իսկ եթէ օրգանական աշխարհը կազմւած է նոյն նիւթերից, մենք պէտք է նաև ընդունենք, որ թէ աշխատեղ և թէ ալսուել գործիչ էլեմենտները նոյն օրէնքներով են գործում: Եւ քանի որ ամեն մարդկավիճ գործողութիւն հիմնւած է Փիզիքական էներգիայի սպառման վերակ, ուրիշն մենք ստիպւած պէտք է ընդունենք, որ մարդկավիճ գործութիւնն էլ կատարում է Փիզիքական օրէնքներով:

Բայց ընդունելով հանդերձ մեխանիքական կամ ատոմական թեօրիան, պէտք է արդեօք ընդունել, թէ նիւթը իրօք կազմւած է շօշափելի ատոմներից: Հսա երևոլթին զա ինքն ըստ ինքեան հասկանալի է: Մի մարմին որ տեսնում ենք, ուրեմն գոյսութիւն ունի, նորա վերջին մասնիկն էլ պէտք է իրական գոյսութիւն ունենաց: Բայց աղդ կը նշանակէր ընդունել, որ փոփոխուող երևոլթների հիմքը կազմում են անփոփոխ ատոմներ, քանի որ մենք տեսանք որ ատոմը անփոփոխ կարող է միան երևակաւել: Բայց մինչ այժմ ոչ բնական գիտութիւնը և ոչ մետափիզիքան կարողացել են հաշաւել այս մաքի հետ, թէ պաշմանականը (փոփոխուողը, երևոլթը) կարող է բղիսել անպայմանից (անփոփոխ իրից կամ աբուլուտից): Անա ինչու աղդ անպայմանը, աբուլուտը ամենքից լայտարարուում է որպէս անհասանելի, անձանաչելի: Անա այն նորակացութիւնը, որին վերջ ի վերջով եկել է Դիւ Բուա-Թէջմոն և ուրիշները և ահա ացն հիմունքը, որի վերաց ձերբերու Սպենսէր կառուցել է իւր ագռոստիցի ող մի սիստեմը: Բայց հաստատ մնալ աղդ սկսապտիքական տեսակէտին բոլորպին անհնարին է, որպէս աղդ լաւ ցուց տևեց Սպենսէրի ազնոստիցիզմի սիստեմի զործագրութիւնը:

Աբդ, աղդ լոգիքական անհնարաւորութեան պատճառավ (երևակակել մի իսկապէս գոյսութիւն ունեցող ատոմ և պայմանականի հիմքում անպայմանը տեսնել), մի քանիսը իրանց ապաստարանը ուղում են զտնել կանոնի վերանցական կամ քննադատական իդէալիզմի մէջ (transcendentaler կամ kritischer Idealismus), որը նորագոյն բնական գիտութիւնների մի քանի ձիւզերի վերաց արդէն մնձապէս ազգել է: Բայց թէ վերանցական իդէալիզմը ինչ զիրք է բունում այս չօդածում լարուցւած խնդիրների մէջ և թէ ինչ միջոցներ է տալիս նա ալսուեղ վիշապ դժւարութիւնների առաջն առնելու համար, զա մի ինդիր է, որ մենք առաջմ բաց հնք թողնում:

ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԱՐԱՔՍ, պատկերազարդ հանդէս վեցամսեայ. 1890թ. երրորդ տարի, Գիրք Ա, յունիս (եր. ԺԲ+180+զ+84+15). Ա. Պետերսուրդ տպար. Սկորոխողովին: Տաժանորդագինն է 3 բուքլի, իւրաքանչիւր զիրքը 2 ր. 50 կոպէկ:

«Արաքս»-ի ալս տարւաէ առաջին զրքպիը միջոց է տալիս բաւականին որոշ հասկացողութիւն կաղմել այդ պատկերազարդ հանդիսի բնաւորութեան և ուղղութեան մասին:

Մի որ և է հրատարակութեան ուղղութեան մասին պարզ հասկացողութիւն ևն տալիս գլխաւորապէս նորա հրապարակախօսական չօդւածները զանազան հասարակական խրն. զիրների վերաբերեալ: «Արաքս»-ի այս համարում «Հասարակական խընդիրներ» բաժնին պատկանում է առաջնորդող չօդւածն՝ «Ազգային-Եկեղեցական խորհրդածութիւններ»:

Այլ չօդւածում մի ազգափը բկարար առաջարկութիւն է անսաւնի. Ուշարկելով հետաքրքրուող ընթերցողին կարգալու այդ չօդւածը ամբողջապէս, որպէս զի նա հասկացողութիւն կաղմի թէ ինչ է նշանակում մոքերի քաօսական զրութիւն և հայտիրացուական ոճ, լոգիկա ու աշ-

խարհակեցողութիւն, մենք միայն լաւանենք չօդւածի մլափը. «Քաղաքականակիս ոչ զարգացեալ ժողովուրդների մէջ ի հարկէ (ասում է «Արաքս»-ի հրապարակախօսը) երեան են դալիս գործելու հասարակութեան առաջադէմ ոչմերը¹⁾, որոնց մէջ նշանաւոր տեղ են բոնում կրօնի ներկայացուցիչները, որոնք մօտ առնչութիւն ունենալով ժողովողին առտնին կենաց հետ, նորա միակ (?) մատչելի ոչմերն են ներկապացնում»:

Համարելով մեր ազգութեան գըլ-խաւոր «խարիսխը» հայ առաքելական եկեղեցին, «Արաքս»-ի հրապարակախօսը ասում է «մեր համեստ կարծիքով ամեն մի հայ, ամեն մի գործիչ, ինչ կուսակցութեան էլ նա պատկանի, ինչ հայտացքների տէր

1) Խոկ քաղաքականապէս զարդացեալ ժողովուրդների մէջ եւեան չե՞ն դալիս առաջադէմ ոյժերը:

Ել լինի, եթէ միայն նա ուղում է զարթեցնել հայ մարդի մէջ ինքնածանաշութեան և գիտակցութեան գաղափարը, եթէ, ճշմարիտ, նա ուղում է ծաղկած ու մշակւած տեսնել հայ լեզուն ու գրականութիւնը, եթէ նա ցանկանում է նորան լատուկ լատկանիները զարգացնելով ազնիւ հայ տեսնել նորա մէջ, անշուշտ (?!) ամեն մի աչսպիսի գործիչը կամ ձըշմարիտ հայը պարտաւոր է միջոցներ որոնելու ապահովել հայ ժողովրդի մէջ նախ և առաջ նորա աղջավին եկեղեցական կևանքը»: Թէ ինչ է նշանակում այս վերջին նախադասութիւնը, մենք տեսնում ենք հետեւալ խօսքերից՝ «թող թուլանայ ամեն մի կապ հայի կրօնական ու ըրբատեղի հետ և չը լավիշտակի նա հայ եկեղեցու վեհ վարդապետութիւնով ու նորա նշանաւոր աղջավին հաջրապետներով, այն ժամանակ և լնքնին կը վերանան մեր ուսումնարանները, լեզուի, աղդգային գրականութեան տարածումը հանդերձ մամուլով»... Այ որպէս զի այդ թուլացումը չը լինի, «Արաքու»ի հրապարակախոսը առաջարկում է «պարտ ու պատշաճ միջոցներո», բայց զվարապէս՝ հայ հոգեսուրականութեան վերակ սաստիկ հսկողութիւն և դիսոց իպէին ա կջմիածնի կողմից:

«Զանազան երկրներում ցիրուցան բնակութիւն հաստատած հայ ժողովրդի եկեղեցական գործերը պարտ ու պատճած վիճակի մէջ գնելու և նորան աւելի սերտ կապով կապելու համար Ա. կջմիածնի հետ, ասում է չողւածագիրը, անտարակուս,

նախ և առաջ կարեոր է դիմել հայ ժողովրդի ազգավին - եկեղեցական կեանքի լուրջ ուսումնամի ութեան. Որուաստանում թիմական առաջնորդների միջոցաւ համաձայն եկեղեցու Պետրից տրւած հրահանգին, իսկ Բուլղարիայ, Ծումբի Նիազ, Աւստրօ-Մաճառաստանի, Պարսկաստանի, Հնդկաստանի ու Իիրմանիու աղջավին-եկեղեցական ոսումնասիրութիւնը լանձնել Ա. կջմիածնից ուղարկած մասնաւոր նիրակի, Տաճկա-Հաջաստանի կրօնական ուսումնասիրութիւնը, միանգաման լանձնում է պ. չողւածագիրը Կ. Պոլսու Պատրիարքին»: Յնոտ երբ աց ուսումնասիրութեան նիւթերը կը հաւաքւին, կը կաղմւի կջմիածնում մի մասնախումք առեղեաւի հոգեսուրական ներից» որ կը մշակի միջոցներ, որոնք կը զործագրեն «ամաձայն հայ առաքելական եկեղեցու և հայ ժողովրդի աղջավին-կրօնական ամենակենսական շահերին»:

Յօդւածը վերջանում է ալսպէս, «Յուսանք, որ Վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. Մակարը կը բարեհածել ուշադրութիւն զարձնել, որդիական ակնածութեամբ արած մեր ալս առաջարկութեան վերակ, որի զործագրութեամբ լաւիտեանս երախտագիտ կը կացուցանէ բովանդակ հայ ժողովրդը գէպի հայ եկեղեցու ներկա հովապետը»:

Դժւար թէ մէկը կասկածի որ անհնարին է բացի բարուականից որ և է ալ կերպով կապել օտարերկրեակ և ցիրուցան եղած հայերին Ա. միածնի հետ, կջմիածնը, եթէ մինչ ասնգամ նիւթեական միջոցները ապա-

րաստ մարդիկ ունենալ մի արդ-
պիսի ուսումնասիրութիւն անելու,
անուամնինացնիւ անզօր կը լինի
«իրմաննիցից մինչև Աւոտրո-Մա-
ճառաստան» տարածել հայ հոգեորա-
կանութեան վերաէ «հսկողութիւն և
դիսցիպինա» և որ և իցէ կարգա-
դրութիւններ անել կրօնական շրջա-
նից դուրս օտար տէրութիւններում.
ուղղակի պաշմանները արգելք են
դուռմ, Հեռաւոր երկիրներում, ուր
մի բուռն հայ շրջապատւած է բիւ-
րաւոր օտար տարրով և ազգակին
ինքնուրոցնութիւնը միոցնող հասա-
րակական-քաղաքական պալմաննե-
րով անուանական «հսկողութիւն և
դիսցիպինան» ոչինչ չեն կարող ա-
նել պահպանելու համար լուղուն և
աղութիւնը.

Եթէ ովտ և միջոց ունենք գեռ-
մեր շուրջը գործենք, մեր քթի տակ
տեսնենք, թող էջմիածինը մտածի
ուռուահակերի մասին, խոկ Պօլսի
Պատրիարքարանը ըմբռնի իւր մնձ
կոչումը ներկաւումս և իւրաքանչյուրը
աղդ հաստատութիւններից գործի իւր
միանակում հուանդով ու անձնիրա-
րա և ան ժամանակ հեռաւոր տե-
ղերում ցիրուցան հակերի սրաւում էլ
կը վասւի ոգեորութիւնը, կը զգացւի
ազգակին կրօնական համերաշխու-
թիւննո...»

Տեսնենք միւս լոդւածները:

«Արագս»-ը թուլատրում է ամեն
մի թիւրքահամի գրւածք. ալլապէս
մի կարիլի հասկանալ թէ ինչպէս
աղդ հանդիսի էջերում, որ անքան
առող ենո որ միշտ պ. խմբագիրը
բանդապատում է թէ «ընդարձակ գրու-
թիւններ չի կարող անում տպել»՝ ալ-

նուամենաչնիւ տեղ են զտնում պ.
Տօնապետեանի երկար ու ձիղ գրած,
միամիտ անհետափրքրական ու չա-
փազանցացրած մանրամասնութիւն.
Ներով առաւ «կմնսագրութիւնները»
և պ. *** ի «Հալր» գրւածքի պէս
անմիտ և անբարուկականացնող «պըր-
ւագ»-ները.

Մենք պատրաստ ենք հաւատա-
լու, որ «Ստեփաննոս եպիսկոպոս ա-
ռաջնորդ Նիկոմիդիոյ» շատ գոր-
ծունեալ և ազգասէր մարդ է, սական
ինչ ընդհանուր հետաքրքրութեան
արժանի բան է «տարեգրական կար-
գաւ» պատմուլ նորա ամեն մի աննշան
գործը, խօսքը, շարժւածքը և ալճն, 26
երեսում, զեռ և սխմոստանալովնունչափ
լուսու, Արդ նկարագրութիւնը ալնըան
միամիտ է ու անհամ որ մինչև ան-
գամ տեղ տեղ ծիծաղելի է գարձնում
սրբազնին. Ինչպէս երեւմ է
թիւրքահակերի մօտ շատ դիւրին
րան է եղել ընկերութիւններ կաղ-
մելը. օրինակ, Ստեփաննոս սրբա-
զանը, կենսագրողի ասելով, միան
Նիկոմիդիսալում «հիմնեց բազմաթիւ
օգտակար ընկերութիւններ, որպէս
և Ասքանաղեան, Աղքատախնամ,
Հալկունեան, Բարեգործական, Ու-
սումնասիրաց, Բարեսիրաց, Դպրաց
դասի, Թանգարանի և աչլ ընկե-
րութիւններ... սական ամեն է
աւելի էլ շատակութեան ար-
ժանի է Բարեսիրաց ընկերութիւնը
զոր կը կազմէ առաջնորդը ձկնորո-
ն երէ և աչլ համաստիճան տգէտ
մարդիկներէ, նպատակ (?)
ունենալով պարսպել (!) և վա-
գելապէս դարդարել հալոց
ծառազարդ գերեզմանասունն, ուր

1877-ին առաջնորդի կամեցողութեամբ մեծ հանդիսիւ թաղւեցան 6—7 երեւլի անդիմացի զինւորականներ» Նթէ վիշտակութեան արժանին սա է, երեւակալեցէք միւսները:

Զը բաւականանալով տղալոց և աղջկանց վարժարաններ չինելով իւր թեմում, սրբազնը բացել է Աղաբալարում նաև «կիրակնօրեակ լսարաններ կանանց համար»: Եւ պ. Տօնապետեանցը, որ առանձին «արտօնութիւն» է ունեցել անձամբ տեսնելու այդ վարաբանները», հիացմամբ պատմում է թէ ինչ են անում այդ «նշանաւոր հաստատութեան մէջ, որի չնորհիւ ակժմ բոլորովին կերպարանափոխ եղած է Ատախաղարի կանանց բարք ու վարքն»: 700 կին և աղջիկներ են հաւաքւում: Վարդապետը ընթեռնում է «կանանց ամուսնութեան նշանակութեան և պարտաւորութեան մասին»: Յետոյ նա դուրս է գնում և սկսում են բոլորը «աստամնազուրկ պառաւեները անգամ նւագել հոգեշոնչ շարականներ, պատրազի ժամանացութիւն և կովկասեան շատ մը երգեր»: Երգեցողութիւնը յաճախ ընդհատում է փոքրիկ աղջիկներու բեմը ասաց: Այս ամսութիւնը մասնակի կառավարութեան անդամներն ուրախութեան անսահման ժպիտով կը զիտեն իւրաքանչիւրի զարգերը: «Երկողեան քաղաքը կիմանաց առաջնորդի խաղը և ամեն ոք խնդալին կը ճաթի»: Բայց այդ ոեռ բոլորը չի:

Ստեփան եպիսկոպոսը զէպի աղգութիւնները բաւական անխտիր մարդ է երեսում. օրինակ՝ ացելում է չաճախ թուրքերի ջամինները և քարոզ ասում. «մի անգամ ես ացելի լով թուրքերի ճամիններ»: Ապրդի ոստապնով պատաճ կը գտնէ պատերն, անմիջապէս երկար աւել մը ըերեւ կուտաճ և ինքն անձամբ կը մաքրէ սարդուտաճներն, և բռուն քարոզով կը կշտամբէ զնոսու թէ ող զափսու մուսուլմանի չի վաէլէր որ ակս աստիճան խարխուլ անմաքսը վլճակի մէջ պահէ իւր սրբավայրն (երես 55):

Թէ ինչ աստիճանի անբնական և

անսովումնետալ բաներ են պատմում

առհասարակ՝ ապացուց հետեւալը.

1886 թ. նոյեմբերի 22-ին Ասլանիկ

գիւղը ամբողջովին ալրում է: Սրբա-

զմական Պարտիղակ զիւղում հաց է ժո-

ղանը Պարտիղակ զիւղում հաց է ժո-

դովում, բեռնում ձիերու վերակ և քահանակի հետ գնում ալրւած գիւղը, ջղափի պէս կուլար, ամբողջ օր ուաքի վրայ էր և մօտ 30 ժամէ ի վեր նըստած չէր և ոչ ալ պատառ մը բան բերանը դրած ունէր», Քահանան անօթութիւնից տանջում է, վերջապէս լանդգնում է դիմել սրբազնին ասելով մի քիչ բան ուտենք:

—Ո՞ւր է հաց որ ուտենք, պատախանեց առաջնորդը բուռն սըրտմը ութութեամբ (?)։

—Հացէն աւելի ինչ կաէ, ասում է քահանան, ամեն կողմերէ լեցուն հաց բերած են»։

—Ան մեր հացը չէ, լարեց առաջնորդը, ալլ ալս թշւառ մարդոցն է, իրաւոնք չունինք պատառ մ'իսկ ուտելու։

Եւ չէ ուտում 35 ժամ սոված մնալով, թէն հաց շատ կար և, վերջապէս, փողով կարող էր գնել։

Նոյն անհնատաքրական մանրամասնութիւններով շատախօսութեամբ և թիթնամիտ չափազանցութիւններով պատմում է պ. Տօնապէտեանը Ասպետն Աստուածատուր Զունդիումային։

Լաւ կարծիք չի կարելի կադմել Ալրաքանի խմբակը դրական գեղարձատական ճաշակի վերակ նաև կարդալով ալով պատկերազարդ հանդիսի սուլ էջերում, անպիսի մի վավաշուածք, ինչպիսին է * * *-ի «Հայր զրւածք մը թատրօնական կիանքէ» դրութիւնը, ուր զուրս են բերած երկու, իսկապէս անբարուական մարդիկ, որոնց դործողութիւնների մէջ հեղինակը, կարծես, ինքն էլ անբարուական բան չի գտնում

և մինչև անդամ ոգեսորւելով մտնում է հերոսի դրութեան մէջ և մի առանձին ախորժակով նկարազրում վավաշոտ տեսարաններ, Կարդացէք ամբողջապէս ալդ 15 երեսները և դուք չէք գտնի ոչինչ բացի մարմնական սիրոց։ Ահա ալս դրւադի բովանդակութիւնը հեղինակի խօսքերով, դուրս ձգած միայն մի քանի աննշան նկարազրութիւնները և ոչինչ աւելին չը պարզող նախադասութիւններ։

«Ճամանեութ տարեկան էր հիմա Արեգնազ (հերոսուհին), սովորած էր շատ մը բաներու սկզբունքները, սակայն ձեռլին արւեստ մը չ'ունէր. ոչ կար գիտէր, ոչ ձեւ. վարժուհի ըլլալ մտածել անդամ կը սոսկար»։

«Հայրը մեռած էր վեց տարի առաջ, ոչինչ ժառանգութիւն չը թողլով բայց միայն պկտիկ տուն մը ի Բերա, որուն մէջ կը բնակէին Արեգնազն ու մայրը. Զքաւորութիւն կը սաստկացնէր իւր մտատանջութիւնը. Մաքով կը գեկերէր զաղափարի մը շուրջը՝ վերասանուհի ըլլար»։

Եւ շնորհիւ իւր Ակապուտ աչքերու, նուրբ իրանի, երկայն մաղերի և քաղցրահոչակ ձալնի» ընդունւում է դերասանական խումբում և «Դամէլիազարդ տիկին»-ի մէջ «Մարկրիթ Կօթիէ»-ի գերում հիացնում է մի երիտասարդ էֆէնդու՝ Վահանին։ Ներկալացումից իւտու, «դերասանական խումբը փոքր ինչ քաջալերելու համար, կազմելում է մի մասն ախումը մի ալսպիսի նպատակով՝ սթատրօնը լեցնելու և մուտքի կրկին գիներ նշանակելու»։ Ալդ մասնախումը կազմելու ընտրուում է Վահանը, որը

ալդ պաշտօնի չնորհիւ կարողանում
է աւելի չաճախ տեսնել Արեգնազին:

«Երկուքին ալ սրտերը ծարաւառ
էին սիրու երկուքին ալ զիրար սի-
րեցին... Երկուքն ալ զիրար սիրե-
լու կոչում (?) ունէին:

«Զմրան պարզ օրերէն մին էր: Պա-
տուհանի հանդէպ կանդնած Վահան
ու Արեգնազ կը դիտէին Ասիական
վոսփորի մթնաշաղ տեսարանը, Վա-
հան իւր ձեռքուն մէջ առաւ Արեգ-
նազի մատները ու տաք համբոցով
պարաւ ալդ բարակ մատները: Մեղ-
կութեամբ ես քաշւել փորձեց Արեգ-
նազը: Վահան գրկեց անոր զլուխը.
կոթնցուց զան իւր կուրծքին վրաց:
Ամբողջ մարմինը գրկին մէջ առաւ,
պարաւ Արեգնազի ճակատն ու երես-
ներն և շրթունքներն հանգչեցուց ա-
նոր շրթունքներուն վրաց: Կրակը եր-
կուքին մարմիններու մէջ էր:

Մի օր Վահանը իմանում է հօրից
որ «Ճոր զերասանուհի՝ Արեգնազի
աչքերը աւրուեր են», որովհետեւ մի
կնոջ խորհրդով ինչ օր զեղ է քսել
աչքերին: մի քանի կոծիծները հե-
ռացնելու համար: Վահանը գնում է
տեսնում որ ճիշդ է և ուզարկում է
քժիշկներ բերեն: բաց արդէն չէր կա-
րելի փրկել նորան: Արեգնազը կուրա-
ցել էր: Վահան ալդ օրից զառել էր
տան բարեկամ: «Ամենօրեալ ալդ
ալցելութեան մէջ չը կար ո և է ան-
պատեհութիւն» հանգստացնում է ըն-
թերցողին հեղինակը:

Մի գարնանավին օր, կէսօրից անց,
մտնում է Վահան կողի մօտ և հեր-
կու սիրահարները նստան պատու-
հանին առջև, ծունդ ծունդի, ձեռք
ձեռքին:

—Կառքով պտում մը ընենք մին-
չև Շիլի, ասում է Վահան և, առանց
պատասխանին սպասելու, գնում գոյց
կառք մը բերում ու իրարու քով
նստած դիմում Շիլիի ճամբէն:

Երբ հասնում են զրօսատեղին
Արեգնազ ասում է.

—Բազմութեան մէջ չը նստենք,
Վահան, առանձին տեղ չը կար:

Վահան ասում է թէ զիտէ ակրթա-
լիք տեղերնին և թեն առնելով Արեգ-
նազը ուղղում է դէպի գլուցերական
շալէ մը: Ալգտեղ բանալ տւեց նա իւր
համար մի մասնաւոր սենեալ և բե-
րել տւեց երկու գաւաթ գարեշուր,
մի քանի ժամանակից լետոն նա
կրկենել տւեց դարեջուրը և սկսան
խօսակցել:

«Որիգնապահի զով հովի սկսած
էր թեթև թեթև փչել: Վահան ծած-
կեց Արեգնազը իւր ձերմակ շալով:
ձեռքերը կը դողազին զնա ծածկած
րոպեին:

—Կերակուրնիս հոս ուտենք, Ա-
րեգնազ, ըստ չանկարծ երխտասարդը
...Երբ կէս գիշերէն երկու ժամ
առաջ նոքա մեկնեցան Շիլին եր-
կուքին ալ ալտերը կարմրած էին:
Արտասարդը ողերութիւն մը կը տի-
րել իրենց սիրառը... Վահան, աչով-
ները կիսախուփ, խորասուզւած էր
հեշտ թմրութեան մէջ:

«Երբ տուն հասան, Վահան իւր
վրաց առաւ լանցանքին բոլոր պա-
տասխանատութիւնը: Աղջկան մայրը
կանուխ պառկելու սովորութիւն ու-
նէր, և միշտ վստահաբար ¹⁾ թոյլ

1) Խոնչ կեման վերայ: Կապասակալու ե-
քեփ: Անհասկանալի է միանգամայն մօք

կուտար որ երկու երիտասարդները
միախակ մնան:

—Ո՞Փ, ծփ, գինին շատ փախաւ,
զլուխու կը զառնաք կոր, ըսաւ Արեգ-
նապ սա գիշեր կանուխ պիտի պառ-
վիմ, ինձի անկողնիս քով տար և
զիշեր բարի ըսէ: Աս օրւան պէս
զրօսնած շունէի շատոնցէ ի վեր. որ-
շափ չնորհակալ եմ քեզի, Վահան:

—Ըրածս բան մը չէ, ըսաւ Վա-
հան, և կոյքին ձեռքէն բռնելով յու-
ժիկ քովի սենեակը տարաւ:

Անկողինը հոն ձգւած էր, գետնի
վրա, սաւանը կը պարզէր իւր ձիւ-
նական ձերմակութիւնը. վերմակը
մէկ քով ձալլած էր:

—Շնորհակալ եմ, ալ պէտք չու-
նիմ քեզի... գիշեր բարի:

—Չէ, ալսչափ կանուխ մեկնել
չեմ ուզեր: Եւ քեզի բան մը զրու-
ցեմ աչ գիշեր իւենդ փափագ մը
ունիմ:

—Ինչ փափագ:

Արեգնազի ցի ըլլալը հազորդե-
ցին Վահանի հօրը և մօրը: Վահան
կոտրած էր, տիտոր:

Հայրը: —Հիմա ինչ պիտի ընես,
պէտք է դարման մը գտնել:

Որդին: —Աչ, ես ալ դարմանել
կուզեմ, և միակ դարմանը ամուսնու-
թիւնն է:

Հայրը զէմ է ամուսնութեան զըլ-

անաբերութիւնը գէպէ ալջկայ վարքը:
Կա թոյլ է տալիս երիտասարդին իւր աղ-
ջկան միայնակ տանել զքօսատեղի, կէս
գիշերէն վերապաւնալ, տանել հնջարանը,
մալ գիշերը, և այդ ըոլորը վլսառհա-
յարք: Ծիծաղալին այն է, որ հեղինակը
ինքն էլ հաւատում է որ այդքան տեղը
կարելի է միամիտ լինել:

Խաւորապէս նորա համար որ ծախքը
մեծ կը լինի կոր կնոջ հետ ապրելու:
Վահանը խորհելով, որ արդարի ինք
չէ պատճառն որ Արեգնազ կուրա-
ցաւ... կարծում է որ Արեգնազ պէտք
էր մինչև անդամ զո՞ն ըլլար, որ
զաւակ մը պիտի ունենար. չնորհիւ
ալդ զաւակին իւր ապագան, մօրն
ապագան ալ ապահովւած է. դեռ
ինչ կուզէ: Աչ մտածութիւններ
սփոփեցին զինքը¹⁾). Կարծեց թէ
ծանր բեռ մը սրտին վրալէն մէկտի
նետւեցաւ:

Բաց երբ զաւակը ծնւեց, նա
մտածելով որ իւր որդին կեանքի մէջ
«ըիմ» կոչւելու է և որ մեծանալով
նա իւր հօր վերաչ վատ համարում
պէտք է ունենաչ, որ կուր աղջիկ մը
Ակած, մայր ըրած և լքած էր, վճռեց
ամուսնանալ: Հայրը վոճտեց նորան
իւր տանից:

—Դու կ'ուրանսս մեծցած, հա-
սած զաւակդ, ըսաւ Վահան հօրը,
բաց ես չեմ կրնար ուրանալ իմ եր-
կու շաբաթւան զաւակսա:

Ինչպէս տեսնում էք ոչ տիպեր,
ոչ հոգեբանական անալիդ, ոչ իս-
կական աեր կաչ ալս «որուագ»-ում
և ոչ գաղափար կամ մի հարց կաչ
հասարակական. և թէ հերոսը, թէ
հերոսուհին, թէ նոյն իսկ հեղի-
նակը հափշտակւած են միան հեշ-
տասիրութեամբ որ շատ միամիտ
կերպով ալդ միակ փափագը աշխա-

տում են սքոզել իրարից:

Եւ դեռ ալս քաղւածների միջից
զուրս հեք թողել զրւածքի մի

1) Զէ բահաստեղծի սիրտ կը կը Վահան (Երես 94):

քանի մասերը, որոնց վեր արտադրելը ալսուել դրականապէս անկարելի եղաւ մեղ, այն աստիճան նոքա բուրում են Պոլ դը Կօք'ւան սոռւսով.

«Արաքս»-ում տպած մնացած գրքածներից ուշադրութեան արժանի են «Մուշ»—տնդագրական նկարագրութիւն, «Տաճկա-Հայաստանի արդի տնտեսական վիճակը», «Արձագանք մի Մշու աշխարհէն» և «Հայաստան» լրագրից արտատպած Ներսէս Պատրիարքի հոչակաւոր ճառը որ 1878 թ. լուլիսի 21-ին ազգային ժողովում էր արտասանած: Մատնախօսական բաժնում պ. Խումինի և պ. Գ. Խալաթեանի քննութիւնները, Խորէն ծ. Վ. Ստեփանէի թարդմանած Մովսէս Խորենացու Հայկական Պատմութեան մասին, 40 երեսում արած մանրամասն քննադատութիւնից պ. Գ. Խալաթեանը գալիս է համարեա այն եղբակացութեան այդ թարդմանութեան մասին ինչ որ «Մուրճ» № 1 տպած գրախօսութիւնը¹⁾, որը համարել էր այդ թարդմանութիւնը՝ անաջող և ոչ միշտ հասկանալի, աշխարհաբար ու ժողովրդական (երես 104), չը արտահանող Խորենացու կորովի, պերճ և ողորկ ոճը (երես 105) և չ'ունեցող գրական արժեք (եր. 106): Պ. Խալաթեանն էլ իւր քննադատութիւնը վեր ջացնում է հետևեալ խօսքերով. «Խորենացու Պատմութեան աշխարհաբար թարդմանութիւնը անաջող է և անդոհացուցիչ, պէտք է նորից թարդմանի նրան»:

1) Տե՛ս «Մուրճ» 1990 թ. № 1, Երես 102—106:

Թողնելով մի կողմ թով ստանաւ ուրները և լերմոնտովից արած ծանր թարգմանութիւնը, դառնանք նկարներին, որոնք, չի կարելի չը նկատել, որ շատ նուրբ և գեղեցիկ են դուրս բերած «Արաքս»-ում: Միմիանց ցան: Կարի է որ հայկական կեանքից աւելի շատ թւով նկարներ լինելին: Նո՞ն իսկ ուսւաց-Հայաստանի հայ ժողովրդի տնավին կենցաղը, կանանց հագուստները, գիւղերի և խրճիթների տեսքը կարող են բաւական հետաքրքրական նիւթ մատակարարել: Եւ այդ դժւար չէ, քանի որ կովկասում կարելի է գտնել բաւական լուսանկարչներ, որոնք ունեն հանած հայկական կեանքից զանազան անսարաններ. օրինակ Բօհնովի, Երմակովի և այլն:

Ակսակէս ուրեմն տեսնում ենք, որ «Արաքս»-ի հրապարակախօսական մասը վերին աստիճանի թով է. գրական-գեղարւեստական մասը անդոն, ծանր կամ ուղղակի անկարելի են («Հայք»): Պատկերները թէն նորը և գեղեցիկ են, բայց մասամբ հեռու են մեր կեանքից և մասամբ աննշան ու ոչ մի «կրթիչ նշանակութիւն» չ'ունեցող (օր. անտառ, Բախչիսարակի տեսարան, անտառալին հովերգութիւն). ցանկալի է «գեղարւեստական բաժնում» տեսնել գլխաւորապէս հայ նկարիչների նշանաւոր նկարների օրինակները, իսկ ընդհանուր եւրոպականից կամ ուսականից միմիան կլասիկական և հայակած ստեղծագործութիւնները:

Описание Кавказской Выставки Предметов Сельского Хозяйства и Промышленности въ городѣ Тифлисѣ въ 1889 году. Выпускъ первый. Тифлисъ 1890 г. Типографія А. А. Михельсона, 4-ածալ. 400 երես, դիմ. 2 ըութիւն: (1889 թուի Կովկասեան արդիւնահանդէսի նկարագրութիւնը):

Կովկասեան արդիւնահանդէսը, որ տեղի ունեցաւ անցեալ տարի Թիֆլիսում, մնացած էր մինչև աղժմ առանց մասնագիտական նկարագրութեան և քննութեան: Կովկասի Գիւղատնտեսական Ընկերութիւնը աղժմ լուս է ընծաւել նկարագրութեան առաջին հաստորը, որ բաղկացած է 400 երեսից, Շատ ուրախալի է ազդ գրքի երեալը, Նա մի կողմից ներկապանում է հասարակութեան և պետութեան առաջ՝ իբրև մի տեսակ հաշիւ արած գործերի և մսխած գումարների մասին, իսկ միւս կողմից նա տալիս է վաղուց սպասւած և ցանկալի գնահատութիւն արդիւնահանդէսի բաժինների:

Ցուցահանդէս կազմողները նպատակ էին զրել պարզելու տեղական գիւղատնտեսութեան և արդիւնագործութեան արդի դրութիւնը և կարծիքները, ծանօթացնելու հետաքրքրութներին տեղական արդիւնաբերութեան օրինակների հետ, տեղական արդիւնագործողների մէջ շարժել ենանդ և մրցում և ծանօթացնելու այդ արդիւնագործողներին կատարելագործած գործիքների և աւելի նույր ու կատարեալ արդիւնաբերութիւնների հետ:

Դիւղատնտեսական Ընկերութեան ըլլս ընծաւած գիրքը պէտք է մա-

սամբ պարզի մեզ համար թէ մինչեւ որ աստիճան Ընկերութիւնը հասած է իրան համարում իւր մտադրածին: Ներկայ սուածին հասորը պարունակում է հետևեալ զլուխները: Ա) Կովկասեան արդիւնահանդէսը կազմելու միջոցների տեսութիւնը: Բ) Կարգադրիչ Մասնաժողովի անձնական կազմութիւնը: Գ) Պարզեաստացների ցուցակը: Դ) Պարզեների հանդիսաւոր հրատարակումը: Ե) Ճառախօսութիւնները: Զ) Արդիւնահանդէսի դրամական հաշիւը: Է) Հանդիսաբերութիւնների, ցուցառարկաների և պարզեների մասին վիճակագրական թերը: Ը) Լեռնակին բաժնի նկարագրութիւնը: Թ) Անտառաբանական բաժնի նկարագրութիւնը: Ժ) Նրկրագրածական գործիքների և մեքենաների բաժնի նկարագրութիւնը և փորձառական լանձնաժողովի զեկուցումը և Ի) Ազեղործական ու պարտիզանական բաժնի նկարագրութիւնը:

Առաջին չողւածը պատկանում է Գիւղատնտեսական Ընկերութեան գոլինախաղան Կուչանեւին, որ աշխատում է կարձ կերպով ծանօթացնել արդիւնահանդէսը կազմելու նպատակների և նորան իրագործելու միջոցների մասին: Իւր չողւածի վերջում նա բնարուցում է արդիւնա-

հանդէսը հետևեալ ընդհանուր գծերով:

Առաջին կովկասեան գիւղատընտեսական և արդինագործական հանդէսը սպմած կերպով ներկալացրեց կովկասի բնական հարստութիւնների և նորա արդի արդաւանդութեան լիակատար և բազմերանգ պատկերը, Նորա ամենան մի բաժինը կրելով իւր վերայ առանձնակի բնաւորութեան կնիքը, մինչուն ժամանակ հալատակւած էր խիստ համակարգութեան:

Արդիւնահանդէսի կրթական նշանակութիւնը չէր սպառւում այն տեղեկութիւններով, որ իւրաքանչիւր լաճախորդ կարող էր ստանալ կատարելագործած արդինագործութիւնը տեսնելուց, այնտեղ բացի այլ՝ մասնագիտական տեղեկութիւնների և գիտութիւն էին մատակարարում արդիւնահանդէսում տեղի ունեցած դասախոսութիւնները, զանազան բաժինների վերաբերեալ փորձերը և ցուցերը:

Զի կարելի առել, որ կովկասեան արդիւնահանդէսը չունէր և իւր պակասութիւնները, Հանդիսաբերների կենդանի ինքնուրունութեան օրինակներ արդինահանդէսը քիչ տեսց:

Դիւղական դասակարգերը բաւականաչափ հնոտաբրգրւած չէին արդիւնահանդէսի զաղափարավ: Դորա պատճառը մասսամբ այն վհատութիւնն էր, որ տիրել էր երկրին՝ անբերրիութեան, խաղողաորթի հիւանդութիւնների, կալւածքների պարտքի տակ ընկնելու և ուրիշ նոշնատեսակ հանդամանքների չնորհիւ, իսկ մասսամբ բնիկների և առաւելապէս մահմեղականների սառնասրտութիւնը և

անշարժութիւնը, Մահմեղական ժողովուրդը, որ կազմում է Անդրկովկասի 40%, և որին պատկանում է երկրի հողացին լաւ մասը, շատ է աւանդական իւր բոլոր գործառնութիւնների, իւր նիստ ու կացի մէջ: Եւ այդ հանգամանքի արտափակումն էին նորա հանդէս բերած ցուցառականները:

Նշանաւոր են Զօրջաձէի խոսքերը կովկասի գինու արդիւնաբերութեան մասին. նա ասաց. «ափսոս զեռ չենք կարող պարծենալ զինեզործութեան արդի զրութիւնով, սրովհետև մեր երկիրը, որ համարեա թէ հաւասար է ֆրանչիալի զինեզործական մասին, արտազրում է տարեկան միան 10 միլիոն վեդրօ գինի, մինչդեռ ֆրանչիան, որ երկրագնդիս բոլոր շտվաներում պատւաւոր տեղ է բռնել իւր զինիներով, նուն իսկ ֆիլռքսներան երևալուց ևտա, ունի տարեկան 300 միլիոն վեդրօ: Մեր երկիրն էլ կարող է հանել այդ 300 միլիոնին. և այն ժամանակ այդ խոշոր գումարը կը բաշխի մեր բոլոր երկրին և իւրաքանչիւր նոր բուրբլին կը հասնի և մեր գիւղացուն: Երկրի համար մնացարիք է այնպիսի արդիւնաբերութեան զարգացումն, ուր աշխատանք և դրամը չեն կենդրոնանում, այլ բաժան բաժան են վինում շատ աշխատաւորների վերաբանութիւնների համար:»—Կովկասեան արդիւնահանդէսը ցուց տեսց, որ չերամապահութիւննը, որ գտնուած էր վիրջին ժամանակներու ընկած զրութեան մէջ, այժմ զարթնել է անշարժութիւնից և անուած է նշանաւոր քաղաքի առաջ, —Կովկասը, որ իւր բնական հարուստ արօտներով բռնում է

աշխարհումն գուցէ առաջին տեղը, դեռ քիչ ունի բարեկարգւած կաթնատնտեսութիւն (իւղագործութիւն և պանրագործութիւն): Վերջինս կատարելագործւած ձեւը է ստացել միան մի քանի զամստակերտներում, ինչպէս կուշենրախի կալւածքում: Արդիւնահանդէսը ցուց տուց, որ կովկասի ժողովուրդը զամնայն դէպս միւել է նկատելի կերպով հետաքրքրքըսւել կաթնատնտեսութեան զարգացումի խնդրով: Երկրագործութիւնը, ազգեգործութիւնը և պարտիպանութիւնը, թէն տալիս են բազմատեսակ արմտիք, բայց քիչ են արդիւնաբնուում աճնպիսի առարկաներ, որոնք մեծ վաճառաւարդիւնագործական նշանակութիւն ունին:

Անմիտիթարական է, որ արդիւնահանդէսի նպատակը լաւ չէր հասկացւած երկրի զանազան մասերում: Մի քանի գործակալներ ջանք էին դրել ոչ աճնքան ժողովրդի մէջ հետաքրքրութիւն զարթեցնելու դէպի արդիւնահանդէսի նպատակները, որչափ ժողովներ ըստ կարելիութեան բազմաքանակ՝ առարկաներ, չը բացարկով ըստ աճնմ արդիւնաբերողների անունները և ցուցառարկաների ներքին տեսեսական բնաւորութիւնը: Ազդ էր պատճառը, որ շատ ցուցառարկաներ ամենելին զնահատութեան չ'ենթարկեցին, Շատ ցուցառարկաներ ուղարկւած էին, չորին վաս կապելուն և տեղաւորցնելուն, փչացած, խանգարւած դրաւթեան մէջ, աճնպիս որ նոքա կամ նանում էին զնահատութիւնից կամ իսպառ ոչնչացնեում: Կովկասի մի քանի տեղից ուղարկւած ցուցառար-

կաների համար նշանակւած էին աճնպիսի մեծ գներ, որ նոցա գնող ամենելին չէր կարող լինել արդիւնահանդէսում: Ազդ տեսակ էին իմիջի ալլոց նրեան քաղաքից ուղարկածները: Առհասարակ պէսաք է նկատել, որ մի քանի տեղեր, որոնց թւում և նրեանեան նահանդը, որ աճնպիս հարուստ է իւր բնութիւնով և ունի աշխատասկը ժողովուրդ, կարծես ձգուել էր իւր ցուցառարկաներով գործել կեղծ աղքատութեան և արդիւնագործական չքաւութեան տպաւորութիւն: Ինչ վերաբերում է գեղջկարհնեստի առարկաներին, պէտք է ասել, որ թէն ուղարկւած էին մի քանի հաղար կտոր արդիւնք, որ պատկանում էին գոնէ 800 անձի, բայց այդ քանակութիւնից շատ քիչն էր ուղարկւած ուղիղ արդիւնաբերողի ձեռքով, այլ ժողովւած էին տեղական վարչութիւնների միջոցով:

Կուչանելը վերջացնում է իւր կարճ օդւածը լայտնելով ցանկութիւն, որ արդիւնահանդէսը զառնարկիւնաբերութիւնը, որ ներկալացրած է մանրամասն ուսումնասիրութեան: Նոցա մասին լիակատար գազափար կազմելու համար, պէտք է սպասել գրքի երկրորդ հատարին, որ երեխ չուտով տպադրութեան կը սանձնէի: Այստեղ առաջ բերենք մի աղիւսակ արդիւնահանդէսի մասնակցածների մասին, որի մանրամասնութիւնները ընթերցողը կը գտնի գրքի մէջ:

Առանձին բաժինների նկարադրութիւնը, որ ներկալացրած է գրքում, արժանի է մանրամասն ուսումնասիրութեան: Նոցա մասին լիակատար գազափար կազմելու համար, պէտք է սպասել գրքի երկրորդ հատարին, որ երեխ չուտով տպադրութեան կը սանձնէի: Այստեղ առաջ բերենք մի աղիւսակ արդիւնահանդէսի մասնակցածների մասին, որի մանրամասնութիւնները ընթերցողը կը գտնի գրքի մէջ:

Ազգ.	Ընդամենը					
	Անդրկովկ., Հիւս. Կովկ., Կովկասում, Կովկ. դուրս, Համագումարը	204	277	481	18	499
Ուռւս		953	496	1449	57	1506
Հայ	617	9	626	6	632	
	1809	32	1841	9	1850	
Վարացի	342	1	343	—	353	
	960	14	974		974	
Թոռոք	553	32	585	28	613	
	1505	89	1594	129	1723	
Գերմանացի	100	39	139	21	160	
	360	78	438	67	505	
Ֆրանսիացի	28	—	28	—	28	
	303		303		303	
Յուն	3	—	3	—	3	
	5		5		5	
Ընդամենը	1847	358	2205	73	2278	
	5895	709	6604	262	6866	

Թւանշանները ալստեղ նշանակւած են և գծից վերև և գծից ներքև, Գծից վերևները նշանակում են հանդիսաբեր անձերի թիւը, իսկ գծից ներքենները նոցա ուղարկած ցուցառարկաների թիւը:

Եթէ վարչութիւնների, ոստիկանութեան միջամտութիւնը չը լինէր, արդեօք, ինչ չափով ինչ աղգութիւն մասնակցած կը լինէր արգիւնահանդէսին:

Ք.

Ն Ո Ր Ս Տ Ա Ց Ի Ա Ծ Գ Ր Փ Ե Բ

1) DASHIAN, P. J.. Mitglied der Mechitaristen-Congregation in Wien.-Zur Abgar-Sage. (Separatabzug aus der Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, IV. Band, Heft 1, 2, 3).

2) ԳՐԻԳՈՐԵԱՆՅ, ԳՐԻԳՈՐ քահանակ.—«Զարկեարի քնարը». բանաստեղծութիւններ. Երկրորդ տպագրութիւն, Բագրւ, տպարան Տէր-Յովհաննիսանցի, 1890 թ., գինն է 60 կոպէկ.

3) ԿԱԼАНТАՐԵ, АЛЕКСАНДՐԵ.—„Состояние Скотоводства на Кавказѣ“. Рогатый скотъ. (Изъ II. тома „Материаловъ для устройства гаражныхъ пастбищъ и для изученія скотоводства на Кавказѣ“). Тифлисъ, 1890 г. Типографія А. Михельсона.

4) Տէր ՍԱՐԳՍԵԱՆՅ, ՄԱԿԱՐ.—«Հայկական գեղագրութեան օրինակներ». Ա. Պետերբուրգ, 1890 թ. գինն է 35 կոպէկ.

5) Տէր-ՍԱՐԳՍԵԱՆՅ, ՄԱԿԱՐ.—«Օժանդակ կրթութիւններ հայկական գեղագրութեան օրինակների»: Հայոց ուսումնարանների համար, Երևան, 1890 թ., տպարան Էմիլ Տէր-Գրիգորեանցի, գինն է 3 կոպ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՍՍԻԱՅ ՔՐՈՆԻԿ

Մի այնպիսի ժամանակ, երբ հասարակական կեանքը չի փալում իւր արմատական փոփոխութիւններով, երբ մարդկացին միտքը դժւարութեամբ միախ կարողանում է արտավագում առհասարակի, չնորհիւ ան ապատիացի, որով արևելեան հասարակութիւնները վերաբերուում են դէսի խնդիրն երը առհասարակ, երբ արևելեան դանդաղուաթիւնը իւր նախկին մեծ շիշխանութիւնից դեռ ես ահազին արտօնութիւններ է պահպանել և հեշտութեամբ չի զիջանում իւր իշխանութիւնը նոր մարդկանց պահանջներին, —մի ալղայիսի ժամանակ, ասում եմ ես, քրոնիկեօրի պարտականութիւնը մեծապէս դժւարանում է, քանի որ կատարւած եղելութիւնների թիւը և նոցա նշանակութեան ծաւալը անքան փոքր է, որ հորիզոնի վերաէ հազիւ-հաղ նոցանով հասարակական կեանք է նշմարւում։ Այս խնդիրը գիտեմ որ արժանի է մի աւելի լուրջ չօղւածի, գիտեմ, որ այն բացատրութիւնը, որ ես կ'ուղենակի տալ, կարող էր տեղ բռնել նաև «Մուրճ»-ի մի առաջնորդողում, բայց ես ոչ ոքին չեմ խանդարիլ, եթէ իմ պաշտօնից փոքր ինչ զուրս գալով, աչժմեանից իսկ իմ այս չառաջարանիս նիւթ շինեմ նորան։ Խնչիցն է որ մեր հասարակական կեանքը խըզնուկ է։ Այն պատճառով, կասեմ ես, որ աշխատանքի կ են տրոն եր թիֆլիս և Բաքու—ահա աշխմեաչ մեր աշխատանքի և կեանքի ընդհանրապէս մանաշւած կենտրոնները։ Երևան, Ալեքսանդրապոլ, Գանձակ, Շուշի, Շամախի, Հին-Նախիջևան, Նուխի, Կարս և պլն—մի տեսակ մեռած քաղաքներ են։ Եւ իրօք, այդ քաղաքները եռանդուն գործունէութեան, եռանդուն աշխատանքի, ուրեմն և եռանդուն կեանքի կենտրոններ չեն դեռ ես։ Եւրոպականութիւնը, իւր աշխատանքի նոր ձևերով, ուրեմն և իւր կեանքի նոր պահանջներով աշխտել դեռ մուտք չործած։ Հապա ինչպէս կարող են նոքա փալել իրանց կենդանութիւնով, Եւ նոքա չեն էլ փալում...։

Թիֆլիսում, երբ խօսք է լինում թատրոնի մասին և հարցնում՝ ինչու հայ մշտական թատրոն չի կազմում, —դրան վաճախ պատասխանում էն՝ հասարակութիւն չը կաց: Ինչպէս թէ լիսուն հաղար հայ բնակիչ ունեցող քաղաքը հայ հասարակութիւն չ'ունի, որ մի հայ թատրոն պահէ: Հաս պարզ պատճառում: Ազդ լիսուն հաղարի մէջ մինչ երևուն հաղարը հաւլաբարցիք են, ակսինքն քաղաքի այն ընակիչները, որոնց բնակած թաղերում լուս ասած ժամանակ՝ միմիան ճրագի լուս են հասկանում և մի տեղ գիշերները ազօտ կերպով վառողդ վորոցի լապտերի լուս: Ազդ հաւլաբարը ներկալացնում է Թիֆլիսի այն մասը, ուր աշխատանքի և արդիւնաբերութեան նոր ճանապարհների հետ ծանօթ չեն, ուր ուսունականը իր թէ մեծ գործ չունի շինելու, և ուր մարդիկ իրանց հասացած կաշիով չեն զգում, որ կարելի է և պէտք է ուրիշ տեսակ ապրել նիստ ու կացը, մտածելու եղանակը ու խօսք ու զրոցների առարկաները սովոր չէ, իսկ թռիչք անողների վերաց էլ ծիծաղում են...»

Այն քաղաքները, որ ես վերը շարքով լիշտակեցի, մեր ալժմնակ կեանքում մի մի Հաւլաբար են ներկալացնում, ալսինքն կենտրոններ են, ուր աշխատանքի ձևերը չեն փոխել կամ շատ են քիչ փոխել, ուր ուրեմն կեանքը մրցիւնի շարժումներ է անում և միտքը բարձր թռիչքների սովոր չէ, իսկ թռիչք անողների վերաց էլ ծիծաղում են...

Նեղ է հասարակական մաքի տարածւելու ասպարէզը, չը կան չափ կենտրոններ աշխատանքի և մտքի, որ մի զաղափար զանազան տեղերում արձագանք գտնի և զաղափարը ինքը ոչ մտանակ նոյն իսկ իւր տած արձագանքով: Կենտրոններ քիչ լինելով, զրադմունք չեն գտնում նոր ուժերը և կամ անմշակ ոչերը կեանքի չեն կանչւում: Կենտրոնների ստիւծիւնից խմբեր չը կան ամեն մի տեղում, որոնք իրար հետ մշտական էարաբերութիւնների մէջ լինեին և իրար ոժ տալին, իրար պակաս լուսացնէին:

Աշխատանքի կենտրոնների մասին արդէն մի անգամ խօսք եղել է «Մուրճ»-ում. Կթէ լիշում և Ծնթերցողը, պանդիստութեամբ խնդրի առի թոլ էր աւզ, աս տարւակ Ե-երթող համարում: Բանից դուրս է զալիս, որ աշխատանքի կենտրոններից օգտագոնները կը լինեն ոչ միայն աշխատանքի պանդուխտերը, այլ և մտքի աշխատաւունները — հասարակաց կեանքը ինքը Արդիւնաբերութեան եղանակները կատարելագործել, օգտել Փիլիքական կենդանի թէ անկենդան ոչքերից արդիւնաբերութիւնը շատացնելու հակենդանի մար, — ահա միակ խելացի միջոցը կեանքի ուժգնութիւնը կրկնապատճենու համար, ահա միակ միջոցը, որով հասարակական արթուն կեանքի հալու համար, ահա միակ միջոցը, որով հասարակական արթուն կեանքի համար պարարտ և բերրի հող կը պատրաստէի: Դորա՛ այդ տնտեսական կեանքի կերպարանափոխութեան հետ կապւած են մեր լուսաւորութեան շահերը առհասարակ, և այն ժամանակ մնը կեանքի քրոնիկը կը լինի

հարուստ խոշոր գործերով, աչքի ընկնող երևոյթներով, իսկ առ ալժմ, մենք ստիպւած ենք գոհ լինել մեր «քեսիբիանի» հասարակական ասլրուստով:

Այս խորհրդածութիւնը մի պատասխան է մի քանի պարոնների հարցմանքին՝ թէ ինչու Ամսւալ Քրոնիկը ես կարճ եմ կտրում, չեմ երկարացնում:

Թէ համաձայնւեցէք, որ ես չեմ մեղաւոր, որ մեր Կովկասեան ամբողջ հայութիւնը չի ունեցել ոչ միան աչս վերջին ամսում, աչ և առհասաշակ աչս վերջին ամիսներում աչ հետաքրիզրութեան առարկաներ, քան ացելութիւնը մեր երկրին մի արքեպիսկոպոսի կողմից, ինտոք աւսուցչական կոպարները և թեմական վերաստեսչութեան վերականգումը. աղ է համագումարը այն ամենի, ինչ որքան և իցէ խօսակցութեան առարկակարողացաւ գառնալ, եթէ չը խօսելու լինենք մեռոնօրհնութեան հանդիպութիւնից պատճառած հոսանքի մասին դէպի եջմիածին հազ գիւղ ու քաղաք ների կողմից:

Կ. Պոլսից եկած Խորէն Նար-բէց արքեպիսկոպոսը լայտնի է որպէս մէկը Ներսէս պատրիարքի պատգամաւորներից, որ ուղարկւած էին միծ պետականների կարինեաները ացելելու և Բերլինի Վեհաժողովին թարգման լինելու Տաճկա-Հալաստանի մասին. Եւ հենց ալդ ժամանակւանից և, որ ես առաջին անգամ առիթ ունեցաւ ծանօթանալու հայ հոգեսորականութեան ալժմու Ներկալացուցիչներից մէկի հետ, որի անունը ծածկւած էր աղ ժամանակ Ներսէսի անունով. Եւ ալէաք է ասած, Խորէն Նար-բէցի ամբողջ նշանակութիւնը, մեր հասարակութեան աչքում, սպառում է հենց նորանով, որ նա Ներսէսի պատւիրակներից մէկն էր 1878 թւականին, Խորին մեան Հայրիկի հետ միասին. Այդ ժամանակւանից դէս ես ոչինչ չեմ լսել, որ կապւած լինէր նորա անունի հետ. Ոչ մի գործ, ոչ մի գործ, Որքան ես տեղեակ եմ, նրան առաջարկւած են եղել թեմական առաջնորդութիւններ զանազան ժամանակներում,—բայց նա չանձն չի առել գաւառը գնաւու, Պոլսից շարժւելու Ալգոլիսի վարժունքը մեզ հենց սկզբունքով չի կարող գիւր գալ, որովհեան առաջնորդի պաշտօնում չուգենալ մալր-երկրի մէջ կառավարել և գործել,—դա ոչ մի բանի նման չէ. Նա գերազանց մնալ Պոլսի Փեշիքթաշ եկեղեցու քարոզիչ և ահա ալժմ Թիֆլիսի հասարակութիւնը առիթ ունեցաւ գնահատելու նորա քարողների ուժը...

Կ. Պոլիսը և նորա հետ համազն տաճկա-հայութիւնը մի խնդրի առջև է դրւած։ Հրաժարական տւած Խորէն արքեակ։ Աշըգեանի տեղ պէտք է ընտրվի նոր պատրիարք։ Ինչ կարող ենք խորհուրդ տալ աւսքան հեռուցի։ Մի բան միայն գիտենք՝ որ նոր պատրիարքը խսկապէս դեր ունի կատարելու։ Թող չը ստանձնի պատրիարքական պաշտօնը նա, ով գործի աժմեալ բարձրութեան վերաէ կանդնած չէ։ Նա, ով մի է ճանաչւած իւր ժողովրդի հետ, նորան է կանչում ժամանակը։ «Բոլիդիգալի» ամենենին ժամանակը չէ։

Մեր ուսումնարանական-վարչական կեանքի մէջ՝ այս ամառ զգալի փոփոխութիւններ եղան։ մէկ կողմէց՝ մտցւեցին կոպարները, որոնց օգտակարութիւնը չի կարելի սկզբունքով հերքել, բացց, ինչպէս ես անցեալ քրոնի կում առիթ ունեցաց ցոյց տալու, չեն լարմարեցրած ներկայիս պահանջներին։ Միւս կողմից վերականգնեց թեմական վերատեսչութիւնը։ Թիֆլիսի, Երեանի և Ղարաբաղի թեմերը ունին աժմ իրանց տեսուչները, որոնք ներկազնում են որպէս օգնականներ թեմական առաջնորդների, եկեղեցական-ծխական ուսումնարանների նկատմամբ։ Յայտնի է, որ թեմական տեսչութիւնը գոլութիւն ունէր մինչ 1885 թւականը։ Ուսումնարանները 1886-ին բացւելով, թեմական տեսուչներ չը նշանակւեցին, այնպէս որ բոլոր ուսումնարանական հոգուը բարձած էր թեմական առաջնորդների վերաւ։ Մի բան սական, զտնազնում է այժմեալ տեսչութիւնը առաջանից։ մինչ 1885 թւականը թեմական տեսուչ նշանակւում էր թէ աշխարհականը և թէ հոգեորականը։ այժմ՝ միայն հոգեորականը։ Անցեալ քրոնիկում ես արդէն նկատել էի, որ հոգեորականը գերիշխող է գառել հոգաբարձութեան մէջ 1889-ից դէս։ Այս տարի, կաթողիկոսի վերջին կոնդակի համաձան, որ ամբողջապէս տպւեց «Մոււրճ»-ում, աւագ ուսուցչութեան պաշտօնի համար պէտք է գերազանցութիւն տրվի կրօնուսուցներին, որ նոնն է թէ կրօնականներին։ Այժմ ահա և թեմական տեսչութիւնը հոգեորականների ձևոքին ինձ համար անկատած է, որ, շուտով պէտք է տեսնենք թեմական տեսչների պաշտօնում՝ քահանաներ կամ վարդապետներ, որից կետու հերթը կը հասնի ուսուցիչներին...»

Ընդհանրապէս խօսած, և դա մի բնաորոշ երեսով է ժամանակիս համար, թեմական տեսուչներ նշանակւած են ոչ բարձրագոյն ուսումնացած մարդիկ։ Յուս ունինք, սակայն, որ թեմական տեսուչները կ'աշխատեն իրանց եռանդով և լարգանքով դէպի հասարակաց կարծիքի արտավականութիւնը արժանանալ չնորհակալութեան նաև հասարակութեան կողմից։ Ուրախ ենք, որ այժմեանից իսկ կարող ենք արդէն մի երկու բան արձանագրիլ զոնէ Թիֆլիսի թեմական տեսչի ակտիւին՝ «Արձագանք» շարաթաթերթի

ասելով, Թիֆլիսի թեմում այս տարւազ ընթացքում նոր բացւած են 14 մի-
դասեան ուսումնարաններ: Թէև ամեն բան թւից չի կախւած, բայց մեզ
գեռ շատ է հարկաւոր որ ուսումնարանների թիւը աճէ: Պէտք է վերջա-
պէս մաքում դնել, որ ամբողջ ազգը պէտք է զրագէտ դառնայ և ոչ
միայն նորա առանձին մասերը: Դա մինչև անդամ անարդարութիւն է, որ
մի դարում, երբ ապրուսոի միջոցները ի միջի ակլոց նաև մեծապէս գրա-
դիտութեան մէջն են, որ, ասում եմ, ազգի մի մասը միայն օժտւած լինի
այդ զօրաւոր գէնքով: Յանուն հասարակական արդարութեան՝ ամեն տեղ
պէտք է աշխատել տարրական ուսումնարաններ բանալ: Ժամանակը այդ
կողմից աղաղակող է:

ԼՈՒՍԻՆԻ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆ ԿՈՂՄԻՑ

ՄԱՆԳԼԻՍԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՕԳՏԻՆ պր. Յովհաննէս Ստեփանեանցի
ձեռքով ստացանք պր. Ղաճրաման Ելեհանցից 100 րուբի
արժողութեամբ յատակի տախտակներ, որ և անմիջապէս լաճճ-
ւեցին ուսումնարանին, և 5 րուբլի դրամով այլ և ալ անձե-
րից. Առ աչժմ առձեռն ստացւած է ուրեմն 271 րուբլի, որից
27 րուբլի մնում է մեզ մօտ:

ՈՒՂԴԱԳՐՈՒԹԵՍՆ ԽՆԴՐԻՆ վերաբերեալ պր. Եղիչէ Մադաթեանը միանս-
նաւոր նամակում, մեզ ուղղած, գրում է ի միջի ազոց նաև հե-
տեւալը: «Լաւչէր լինել արդեօք, որ օտար բառերում և անուննե-
րում, ո-իփոխարէն ըստ կարելոցն ո գրւէր: Օրինակ, չը գրնել Դօն
Կիխոտ, այլ Դոն Կիխոտ, չը գրել Կոնդօ, այլ Կոնդօ (օ-ն պահել
բառի վերջին և սկզբին), չը գրել Վիկտորիա, այլ Վիկտորիա,
չը գրել Փիլոզիա, այլ Փիլորդիա: Բայց ի հարկէ, օֆիցիու-
ոֆիցիեր շինելը ծիծաղելի է: Պէտք է առած, որ մեր նախնիք
էլ բառերի միջում շատ քիչ են գործածել օ-լիոսք, ամօթ,
ծանօթ, կարօտ, բօթ, մօտ, կրօն, ցօղ և ալին: Աս վիշեցի,
ինչ միտու եկաւ, բայց կարծեմ թւով շատ չեն աչդ ահսակ բառերը:
Օտար բառերը մեր նախնիք միշտ օ-ով են գրել, մինչև ան-
գամսոկզբին՝ Ոլիմպոս (Օլիմպ), Որիգեննէս (Օրիգեն), Պորփիրու-
Պիետրոս, Ռոմանոս, Մադեմուս և ալին: Միայն լունական մեծ
օ (օմնգա)-ի տեղ գրել են ով, ինչպէս Մովսէս, Յակովի, Յով-
սէփ, Յովհան, Հռովմէ, Յովակիմ և ալին: (Ուրիշ բան է Պողոս-
Պաւոս, Պավլոս):»:

Պր. Մադաթեանի առաջարկած խնդիրը մենք գտնում
ենք թէ տեղին, թէ ժամանակին և թէ ճիշդ: Եւ իրաք, օտար
անունների և նոր ընդունւած օտար բառերի նկատմամբ, մե-
զանում անխտիր կերպով գործ են ածում և և օ, մինչդեռ
կանոնի հետեւը գերադասելի է: Միենոն դրւածքում, կամ
միենոն հրատարակութեան՝ լրագրի, ամսագրի մէջ, մենք տես-
նում ենք, որ հնուց մեզ աւանդւած բառերի և անունների մէջ

« և օ տառերի գործածութիւնը մի տակ սակէ, մինչդեռ նոր գործածուղ բառերի և անունների մէջ և և օ տառերի գործածութիւնը տարբեր է և իրար հակառագութիւնը Մէկը գրամ է Տօմուն, միւսը Տռմուն, երրորդը Տօմուն, չորրորդը Տռմուն, մէկը գրում է Էւոլիւցիա, միւսը Էւոլիւցիա և ազն։ Այսպիսի խառնաշխիթութիւն համբերել մի հրատարակութեան մէջ չը պէտք է ոչ միան ընդհանրապէս լեզուն և ուղղագրութիւնը կանոնաւորելու տեսակետից, այլ և հրատարակիչների, սրբադրութեան դրաշարների և գրաշարների գործերը հեշտացնելու միանգաման դորձնական անսակէալից, որը բալորավիճ արհամարելի տեսակետ չէ։

Բայց կանոնաւորել դեռ չի նշանակում պայմանաւորել։ Չի կարելի պայմանաւորել, թէ արքը ու ամենքս գրմէք ։ կամ օ բոլոր օտար բառերի և անունների համար, որովհետեւ ողղագրութեան, որպէս և լեզուի խնդիրներում, կանոնները սահմանադրութեան ոչ թէ գրաւոր կամ բերանացի և կամ լուելեան ընդունած պայմանների հիման վերակ, այլ կանոնները պէտք է սահմանադրութեան խելացի հիմունքների վերակ, թէ չէ գրադներից մէկի կամ միւսի անհամաձայնութիւնը կարող է խախտել արևետական կերպով սահմանադրութեան ամեն մի կանոն և նա կ'ունի նոյնքան հետեւողները։

Օ և ո տառերի գործածութեան համար հիմունքներ տալիս է հայոց լեզուի ուղղագրութիւնը։ Այստեղ մենք տեսնում ենք որ, բառերի միջում, և տառի գործածութիւնը անհամեմատ տևելի մեծ է քան օ տառի գործածութիւնը և ոչ միան դուռ հայկական, այլ և օտար բառերի և անունների համար, բռլոր, մռլի, կռկռն, սափոր, հռլով, կռրով, Խռըն, Լեռն, Գրիգոր և այլն, ինչ հիմունք կամ, ուրեմն, գրել՝ Էւոլիւցիա և ոչ Էւոլիւցիա, Փօրտ և ոչ Փօրտ, Գլադատօն և ոչ Գլագատօն։ Ուրեմն, բառերի միջերքում, օտար բառերի և անունների համար, հնդ հանուր կանոնի համաձայն պէտք է գրել և ոչ ։

Ուրեմն, օ տառի գործածաթիւնը պէտք է մնայ ճարահանեալ զէսքերի համար, արտասանութեան շփոթութիւնների առաջն առնելու համար, բալորովիճ այսպէս, ինչպէս և տառի գործածութիւնը մենք վերապահում ենք միան չափանի գէպքերի համար (բառերի սկզբում և տառից իտու)։

Խսկ որոնք են ալդ ճարահանեալ զէսքերը։

1. Բառերի կամ անունների սկզբներում, երբ բացարձակ կերպով օ հնչիւնն է լսում՝ Օթելլօ, Օւեն, օրգան, Օդիւստ։

2. Բառերի միջերքում այն ժամանակ, երբ նա լաջորգում է մի ձայնաւորի՝

Ֆեղալ, Կլիոպատրիա, Լևիդ. և այլն, որովհետեւ եթէ այդ զեպքում ո զբենք՝ Փեղալ, Կլիոպատրիա և այլն, կարող ենք և պէտք է կարդանք՝ Փեղալ, Կլիոպատրիա և այն, ինչ պէս որ Լէօն անունը, Լիոն զբւած կարդացւում է և զբան Լեռն, Լեռնաց զառել է Լեռնա կամ Ղեռնդ. Ազգ հիման վերաէ է անա, որ մենք պէտք է գրենք՝ Փիղիօկրատ, թեօրիա, Փիղիօլոգիա և այլն:—Մի զեպք կաէ սակայն, որ պահանջում է առանձին բացարարութիւն: «Մուրճ»-ի ուղղագրութեան համաձայն, ուսաց ՕՅ հնչիւնը կարելի է զրել ու և կամ ով և, արտասանութեան համար, նոյնն է թէ զրւի Լեռնատափ թէ Լեռնատու: Մի զեպքում ուի պատճառով պէտք է զրւի և միս զէսքում ուի պատճառով պէտքէ զրւի ու Բաց զրել Լեռնատով—զորա համար ոչ հիմք կաէ և ոչ սահրամաւելիթիւն: Կան զեպքն է և աղապիսի տեղերաւմ՝ Գրավիր կամ Գրուեր, Գրիպատ կամ Գրուացո, Ազով կամ Ազու: «Մուրճ»-ի մէջ մենք թուլ ենք տալիս ուղղագրութեան այս երկու ձերեն էլ: Բաց խոստախ նում ենք, որ ով զրելը նախադասելի է, քանի որ հարց լիդ ում ՕՅ հնչիւնը միշտ ով է զրւել, առանց շփոթութիւնների տեղիք տալու:

Դանք աղժմ և և օի զործածութեանը բառերի և անոնց ների վերջում, որի համար պր. Մադաթեանը առաջորիսմ է օ զրել: Ազգ առիթով մենք պէտք է նկատենք հնաևնալլ: Բառերի վերջում օ զրելը—անհրամեշտութիւն չի կարող համար մւլ, քանի որ Մկո, կարո, Յարո, Յուլու բոլորովին նոյն կիրա հն արտասանւում, որպէս տղ կերպ զրւած ժամանակ՝

Մկօ, Կարօ, Յարօ, Յուլօ: Հները կը զրէին՝

Մկոյ, Կարոյ, Յարոյ, Յուլոյ, որպէս զրւում է ներքով, լետով, կոփածոյ, աստուածանածոյ և այլն:

Ուրեմն բառերի և անոնցների վերջում անպատճան կերպով օ զրելը պալմանական բան է, թէ չի կարելի չը նկատել, որ ոյ վերջուորութիւնը ոչ միայն հին ուղղագրութեան ձև է, այլ և մեզ թուում է թէ նա հն աց ել է, դառել է արխայիքական Ազգ խակ պատճառով, բառերի վերջում, աւելի չարմար ենք տեսնում օ զրել, որպէս և պր. Մադաթեանն է առաջարիսմ: Բնական է, որ, բառերի վերջում օ զրելով, օ տառը պէտք է պահպանենք նաև բարդ բառերում՝ էժնօ-լոզիա կամ էթնօրդ զիս, Փիղիքօմաթեմատիքական և այլն:

Սակայն բառերի միջերքում ևս օ զրելը այն զէպքերում

պարտաւորիչ պէտք է լինի, երբ ո զրելով շփոթութիւն կարող է ծագել. օրինակ, պէտք է անպատճառ զրել թիօրիա և ոչ թերրիա, որովհետև այս վերջինս կարող է կարդացել որպէս թէտրիա, ինչպէս Լէոն մենք կարդում ենք Լէոն և ոչ որպէս Լէոն: Կամանապէս պէտք է զրել Փիզիոլոգիա, թիօլոգիա և ազն՝ Փիզիւոլոգիա և թիւոլոգիա չը կարդալու համար:

Մենք կարծում ենք, որ ո և ո տառերի դրժածութեան կանոնները այս բացարարութիւններով հաստատ և խելացի հիմքի վերաէ որոշած պէտք է համարել. Ազդ ուղղագրութեան կանոններին և կը հետեւնք մենք «Մուրճ»-ի մէջ, շաբանելով միաժամանակ, որ արդ ուղղագրութիւնը ընդհանրապէս գործադրւած ենք տեսնում նաև տաճկահակ գրականութեան մէջ:

ՀՈՌԵՆՑ ՖՈՆ ՇՏԱ.ՑՆ, որի 50-ամեակ դոքտորական չորեկնանի առիթով «Մուրճ»-ը իւր ալս տարւալ № 5-ում մի ընդարձակ կենսագրական և զրական լուրած տւեց, սեպտեմբեր ամսին վախճանւեց. Ամբողջ եւրոպական և ռուսական քաղաքական և հասարակական մամուլը արդ ասիթով հանդուցեալի լիշտավակին շատ թէ քիչ ընդարձակ լուրածներ նւիրեց. Լուսնց ֆոն Շտան մեռաւ 75 ամեակ հասակում:

«ՄՈՒՐՃ» Ա.ՄԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՈՒԴԱԳՐՈՒԹԵԱՆ 1891 թւականի համար կը բացի հետևեալ № 11-երորդ համարը լուս տեսնելու օրից. Ազդ համարի հետ մենք կ'ուղարկենք մեր բաժանորդներին նաև բաժանորդագրութեան սովորական ծրարները. Պարուն Պէրճ ՊՈՒՇԵՎԱՆՅԻ «ԲՂԴԵՒ» լուս տեսնելու ասիթով, խմբագրութիւնս ստացաւ Ալեքսանդրապոլից մի արծաթեակ ոսկէզօծած թանաքաման հեղինակին լանձնելու համար. Թանաքամանը, որ կրում է փորագրութիւններ Բղէի և հեղինակի 30-ամեակ զրական գործունեալթեան լիշտավակին նւիրած, զրած է մի պատշաճաւոր տուփի մէջ հեղինակի փոքրադիր լուսանկար պատկերով զարդարած.

«ԽԱ.Փ. Ա.Ա.ԲԱՆ» պատկերը պ. Փափակեանցի, որ վերջանում է ներկակ համարում, ալս ամսւակ ընթացքում լուս կը տեսնի նաև առանձին դրգով:

ԾԱՂԻԿ, լրադիր ազգակին, քաղաքական և զրական, հրատարակւում է Կ. Պոլսում, շաբաթ օրերը, Բաժանորդագին տարեկան 45 դրուշ, Առուսիակի համար 5 րուբլի, ուրիշ երկրների համար 12 ֆրանկ: Տնօրէն.հրատարակիչ Յովհան Գ. Փալադաշեան. Հասցէ՝ Պոլիս, Էսկի-Զապթիէ, Պէրպէլեան տպարան:

Ենորհակալութեամբ ընդունելով լիշեալ թերթի առաջին համարը, պարտք ենք համարում լավոնել, որ արդ առաջին

համարը մեզ վերակ ոչինչ նպաստաւոր տպաւորութիւն չարաւ,
ըստ նախած որ խմբագրութիւնը ծանուցանում է, որ այրա-
լուծար շրջապատճած են զմեզ մեր որտակիցք, և իրանց պատ-
ւաբեր զարձակցութիւնը մեզ նուրած են աղդին ամենէն
տաղանդաւոր և հոչակապ գրագէտք, չորսց սմանք
կ'երեխն ալս առաջին թւոչն մէջ խոկ»:

Թերթը դնում է իրան իրր նպաստակ՝ յոդափորդը զար-
գացնել՝ միշտ ճշմարտութեան ուղիղ ճանապարհին վրբու ա-
ռաջնորդելով զահն:

Մինք առ առաջին Նուում մի նմուշ ենք գտնում, թէ
արդեօք ինչպէս՝ «Ծաղիկը» հատկանում ճշմարտութեան ճա-
նապարհը:

Մի ացպիսի նմուշ մինք՝ գտնում ենք քաղաքական տե-
սութեան մէջ, որ բոլորովին լրջօրէն խմբագրութիւնը լուծում
է ալս խնդիրը թէ որ տէրութիւններն են կոչւած այն վտանգի
դէմք առնելու, որ ներկալացնում է նւրովաճ իւր միշտ անող
զօրքերով: Դեռում ենք ալսակադ աղդ կոտրը. «Եւրոպացի սպա-
նացող ալս ահաւոր վտանգը հեռացնելու համար կը ման
միան երեք տէրութիւններ. Սոմանեան պետութիւն, Անդիա
և (դէ լսեցէք!) Ապանիա: Ազս վերջինը իւր ներքին կարե-
րագուն զործերով զբաղեալ և բոլերացն անհարեկեալ, չէ կա-
րող միջազգապին քաղաքականութեան մէջ ազդեցիկ գեր մը
կատարել: Անդիան ինչ ինչ մասնաւոր կոսպակցութիւններ ու-
նենալով տէրութեանց ոմանց հետ, չէ անշատի անկողմնակալ և
անշահախնդիր որչափ որ հարկէ տէրութեանց մէջ հաշտարարի
գեր կատարելու և անոնց հակընդդէմ շահերը հաշտեցնելու
կարող լինելու համար:

«Կալսերական (Օսմանեան) կառավարութիւնը կը մաս
ուրիմն ան միակ տէրութիւնը, որ, չնորհիւ իւր կատարեալ
անշահախնդրութեան և ծանօթ խաղաղատիրութեան, կարինաց
լու ցնել (երեխ ուղում է ասել լու ցնել) արդարութեան և
իրաւանց ձանը և աղջու կերպիւ նպաստել խաղաղութեան
սպահանման:

«Եւրովաճ արդին երախսապարաւ է ալս մասին մեր Յզու-
տափառ և խմաստուն կալսեր, որու ջանից և զոհովութեանց
չնորհիւ կը վակելէ ցագժմ խաղաղութեան բարիքները»:

Բացատրութիւններ աւելորդ են:

ՄՈՒՐՃՅԻ ԽՄԲԱԳԲԱՏԱՆ ՄԵԶ ՎԱՀԱՌԻՈՒՄ ԵՆ
ՀԵՏԵԼԵԱԼ, ԳՐՔԵՐԸ.

Բ. Կ.

«ՄՈՒՐՃՅԻ ամսագիր, 1889 թ., երկու հատորով»	12 —
ԱՐԱՍԽԱՆԵԱՆՅԱՅԻ. — «Ազգարնակութիւնը և ազգա- բնակչական շարժումները»	40 —
ՆՈՅՆ ՀԵՎԻՒՆԱԿ. — «Հողասակրութիւնը և հասարա- կութիւնը»	40 —
ԲՈԿ, բժշկ. — «Ֆիզիքական և մառուր զարգացման մասին»	30 —
ԱՐԱԾԱՆԻԱՆՑ Ա. — „Զակավազская хлѣбная тор- говля“	75 —
” “ ” — „Закавказские шелкометальные заводы“	80 —
ՊՈՅՈՇԵԱՆՅԱՅԻ ՊԵՐՃ. — «ՅԵՅԵՐ» — (վէպ)	1 —
ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅԱՅԻ ԳՐԻԳՈՐ ԳԱՍՊԱՐԻ (ՂԱՂՄՐԴԻ)՝ Մահ- կառածութիւն.	50 —
ԱՏԲՊԵՏԵԱՆ ՍԱՐԴԻՍ. — «ԽԵԽ-ԿԱՐԱՊԵՏ» — վէպ Հայ-կո- թովիկների կեանքից	1 —
Լ.Յ. — «ԿՈՐԱԾՆԵՐ» — (վէպ)	50 —
ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅԱՅԻ ԳՐԻԳՈՐ, բժշկ. (ՂԱՂՄՐԴԻ)՝ «ՄԱՆՈՒԿ- ՆԵՐԻ ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՖԱՆԴՈՒ- ԹԻՒՆՆԵՐԸ»	5 —
ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅԱՅԻ ՍՈՂՈՄՈՒՆ. — «ՀԱՅ ԳԻՒՂԱՅՈՒ- ԽԵՒ ՕՐԸ» (ԱԿԱՆՔԻՑ պատկեր)	40 —
ՄԱՐԴՍԵԱՆՅԱՅԻ ԼԵՒՈՆ. — «ԱՅՅ ԹԻՒՐԲԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» .	60 —
ՊՈՅՈՇԵԱՆՅԱՅԻ ՊԵՐՃ. — «ԲԴԻԵ» վէպ.	1 20 —
Ճանապարհածախալ խմբադրութեան վերացէ: Գրամփ տեղ կա- րելի է ուղարկել պօստի մարդաներ:	

TECHNIKUM MITTWEIDE

ՏԵԽՆԻԿՈՒՄ ՄԻՏՎԱՅԴԵ

Սաքսոնիայում

ԴԻՐԵԿՑՈՐԾ ԻՆԺԵՆԵՐ Կ. ՎԵՅՑԵ

ՄԵԲԵՆԱՆԵՐԻ-ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ-ԳՈՐՈՑ.-ԱՐՀԵՍՏԱՆՈՅՆԵՐԻ
ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ԴՈՐՈՑ

23-ԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Այս դպրոցը, որը գտանւում է Միտվայդէ քաղաքում, Գերմանիայ ու (թագուորութիւն Սաքսոնիա), տալիս է մի ամբողջացրած կրթութիւն Մերձնական շինուազնութիւնների հետ ծանօթացնելու համար, որպիսիք են՝ ելեկտրո-ակտինիկ և ջրաղացների շինութիւնների համար.

Սխառեմական ուսումնական աշդ հիմնարկութիւնը պատրաստում է հետեւալ մասնագիտութիւնների համար.

1. Խնմեներներ և կօնստրուկտորներ՝ մեքենաներ շինելու, ելեկտրո-ակտինիկի և ջրաղացներ շինելու համար.

2. Ապագայ մեքենաների գործարանների տէրերին, որոնք իրանց ստորադրեալների չափ պէտք է հասկացողութիւն ունենան, աղդ դպրոցը տալիս է պատշաճաւոր կրթութիւններ.

3. Ամեն ուրիշ տեսակ գործարաններ ունենալու համար, ուր հարկաւոււում է մեքենաների սարք ու կարդ, որպէս՝ թղթի, փառաենիւթերի գործարաններ, չողի և ջրի աղացներ, մանելու, զործելու, ապակու, կրամամալի, շաքարի, ասեղների, պողպատէզրիչների, կահ-կարասիների, քիմիական գործարաններ, գաղի, լուցկիի գործարաններ և այլն և այլն:

4. Դիրեկտորներ և կառավարիչներ պատրաստելու համար վիշտ գործարանների համար.

Արհեստանոցների վարեաների գործոցը պատրաստում է վարպետներ՝ աղդ բալոր տեսակ մեքենաները շինելու համար:

Ընդունելութիւնը լինում է ամեն առաւակ ապրիլի և հոկտեմբերի միջին:

Տեխնոլոգիաներ ուսուման առաջին գպրոցում, նախած աշակերտի նախապատրաստութիւններին, լինում է $2\frac{1}{2}$ կամ 3 տարի, երկրորդ գործում $1\frac{1}{2}$ տարի:

ՏԱՐԻՔԸ ընդունողի պէտք է լինի 16 տարեկանից ոչ պակաս:

Սուն 18⁸⁹/₉₀ թւականին բոլոր աշակերտողների թիւն է 886, որոնցից Ռուսաստանից՝ 66 հոգի:

Դպրոցի բոլոր միւս մանրամասնութիւնների համար կարելի է զիմել՝ «ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ, ուր ի միջի ալոց կարելի է իմանալ ծրագրի, ամեն տեսակ ծախքերի և Միավագելի կետնքի, և զբացի վարչութեան պահանջմունքների մասին:

ԵԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

(ԹԻՖԼԻՍ, ՄԻՔԱՅԵԼԵԱՆ ԿԱՄՈՒՐՁԻ ՎԵՐԱՅ)

Տրում մեն հայերէն զբքեր։ Ամսական վճարը 20 կոպէկ է։
Աղբնական գործոցների աշակերտաները և աշակերտուհիները վճարում
են 10 կոպէկ։

Գրադարանը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 2, և երե-
խեան 5 ժամից մինչև 8 ժամ։ Խակ կիրակի օրերը առաւօտեան
9—12 ժամ։



ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏԻԱԾ


ԴԻՏԵԱՏԿՈՎՍԿՈՒ ԹՂ.ԹԷԴԻԲՇԱՐԱԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ։

Առնի մեծ քանակութեամբ պօստի, գրելու, գրքերի, լրագրա-
կան, ծխախոտի, գոյնաւոր, փաթեթների և այլ թղթերի՝ գործարա-
նական գներով, որպէս նաև մեծ ասօրտիմենտ գրասեղանի իրեղէների։

Հասցէն նամակների համար՝ Տիֆլիս. Դարձայ յլ., դ. Դարյա-
նեաց բանկ, սկладъ Դիտյակով. ֆաբրիկ.

Հեռագրերի համար՝ Տիֆլիս. Դիտյակովսկое Общество

ԴԱԿԱԿԱՆ ԿԱՐԵՄԵՔՆ ԱԱԵՐ
ԴԱԿԱԿԱՆ ԶՀԿԵՐՈՒԹՅՈՒՆ



Գանձարանում կայացած են, ութէ կամ ինը են, ութէ պահանջված է առաջանալ առաջանալու գործութեանը, այս է՝ առաջանալու գործութեանը:



ՄՈՒՐՃ

ԱՄՍԱԳՐԻ

1890 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ է:

Տարեկան բաժանորդագինը	40 ր.
Կէս տարւանը	6 ր.
Երեք ամսանը	4 ր.
Մի դրաքոլը	1 ր. 50 կ.

Բնդունւում է բաժանորդագրութիւն նաև մաս-մաս առաջին կիսամեակում ամբողջը վճարելու պայմանով:

Ուսուցիչները, վարժուհիները և բարձրագոյն դպրոցների ուսանողները վայելում են զիջումներ, համեմատ առանձին տպած յայտարարութեան:

«ՄՈՒՐՃ»-ի ծաւալը տարեցարի մեծացնելը միանգամայն կախած է բաժանորդագրութեան յաջողութիւնից: Մաւալիցն է կախած նիւթերի հարատութիւնը: Այդ պատճառով մենք յորդորում ենք մեր ներկայ բաժանորդներին՝ իրանց կողմից հարկաւոր ջանքը չը ինայել «ՄՈՒՐՃ»-ը իրանց ծանօթ շրջաններում տարածելու համար:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՈՒՄ ԵՆ

Ամսական մի երեսի համար.	40 ր.
,, կէս երեսի համար	6 ր.
,, քառորդ երեսի համար	4 ր.

Դրաքերի յայտարարութիւնների համար կարելի է վճարել նաև յայտարարած դրաքերով՝ սոցա գների համաձայն:

Խմբագրութեան հասցեն՝ Տիֆլիս. Եղ Редакцію журнала
«ՄՈՒՐՃ». Խմբագրատունը գտնվում է՝ փողոց Վելիամինովի,
տուն № 8 Թանոյեանի (Вельяминовская улица, домъ № 8
Ек. Гандоевой), բոլորովին մօտ Երեանեան հրապարակին, Պրօդիմ-
նալի դիմաց:

Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la Revue «MOURTCH».